N. 21.

N 17

1960 Չ20 / 661— ՍԱ 1363-ՇԼ-Հ

# ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

2811(0) Ս-13

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ... Публичная Библиотека С.С.Р.А. имени А. Мясникяна 7/XI 1922

Ըստ ուղղափառ դաւանութեան առաքելական եկեղեցւոյ լուսաւորչական հայոց.

Գրեաց Միքայէլ Ծայրագոյն Վարդապետ յակովբեան Սալլանթեանց կոստանդնուպօլսեցի, Միաբան և Նուիրակ սրբոյ Էջմիածնի, փոխանորդ Թեմակալ արքեպսի, Խաչակիր Ասպետ կայսերութեան Ռուսաց, Դատաքննիչ գրոց, կարգաւոր ճեմարանի, Դասատու հայկաբանութեան, փիլիսոփայութեան և Աստուածաբանութեան.

19830

'Ի հայրապետութեան Տեառն Եփրեմայ Սրբազնակատար Կաթուղիկոսի ամենայն Հայոց և Ասպետի.

Յառաջնորդութեան ռուսիաբնակ հայոց Տեառն Ներսեսի Սրբազան Արքեպսի և Ասպետի.

2004

1831. 'Ի ՄՈՍԿՈՎ. ՌՄՁ.

'Ի տպարանի Հայկական Ճեմարանի Տեառց Լազարեանց.

28

# ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Թոյլ մեր կանխաւ գծագրեալ սակաւուք զուգա-զակառ դաւանութիւն մերս Հայաստանեայց եկեղեցւոյ, յոր և ցայսօր վարժեցան աշակերտք ճեմա-րանիս. Բայց ապա յ'ի վր գալ կարեաց ազգիս հրապա-րակութեն՝ արժան դատեցաք շահաւոր ընդարձակութե յանկաւորել զայն՝ այժմեան վիճակի և պիտոյից ազգիս, յօրինեալ զնոյն իբր զձեռնատետրական գործի 'ի չեւ(ր)ին աշ եղբարց մերոց՝ ևն՛ առ շահաւորել ինքեանց զհարկաւոր պաշար հաւատոյ և գործելի ճշմարտութեց, և ևն՛ 'ի պաշտպանել անձանց յընդդիմախօս եղբարց Բանսարկուաց: Ընթեռցեալ եր մեր՝ և ընթեռնուլոք իւն այսօր, և լուեալ և ուսանելք, զի յաւիտենական՝ շնորհաւորութեան և աւետարանական ազգք քրիստոնէից՝ յածախնական և 'ի պատմաբանական գիրս իւրեանց, նաև 'ի նորագիրս ընթերցուածու (կարճէթս) զազգ և զեկեղեցին մեր կոչեն՝ հերետիկոսս, երետիքական, և հերձուածողս. Հարժեալք ոչ յերական թիւրութեան հաւատոյս մերոյ՝ զոր ոչ ճանաչեն լինել, այլ հաւատալով Բանից ոտանց հայազգի դըր-պարտողաց. որք 'ի մէնջ ելեալք և կարծեօք ուղղափա-ռուէ ընդ շաւիղս մոլորեալք, ոչ խղճեցին յանչիւնս Բամ-Բասել զեկեղեցին մեր յականջս ամ եւրոպացւոց՝ այդպիսի նախատական անուանք:

Օրինակք այդպիսի Բամբասանութեան եղեն՝ ոչ միայն ներոքս պաղոն, ախմեռն պէկ, Տիլեմոր տապարանցի, յոհ հան քանեցի, և այլք ոտանք 'ի նանինի դարու, այլ և որ ող-Բալին է քան զամ, 'ի մեր իսկ աւուրս Գաան հեթևողք այդպիսի ուղղափառու. յորոց ոմն ցուցաւ 'ի նորու-Տըն, առա՛զ աՏօթոյ ազգիս, ներհայ եպոն Տիլեմարեան

միաբանութէ հայրն Սուքիաս Սօմալեան, որ տպագրեալ 'ի Վենետիկ 'ի 1829 իտալացի լեզուաւ պատմութիւն գրականութեան հայոց, ոչ միայն զնշանաւոր անձինս, զՊօ-ղոս Տարօնացի, զԳրիգոր Տաթեւացի, զՅովհաննէս Կո-լոտ, զՅակոբ Նալեան, և զայլս ոմանս, այլ և զբոլոր զեկեղեցի՝ զազգ և զժողովուրդ մեր բազում ուրեք յայտ-նապէս կոչէ Հերձուածողս ։

Բաց այսմ իմաստունդ այդ 'ի յիշեալ գրոցդ յերես 120. 121. յետ ասելոյն թէ Ստեփաննոս եպս Օրբէլեան յօրինեաց պատմութիւն սիւնեաց, զձեռնարկ հաւատոյ և զողջերգութիւն 'ի մէջ հայոց, յաւելու անդէն,
„ Գիրքն ձեռնարկ յամին 1755 'ի Կոստանդնուպօլիս,
„ և Ողջերգութիւնն յամին 1798 'ի Նոր Նախիջեւան՝
„ շարադրութիւնք տպագրեալ եղեն ձեռամբ հերձուածող
„ հայոց ||։

Դարձեալ յեր. 161. գրէ վասն վարդան եպսի յու-
„ նանեան, թէ „ Սա գրեաց պատմական և դաւա-
„ նանական յերկար նամակ մի առ Բենեդիկտոս
„ կամ Թօփադու, որչ շարաշար անարգեալ և հալածեալ
„ էին յանգուն հալածանաց հերձուածող հայոց. և
„ զայսր նամակի ունիմք մեք զմի ձեռագիր օրինակ ||։

Այլ և յերես 168 գրէ, թէ „ Մխիթար սեբաս-
„ տացի եկեալ 'ի Կոստանդնուպօլիս յամին 1700, և
„ հաւաքեալ զբազում աշակերտս, հիմնեաց զմիաբանու-
„ թիւն իւր վանական, որում նախագահ եղև ինքն
„ աբբայ. բայց վասն հաւատոյ ընկերոյն . . . ա-
„ եկեղեցին հռոմայ՝ հալածեալ 'ի հերձուածող հա-
„ յոց, փախեաւ ընդ իւրոյն 'ի կղզին Մոռայի ||։

Նոյնպէս և յեր, 198, 199, գովելով զՄեծա-ւորն և զՏիրան իւր որք, թէ 'ի գրոցն մերոյ „ Պա-
„ հեալ լինին բազմութիւնս յոյժ ձեռագիր մատեանս,

,, որոց ոմանք են ինքնաձեռագիր սրբոց Հարց մերոց ,
,, ոմանք պաճուճեալ են գեղեցկագոյն նկարուք , իսկ
,, ոմանք՝ ունին տպագրութեան զաւելաբարդութիւնս՝
,, զհրճամունս և զապականեալ խանգարմունս այնց
,, մատենից՝ զորս արդէն հերձուածող հայքն աղաւ-
,, րեցին || :

Չունիմք մեք արդարև առ աւելեաւ մատնել 'ի քննու-
թիւն այդպիսի բանից և գործոց պատուելի Սուքիաս
եպիսկոպոսի, Եւ որո՞վ իղձիւ բերել կարէ նա 'ի վաւահաս-
թաւել առաջի բոլոր եւրոպացւոց զանմեղ զեկեղեցի և
զազգ մեր. Եւ զի՞նչ չար առեալ է նա 'ի հայոց՝ զի այդ-
պէս բամբասէ յաչանձս ամս Ծի. Եւ որո՞վ իւք փաստիւք
կարէ նա հաստատել զկինեմն մեր հերձուածող. Եւ զի՞նչ
համարում հաս յարգ և պատիւ ունելոց է այսու-
հետև ազգս մեր առաջի այլոց քրիստոնէից. Եւ յո՞ր-
քան բարեաց մարթի զրկել և ո՞րքան վնասուց հարկ հան-
դիպել ժողովուրդ մեր այդպէս հրապարակաւ վատա-
համբաւելով, եւայլն: Զայդ ամ և զայլ նման հետե-
ւութիւնս թողեալ ընթերցողաց 'ի քննել և 'ի դատել,
զայս միայն համարիմք ծանուցանել, Եւ մեք 'ի դոյնօրի-
նակ զրպարտանաց եւրոպացւոց և լատինահայոց շար-
ժեալք 'ի հարկէ կրութեան մերոյ անարգեալ եկեղեցւոյ, գուն
գործեցաք յայսմ մատենի զլիճաբանել նիւթս աղա-
ջայնութեց հաստատել նախ առաւել վկայութեք ածա-
շունչ ատեաց, և այլ ուր պէտք պահանջէին՝ նա և
համառօտ բանից հաւատաձայն գրոց եկեղեցւոյն մե-
րոյ. իսկ զնորդարջակ քննութիւն նոյին՝ զոյգ ընդ
զմծախօս գիտութե փաստից, և վկայութեց ուղղափա-
ռութեան՝ գումարեցաք յայլ մատեան, մակագրեալ,, Խոստովանութիւն
,, հաւատոյ՝ 'ի միջի լուսաւորչական և լատինա-
,, կան Հայոց՝ սիրով 'ի բաց բարձեալ,, որ չէ
մուանգամ մանրակրկիտ վերադնութեն առնել 'ի լոյս :

Դոյն աղգաւորական կարեկցութիւն եւ մեզ յօրէ-

նել և շատին չեղուաւ զայլ մատեան առ 'ի ցուցանել եւրոպացի քրիստոնէից զուգաշփառութիւն մեր եկեղեցւոյ. որպէս առ 'ի չգոյէ օգնականութէ յազգասէր եղբարց մերոց՝ դեռ առանց ապագրութէ կայ մնայ այն գործ:

Յաւելլաք մեք յայսմ մատենին զորոշ խնդիր զուգաշփառութեանն և զանկախութեանն մեր եկեղեցւոյ, առ 'ի ցուցանել զունայնութիւն կարծէց նորց ուսմանց, որք գոն գործեն ուսուցանել մեզ թէ հարկաւոր է հայոց հաւատակցիլ և հնազանդիլ հայրապետին հռոմայ. գոն գործեն դոքա այս՝, բայց ոչ երբեք կարասցեն ապացուցանել զայդ. զի պատմութիւն ազգին հաստատէ, թէ եկեղեցին մեր 'ի հնարկութեանն մինչև ցայսօր՝ ոչ երբեք եղև ընդ ձեռամբ պապին հռոմայ, և ոչ այժմ կամ յապայն եղիցի. առ որ՝ որք զգնային շուառառուչին 'ի հռոմ պատճառաւն՝ զայն ինչ ոչ կամին լսանալ թէ շարժառիթ այնր ոչ էր բան հաղաստակուէ, այլ կարի աշխարհային քաղաքականութէ և մարմնաւոր հնազանդութէ. իբր զի Տրդատ ձեռամբ հռոմայեցւոց նստեալ էր թագաւոր հայոց և կայր հպատակ նոցա. Ձրհ 'ի քրիստոնէանալ կոստանդիանոսի՝ օրէն դատեցաւ գնալ 'ի հռոմ (թէ ճշմարիտ իցէ պատմութիւնն), և ցուցանել զհպատակութիւն իւր և զհոգևոր խնդակցութիւն, առնուլ ընդ իւր և զսուրբն գրիգոր լուս՝ դոյնդինի պատճառաւ, և ո՛չ թէ յաղագս հոգևոր կախման ինչ. և այսր ապացոյցք են նաև այն, զի յաջորդք լուսաւորչին՝ ոչ 'ի հռոմայ, այլ կամ յեպիսկոպոսէն կեսարիոյ կամ 'ի միմեանց առին միշտ զձեռնադրութիւնն. Երկրորդ՝ զի յետ փոխելոյն կոստանդիանոսի զաթոռն իւր 'ի հռոմայ 'ի բիւզանդիոն՝ հայք իսպառ մոռացան զհռոմ, և հատին զամ հաղորդութիւն ընդ պապո

զամս իբր ինն հարիւր՝ մինչև ցժամանակս կիլիկեցւոց. բայց ուրուք յայտնի է՝ թէ յաջորդք առաքելոյ՝ իբր քառասուն թագաւորք և մարզպանք, եւս և իբր վաթսուն կաթողիկոսք 'ի դոցա ժամանակս՝ 'ի բաց թողին բոլորովին զպապն, ոչ թղթակցութիւն և ո՛չ հաղորդակցութիւն ինչ ունելով ընդ նոսա. և եթէ ուրեք երբէք խնդիր ինչ հաւատոյ յուզեցաւ, հայրապետք հայոց ոչ ընդ պապին՝ որ այժմ գլուխ եկեղեցւոյ քարոզի, այլ կամ ընդ տիեզերական ժողովոց՝ կամ ընդ պատրիարգաց յունաց արարին հաղորդութիւն կամ միաբանութիւն. որպիսի եղեն կաթողիկոսքն՝ արիստակէս, վրթանէս, մեծն ներսէս, սահակ պարթև, կոմիտաս, եզր, ներսէս շինող, զաքարիա, մաշտոց, վահան, գրիգոր վկայասէր, գրիգոր պահլաւունի, ներսէս շնորհալի, գրիգոր տղայ, և այլք. արդ երբ ռուբինեանք սկսան 'ի կիլիկիա յամին 1080 պայազատել, յանցանել խաչակիր ասացեալ զօրաց լատինաց ընդ նոյն տեղի, իշխանք և հայրապետք մեր սկսան ընտանենալ ընդ եկեղեցականս և ընդ հաւատս նոցա. բայց և յետ այդորիկ՝ նոյն կիլիկեցիք ազգային ժողովով յօժարեցան առաւելին միաբանիլ ընդ յոյնս, որպէս յա՛յտ է, յաւուրս շնորհալւոյն. և իբրև փոխանակ հաւատակցութեան առաւել եւս օտարացաւ ատելութիւն ընդ մեզ ազգաց, յայնժամ հայք յուսով մարմնական օգնականութեան դարձան դիմեցին առ լատինս, և չորրորդն գրիգոր կաթողիկոս նեղեալ յոյժ 'ի յունաց արար թղթակցութիւն յամին 1184 ընդ պապին հռովմայ. ապա լևոն ա՛ ցանկացեալ օծանել թագաւոր արար նոյնպէս հաղորդակցութիւն յամին 1197 ընդ կայսեր գերմանացւոց և հայրապետին հռովմայ. այսու օրինակաւ սակաւ առ սակաւ բացաւ հայոց դուռն ընտանութեան ընդ նմին և հաւատակցութեան ընդ պապն լատինաց, և տևեցաւ գրեթէ զամս իբր 180, յորում միջոցի թագաւորք և հայրապետք մեր միայն առ 'ի գտանել

ինչեանց աշխարհային նպաստ ընդդէմ յունաց և հա-
գարացւոց՝ դիմեցին առ պապն և առ Թագաւորս լա-
տինաց. մինչև ապա յամին 1375 զրկել լևոնի վեցերորդի
՚ի աթոռութենէն՝ դադարեցաւ և հարստութիւնդ. և
յանգ ել հանդերձ կործանմամբ աթոռոյ և ազգի հայոց:

Յայսց հաստատօք ճշմարտութեանց ամ ոչ հարկ է ե-
ցանել, թէ կարելի հայոց ոսանց ըստ պապս լատինաց,
կամ թէ առացուց, պապականն լատինահայութեանն ան
ծանօթ էր ազգի մերում անդամն ՚ի թադէոսէ առա-
ջելոյն ողոեալ մինչև ցամ ամեան իբրև 1200,
յորում միջոցի հալածանս ՚ի հայոց առանց ճանաչե-
լոյ զպապն՝ քայց որոշեալ զամ ազգս չքնաղանելոյ, ոք
և երանելի եղեն. և թէ ՚ի վերջին ժամանակս ՚ի
կիւլիկեցւոց և յունիթօռաց կեղծեալ կրօնից այդ հա-
զիւ ընկալեալ եղև ՚ի ճանի մի հայոց կալ ՚ի կալ, և
յետ իբր 180 ամաց գրեթէ քոլորովին շիջաւ, և նո-
րացեալ եղև դարս իբր 300. ապա յամէ առեալ իբր
1700 ՚ի կոստանդնուպօլիս՝ լոկով պատահմամբ ինչ՝
իսկ՛ ամառդի վարչութ եկրէն և աւեալս պատրիա-
գաց՝ վերաբերն ծնաւ, և չկի մինչև ցաւորս մեր:

Առաջելոյս անժխտելի հաստատութիւն այս, քայց
՚ի պատմութեանն ազգին, նաև աեարակն վկայութ հայ
վարդապետաց վասն գլխաւորութ պետրոսի և յաջոր-
դաց նորին, հայ և լատին ապեալ ՚ի 1800 ՚ի վենետիկ
յիմաստուն մխիթարեանց. յորում յեր. 12—22 յա-
ղագս աթոռոյն և պապից հռովմայ յառաջ քերեն քանզ
կեղինակաց հայոց. քայց որո՞ց, ո՞րպիսեաց, յո՞ր ժա-
մանակէ ոկոեալ. կամօ՛չն այ. առաջին դնի անդանօր
դատաստանագիրքն մխիթարայ գօշի ՚ի ոկզբն 13 դա-
րուն ծաղկելոյ. ապա զհետ գան կաթողիկոսն ներ-
սէս շնորհալի, գրիգոր ապիրատ և մխիթար (Թոզուլց

ղղաքարիայն ) . ամենեքեան առ համ յետ անացեալ դա-
րուդ հեցեալք . և առ 'ի շփոյթ ժամերական վհայից՝
թունաչգին և աշխարհական անչինք, չուռն թագաւոր,
աթգար դեսպան, թանադրեալ ոմն, և անխմար յներքե-
նացեալք . վհայք արժանի՛ք լսախնահայութեան . ո-
րովք մատնացոյց նշաւակի ահարութիւն անձարակ դա-
տիդ և դատագովացդ . մանգամայն և աշս ունողաց
ցուցեալ չինի՝ թէ թիւրք թիւրոց 'ի հայոց 'ի մէջոցս
12 դարուց հեցեալք՝ ոչ հաւատացեալ՝ ոչ խօսեցեալ և
ո՛չ գրեալ ինչ էն մի գլխաւորութէ պապից հռովմայ ։
Այլ պայդցանէ թան շատ լինի 'ի վերոյիշեալ գիրոն մեր ։

Զայլ հանգամանաց գրոյս թաղումս հանխաթա-
նելոչ 'ի դէպ վարհաք . պայն մայն յաւելեալ՝ թէ ո-
րովհեաև գործս ռհղթնաթար յուսուտս մանհանց ու-
ղեալ է , պ'ի թերան արհանելի թանան՝ խաչանիշ գծի-
'ի հարցմունս անդ որոշեցաք . վոյ հաւատոսոյց դաս-
տիարակք հոգացեն առլ մանհանց ներաել պայնս 'ի մաի
և 'ի չեղուի . արդ ընդարձակ մեհնաթանեցեն նոցա
պիմասսս տմցն՝ միշտ առընթեր ունելով և պտծաշունչ
մաաեանն . ոտ պի առ իւրաքանչիւր թնաթան՝ թացեալ
պնշանագիր վհայութիւնն ( յորոց 'ի գլխահամար և
'ի անահամար թիւոն՝ թէ առ հոծուէ նոցին վրիպակ
ինչ սպրդեալ իցէ , որոնեսցեն 'ի նախընթացս և 'ի յե-
տագայ գլուխսն համ 'ի առունն ) հշւեսցեն ընդ եղելոցն .
որովոչ մայն պանժխաելի հաւատոութիւնն անունցուն
տմ առ 'ի մէնջ աստացեալք , այլ և պհարիւրաւորն ծնա-
նիցին պարգաւոր 'ի սրաի տմցն , լցեալ պատղովք արդա-
րուէ՝ 'ի չեռն յո̄ի քո̄ի , 'ի փառս և 'ի գովեստ ա̄յ ։

Ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ. իսկ զիա՞րդ կարդասցեն՝ յոր ոչն հաւատացին. կամ զիա՞րդ հաւատասցեն՝ որում ոչն լուան. կամ զիա՞րդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ. կամ զիա՞րդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքեսցին (յԱստուծոյ) . . . ապա ուրեմն՝ հաւատք ՚ի լսելոյ են (ծնանին), և լուր՝ ՚ի բանէն Աստուծոյ.

(Հռովմ, Ժ. 14—17)։

# ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ
## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ։

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

### Յաղագս կրօնի ընդհանրապէս։

§. 1. Հարցումն. **Զի՞նչ է կրօնագիտութիւնն։ +**

Պատասխանի. Կրօնագիտութիւն է մակացութիւն, որ տայ մարդոյ ճանաչել զճշմարիտ և զաստուածային կրօնս ըստ կարևոր հանգամանացն առ ուղիղ վարելոյ նոքին 'ի լինել երջանիկ յայսմ և 'ի հանդերձեալ կենի։ Ենթակայ գիտութեան է միտք մարդոյ. առարկայ՝ է կրօնն. իսկ վախճան կամ նպատակ՝ է ճանաչելն և արդիւնալի գործով կատարել զծանուցեալ ճշմարտութիւնս։

§. 2. Հ. **Զի՞նչ է կրօնն։ +**

Պ. Կրօնն հանրապէս և ենթակայապէս նկատեալ, է կիրք կամ զգածումն մարդկային հոգւոյ, որ շարժէ զմիտս 'ի ճանաչել զճշմարտութիւնս զԱստուծոյ և զաստուածայնոց, և ոգևորէ զկամս առ 'ի մատուցանել զպարտաւոր պաշտամունս ներքին և արտաքին զօրութեամբ (տե՛ս, տիտոս. ա. 1։ յովհ. դ. 24։ ժէ. 3։ Ժզ. 2։ եփես. ա. 17. 18։ և այլուր)։

§. 3. Հ. **Զի՞արդ կոչի կրօնն յաստուածաշունչ գիրս։**

Պ. ՚Ի մերում թարգմանութեան ուրեք ուրեք վարի նոյն բառն Կրօն (տե՛ս, յակոբ. ա. 26. 27։ գործոց. իզ. 5։ կողոս. բ. 18։ բ մակաբ. դ. 11 և յայլ տեղիս). այլուր ասի Երկիւղածութի, Երկիւղ այ, Ա.Հ տեառն (տե՛ս, գործոց. թ. 31։ հռովմ. գ. 18։ բ կորնթ. ե. 11. և այլն). այլուր, Ճանապարհ այ (գործ. թ. 2։ ժը. 25. 26։ ժթ. 9. և այլն). բայց որովհետև նիւթ և վախճան կրօնի, որպէս ասելոցքս ցուցանեն, յերկուս կարողութիս հոգւոյն կերպանան, այն է ՚ի միտս և ՚ի կամս, վասն և կրօնն ՚ի սբ գիրս ըստ երկաքանչիւր մասանցդ որոշ որոշ անուանի. զի նկատեալ ՚ի միտս՝ կոչի Գիտութի զայ, Ճանաչել զած, Իմաստութի, Ճշմարտութի, և այլն. որպէս յայսմիկ (ովսեայ, դ. 1. 6։ զ. 6։ եփես. ա. 17. 18։ յովհ. ժէ. 3։ բ պետր. ա. 3—10։ գ. 18։ դանիէլ. թ. 13։ ա թգր. բ. 3։ հռովմ. ա. 18. 19. 25։ և այլուր). իսկ նկատեալ ՚ի կամս կոչի Պաշտօն, Պաշտօնասիրութի, Աստուածպաշտութի, Երկրպագութի, և այլն, որպէս ՚ի յետագայսդ (ա տիմոթ. բ. 2. 10։ գ. 16։ դ. 7. 8։ զ. 3—12։ բ տիմոթ. գ. 5։ յովհ. ժզ. 2։ հռովմ. թ. 4։ ժբ. 1։ եբրայ. թ. 1. 6։ գործոց. ժէ. 22. իե. 19։ և յայլ տեղիս). զորոց զերկոսին միանգամայն առեալ սբն պօղոս կոչէ « գիտութի ճշմարտութեան որ համաձայն իցէ աստուածպաշտութեան (տիտոս. ա. 1)։

## §. Դ. Հ. Զիա՞րդ գոյաւորի կրօնըն ՚ի հոգւոջ մարդոյ։

Պ. ՚Ի կրօնի երկու ինչ պարունակի, Ճանաչել զած և պաշտել զնա. զճշմարտութիս զայ և զած-

այնոց (ոպ՟ և զայլ ամ՟ իրաց) ճանաչեմք կրկնակի. զի 'ի սկզբան անդ ցորչափ մանուկ և տխմար եմք, յայլոց ուսանիմք ('ի ծնողաց, 'ի վարդապետաց, և այլն), այլոց բանից և հեղինակութ՟եց հաւանիմք, զայլոց ասացուածս իբր զճշմարտութ՟իս ընդունիմք (յայսցանէ ծնանի 'ի միտս ներգործութ՟ին այն, որ կոչի Հաւատալ, կմ՟ Հաւատք մարդկային և պատմական). Իսկ յորժամ չափահաս լինի մարդ, դատողութ՟ի և բանականութ՟ի մտաց նր՟՝ շատ թէ սակաւ՝ պայծառ կամ աղօտ չափով լուսաւորի ուսմամբք գիտութ՟եց կմ՟ փորձառութ՟եք, յայնժամ հետզհետէ սկսանի ինքնին ճանաչել նախ զգոյութ՟ի իւր, զհոգին և զմարմինն, զներգործութ՟իս և զկիրս մտաց՝ կամաց և զմարմնոյ իւրոյ, զտկարութ՟իս, զանկատարութ՟իս և զկարօտութ՟իս իւր, այլև զփոխադր՟ձ ազդութ՟իս բանականութ՟ե և զգայականութ՟ե յիրերս, յորոց ծնանին պ՟էսպ պարտաւորութ՟իք ուղղելոյ և բարեկարգելոյ զայնս յայլևայլ վիճակի. երկ՟ր՝ զգոյութ՟ի և զկապակցութ՟ի այլոց մարդկան, որոց առընչակից և անդամակից է ինքն 'ի տան՝ յեկեղեցւոջ՝ 'ի քաղաքի՝ 'ի տէրութ՟ե և յայլ ընկերութ՟իս, որք անդադար լինին և 'ի միմեանս ներգործելով բնաւորինակ փոփոխեն զվիճակ իրերաց, յայսցանէ 'ի միտ առնու թէ՛ զվերաբերութ՟իս իւր առ ընկերս, և թէ՛ զհարկն և զօրէնս պաշտօն տանելոյ նոցա կամ առնլոյ 'ի նոցանէ. եր՟ր՝ ճանաչէ զգոյութ՟ի այլոց էակաց, զերկնի և զերկրի, զանբան անասնոց, զծառոց և զտնկոց, զտարերաց, և զայլ ամ՟ ստեղծուածոց. իմանայ զօգտակարութ՟ի և զվնաս նոցին, և թէ 'ի բնաւ դէպս կարօտի այնց իբրու միջոցաց և օգնական գործեաց առ հաստանել վախճանի իւրում. չ՟ր՝ 'ի վերայ այսր ամ՟ի՝

'ի բարձունս սլանայ մտօք, և բանականութ̅ իւրով կարէ զգաղափար այնր ծայրագոյն էակի (գործոց Ժէ. 22—30: հռովմ. ա̅. 19. 20: բ̅. 14—20. և այլն), որ անսահման կարողութ̅ զինքն (և զա̅մ էակս) ստեղծեալ է յոչնչէ, պահպանէ խնամէ և կառավարէ զինքն յա̅մ անբաժան վայրկենի, և լնու զա̅մ պէտս իւր. յայսմ ա̅մէ ուժգին շարժի ուղղադատ մարդն առ 'ի ճանաչել 'ի մասնաւորի զերկակի վերաբերութ̅ս և զպարտաւորութ̅ս իւր առ ա̅ծ. մի՝ թէ ինքն ը̅ որում էակ բնական յա̅յ ունի զգոյութ̅՝ զկեանս՝ զշարժումն և զներգործութ̅, վա̅կ զգոլ՝ զգործել և զկրել իւր պարտի միշտ ուղղել և վերաբերել առ ա̅ծ ն̅մ վա̅ փառաց ա̅յ գործել զա̅մ (կարդա. յո̅հ. թ. 24: Ժէ. 4: գործոց. գ. 12: Ժբ. 23: ա̅ կորնթ. զ. 20: Ժ. 31: կողոս. գ. 17. և այլն). միւս ևս՝ թէ ինքն ը̅ որում էակ մտաւոր՝ բարոյական և ազատակամք՝ ունի ինքեան նախատիպ օրինակ սրբութ̅ զա̅ծ, որում ա̅մ ջանիւ և 'ի բոլոր կեանս իւր պարտական է նմանիլ և կերպարանակից լինել (ընթերցի՛ր, մտթ. ե̅. 48: եփես. ե̅. 1: հռոմ. ը. 29: ա̅ պտ̅րսի. բ̅. 21: ա̅ յովհ. բ̅. 6: գ. 3: և այլն). Եւս թէ զնոյն զա̅ծ ունի ինքեան օրէնսդիր և դատաւոր, որ ոչ միայն զամենայն̅ կամս և զօրէնս իւր հաղորդեաց նմա, այլ և ունի երբեմն դատել զինքն ը̅ վարուցն, և վարձատրել ն̅մ պատժել ը̅ գործոյն: Արդ այս ա̅մ վերաբերութ̅ք և պարտաւորութ̅ք՝ որ գտանին 'ի մէջ մտածող մարդոյն և 'ի մէջ ա̅յ և այլոց արարածոց, պարունակեն յինքեանս զերկու ինչ. մի՝ զգումար ճշմարտութ̅ց և ծանօթութ̅ց՝ զորս մտօք ճանաչել և հաւատալ ունի մարդն. միւս ևս՝ զգումար

պարտաւորեալ պաշտամանց՝ զորս ունի հատուցանել այ՝ ինքեան՝ և այլոց. և երկու այդոքիկ, իմա՛ ճանաչելի ճշմարտութիւնք (գիտելիք, հաւատալիք), և վճարելի պաշտամունք (գործելիք) 'ի միասին առեալք՝ ծնանին 'ի հոգւոջ մարդոյ զայն ունակութիւն, որ կոչի Կրօնք, և այս յարձակ միտս. իսկ անձուկ ենթադրութիւն՝ միայն առ ած վերաբերեալ ճշմարտութիւնք և պաշտամունք կոչին՝ Կրօն (տե՛ս. յովհ. դ. 24: հռովմ. ժբ. 1—4: փիլիպ. դ. 10: եբրայ. ժա. 6: ա պետր. ա. 8. 15. 16: ղկս. ա. 17. 77: մարկ. ժբ. 28—34: և այլն): Կայ միւս ևս ենթադրութիւն կրօնի արտաքոյ սուրբգրոց՝ առ յետին հեղինակս և 'ի բերանս ռամկաց. առ որս կրօն կամ կրօնաւորութիւն նշանակէ զվանական միանձնական կեանս. և կրօնաւոր նշանակէ զմիանձն վանաբնակ կամ զանապատաբնակ. բայց այս է անյատուկ նշանակութիւն օտար 'ի ճշմարտութենէ. զոր պարտ է զգուշաբար որոշել 'ի բուն իմաստից կրօնի՝ ոչ խառնակելով զխորթն ընդ հարազատ նշանակութեան:

### §. 5. Հ. Քանի՞ իմաստս տայ բառն կրօնք:

Պ. Ոմանք 'ի հեղինակաց խառն վարելով զբառըն կրօն՝ շփոթեն զերն ը գաղափարի նորին և վարդապետութեան զայնմանէ. վասն հարկ է մեզ յայսըմ վայրի ցուցանել զտարբերութիւն ձայնից և զտարազ գործածութեան մերոյ: Զերն՝ կրօն բառիւ իմացեալ, որ ը ասացելոցս՝ է կիրք կամ զգայութիւն հոգւոյ (ունակութիւն կամ առաքինութիւն կոչեցեալ յոմանց) անուանեմք միշտ՝ կրօն, զոր այլք յաւելմամբ ասային՝ ենթակայական, որպէս թէ ենթակայացեալ 'ի հոգւոջ մարդոյ: Գաղափար կըրօնի կոչեմք զպատկեր կամ զիդէայ զինչութեան նորին

'ի միտս կերպաւորեալ, զոր ոմանք վայրապար անուանեցին կրօն գաղափարական կամ իդէական ։ Տարբերի յայժ 'ի սոցունց մակացութիւն կրօնի. (յոմանց՝ կրօն առարկական ասացեալ յում պէտս) այն է, ուսումն՝ գիտութի կմ վարդապետութի 'ի մատեանս գրեալ կմ ձայնիւ քարոզեալ, որ բացատրէ զզինչութի և զհանգամանս կրօնի. զորպիսի մեք 'ի գիրս յայս աւանդեմք ըստ ուղղափառ դաւանութե մերոյ առաքելական և Լուսաւորչական կրօն Հայաստանեայց եկեղեցւոյ ։

§. 6. Հ. Զինչ է առարկայ և ենթակայ կրօնի ։ +

Պ. Նախկին առարկայ կրօնի է ած և ածային իրք. իսկ ենթակայ կրօնի է մարդն ըստ որում էակ մտաւոր և բարոյական, կամ հոգի մարդոյ ըստ ճանաչողական և բաղձողական կարողութեցն նկատեալ ։

§. 7. Հ. Զինչ է նիւթ և կերպ կրօնի ։ +

Պ. Նիւթ կրօնի են կրկնատեսակ ներգործութիք մարդկային հոգւոյ. ոմ 'ի միտս են նմանաբերութիք՝ ծանօթութիք՝ գաղափարք և ճանաչմունք ճշմարտութեցն ածոյ և ածայնոց, որոց գումարն կոչի՝ Հաւատալ կամ Հաւատք ։ Իսկ 'ի կամս են զգացմունք՝ բաղձանք՝ խանդք և գործողութիք ճանաչմանցն համաձայնք, որոց գումարն ասի՝ Բարք, Բարոյք ։

Կերպ կրօնի է ուղիղ եղանակն յանկելոյ և վերածելոյ զնիւթն յառարկայն ։

§. 8. Հ. Զինչ է վախճան կամ Նպատակ կրօնի ։ +

Պ. Նպատակ կրօնի ըստ մտաց նկատեալ՝ է ճանաչել զանսխալ ճշմարտութիս յած և 'ի մարդիկ

վերաբերեալս . ը̅ անձնիշխան կամացն նկատել՝ է ստանալ զանխոտոր բարոյականութի և զհամաձայնութի ը̅ մէջ բարոյական կատարելութե և ծայրագոյն երջանկութե. որոյ 'ի վե̅ր գայ ստացումն վերջին վախճանին և անսահման երանութե̅ն՝ առ որ սահմանեալ է մարդն :

## § 9. Հ. Զի՛նչ է Ոգի կամ յատկութիւն ճշմարիտ կրօնի : +

Պ. Ճշմարտին ա̅ծահաճոյ կրօնն հարկաւ պարտի յա̅ծ ամբառնալ և ը̅ ա̅յ միաւորել զհոգի և զսիրտ մարդոյ , զբանականութին առնել տէր և իշխող զգայութե , զներքինն և զարտաքինն մարդոյն համօրէն նուաճել 'ի ծառայութի ա̅յ որդիական սիրով , և զբովանդակ վարս և զբարս ուղղել ըստ կամաց և պատուիրանաց ա̅յ :

## § 10. Հ. Ո՞ր է առաջին 'ի ճշմարտութիւնս կրօնի : +

Պ. Առարկաւ նկատել՝ առաջին ճշմարիտ նախադասութի 'ի կրօնի է այս ,, Գո՛յ Ա̅ծ ամենասուրբ , ամենաճշմարիտ և ամենարդար " . Իսկ ը̅ ենթակային նկատեալ՝ առաջին ճշմարտութի է այս նախադասութի ,, Ջա՛ն դիր առաւել ք̅ զառաւել պայծառ և ուղիղ ճանաչել զա̅ծ , և գործեա՛ համաձայն ճշմարիտ ճանաչմանցդ (ընթերցի՛ր սղմս . խե̅ . 11 : ծ̅ը . 3 : իմաստ . ժգ . 1 : ժե̅ . 3 : եսայ . ա̅ . 3 : երեմ . դ . 22 . թ . 3 : ովսեայ . զ . 3=6 : յովհ . ժէ . 3 : հռովմ . ա̅ . 18 . 19 : փիլիպ . գ . 8 : ա̅ յովհ . դ . 7 : ե̅ . 20 : և այլն) :

## § 11. Հ. Զիա՞րդ բաժանի կրօնն կամ քանի՞ ազգք են կրօնի : +

Պ. Կրօնն ենթակայական բաժանի 'ի պէսպէս

ազգս բազմօրինակ . այն է՝ նկատեալ ը̅ իսկուե̅ն,
ը̅ ենթակային , ը̅ առարկային և ը̅ աղբերայն :

## §. 12. Հ. Զիա՞րդ բաժանի կրօ- նքն ըստ իսկութեանն .

Պ. Կրօնն ը̅ իսկուե̅ նիւթոյն և կերպին մտա
ծեալ բաժանի 'ի ճշմարիտ , և 'ի սուտ : Ճշմա-
րիտ կրօն այն է՝ որ ճիշդ համաձայնի գաղափարի
կամ սահմանի իւրում (§. 2) . որ ը̅ունելի և նմա
նակերպ է առարկայի իւրում ա̅յ (§. 6). և որ քաջ
միաձայնի վախճանի և ոգւոյ (§.8 . 9) իւրում : Իսկ
կրօն որ չունի զասացեալ համեմատս՝ է սուտ և
ունայն : Ճշմարիտ կրօնն մի միայն կարէ լինել .
զի ամենակերպ ուղղուի և ճիշդ միաձայնուի ը̅ կա-
նոնի՝ մի և միայնակ գտանի (ո̅պ ը̅ մէջ երկուց կէ-
տից՝ մի ուղիղ գիծ միայնակ մարթի ձգել) . իսկ
սուտ կրօնի բազում են յոյժ տեսակք , ո̅պի են
նիւթապաշտուի , տարրապաշտուի , կռապաշ-
տուի , աւելապաշտուի , հեթանոսուի , և այլք :
Ապա ա̅մ մարդ պարտական է որոնել և քննել
թէ կրօնն՝ զոր կրէ 'ի հոգւոջ իւրում՝ իցէ՞ ար-
դեօք ճշմարիտ , թէ ո՛չ . զոր և ս̅բ գիրք հրամա-
յեն առնել (կարդա՛ , բ̅ կորնթց , ժգ . 5: ա̅ թե
սաղ . ե . 20 : հռովմ . ժբ . 2 : ա̅ կորնթ . ժա̅ .
28 : գաղատ . զ . 3 . 4 : եփես . ե . 10 : ա̅ տիմոթ .
գ . 9 . 10 : ա̅ յովհ . դ . 1 : և այլուր) :

## §. 13. Հ. Քանի՞ ազգ են ներգոր- ծութեանց ճշմարիտ կրօնի : +

Պ . Որովհետև մարդն բաղկանայ 'ի հոգւոյ և
'ի մարմնոյ, ներգործութիք կրօնի ևս կատարին կա̅մ
հոգւով , կա̅մ մարմնով . և ը̅ այսմ երբ հոգւով
միայն ներգործէ և պաշտէ մարդ զա̅ծ , ո̅պի են

ՀԱՅԿ. ԽՍՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI - 1922
1004
19830

ներգործութիւնք մտաց և կամաց, ճանաչել զա̃ծ, հրճուիլ նովաւ, երախտագէտ լինել առ նա, սիրել զնա, և այլն, այսպիսի կրօն կոչի՝ Ներքին, Հոգևոր, Մտաւոր, Կամաւոր։ Իսկ յորժամ մարմնով ևս, ծնիւք, ա̃մ արարողութ̃բք և արտաքին զգալի գործողութ̃բ պաշտէ զա̃ծ, ո̃ր են երկիր պագանել, ձայնիւ աղօթել, զոհել, պահել 'ի կերակրոց և այլն, այսպիսի կրօն կոչի Արտաքին, Երևելի, Զգալի, Մարմնական։

§· 14· Ներքին կրօնի դարձեալ երկու են տեսակք· երբ ա̃ծային ճշմարտութիւնք հայեցողա̃կ միայն ճանաչեալ՝ հաւանեալ՝ և հաստատեալ լինին 'ի մտաց, կոչի Հաւատալ, Հաւատք, կամ կրօն մտաց· Իսկ յորժամ գործելի ճշմարտութիւնք կրօնի ընկալեալ և լցեալ լինին 'ի կամաց, ասի Բարեպաշտութի, Սրբութի, Արդարութի, կամ կրօն կամաց։ Նոյնպ̃ արտաքին կրօնի երկու են ազգք· զի երբ միայնակ ոք 'ի ծածուկ պաշտէ զա̃ծ, ասի առանձնական, մասնական, գաղտնի կրօն· Իսկ երբ ը̃ այլոց ընկերութ̃բ և բազմութ̃բ ակն յայտնի պաշտէ, ասի կրօն հրապարակական (տե՛ս մտթ· զ· 1=7։ յովհ· դ· 20· 21· և այլն), և սովին կացուցանի եկեղեցին երևելի, զորմէ ստորև բազում ինչ։

### §· 15· Հ· Արդեօք մարդս է՞ պարտական մտաւոր կրօնիւ պաշտելոյ զա̃ծ, և ուստի՞ ապացուցանի այդպիսի պարտաւորութիւն։

Պ· Բնաւ չիք տարակոյս թէ որևիցէ մարդ ծանր մտօք պարտական է պաշտելոյ զա̃ծ մտաւոր կրօնիւ, ո̃ր ճանաչելով զնա և հաւատալով 'ի նա,

որ ապացուցանի զօրաւոր փաստիւք ։ Նախ՝ 'ի նպատակէ բանական մտաց , զի որովհետեւ մարդն է էակ մտաւոր , և առարկայ մտաց է ճշմարտութին ճանաչելի , զհետ գայ թէ միտքն պարտի միշտ սպատագին առաւելապէս 'ի ճանաչել զճշմարտութիւն զԱյ և զնոյն ինքն զԱծ , որ է առաջին աղբիւր և ծով ամ ճշմարտութեց , և ինքն միայն զօրէ յագեցուցանել զանսահման ըռւնակութի ճանաչող կարողութե մտաց ։ յաւե՛լ և զայն՝ զի որչափ անբաւ տարակացուն գերազանց է արարիչն քան զարարածս , նոյնչափ ևս ճանաչելն զարարիչն առաւել անկաւոր է մտաց քան զիտութին զարարածոց ։ այնպէս զի գումար ամ ճանաչմանց զեղականացս՝ զօրոց ճառեն փիլիսոփայութի , աստեղաբաշխութի , չափաբերութի , բնագիտութի , բժշկութի , և այլ անթիւք , չարժէ և ոչ զստորին աստիճան միոյ ճանաչման՝ որ զԱյ և զԱծային իրաց ։ Երկրորդ՝ 'ի զդայաւորութէ մարդոյս ։ վասն զի մեք հրամանաւ և կամօքն այ զոմք շարժիմք և կեամք , յայ ընկալաք զոր ունիմք , յայ միայնոյ ունելոց եմք աստ և 'ի հանդերձելումն որչափ ինչ յուսամք ։ արդ՝ ո՞չ ապաքէն յետին թշուառութի լինէր ոչ ճանաչելն զնա՝ յորմէ ունիմք զգոյութի զկեանս և զամ ինչ հոգևոր և մարմնաւոր , ո՞չ ապաքէն ծայրագոյն ապերախտութի լինէր և ոչ խել 'ի միտ և յուշ բերել զնա՝ որ բխօրինակ բարութեք լիացուցեալ է զմեզ ներքոյ և արտաքոյ , ո՞չ արդեօք անսահմանական տգիտութի լինէր ոչ հաւատալ 'ի նա՝ որոյ ձեռըն յամ վայրկենի կալեալ պահէ զմեզ չանկանիլ 'ի չքութիւն ։

Երրորդ՝ 'ի վերջին վախճանէ մարդոյս , զի ամ մարդ բ՛նատուր և անլիանալի ցանկութեամբ միշտ խնդրէ և որոնէ զերանութին և զերջանկութին , սակայն

ոչ բնաւ մարթի 'ի ձեռս բերել զայդ՝ եթէ ոչ նախ ճանաչեսցէ զհեղինակն բանական օրինաց կամ զծայրագոյն օրէնսդիրն զա՟ծ, որ ոչ միայն տպաւորեալ է 'ի միտս մարդոյ զամենասուրբ օրէ-նըս իւր, այլ և ունի երբեմն դատել զնա և հատու-ցանել ըստ գործոցն զփառս կամ զպատիժ ։

§. 16. Չորրորդ՝ զի նոյն ինքն ա՟ծ 'ի ս՟բ գիրս, բնական արարածք, օրէնք բնութ՟ և լուսաւոր բանականութ՟ մեր միշտ աղաղակեն յականջս մեր, թէ Ծանի՛ր զա՟ծ և Հաւատա՛ 'ի նա (ընթերցի՛ր, ելից. ի. 2. 3։ երեմ. դ. 22։ թ. 24։ լա՟. 33. 34։ սաղմ. ժը. 2։ խե՟. 11։ ճբ. 3։ իմաստ. ժգ. 1=6։ ժե. 3։ եսայ. ա՟. 3։ ովսեայ. զ. 6։ յովբ. ժբ՟. 7։ մտթ. ժա. 25։ ժզ. 17։ յովհ. է. 17։ ժէ. 3։ հռովմ. ա՟. 18=25։ ժբ՟. 2։ ա՟ կորնթ. ա՟. 5։ բ՟. 14։ եփես. ա՟. 6=19։ կողոս. ա՟. 10։ փիլիպ. գ. 10։ ա՟ յովհ. դ. 7. և այլ՟ն)։ Այսմ պատուիրանի պարտաւոր են առանց բացառութ՟ ամ՟ մարդիկ, արք և կա-նայք, ծերք և տղայք, հարուստք և աղքատք, և ամ՟ վիճակ մարդոյ (կարդա՛. յովհ. զ. 45։ կո-ղոս. գ. 16։ եփես. դ. 13. 14։ բ՟ պե՟տրս. գ. 18։ և այլ՟ն)։ Բայց առաւել քան զայլս պարտա-կան են ճանաչել զա՟ծ և զա՟ծայինս՝ եկեղեցական անձինք, եպիսկոպոսք, վարդապետք, քահանայք, քարոզիչք, և խոստովանահարք, զորոց առան-ձին ճառեսցուք սորև ։

§. 17. Հինգերորդ՝ առ 'ի ճանաչել զա՟ծ շարժեն զմեզ ևս և պատիժք՝ թշուառութիւք և վնասք հոգւոյ և մարմնոյ, որք յա՟ծաշունչ գիրս սպառնացեալ լինին նոցա, որք ոչ ճանաչեն կամ ոգխանան զա՟ծ (տե՛ս, իմաստ. է. 28։ ժգ. 1։

առակաց ԺԹ․ 2։ յոբ․ Դ․ 21։ եսայ․ Ե․ 24։ ԻԷ․ 11։ բարուք․ Գ․ 28։ ովսեայ․ Դ․ 6․ 14։ մրկ․ ԺԲ․ 24։ ա կորնթ․ ԺԴ․ 38։ եփես․ Դ․ 18։ ևն։

§․ 18․ Հ․ Որպիսի՞ պարտին լինել հաւատք և ծանօթութիւնք մեր զաստուծոյ

Պ․ Ճանաչումն մեր զԱյ պարտի լինել նախ՝ ճշմարիտ, ուղիղ և ազատ ՚ի պէսպէս մոլորութեց․ երկրորդ՝ ըստ կարի բացայայտ և պայծառ ըստ համօրէն մասանց և տարածութեն, զի մթին և անբացորոշ ճանաչումն ոչ օգուտ բերէ․ և սխալ է ասելն ոմանց, թէ բաւական է ռամկին հաւատալ զոր ինչ հաւատայ եկեղեցի․ վասն զի գրեալ է, թէ արդարն ՚ի հաւատոյ իւրոյ կեցցէ, և ոչ ՚ի հաւատոց Այլոց (ամբակ․ Բ․ 4։ հռովմ․ Ա․ 17։ եբրայ․ Ժ․ 38)․ երրորդ՝ կենդանի և գործօնեայ, այնպէս զի կարասցէ ծնանիլ և տածել զսէրն և զայլ առաքինութիւ (սղմս․ ԺԹ․ 9։ ա պետրոս․ Բ․ 3։ Բ պետրոս․ Ա․ 3=8։ գաղատ․ Ե․ 6։ կողոս․ Ա․ 5․ 6․ և այլուր)․ և չորրորդ անդադար աճեցուն, այնպէս զի ՚ի բոլոր ընթացս կենաց մերոց յամ ժամու ջան գործեսցուք առաւելուլ և կատարելագործել զճանաչմունս մեր զԱյ և զհաւատալ մեր ՚ի նա (տես, Բ պետր․ Գ․ 18։ Բ կորնթց, Ը․ 7․ Ժ․ 15։ փիլիպ․ Ա․ 9։ կողոս․ Ա․ 10։ եփես․ Ա․ 17։ ա պետրս․ Բ․ 2․ ևն)։

§․ 19․ Հ․ Որպիսի՞ միջոցիւք կարեմք ճանաչել զաստուած։

Պ․ Միջոցք ճանաչելոյ զԱծ են նախ՝ հասուն դատողութբ քննել զհանգամանս և զգործս բնութե զշարժմունս և զբնութի էակաց, տարերաց և կենդանեաց, յորոց ճանաչի Այ գոյութին, բարութին,

իմաստութին, կարողութին, նախախնամութին և կառավարութին (Հռովմ. ա. 20. ը. 14: Իմաստ. Ժգ. 5. և այլն). երկրորդ յաճախ ընթեռնուլ զսբ գիրս, քննել իմաստութբ զած դիպուածս շնորհաց և բնութե անդ պատմեալս. երրորդ՝ ընթեռնուլ զհոգեպատում մատեանս, զպատմութիս այլև այլ ազգաց և թագաւորութեց, արուեստից, գիտութեց և երևելի անցից. չորրորդ՝ լսել զքարոզութի ածային բանից յեկեղեցւոջ, հարցանել զիմաստունս, և աղօթիւք խնդրել 'ի տեառնէ զի տացէ մեզ զհոգի գիտութե և իմաստութե, խելամուտ լինել ճանապարհաց նորա:

**§. 20. Հ. Արդեօք բաւակա՞ն է մարդոյ միայն մտաւոր կրօնիւ պաշտել զաստուած, և միթէ հարկաւո՞ր է զի բաց յայդմանէ ունիցի ևս զկրօն կամաց ր՝ զբարեպաշտութիւն և զսրբութիւն վարուց, և ի՞ւ ապացուցանի այդպիսի հարկաւորութիւն:**

Պ. Ամենևին չէ բաւական մարդոյ լոկ մտաւոր կրօնն, այլ հարկ է ամիւ զի ունիցի քրիստոնեայ բաց յուղիղ հաւատոյ՝ անդադար ջանիւ ստասցի ևս զսրբութիւն հոգւոյ՝ վարուց և գործոց, և այս ապացուցանի բազում անհերքելի փաստիւք, և Նախ այսուիկ, զի զգաղափար այ չէ և չէ հնար մտածել առանց յատկանշի սրբուն, յորոյ 'ի դնիլն՝ աներկբայ զհետ գայ, զի և կամք մարդոյ ամենայնիւ նմանեսցի սրբուն կամացն այ, ըստ որում զամենայն ած չէ մարթ պաշտել առանց սրբուն կենաց, և դիւաց է այդ արուեստ, ճանաչել և ոչ սիրել զած. վասն այսո-

րիկ կրօնն քննական ուղիղ ուսուցանէ թէ հարկ է մարդոյ վարուքն նմանիլ կատարելուե̃ և սրբուե̃ն ա̃յ (կարդա՛ մատթ. ե. 48: յովհ. դ. 24: ա պետր. ա. 15. գաղատ. բ. 19: ա. յովհ. ա. 7: բ. 6. գ 3: և այլուր):

Երկրորդ զի ա̃ծ ոչ միայն է արարիչ մարդոյ, այլ և օրէնսդիր վարուց նորա, դատաւոր գործոյն և վարձատրիչ արդար, վասն այսորիկ մարդս պարտի կատարել զօրէնս արարչի իւրոյ ոչ միայն հաւատալով 'ի գոյուե̃ նորա, այլ և զվարս իւր կերպարանակից առնելով սրբուե̃ նորա:

Երրորդ զի սրբուե̃ն վարուց անբաժան կապակցեալ է ընդ ուղիղ հաւատոյ, ըստ որում միայն ս̃բ սիրտն ընդունակ է տեսանել՝ ճանաչել և հաւատալ յա̃ծ (մատթ. ե. 8. եբրայ. ժբ. 14)· իսկ մեղսալից սիրտն անընդունակ է հասու լինել ճշմարտուե̃ցն ա̃յ. յոր սակս 'ի ս̃բ գիրս մեղաւորք կոչին՝ տգէտ, անմիտ, յիմար, (երեմ. դ. 22: ղկս. իդ. 25: ա կորնթց. բ. 14: գաղատ. գ. 3: և 'ի գիրս առակաց յաճախ):

§. 21. Չորրորդ զի ինքն ա̃ծ 'ի ս̃բ գիրս բազմ̃ ուրեք հրամայէ մեզ զսրբուե̃ վարուց և զառաքինականս կեանս, զորս ընթերցի՛ր, զևտաց. ծա. 44: ժթ. 2: ի. 7. 26: իա. 6. 8: բ օրինց. է. 6: ծա. 2: իզ. 18. 19: ղկս. ա. 74. 75: հռովմ. ղ. 17: ժբ. 2. 2: փիլիպ. դ. 18. եփես. ա. 4: ե. 3. 4. 25: կողոս. ա. 21: գ. 12: ա. թեսղ. դ. 3. 7: և այլուր:

Հինգերորդ զհարկաւորուե̃ ս̃բ վարուց 'ի կրօնի ցուցանեն ևս պատմուե̃ք այլևայլ նախնի և արդի կրօնից զանազան ազգաց և անձանց, յորս տեսանեմք, զի այն կրօն որ խստիւ հրամայէ զսրբուե̃ և յո-

րում ճիշդ պահպանի, առթեաց զամենայն եր-ջանկութի̅ և զբարօրութի̅ հոգւոյ և զմարմնոյ, և յան-դրադարձ վիճակի՝ կրօն որ հեռի է 'ի սրբութ̅ վա-րուց, պատճառեաց յամենեսին զանթիւ թշուա-ռութիս և վնաս. որոց առցի՛ յօրինակ 'ի նախնեաց պատմութիւնն հռովմայեցւոց, և յարդեաց՝ գաղղիացւոց ։

### §. 22. Հ. Ո՞յք են մոլութիւնք ներքին կրօնի հակառակք ։ ÷

Պ. Ներքին մտաւոր և կամաւոր կրօնի դի-մադրեալ մոլութ̅ց բազում են տեսակք և թիւք, բայց երևելիքն են, անա̅ծութի̅, որ խպառ ուրա-նայ զգոյութի̅ ա̅յ (սաղմոս, ծբ̅. 2 ։ և այլն), նիւ-թապաշտութի̅, կռապաշտութի̅, բազմա̅ծութի̅, հա-ւատալ բախտի՝ ճակատագրի և դիպուածոյ, ան-տարբերութի̅՝ որ զորև է կրօն բաւական համարի 'ի փրկութի̅, ծուլութի̅ յուսանիլ զա̅ծայինս, մեղադրե-լի ողխտութի̅ հաւատալեաց, պաշտօն պալատական, զի որ զօրէն պալատական իշխանաց կեղծեօք միայն պաշտէ զա̅ծ, պաշտօն վարձկանական՝ որ 'ի սակս վարձու ծառայէ ա̅յ, կրօն բանդագուշեալ, հա-ւատք առանց սիրոյ, կեղծ բարեպաշտութի̅ արտա-քին առանց ներքին սրբութ̅, ծխապաշտութի̅՝ որ զարտաքին ծէսս ինչ կատարելով զուրկ 'ի ներքին զգայմանէ, համարի վճարել ա̅յ, և այլ նմանք ։

### §. 23. Հ. Արդեօք չէ՞ բաւական մարդոյ միայն ներքին կրօնն. և միթէ հա՞րկ իցէ նմա պաշտել զաստուած ար-տաքին կրօնիւ ևս, այսինքն ծիսիւք և արարողութեամբք. և ուստի՞ ապա-

ցուցանի այդպիսի հարկաւորութիւն ։

Գ. Ամենևին աւելորդ իսկ է հարցումդ. զի թէ մարդս նման հրեշտակաց լինէր հոգի միայն առանց մարմնոյ՝ յայնժամ շատ էր նմա միայն հոգւով պաշտել զԱծ. իսկ որովհետև յայսմ վիճակի մարդս բաղադրի 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ, հարկաւ զհետ գայ թէ պարտ է նմա ծառայել այ թէ՛ հոգւովն և թէ՛ մարմնովն. որ առաւել ևս ապացուցանի Նախ՝ յանլուծանելի կապակցութէ ներքին կրօնին ընդ արտաքնոյն, ի՞բր զի ներքինն ըստ գինչութեն և ներգործութեմբ ոչ անկանի ընդ փորձառութեմբ. բայց ըստ որում հոգի մեր այժմ կապեալ է ընդ մարմնոյ և զգայութեց, անտարակոյս կարօտ գտանի, զի ած գաղափարս, դատողութիւնս և զգացմունս նորա կենդանացին և աճեցին արտաքին քաջայարմար նշանօք ինչ և գործողութեմբ մարմնոյ. ապա թէ ոչ՝ հետզհետէ անզգալի օրինակաւ բնաւ իսկ չքանան և անգոյանան ։ Երկրորդ՝ զի թէ՛ բանական թէ զգայական բնութ մարդոյ սահմանափակ գոլով՝ ծոյլ և թոյլ է առ հոգևորս և վերացեալս. վասն այսորիկ թէ ըստ մտացն և թէ ըստ կամացն ներգործութեց կարօտի հոգին սնանիլ և զարդանալ արտաքին նշանօք և ծիսիւք ։ Երրորդ՝ զի մեք ոչ միայն ըստ ներքին, այլ և ըստ արտաքին զօրութեց և կարողութեց մերոց կախեալ եմք զԱյ, ապա պարտական եմք զերկոսին իսկ արկանել ընդ ծառայութ նորա ։ Չորրորդ զի թէ դոյ 'ի մեզ ճշմարիտ սէրն այ՝ և ընկերին, նա պարտաւորէ զմեզ բարի օրինակաւ շինութ տալ և յառաջացուցանել զբարօրութիս եղբարց մերոց. արդ զայս պարտաւորութի չէ՛ մեզ

մեզ մարթ վճարել լոկ ներքին կրօնիւ, այլ ար-տաքնով, զոր կարեն տեսանել և զգալ ընկերք մեր. յայս սակս երկնաւոր վարդապետն մեր հրա-մայեաց, Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, զի տեսցեն զգործս ձեր բարիս և փա-ռաւոր արասցեն զհայր ձեր (մատթ. ե. 16): Հինգ-երորդ զի նոյն ինքն ա՟ծ հրամայէ ունել մեզ ոչ միայն զներքին կրօն (ընթերցի՛ր, բ՟ օրինց. ե. 29: զ. 5. ժ. 12: ժա. 13: մատթ. իբ. 37: յովհ դ. 24: ծննդց. դ. 3. 4: և այլուր յաճախ). այլև զարտաքին կրօն, յ՟ զծէսս և զարարողութիս հրա-պարականս, ո՟պ 'ի հին օրէնս հրամայեաց շինել զտաճար, մատուցանել զոհս և ողջակէզս, թըլ-փատել, ուխտել, երդնուլ, և այլն. և 'ի նոր օրէ-նըս քս՟ սահմանեաց զմկրտութի, զհաղորդութի, զտօնալուայ, զեկեղեցի, և այլն: Ա՟ արտաքին պէսպէս ծխից կարգա՛ ծննդց. ժէ. 10. իզ. 4. 5: ելից. ժբ. ժը. 19. իե: մատթ. բ. 11: իզ. 39: ղկս. իբ. 41: ա՟ կորնթ. ժա. 4: ա՟ տիմոթ. բ. 8: եփես: գ. 14: մրկ. թ. 28: գրծց. գ. 1: ժե. 28. 29. 41 և՟ն:

Յայսց պատճառաց յայտնի իմացեալ լինի, թէ մեծապէս սխալին և մեղանչեն ծանրապէս այն քրիստոնեայք, որք ծուլութ՟բ կամ թերահաւա-տութ՟բ արհամարհեն զծէսս ս՟բյ եկեղեցւոյ և զար-տաքին արարողութիս կրօնի, յ՟ որք ոչ պահեն պա-հըս, ոչ գնան յեկեղեցի, ոչ տեսանեն զպատա-րագ, ոչ խոստովանին, ոչ հաղորդին, ոչ լսեն զքարոզութի ա՛ծային բանից, ոչ սուրբ պահեն զտօնս և զկիւրակէս. և այլն:

§. 24. Միայն թէ հարկ է ամենեցուն ուսա-նել և ուսուցանել, թէ լոկ արտաքին ծէսն միայ-նակ՝ առանց ներքին և մտաւոր կրօնի՝ ամենևին

անընդունելի է այ • ըստ այսմ՝ պատարագ մատուցանելն է արտաքին ինչ ծէս, որ թէ զուրկ իցէ ՚ի ներքին սրբութենէ և յեղբայրսիրութենէ, անհաճոյ է այ (մատթ • ե • 23• 24 : ծննդ • դ • 3• 4)• պահել ՚ի կերակրոց է արտաքին ինչ՝ որ առանց ներքնոյն արհամարհելի յայ (մատթ • զ • 16 : եսայ • ծը• 2=8 • և այլն)• աղօթել ձայնիւ կամ մարմնով և ժողովել ՚ի տաճար տեառն է արտաքին ծէս ինչ, բայց թէ մեղօք լինիցի և առանց ներքին սրբութե, փոխի ՚ի դատապարտութի (տես • ղկս• ժը 9=15 • մատթ • իա • 21 • 22 • յովհ • թ • 31 • և այլն)• ընթերցի՛ր և ս, եսայ, իթ • 13 • մատթ • ժե • 8 • մարկ • ժը • 30 • յովհ • դ • 24 : Ըստ վերածելն ամ գործք փարիսեցւոց, որք զարտաքին ծէսս միայն պահէին առանց ներքին սրբութե սրտի յայր սակս և յանդիմանեցան ՚ի քէ ՚ի բազում դէպս, զորս գտցես յաւետարանս :

## § • 25 • Հ • Զիա՞րդ բաժանի կրօ-նըն ըստ ենթակային :

Պ • Որովհետև ենթակայ կրօնի է մարդն բոլոր, ըստ պէսպիսութե ներքին և արտաքին կարողութեց նորա՝ պէսպիսանայ և կրօն նորին • և ըստ այսմ զանազանին երեք ազգք կրօնից, այն է, մտացական, զգայական և գործական : Իբր զի ոմանք ՚ի մարդկանէ զկրօն և զածպաշտութի իւրեանց հաստատեն միայն ՚ի կարծեցեալ ուղիղ ճանաչմունս և ՚ի դատողութիս զայ, և զամ այլազգ դատողս համարին մոլորեալս (այս է կրօն մտացական, հայեցողական, գիտնական)• ոմանք դնեն զկրօն իւրեանց ՚ի պատկերակերպութիս երևակայութե, ՚ի սաստիկ զգայմունս, և ՚ի կեղծեալ միաւորութե իւրեանց ընդ այ յայսմ աշխարհի (կոչի սա կրօն

զդայական, զդայապաշտից, ա͞ծամերձու͞ն, և այլն)․ իսկ ոմանք զբովանդակ կրօն իւրեանց հաստատեն ՚ի գործս և յարարս բարեպաշտականս․ որք դարձեալ բաժանին յերկուս, զի կէսք համարին՝ լոկ արտաքին կեղևանօք ծիսից և արարողու͞նց վճարել ա͞յ (որ է ծիսապաշտութի͞, աւելապաշտութի͞, սնոտիապաշտութի͞)․ իսկ այլք ուղիղ դատողու͞թ Ճանաչեն և վարեն զծէսս միայն իբրու զգործիս և զշարժառիթս բարեպաշտութեան, որ ապաքէն զովելի և հարկաւոր է ա͞մ մարդոյ ։ Պատմութի͞ն եկեղեցական ՚ի ստորագրելն զվարս հայրապետաց, վարդապետաց, մարտիրոսաց, հերետիկոսաց, և այլոց, յայտնի ցուցանէ, թէ յայլևայլ ժամանակս և յանձինս մի յայսց տեսակաց կրօնից առաւել զօրացեալ և բռնացեալ է յոմանս ։

### §. 26 Հ. Զիա՞րդ բաժանի կրօնըն ըստ առարկային ։ +

Պ. Կրօնն նկատմամբ առարկայի իւրոյ ի͞ ա͞յ բաժանի ՚ի միա͞ծական, որ զմի ա͞ծ միայն պաշտէ (որ դարձեալ կարէ լինել կամ Ճշմարիտ՝ ո͞պ է քրիստոնէից, կամ սուտ՝ ո͞պ է ոմանց կռապաշտից, որք ՚ի միջի բազում ա͞ծոց իւրեանց զոմն դնէին մեծ և առաջին ամենեցուն)․ և ՚ի բազմա͞ծական, որ զբազում ա͞ծս այլևայլ տեսակաւ պաշտէ, ո͞պ է կռապաշտութի͞ բազմացեղ, տարրապաշտութի͞, անասնապաշտութի͞ (հռովմ․ ա․ 23), աստեղապաշտութի͞, մարդապաշտութի͞ (որ զկերպարանս՝ զմարմին կամ զանդամս մարդկայինս ընծայէ ա͞յ), դիւապաշտութի͞, մանիքեցւոց՝ որ զերկուս սկզբունս իրաց դնէ, զբարի և զչար, և այլն ։

### §. 27. Հ. Զիա՞րդ բաժանի կրօնըն ըստ աղբերացն ։

Պ. Կրօնն՝ ըստ աղբերացն յորոց առնու ըղճանաչմունս զԱյ և զԱծայնոց, բաժանի 'ի բնական և 'ի գերբնական։ Բնական կրօն (որ ասի ևս՝ բանական, մտացական, մարդկային, ինքնագիւտ) այն է, զորոյ զճշմարտութիւն և զնախադասութիւն զԱյ, մարդն ինքնին դատողութ. և մտօք խուրովք 'ի ձեռն զննութ. արարածոց կարէ գտանել՝ առանց ինչ մասնաւոր յայտնութ. յԱյ առնա եղելոց, որպէս էր կրօնն հեթանոս փիլիսոփայից 'ի հնումն։ Իսկ կրօն գերբնական (որ կոչի ևս՝ աստուածայայտնական, պատմական, դրական, հեղինակական, և այլն) է այն, յորում զճշմարտութիւն և զճանաչմունս զԱյ՝ առնու մարդն ոչ յինքենէ կամ յարարածոց, այլ 'ի միջական կամ յանմիջական յայտնութէն Այ. այսպիսի էր նախ կրօնն նահապետաց յադամայ ցմովսէս կեցելոց. երկրորդ կրօնն մովսիսական կամ հրէական, որ տևեաց 'ի մովսիսէ ցՔս. և երրորդ կրօնն քրիստոնէական, որ սկսեալ 'ի Քէ տևելոց է ցկատարած աշխարհի։ Բազում դժուարալուծ վէճք և խնդիրք են առ այժմեան փիլիսոփայս ընդ բնական և գերբնական կրօնէ, զորոց զպատասխանիսն ունիմք յառաջ բերել յընդարձակ աստուածաբանութեան մերում, թէ յաջողեսցէ Տէր։

## §. 28. Հ. Զի՞արդ ապացուցանի թէ կրօնն քրիստոնէական իցէ յաստուծոյ յայտնեալ և ճշմարիտ։

Պ. Այդ ապացուցանի 'ի ներքին և յարտաքին յատկանշաց նորին, որպէս են Նախ այն, զի թէ հաւատալի և թէ գործելի ճշմարտութիւնք նորին՝ են սուրբ, մաքուր, աստուածավայել, և համա-

ձայն ուղիղ բանականութեան մարդոյ։ Երկրորդ զի տուեալ առ 'ի հաստատել զկրօնս զայս արար զաստուածային Ճշմարիտ հրաշս և զքանչելիս ձեռամբ քարոզչաց և դաւանողաց նորին, որք են այնք՝ զորս զքոէ և զառաքելոց պատմէ նոր կտակարանն 'ի բազում տեղիս. և յայտ է թէ ած ոչ արդեօք ներգործէր զհրաշս առ 'ի հաստատել զսուտ կրօն ինչ (ընթերցի՛ր մտթ. թ. 6։ մրկ. Ժզ. 17. 18։ գործոց. Ժդ. 3։ եբրայ. բ. 4. մտթ. Ժա. 4. 5։ յովհ. ե. 36։ Ժդ. 10։ Ժե. 24։ Ի. 31։ Բ պետրոս ա. 16։ և այլն)։ Երրորդ՝ զի քս հիմնադիրն այսր կրօնի՝ արար զբազում կանխաձայն գուշակութիւնս և մարգարէութիւնս զապագայ իրաց և գործոց, որք լցան իրապէս յիւրում ժամանակի (կարդա մտթ. Ժէ. 26։ Իզ. 23. 24։ Ժը. 40։ Իդ. 2—26։ յովհ. գ. 14։ ը. 28։ զ. 63։ Ժզ. 7. 16։ Բ. 19։ և այլն). իսկ արդ գիտելն զապագայս մանաւանդ զազատ գործս մարդոյ՝ յատուկ է միոյն այ։ Չորրորդ յատկանիշ քոական կրօնի է ազդուելի նորին, որով մարթացաւ նա 'ի սուղ ժամանակի կործանել զբազմաժամանակեայ կռապաշտութիւնս զանազան ազգաց, դարձուցանել զանթիւ ժողովուրդս 'ի Ճանաչել զՃշմարիտն ած, և փոփոխել զանառակ պիղծ վարս հեթանոսաց 'ի հրեշտակային սրբութի։ Հինգերորդն է ամրապինդ հաստատութի նորին 'ի դաւանօղս իւր, զի սարսափելի չարչարանք անթիւ հալածչաց ոչ կարացին տկարացուցանել զքրիստոնեայս յուրանալ զայս կրօն, որք պատմեն վարք անհամար սրբոց մարտիրոսաց հայրապետաց՝ Ճգնաւորաց և կուսանաց։ 'Ի սոյն հային և հնութի այսր կրօնի յաղագս մինչև ցայ-

ժըմ . դուշակութիւնք մարգարէից լրացեալք 'ի Ք՟ս և յեկեղեցի նորա . սքանչելի տարածումն քրիստոնէութե՟ն յա՟մ կողմանս աշխարհի , և այլ նմանք , որք 'ի միասին առեալք հաստատեն զճշմարտութի՟ւն քրիստոնէութե՟ն , և զստութի՟ւն այլոց կրօնից՝ յորս ոչ գտանին այս յատկանիշք ։

§. 29. Հ . Ո՞ւր գտանին ճշմարտութիւնք աստուածայայտ կրօնի ։ +

Պ . Ոչ միայն շտեմարան և համբարանոց՝ ուր մթերեալ կան երկնային ճշմարտութիւնք , է ա՟ծաշունչ գիրքն , յորում բովանդակին պատգամք Ք՟սի և առաքելոց նորա , այլև մարգարէից և նահապետաց , որք յ՟այ ընկալեալք և 'ի հոգւոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան և գրեցին զա՟ծավայելս ճշմարտութի՟ս՝ յայլևայլ ժամանակս. որոց գումարըն յետ ժամանակաց 'ի մի մատեան հաւաքեալ՝ կոչեցաւ Ա՟ծաշունչ գիրք , սուրբ գիրք, մատեան, (տե՛ս հռովմ . ա . 2 ։ բ տիմոթ . գ . 15) . յորում և յայտնապէս ասի թէ գրողք նորա 'ի հոգւոյն սրբոյ շնչեալ և շարժեցեալ խօսեցան և գրեցին (տե՛ս . բ պետրոս . ա . 19—21 ։ գ . 15 . 16 ։ ա կորնթ . բ . 12 ։ գաղատ . ա . 11 . 12 . ա թեսաղ . բ . 13 . և այլուր) ։

§. 30. Հ . Ո՞յք են յատկութիւնք ճշմարտութեանց 'ի սուրբ գիրս պարունակելոց ։

Պ . Գլխաւոր յատկութիւնք ճշմարտութեանց ս՟բ գրոց են Նախ՝ անսխալութի՟ւն , զի աւանդեալ են յ՟այ որ ոչ խաբէ և ոչ խաբի , վասն այսորիկ չէ արժան ումեք յերկուանալ ընդ ստուգութի՟ւն այնց բա-

բանից որք արդարեւ յայտնեալ են յա՟յ, միայն թէ իմասցի զհարազատ իմաստս գրելոյն, առ որ յայտ է թէ պահանջին ուսմունք զանազան գիտութեց եւ լեզուաց։ Երկրորդ բաւականու՟ն կամ լիու՟ն եւ կատարելու՟ն, իբր զի որչափ ճշմարտու՟նք գրեալ են՝ բաւական են առ ՚ի փրկել զմեզ եւ արժանացուցանել փառացն արքայու՟ն, եւ չէ հարկ յաւելուլ յայնս զօտար ուսմունս (տե՛ս. մաթ. Ի. 18։ գործ. Ի. 27—30։ Բ տիմոթ. Գ. 15—17։ յայտն. ԻԲ. 18։ եւ այլն)։ Վասն այսորիկ սխալին պապահաւատք, որք զսուրբ գիրս անբաւական համարելով՝ յաւելուն եւս զմարդկային աւանդութիս իբր զբանս ա՟յ ոչ գրեալս։

§. 31. Երրորդ յատկու՟ն գրեալ բանիցն ա՟յ է հաւատաչափու՟ն, իբր զի գումարն ճշմարտութեց սուրբ գրոց ոչ միայն է աղբիւր կամ շտեմարան հաւատալեաց, այլ եւ է ո՟պ թէ փորձաքար կամ ուղղաչափ գործի, որ փորձէ եւ ցուցանէ զչափ՝ զուղղու՟ն եւ զթիւրու՟ն ճանաչմանց եւ հաւատոց որեւ իցէ քրիստոնէի կամ եկեղեցւոյ. որոց դաւանու՟ն կամ հաւատք թէ չափակցեալ հաւասարի ա՟ծաշունչ գրոց՝ կոչի ուղիղ կամ ուղղափառ. իսկ եթէ անհաւասար՝ առաւել կամ պակաս գրոցի, կոչի անուղիղ, սխալ, մոլորական, հերետիկոսական, եւ այլն։ Ապացուցանի այս ա՟մ նախ յանուանակոչութեց սուրբ գրոց, իբր զի գրեալ բանքն ա՟յ՝ յա՟ծաշունչ մատենի անդ կոչին Կանոն (գաղատ. Զ. 16։ փիլիպ. Գ. 16)։ Եւ բացայայտ եւս ՚ի սաղմոս. ԺԸ. 5. յորում եբրայական բնագիրն ասէ || ընդ ա՟մ երկիր ել քավահ նոցա ||. ուր բառն քավահ (ըստ մեկնելոց մունսթերայ, կէյերի, եւ այլոց) նշանակէ ըղ

լորն կամ զկարակն հիւսանց կամ զանկիւնաչափ գործին (տե՛ս Բ Մնաց. Դ. 2: յովբ. ԼԸ. 5: եսայ. ԽԸ. 10: Խդ. 13: երեմ. ԼԱ. 39: ողբոց. Բ. 8. և այլն), և փոխաբանութ՟ ցուցանէ զվարդապետութիւն առաքելոց և մարգարէից (հռոմ. Ժ. 18.), որք երբեմն կենդանի ձայնիւ քարոզեալք, և ապա գրով աւանդեալք՝ միշտ չափ և կանոն են հաւատոց և վարուց մերոց:

Երկրորդ՝ 'ի կիրառութէ և 'ի սովորութէ Քսի և առաքելոց նորա, որք 'ի հաստատելն զնիւթ ինչ հաւատոց և վարուց՝ փաստ և կանոն բանից իւրեանց առնուին զգրեալ բանն այ: Զօրինակս Քսի տե՛ս (մտթ. Դ. 4. 7. 10: ԺԹ. 4: ԻԲ. 29—46: մարկ. Թ. 11: ղկս. Ժ. 26: Իդ. 27: յովհ. Ե. 39. 46. 47): Իսկ զօրինակս առաքելոց գի՛տ (գործոց. Ա. 18—26: Է. 2—52: ԺԳ. 32—42: ԺԸ. 28: ԻԶ. 22: ԻԸ. 23: հռոմ. Դ. 3: Ա կորնթ. ԺԵ. 3: գաղատ. Գ. 6: եբրայ. Ը. 5. և այլուր): Ապա ուրեմն և մեզ քրիստոնեայ պարտական է ըստ օրինակի Քսի և առաքելոց միշտ դիմել 'ի գրեալ բանն այ իբրու 'ի չափ և 'ի կանոն հաւատոյ իւրոց:

§. 32. Երրորդ՝ 'ի գերազանցութէ և 'ի տիտղոսից՝ քարոզեալ և գրեալ բանիցն այ, որք կոչին Կարող, Օգտակար, Իմաստնացուցիչ, Փրկիչ, Ուղղիչ, Խրատիչ, Կատարելագործիչ, և Հաստատիչ մարդոյ յամ գործս բարութ (Բ տիմոթ. Գ. 14—17). կոչին ևս Վարդապետ, Ուսուցիչ (հռոմ. ԺԵ. 4: Ա կորնթ. Ժ. 11: յովհ. Է. 16. 17: ղկս. ԺԶ. 29: Ա տիմոթ. Դ. 13: Զ. 3: Բ յովհ. 10. և այլն). Հինն՝ յո-

լոյ վերայ շինի հաւատք և եկեղեցի քրիստոնէից (եփես. բ. 20: մատթ. ժզ. 18), Լոյս, Ճրագ, որ ցուցանէ զուղիղ կամ զթիւր Ճանապարհն (բ. պետրոս. ա. 19: սաղմ. ՃԺը. 105: առակ. զ. 23). Ճանապարհ՝ յորմէ չէ արժան խոտորիլ յաջ կամ յահեակ (բ օրինաց. ե. 32: իը. 14: եսայ. լ. 21: առակ. դ. 27). Օրէնք, վասն զի յօրինեն (թ օրէնք՝ կանոն լինին) զհաւատս և զբարս մարդկան (յանթիւ տեղիս ածաշունչ գըրոց). ևևս ազխոսուին գրեալ բանիցն այ՝ կոչի պատՃառ և առիթ մոլորուե (մատթ. իբ. 29: (մարկ. ժբ. 24.):

§. 33. Զորորդ ՝ի հրամանաց և յօրինակաց քնի, առաքելոց և մարգարէից նորա. որք պատուիրեցին բանիւ կամ օրինակաւ՝ զի ըստ գրեալ բանիցն այ ուղղեսցուք, բարեկարգեսցուք և կատարելագործեսցուք զհաւատս, զբարս և զծէսս մեր: Տես զքնէ (ղկս. ժղ. 29: յովհ. ե. 39). զմովսէս (բ օրինաց. դ. 2: ե. 32: ժբ. 28—32: իէ. 26: լա. 9—12: գաղատ. զ. 16: է. 10). զյեսուայ (իգ. 6). զեսայեայ (ը. 19. 20). զեզեկիէլէ (դ թգւց. ժը. 3—6). զյովսեայ (դ թգւց իբ. 2—13. իգ. 3. 4). զնեեմեայ (ը. 1—19):

§. 34. Նոյն քարոզեալ և գրեալ բանքն այ յածաշունչ մատենին՝ նկատմամբ այսր յատկուե անուանի՛ն և են ևս՝ Դատաւոր. այն է՝ յորժամ ՝ի մէջ եկեղեցւոյ և քրիստոնէից ծնանի վէՃ զհաւատոյ կամ զվարուց, բանքն այ միայն՝ միջնորդուե հովուաց եկեղեցւոյ դատեն և հատանեն ըզ վՃիռ ցուցանելով զՃշմարտուին և զստուին, որում պարտին հնազանդիլ ամ քրիստոնեայք:

Այս յատկուն̃ ապացուցանի նախ յայնմանէ, զի ինքն ա̃ծ միջնորդու̃թ ի̃ւր գրոյ յայտնէ մեզ զդա-տողուե̃ կմ̃ զդատաստան իւր զի̃րայ հաւատոց և վա-րուց. տե́ս զօրինակն (մատթ. իե. 29–46։ ղկս. Ժզ. 29։ հռովմ. գ. 19։ գաղատ. դ. 30. և այլուր). ու-րեմն սր̃ գիրք են ձայն դատաւորին ա̃յ, և նոյն ինքն դատաւոր վճռահատ։ Երկրորդ՝ ա̃ծ ակն-յայտնի զգրեալ բան իւր կոչէ Դատաւոր (կար-դա՛, սղմս ձդ. 5։ ճխթ. 9։ եսայ. բ. 4։ դանիէ. է. 10։ եղից. իդ. 3։ ղևտաց. Ժը. 4։ հռովմ. բ. 16։ եբրայ. դ. 12։ յայտն. ի. 12). յաւել յայդոսիկ զանժխտելի բանսն քր̃ի, „Որ անարգէ զիս և ոչ ընդունի զբանս իմ, գոյ՝ „որ դատի զնա, բանն՝ զոր ես խօսեցայ՝ նա դա „տի զնա յաւուրն յետնում (յովհ. Ժբ. 48). Եթէ յաւուրն յետնում՝ ապա և այժմ բանն ա̃յ դատէ զա̃մ մարդ և զհաւատս նորա։ Եր̃րդ ապացուցանի այս ճշմարտուե̃ և 'ի կիրառուէ նախնի սր̃ հայրապետաց յայլևայլ դարս, որք 'ի ծագել ուրեք հերետիկոսական կարծեաց՝ հաւա-քեալ բազմաց 'ի ժողով, ըստ գրեալ բանին ա̃յ որոշէին զա̃մ նիւթս առ հաւատս և առ բա-րըս վերաբերեալս։ Յայսցանէ իմացեալ լինի, թէ բաց յա̃ծաշունչ գրոց՝ ոչ գոյ այլ վճռա-տու դատաւոր յեկեղեցւոջ վ̃րս հաւատոյ, և թէ՝ եպիսկոպոսք կամ վարդապետք ոչ են դա-տաւորք, այլ վկայք ճշմարտուե̃ հաւատոյ, որոց բանք և կարծիք 'ի համաձայնիլն ա̃ծաշնչին, լի-նին ուղիղ և ընդունելի. իսկ 'ի հակառակիլն՝ լինին հերքելի։

§. 35. **Հ. Որդեօք ամենայն մարդոյ**

## Հարկաւո՞ր է ընթեռնուլ զաստուածաշունչ գիրս :

Պ. Եկեղեցական անձանց ա̃մբ. հարկաւոր է միշտ ընթեռնուլ, քննել, և իմանալ զս̃բ գիրս. վասն զի նոքա յորդարուէ պարտապան են կերակրել զժողովուրդն բանիւն ա̃յ. զոր պարտին նախ ինքեանք ծամել և որոճալ, և ապա ուղիղ մատակարարել ժողովրդեան, (զորմէ ընթերցի՛ր. յովհ. 39. բ̃. տիմոթ. բ̃. 15. գ. 15—17. այլուր) : Իսկ աշխարհականք թէպէտ և լսելով զքարոզեալ բանն՝ կարեն ուսանիլ զպատգամս ա̃յ և հաւատալ (հռովմ. բ̃. 13: ժ. 15: յակոբ. ա̃. 22), սակայն ՚ի վերայ այսր ա̃մբ՝ և նոյա իսկ յոյժ հարկաւոր է ինքնին ընթեռնուլ զգրեալ բանն ա̃յ, որ հաստատի Նախ այնուիկ՝ զի առաքեալք զթուղթս իւրեանց գրեցին առ ժողովուրդն անխտիր միահամուռ առեալ (տես. հռովմ. ա̃. 7: բ̃ կորնթ. ա̃. 1: յակոբ. ա̃. 1: կողոս: գ. 16: դ. 16: ա̃ յովհ. բ̃. 13: բ̃ օրինց. ժէ. 18. 19: յայտն. ա̃. 3: գործյ. ժէ. 11:) ուրեմն պարտաւորէին զնոսա ընթեռնուլ զգրեալս յինքեանց :

§. 36. Երկրորդ՝ ա̃ծ յայտնապէս հրամայէ ա̃մ քրիստոնէից՝ առանց ՚ի բաց առնլոյ զոք, զի կատարեսցեն զյետադայ պարտաւորութիւնդ. որք են, զգուշանալ ՚ի սուտ մարգարէից՝ ՚ի պտղոյ նոցա ճանաչելով զնոսա (մատթ. է. 15. իդ. 4). մի̃ հաւատալ ա̃մ հոգւոյ, այլ փորձել զհոգիսն թէ յաստուծո՞յ իցեն (ա̃ յովհ. դ. 1). զա̃մ ինչ փորձել և զբարին միայն ընդունել (ա̃ թեսաղ. ե. 21). զգոյշ լինել ՚ի շանց և ՚ի չար մշակաց

(փիլիպ. գ. 2). Ինքնին անձամբ ընտրողութ՟ առնել, քննել և ճանաչել զօրպիսութ՟ բանից և վարդապետութեց քարոզողացն (յովհ. է. 17: գործյ. ժէ. 11: ա՟ կորնթ. ժ. 15. բ՟ յովհ. 10:). չընդունել աւելի ինչ ք՟ զգրեալսն՝ թէպէտ և հրեշտակ յերկնից աւետարանեսցէ (գաղատ. ա. 8, 9). միշտ որոնել՝ գտանել և ընդունել զճշմարտութիւն, և ոչ երբէք հեռանալ յայնմանէ (յովհ. դ. 23. 24: ը. 32: գաղատ. ե. 7: ա՟ կորնթ. ե. 8: բ՟ կորնթ. ղ. 7: եփես. դ. 15—25: ա՟ տիմոթ. բ. 4). Իսկ արդ զայս ամ՟ ծանր պաշտամունս ոչ կարեն լնուլ ժողովուրդք՝ եթէ ոչ ունիցին զգիտութ՟ ս՟ գրոց իբր զուղղաչափ և զփորձաքար. ապա ուրեմն պարտին ընթեռնուլ զայնս:

§. 37. Երրորդ՝ զի յա՟ծաշունչ գիրս գոյ մասնաւոր յայտնի հրաման, որ պատուիրէ որոշակի աշխարհականաց զի ընթերցցին, քննեսցեն և ուսցին զս՟բ գիրս: Գի՛տ և կարդա՛ զայնս բ՟ օրինաց. զ. 7. 8: ժէ. 14—29: մտթ. իա. 42: իբ. 29: իդ. 15: յովհ. ե. 39: ի. 9. 31: բ՟ կորնթ. ա. 13: եփես. գ. 3. 4: կողոս. դ. 16: ա՟ թեսաղ. ե. 27: յայտն. ա. 3: հռովմ. ժե. 4. բ՟ տիմոթ. գ. 16: բ՟ պետրոս. ա. 19—21: ղուկաս. ժզ. 29: եփես. զ. 17: մարկ. ժբ. 24: յակոբ. բ. 8: գաղատ. դ. 21: և յայլ բազում տեղիս: Սոյն դիտմամբ առաջի առնէ մեզ ս՟բ գիրքն զգուշելի օրինակ Պերոյայի հրէից || որք ընկալան զբանն (պաւղոսի և շիղայի) ամ՟ յօժարութ՟, և հանապազ քննէին զգիրս՝ թէ իցէ՞ այս (քարոզութ՟ պաւղոսի) այսպէս (համա-

ձայն սուրբ և ա̄ծային գրոյ) գործոց . ժԷ . 11 :

### §. 38. Հ. Օ՞րինչ օգուտ ունին քաղել աշխարհականք յընթեռնլոյ զաստուածաշունչն :

Պ. Գլխաւոր օգուտ նոցա է նախ 'ի միտ առնուլ և ճանաչել զճշմարտութիւն 'ի նոսին պարունակեալս (կարդա́ . յովհ . ը . 32 : եփես . ղ . 14 : դ . 25 : մաթ . ե . 37 : զաքար . ը . 16) . երկրդ գործով լնուլ և կատարել զծանուցեալ ճշմարտութիւն (տես . սղմս . Ը . 24 : ճԺը . 43 : մաթ . Է . 24 : Իը . 20 : ղկս . զ . 46—49 : ժա . 28 : եփես . դ . 15 : Ե . 9 : յովհ . դ . 23 . 24 . ը . 31 . 46 . Ժգ . 17 : Բ կորնթ . Ժգ . 8 : հռովմ . Բ . 13 : յակոբ . Ա . 22 . ԵՆ) . երրորդ ուսուցանել զայնս ընկերաց և ա̄մ կարօտաց և տգիտաց . որպէս հրամայէ ա̄ծ զայս (ընթերցի՛ր . զաքար . ը . 10 . 16 : առակ . Թ . 9 : Բ տիմոթ . Բ . 2 : սղմս . Ծ . 15 : կէ . 12 : մաթ . Ժգ . 52 : կողոս . գ . 16 : ղկս . Թ . 60) . և չորրորդ քննել և փորձել զվարդապետութի̄ս քարոզչաց և առաջնորդաց իւրեանց (§ . 36 . 37) :

### §. 39. Հ. Քանի՞ են յատկութիւնք քրիստոնէական կրօնի : +

Պ. Գլխաւորքն են երեք, ա̄ ա̄ծայնութիւն , մշտնջենաւորութի̄, և ընդհանրութի̄ (կարողական , այլ ո՛չ ներգործական): Ա̄ծային լինելն ցուցաւ 'ի վերոյ (§. 28) : Մշտնջենաւոր լինելն հաստատի թէ՛ 'ի պատգամաց ս̄բ գրոց (ընթերցի՛ր . մաթ Իը . 20 : Ա̄ կորնթ . Ժգ . 11 . Ժե . 24 : Բ կորնթ . դ . 11 : եբրայ . Ժբ . 27 : Ժդ . 8), և թէ՛ 'ի

փորձոյ, զի զկնի այսչափ դարուց և յետ լուսաւորելոյ պէսպէս ազգաց՝ գիտութեանց և արուեստից, ոչ ուրեք յայտնեցաւ կրօն ինչ լաւագոյն քան զայս: Իսկ ընդհանրութիւն ցուցանի թէ ՚ի յառականշաց նորին (տե՛ս §. 28) և թէ վկայութիւնք այլ (կարդա՛. մարկ. ժզ. 15: հռովմ. ժ. 12: կողոս. ա. 6. 21. 23: եփես. բ. 13. 14): Բայց թէ արդեամբք ոչ է տարածեալ քրիստոնէութիւն յամենայն մանր մասունս աշխարհի, և յամենայն ազգս և ՚ի լեզուս, այդ ոչ է առ յանցանաց կրօնին, այլ դաւանողաց և քարոզչացն. որոց վարք ոչ համաձայնելով դաւանութեան փոխանակ շինութեան բարի օրինակօք՝ գայթագղութիւն տան անհաւատից:

### §. 40. Հ. Որդեօք կրօնն քրիստոնէական իցէ՞ օր քան զօր կատարելագործելի:

Պ. Կրօնիւ եթէ իմասցի ենթակայականն (§. 5.) այն է ճանաչմունք մտաց և զգացմունք կամաց, յայտ է թէ՝ ոչ միայն հնար է, այլ և հարկ է մարդոյ օր քան զօր կատարելագործել զայնս, առաւել քան զառաւել լուսաւորելով զմիտս իւր և ուղղելով զբարս իւր ՚ի սրբութեան կենաց. որպէս ասացաւ ՚ի վերոյ §. 15=20. զոր և Աստուած իսկ հրամայէ մեզ առնել հանապազ (ընթերցի՛ր եփես. դ. 13=16: կողոս. ա. 10: ա. կորնթ. գ. 1=4: ը. 10. 11: եբրայ. ե. 11=14): Եթէ կրօնիւ իմասցի ուսումն և մակացութիւն կրօնի (§. 5). նոյնպէս չիք տարակոյս թէ այն ևս հետզհետէ ճոխանալի է, յորսակս և նախնի մեր հարք հայոց և այլոց ազգաց

միշտ զրեցին զՀաւատոյ և զկրօնից՝ յառաւել զխորհմանալի առնել զայն ժողովրդեն, որոյ և յո̃մի պարտին նմանիլ ո̃մ եպիսկոպոսունք և վարդապետք մեր՝ ուղիղ համառօտելով զբանն ա̃յ, (տես ա̃ տիմոթ. դ. 11=16: բ̃ տիմոթ. բ̃. 2. 15: դ. 2=6. և այլուր):

Իսկ եթէ կրօնիւ իմացեալ լիցին հաւատալի և գործելի ճշմարտութի̃ք 'ի սբ̃ գիրս յա̃յ յայտնեալք, ստոյգ է թէ նոքին ոչ կարօտանան առաւելագոյն կատարելագործութ̃, բայց եթէ զուցէ առնչութ̃ կամ հայեցմամբ առ մարդս. այն է, առաւել բացայայտ լինել և զխորհմանալի 'ի ձեռն ուղիղ մեկնաբանութ̃ հարազատ իմաստից:

### §. 41. Հ. Քանի՞ են մասունք կրօնագիտութեան:

Պ. Որովհետև առարկայ այսր գիտութ̃ է կրօնըն, և 'ի կրօնի երկու ինչ պարունակին իբրև նիւթ (§. 7.) այն է հաւատալի, և գործելի ճշմարտութի̃ք, յայսմանէ և ուսումն կրօնի բաժանի յերկուս մասունս, որոյ առաջինն կոչի Հաւատագիտութի̃, և ուսուցանէ թէ զի՞նչ է հաւատքն, ո՞յք են հաւատալի ճշմարտութի̃ք, և այլ նմանք. իսկ երկրորդ մասն ասի Բարոյագիտութի̃, և բացատրէ զգործելի ճշմարտութի̃ս 'ի քրիստոնէական կրօնէ հրամայեալս: Զերկուս զայդոսիկ աւանդեսցուք քաղուածով 'ի յետագայ գլուխսդ:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

## Յաղագս Հաւատոյ.

§. 42. Հ. Զի՞նչ է հաւատագիտութիւնն: +

Պ. Հաւատագիտութիւն է հմտութիւն որ ուսուցանէ զինչութիւն, զորքերս, զառարկայ և զայլ հանգամանս հաւատալի ճշմարտութեանց: Գիտութեան ենթակայ՝ է միտք մարդոյ ըստ ներգործութեան հաւատալոյ. նիւթ՝ են ճշմարտութիւնք ըստ ա̃ծաշունչ գրոց ուղիղ բացատրեալք. իսկ նպատակ՝ է ուսուցանել և ուսանիլ զուղղափառութիւն, անձնապահ լինելով 'ի պէսպէս տարակարծ դատողութեանց և 'ի մոլորութեանց 'ի նիւթս հաւատոյ:

§. 43. Հ. Զի՞նչ է հաւատքն: +

Պ. Հաւատքն կա̃մ հաւատալն՝ է ներգործութիւն մտաց, որ բացորոշ ճանաչէ և զօրութ̃ շարժառթից սոյգ լինել դատէ՝ հաւանի և ընդունի զա̃մ ճշմարտութիւնս, որք զա̃յ և զա̃ծ այնոց յայտնեալ կան 'ի հին և 'ի նոր կտակարանս (տե՛ս. եբրայ. ժա̄. 1—40: իմաստ. ա̄. 1. 2: ամբակ. բ̄. 4: մատթ. թ 22: ժէ. 19: հռովմ. գ. 22: դ. 3: ե̄. 1: ժ̄. 10, 17: ա̄ թեսղ. բ̄. 13. ևն):

§. 44. Հ. Զի՞նչ է առարկայ հաւատոյ, և յումմէ՞ պարտիմք ուսանիլ զայն:

Պ. Հաւատալի առարկայք կամ նիւթք են

այն ա̄ծ անսուտ ճշմարտութիւնք 'ի ս̄բ գիրս աւանդեալք , որք ստորագրեն մեզ զէութիւն ա̄յ , զանձինսըն , զյատկութիւնս , և զայլ կատարելութիւնս և զվերաբերութիւնս նորա առ ազգ մարդկային . զայս ա̄ծ առանց սխալանաց և ուղղափառ մտօք ուսուցանէ մեզ յա̄ծաշունչ մատենէն մայրն մեր առաքելական ս̄բ եկեղեցին հայաստանեայց միացեալ ընդ ծայրագոյն անկախ Պատրիարգին Էջմիածնի։

## §. 45. Հ. Եկեղեցին հայոց ո՞ւր և զիա՞րդ ուսուցանէ զհաւատալի առարկայս .

Պ . Հայաստանեայց եկեղեցի ուսուցանէ որդւոց իւրոց զա̄ծ ուղղափառութի̄ նախ յա̄ծաշունչ մատենին՝ զոր ինքն ընդունի և հրամայէ զաւակացն միշտ ընթեռնուլ և հաւատալ . երկրորդ 'ի սահմանս և 'ի վճիռս ս̄բ ժողովոց իւրոց . և երրորդ 'ի հաւատապատում գիրս իւր , որք են վեց այսոքիկ , Յաճախապատում ս̄բ լուսաւորչին , Շարական , Ժամագիրք , Խորհրդատետր պատարագի , Մաշտոց , և Ընդհանրական շնորհալւոյն . իսկ զհամառօտութին հաւատալեաց քարոզէ 'ի հանգանակին հաւատոյ , որ է նիկիականն ընդարձակեալ 'ի սուրբ լուսաւորչէն ։

## §. 46. Հ. Ա̄սա՛ 'ի լուր իմ զհանգանակն հաւատոյ հայոց ։ +

Պ . Հաւատամք 'ի մի Ա̄ծ 'ի հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից ։ ( Հաւատամք ) եւ 'ի մի տէր յ̄ս ք̄ս յորդին ա̄յ , ծնեալն յա̄յ հօրէ միածին՝ այ̄ն յէութենէ հօր . ա̄ծ յա̄յ , լոյս 'ի լուսոյ , ա̄ծ ճշ-

մարմին՝ յա՟յ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած. նոյն ինքն 'ի բնութ՟ է հօր. որով ա՟մ ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք, որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութ՟ իջեալ 'ի յերկնից մարմնացաւ՝ մարդացաւ՝ ծընաւ կատարելապէս 'ի մարիամայ ս՟րբոյ կուսէն հոգւովն ս՟րբով, որով էառ մարմին՝ հոգի և միտք և զա՟մ՝ որ ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք. չարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ՝ յերրորդ աւուր յարուցեալ՝ ելեալ 'ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ հօր. գալոց է նովին մարմնովն և փառօք հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութ՟ն ո՛չ գոյ վախճան:

Հաւատամք և 'ի սուրբ հոգին յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս, որ էջն 'ի յորդանան՝ քարոզեաց զառաքեալն՝ և բնակեցաւ 'ի սուրբսն:

Հաւատամք և 'ի մի միայն՝ ընդհանրական և առաքելական եկեղեցի. 'ի մի մկրտութ՟ի. յապաշխարութ՟ի՝ 'ի քաւութ՟ի և 'ի թողութ՟ի մեղաց. 'ի յարութ՟ին մեռելոց. 'ի դատաստանն յաւիտենից հոգւոյ և մարմնոյ. յարքայութ՟իւնն երկնից, և 'ի կեանսն յաւիտենականս:

## §. 47. Հ. Քանի՞ են նիւթք կամ անդամք հաւատոյ յայսմ հանգանակի: +

Պ. Գլխաւոր անդամք են ութ. գոյութ՟ի և միութ՟ի ա՟յ. երրորդութ՟ի անձանց նորին. մարդեղութ՟ի որդւոյն ա՟յ. երկրորդ գալուստ նորա. ա՟ծութ՟ի հոգւոյն ս՟րբոյ. հաճութ՟իք կամացն ա՟յ. եկեղեցի ք՟նի ընդ ա՟բ խորհրդոց. և վերջինք մարդոյ:

§. 48. Հ. Զի՞նչ է աստուած, և զի՞արդ սահմանի: +

Պ. Զաստուած չէ հնար սահմանել բանիւ, զի անհասանելի է մտաց զինչութիւն և էութիւն նորա, այլ միայն 'ի գործոցն ծանուցեալ ստորագրի, թէ Աստուած է էութիւն և ոգի ինքնագոյ, յանհունս իմացական, ամենակատարեալ, ամենահարկաւոր, ստեղծող կառավարող և տէր ընդ հանուր տիեզերաց:

§. 49. Հ. Զիա՞րդ հնար է ապացուցանել թէ գոյ աստուած:

Պ. Զգոյութիւն Աստուծոյ հնար է ապացուցանել վեց փաստիւք. նախ վկայութեամբ Աստուածաշունչ գրոց հին և նոր կտակարանաց, յորս ամենայն ուրեք քարոզի գոյութիւն նորա: Երկրորդ՝ քննելով զարարչութիւն մարդկային ազգի. զի առաջին մարդն ադամ ոչ կարէր ինքն զինքն ստեղծանել, և ոչ յայլմէ ստեղծեալ էակէ ստեղծանիլ. ապա հարկաւ ստեղծաւ յայնմանէ՝ որ ինքն անստեղծեալ, և այն է Աստուած: Երրորդ՝ նկատելով զեղելութիւն աշխարհի, որ է պատահական ինչ, և կարէր ունել կամ չունել զգոյութիւն, և զայսպիսի կամ զայնպիսի գեղեցկութիւն. ուրեմն հարկ է զի գտցի այլ ոմն էակ բաց յաշխարհէ, որ յիւրում իշխանութեան ունիցի զբան գոյութեան սորին և զայսպիսի կատարելութեան: Չորրորդ՝ միաձայն խոստովանութեամբ ամենայն ազգաց յամենայն ժամանակս և յամենայն տեղիս 'ի սկզբանէ աշխարհի մինչև ցայսօր: Հինգերորդ՝ զօրութեամբ ճշմարիտ սքանչելեաց և հրաշից՝ ձեռամբ Քրիստոսի և այլոց գործելոց. զի առ հրաշագործութիւն հարկաւ պահանջի ամենակարողութիւն, ուրեմն և Աստուծոյ: Վեցերորդ փաստն առեալ լինի յայսմանէ, զի մարդս

ազատ անձնիշխանութբ զարդարեալ գոլով՝ յիւրում իշխանութե ունի զբարոյականութիւն, ընդ սմա հարկ է միաւորել զերջանկութի և զերանութի, և առ այսոսիկ հարկաւ պիտի բարոյական օրէնսդիր, դատաւոր և վարձատրիչ, որ է նոյն ինքն Աստուած:

§. 50. Հ. Քանի՞ է աստուած, կամ քանի՞ աստուածք գոն: +

Պ. Մի միայն է ճշմարիտ ած արարիչ երեւելեաց և աներեւութից, և բազմութի ածոց յայտնի հակառակ է ուղիղ բանականութե. զի թէ լինէին երկու կամ բազում ածք ՚ի միմեանց թուով զանազանք, յայնժամ և ոչ մին ՚ի նոցունց լինէր ամենակատարեալ, վասն որոյ և ոչ իսկ ճշմարիտ ած. ըստ որում ամենակատարութին է էութե այ. և յայս սակս միութին կամ մի լինելն ոչ է յատկութի, այլ բուն իսկութի ճշմարտին այ:

§. 51. Հ. Զինչ է անունն աստուծոյ:

Պ. Անուանք դնին իբրեւ առ ՚ի նշանակել զէութի կմ զինչութի նոցին, և որովհետև մարդիկ ոչ կարեն ճանաչել զանսպառագրելի զինչութին այ վասն այսորիկ և ոչ կարացին դնել նմա զանուն իսկական. այլ ըստ գործոց և յատկութեց այ իւրաքանչիւր ազգ և լեզու սահմանեաց նմա զայլեայլ անուանս. ըստ այսմ ՚ի մերում լեզուի կան բառքս „ ած, է, որ էն „ առ յոյնս ՚ի նոր կտակարանի գոն նոյնպէս երեք բառք „ Թէ՛օս ի̃ ած. Քի՛րիօս ի̃ տէր. և տէսփօ՛դէս, զոր նախնիք մեր ՚ի միում տեղւոջ (յուդայ. 4)՝ ուղիղ

Թարգմանեն, իշխան. իսկ յայլ չորս տեղիս (ղկս. Բ. 29: գործոց. Դ. 24: Բ պետրոս. Բ. 1: Բ տիմոթ. Բ. 21) Թարգմանեալ են, տէր: Իսկ առ հրէայս 'ի հին կտակարանի նշանաւոր են եօթըն անուանքս. Էլ կամ էլօահ, ած հզօր, որոյ յոգնականն է էլօհիմ: Էհէհօվահ. ած է՛: Եահ. ած է՛: Էհէհիեհ, ած որ էն: Սատտայի, ած ամենակարող: Ադոնայի. ած տէր: Ադոնայի սէպաօթ, ած տէր զօրութեանց:

§. 52. Հ. Զի՞նչ են ստորոգելիք աստուծոյ: +

Պ. Ստորոգելիք կոչին այնպիսի կատարելութիւնք այ, որք ըստ եղանակի տկար իմացման մերոյ՝ հասեն յածային յանսահման էութե անտի, որք և բաժանին 'ի բացարձակս, որպիսի են, պարզութիւն, անչափութիւն, յաւիտենականութիւն, անկախութիւն, բարութիւն, ամենուրեքութիւն, և այլն. և յառնչականս, որպիսի են, ամենագիտութիւն, սէր կամ մարդասիրութիւն, ողորմածութիւն, համբերութիւն, սրբութիւն, արդարութիւն, և այլն:

§. 53. Հ. Քանի՞ են անձինք յաստուած, և զի՞արդ կոչին: +

Պ. Թէպէտ ած մի է բնութբ և էութբ, սակայն գոն 'ի նմա երեք անձինք 'ի միմեանց զանազանք, որք կոչին, Հայր, Որդի, Հոգի սբ, որք հաւասարապէս ունին զմիևնոյն զէութին ածային, զի հայր է ճշմարիտ ած, որդին է ճշմարիտ ած, հոգին սբ է ճշմարիտ ած, սակայն ո՛չ են երեք ածք, այլ մի ած և տէր արարիչ ամ արարածոյս:

§. 54. Հ. Զիա՞րդ ապացուցանի թէ գոն երեք անձինք յաստուած:

Պ. Ոչ բանականութ՟, այլ վկայութ՟ ս՟բ գրոց ապացուցանի խորհուրդ ս՟բ երրորդութ՟ն. զի 'ի հին կտակարանին ասի || եւ ասէ տ՟ր ա՟ծ, ահա ադամ եղև իբրև զմի 'ի մէնջ (ծննդ. գ, 22)... բանիւ տեառն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ա՟մ զօրութիք նոցա (սղմս. լ՟բ. 6). ես ընդ ձեզ եմ, ասէ տէր ամենակալ, և բանըն զոր ուխտեցի ընդ ձեզ, և հոգին իմ որ կայ 'ի միջի ձերում (անգեայ. բ՟. 5. 6). իսկ 'ի նոր կտակարանի քս հրամայեաց մկրտել յանուն հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ. 'ի մկրտիլ անդ ք՟սի՝ ձայնն հօր լսելի եղև, որդին կայր 'ի յորդանան և հոգին սուրբ էջ աղաւնակերպ. և ս՟բն պօղոս մաղթէ կորնթացւոց, Շնորհք տ՟ն մերոյ յ՟ի ք՟սի, և սէրն ա՟յ (հօր), և հաղորդութ՟ի հոգւոյն ս՟բյ, ընդ ձեզ ամենեսին (բ՟ կորնթց. Ժգ. 13)։

### §. 55. Հ. Ո՞րպ՟ զանազանին երեք անձինքդ յիրերաց։ +

Պ. Առնչութ՟ք իւրեանց. իբր զի հայր ոչ է ծնեալ և ոչ բղխեալ յայլոց, այլ ինքն ծնանի 'ի յաւիտենից զորդին և բղխէ զհոգին ս՟բ։ Որդին ծնեալ է 'ի հօրէ, բայց ինքն ո՛չ ծնանի և ոչ բղխէ զայլս։ և Հոգին ս՟բ բղխեալ է նոյնպ՟ 'ի հօրէ բայց ոչ ծնանի և ոչ բղխէ զայլս։ Ուստի անծնելութ՟ի, ծնողութ՟ի ներգործական, և բղխողութ՟ի ներգործական են յատկութիք հօր ա՟յ. ծնելութ՟ի կրաւորական է յատկութ՟ի որդւոյն. իսկ բղխելութ՟ի կրաւորական է յատկութ՟ի հոգւոյն ս՟բյ։

### §. 56. Հ. Ո՞րպ՟ փաստիւք ապացուցանի թէ հայր իցէ աստուած։ +

Պ. Զա՟ծութ՟ի հօրն ապացուցանեն նախ անուանք ա՟յ միայնոյ պատշաճեալք. երկրորդ սու-

բողելիք միում ճշմարտին ա̄յ յառկայեալք · ե̄րդ գործողու̄ք թէ ներքինք և թէ արտաքինք ճշմարտի ա̄ծայինք · և չորրորդ պաշտօն յարարածոյ միայնոյ ա̄յ ընծայելի ։ Լի՛ են յա̄ծաշունչ գիրս վկայու̄ք որ զայս ա̄մ քարոզեն, յորոց զմին ընթերցի՛ր, ա̄ պետրոս · ա̄ · 2—6 ։

## § · 57 · Հ · Որո՞վ փաստիւք ապացուցանի թէ որդին իցէ աստուած ։

Պ · Զ ա̄ծու̄ որդւոյն ապացուցանեն Նախ ա̄ծավայելուչ անուանք նմա ընծայե̄լք · քանզի ՚ի սբ̄ գիրս կոչի նա, մե̄ծ ա̄ծ և փրկիչ (տես · յովհ · ա̄ · 1 ։ տիտոս · բ̄ · 13) · ՚ի վերայ ամե̄նեցուն ա̄ծ օրհնեալ (հռովմ, թ · 5) · տէր փառաց (ա̄ կորնթ · բ̄ · 8) · պատկեր աներևութին ա̄յ (կողոս · ա̄ · 15) · լոյս փառաց և նկարագիր էութե̄ն հօր (եբրայ · ա̄ · 3) · ճշմարիտ ա̄ծ և կեանք յաւիտենական (ա̄ յովհ · ե̄ · 20) · որդի միածին առ ՚ի հօրէ · միածին որդի որ ՚ի ծոց հօր (յովհ · ա̄ · 14 · 18) · որդի անդրանիկ · անդրանիկ ա̄մ արարածոց · հրեշտակաց գերազանց · հաւասար հօր ա̄յ · (եբրայ, ա̄ · 4 · 6 ։ կողոս · ա̄ · 15 ։ յովհ · ժ · 30 ։ ժէ · 10) ։ Երկրորդ ստորոգելիք ճշմարտին ա̄յ պատշաճե̄լք բայց և որդւոյ ընծայեալք, ո̄լի են յաւիտենականու̄ (եբրայ · ժգ · 8 · կողոս, ա̄ · 17 ։ յովհ · ա̄ · 1 ։ յայտն · ա̄ · 8) · ամե̄նակարողու̄ (յայտն · ա̄ · 8 ։ յովհ · ժ · 28) · ամե̄նուրեքու̄ (մատթ · ի̄ը · 18) · ամե̄նագիտու̄ (կողոս · բ̄ · 3 ։ յովհ · ի̄ա · 17 · բ̄ · 25) · անխափան ճշմարտու̄ (յովհ · գ · 31—34 ։ ժդ · 6 ։ ղկս · ի̄ա · 33 ։ յայտն · գ · 7 · 14) · Ե̄րդ գործողու̄ք յա̄ծային զօրու̄ բղխեալք, որք

ընծայլին որդւոյն, ոչլի են ստեղծանել զաշխարհըս (յովհ. ա. 3: կողոս. ա. 16), պահպանել և կառավարել զտիեզերս (յովհ. ե. 17). զմեռեալս յարուցանել (յովհ. ե. 21. զ. 39. 55). Ճշմարիտ հրաշս գործել, վկայեն աւետարանիչք զքրէ. հիմնել, պահպանել և փրկել զեկեղեցին իւր (մատթ. ժզ. 18: իը. 19. ա. 21). դատել ըզ տիեզերս (յովհ. ե. 22). Նստիլ ընդ աջմէ հօր իւր (մարկ. ժզ. 19). քննել զծածուկս սրտից գաղտնեաց (յայտն. բ. 23): Չորրորդ՝ զածավայել պաշտօն առնուլն որդւոյ յարարածոց (յովհ. ե. 23. եբրայ. ա. 6: հռովմ. ժդ. 11: փիլիպ. բ. 10: յայտն. ե. 13):

§. 58. Հ. Սուրբ գիրք զի՞նչ այլ ևս ընծայեն որդւոյն աստուծոյ. +

Պ. Զմարդեղութին, զտնօրէնութին, զփրկագործութին, և զերկրորդ գալուստ:

§. 59. Հ. Զի՞նչ է մարդեղութիւն որդւոյն աստուծոյ: +

Պ. Մարմնաւորութին կամ մարդեղութին է ներգործութին, ըստ որոյ որդին այ զմարդկային բնութին մեր առանց անձին՝ յարգանդի կուսին մարիամու յինքն էառ և միաւորեաց ընդ անձին և ընդ բնութե իւրոյ, այնպէս զի յետ այսր ներգործութե որդին այ կեայ յերկուս բնութիս, ած յածային և 'ի մարդկային, անխառն և անշփոթ միաւորելս, և որ էրն Ճշմարիտ աստուած յէութէ հօր իւր 'ի յաւիտենից ծնեալ, նոյնն եղև ևս Ճշմարիտ մարդ 'ի կուսէ ծնեալ. որոյ յատուկ անուն եղաւ Յս, այս է փրկիչ. կոչեցաւ ևս Քս, այն է օծեալ կամ մեսիա (յովհ. ա. 41):

§. 60. Հ. Քանի՞ անձինք, և քանի՞ բնութիւնք են 'ի Յիսուս Քրիստոս. +

Պ. Մի միայն է անձն 'ի Քրիստոս, և այն աստուածային և ոչ մարդկային. իսկ բնութիւնք 'ի նմա են աստուածային և մարդկային, բայց անշփոթ և անբաժան միաւորեալք 'ի միում անձին. վասն զի ոչ աստուածային և ոչ մարդկային բնութիւն կորուսին զիւր յատկութիւն և զտարբերութիւն, և ոչ խառնեալ շփոթեցան մին 'ի միւսն, այլ երկաքանչիւրն ևս կան և մնան ամբողջ. և այսպիսի սքանչելի միաւորութեամբ Քրիստոս Տէրն մեր է կատարեալ Աստուած և կատարեալ մարդ, որպէս յայտնի դաւանին ամ վարդապետք եկեղեցւոյս մերոյ։

§. 61. Հ. Օ՞րինչ է տարաձայնութիւնն այն 'ի մէջ հայոց և այլոց քրիստոնէից՝ վասն բնութեանցն քրիստոսի. ընդէ՞ր յոյնք և լատինք երկաբնակ կոչեն զհայս. զի՞նչ է հերետիկոսութիւնն Եւտիքեայ, և ունի՞ արդեօք հայոց եկեղեցին մասն 'ի մոլորութենէն սորա։

Պ. Ամենեւին սնոտի և անհիմն ինչ է երկպառակութիւն այդ. և կախեալ է լոկ 'ի վերայ բառից. հայք իրօք միաձայնեն ընդ այլ քրիստոնեայս յայսմ նիւթ, և չկայ ինչ խտիր ընդ մէջ նց. մոլորութիւն Եւտիքեայ՝ որչափ հնար է քաղել 'ի խառնափնդոր բանից նորա և հետեւողացն՝ այն էր, զի ասէր, թէ բանն Աստուծոյ թէպէտ էառ զմարդկային բնութիւն, սակայն 'ի միաւորելն զայն ընդ աստուածային բնութեան իւրում՝ շփոթեալ խառնակեցան, և յերկուցն ե-

ղեւ մի բնութ̄ի. ըստ այսմ՝ մոլորութ̄իք նորա 'յայս նիւթ էին երեք. նախ՝ թէ ա̅ծային և մարդկային բնութ̄իք շփոթեալ խառնակեցան, կմ̄ թէ միաւորութ̄ի բնութ̄եց եղև շփոթութ̄ և խառնակութ̄. երկ̄դ թէ 'ի ք̅ս յետ միաւորութ̄ն կմ̄ ծննդեանն՝ ոչ մնաց կատարեալ մարդկային բնութ̄ի ամբողջ ըստ յատկութ̄ց և տարբերութ̄ց, և երրորդ թէ 'ի Ք̅ս մնաց մի բնութ̄ի միայն: Արդ զայս ամենայն մոլորութիւնս եւտիքեայ՝ եկեղեցիս հայաստանեայց դատապարտէ, և զուղղափառ հաւատս այդ̄ց մոլորութ̄ց դիմադրեալս յայտնի դաւանի և քարոզէ. վ̅ս զի ուսուցանէ 'ի հաւատապատում մատեանս իւր

§. 62. Նախ՝ թէ բանն Աստուած յետ միաւորելոյն յարգանդի կուսին ընդ մարդկութեանս և յետ ծնանելոյն 'ի կուսէն՝ ունէր զա̅ծութ̄ի կամ զա̅ծային բնութ̄ի. վկայ են այսմ բանք նորա 'ի շարականի, ուր երգէ,

Որում ոչ բաւեն երկինք ընդունել զանբաւելի բնութիդ՝ յարգանդի կուսին բնակեցար, ծընար անճառապէս (կանոն, է.):

Անեղանելի բնութ̄ի՝ որ յէութ̄դ ես ընդ հօր, ծընար 'ի սր̅բ կուսէն (կանոն. ժա):

Անճառելի բնութ̄ի և բան հօր՝ առաքեցար 'ի հայրական ծոցոյ և առեր մարմին 'ի սր̅բ կուսէն (կանոն. ճե):

'Ի խաչին բևեռեցար կամաւ հօր և սր̅բ հոգւոյն և իջեր 'ի գերեզման՝ անմահ բնութ̄ի (կանոն. ճե):

Արթուն բնութ̄ արարիչն ամ̅ն այսօր ննջէ 'ի մէջ մահացելոց (կանոն. խը):

§. 63. Երկրորդ թէ ա̅ծութ̄ի ք̅ի յետ միաւորելոյն ոչ շփոթեալ խառնակեցաւ, այլ մնաց

անփոփոխ և ամբողջ. այսպէս երգէ 'ի շարականի,

Որ անեղ ա̃ծութ̃ և անփոփոխելի բնութ̃ 'ի կուսէն ծնար նախաստեղծին կերպմամբ (Հանոն. ԾԽ. ):

Որ անմարմին բնութ̃ ա̃ծութե̃ քո՝ տէ՛ր, միացար մարմնով յարգանդի կուսին՝ անյեղապէս գոլով (Հանոն. ՅԳ ):

Իսկապէս բանն ա̃ծ միացաւ 'ի մարմնի՝ անփոփոխ գոլով յէութե̃ (Հան. Ի ):

Լոյս Ճշմարիտ որ 'ի հօրէ առաքեցար՝ առեր մարմին պարագրիլ 'ի կուսէն, ոչ մեկնելով յան քնին էութ̃է (Հանոն. ԾԸ ):

§. 64. Երրորդ՝ թէ 'ի Ք̃ս յետ ծնանելոյ նորա 'ի կուսէն՝ եկաց և մնաց մարդկային բնութ̃ իւր ամբողջ և անկորուստ ը̃ժ յատկութեանց և տարբերութեանց իւրոց. և թէ սովին մարդկային բնութ̃ գործեաց և կրեաց նա զա̃մ ինչ. և 'ի հաստատութի̃ այսր՝ եկեղեցին Հայոց 'ի մասնաւորս իջանելով դաւանի 'ի շարականի, թէ Ք̃ս ունէր և եցոյց զմարդկային բնութիւն իւր

1. 'Ի ծնանիլն 'ի կուսէն. ըստ այսց,

Զքեզ աղաչեմք՝ անսկզբնակից հօր որդի, որ այսօր նախաստեղծին բնութ̃ 'ի կուսէն ծնար ա̃ծ և մարդ (Հանոն, Ը):

Որ ըստ հողեղէն բնութե̃ մարդկան զգեցար մարմին (Հանոն, ՀԳ):

Առեր մարմին զմեղուցելոյ նախաստեղծին յանապական կուսէն անճառ միութ̃ (Հան. ԻԴ):

2. Ցերեւնամեայ մկրտութե̃ն 'ի յորդանան. ըստ այսց.

Նախայաւիտենն որդին . . . 'ի յորդանան եկն այսօր մկրտիլ 'ի յովհաննէ՝ կերպացեալ խմորս (բնութ) յաղագս իմ (ճաշոց, ԺԲ)։

Մկրտեալ 'ի յորդանան 'ի յովհաննէ ածային բնութըն և մարմնովն զոր 'ի մէնջն էառ (անդ)։

Յորովայնէ յորովայն երկրպագօղ քսի, որ զհուրըն ած մերով բնութ մկրտեցեր 'ի յորդանան (ճաշոց. հա)։

3. 'Ի փորձելն յանապատին և 'ի պահելն.

Ը պայց,

Որ յաղթեցեր մերով բնութբս 'ի փորձութե կամակոր օձին (ճաշոց, խղ)։

Որ առ 'ի քէն երկրորդ ադամ վասն առաջնոյն յանցանաց բնութ մերով պահելով զմահաբեր պտղոյն լուծեալ զպատրանս (ճաշոց, խէ)։

4. Յաղօթելն իւր առ հայր (ղկս. գ. 12).

Որ զբան քո օրինաց հաստատեցեր գործով մեզ յօրինակ, հանելով զգիշերն 'ի գլուխ յաղօթս այ՝ բնութ մերով անօրինաբար (ճաշոց. ղէ)։

5. Յայլակերպութեանն լերում. ըստ այնմ.

'Ի թափոր 'ի լերինն ձեւացուցեր զքո (մարդկային) բնութիդ անտանելի գոյացութ (ճաշոց, հը)։

6. 'Ի ժամանակս չարչարանացն. ըստ այնմ,

Իջեր յերկնից՝ անսկիզբն որդի, 'ի հողեղէն 'ի բնութէ (հողեղէն բնութ) մարդկան զչարչարանս յանձն առեր (ճաշոց. խղ)։

Հոգայր զկրից տրտմաբար երկուքն եղեալ առանձնաբար. փրկել զաշխարհս հոգիս յօժար՝ բայց է բնութիւն մարմնոյս տկար . . . .

Զի կատարեալ էառ զբնութի ածն բան զմարդ-
կութե, պարտ էր զերկիւղ և զտրտմութի յիւրումն
կրել տնօրէնութե . . . .

Ճառագայթ փառաց էին որ ըստ բնութես մարդ-
կային տագնապեցար 'ի գիշերին (շնոր. խէ):

Սոսկալից սնրովբէից և աճաւորդ քրովբէից՝ խո-
նարհեցար 'ի չարչարանս չարչարելի բնութեամբ
մարդկան (շնոր. ճգ):

7. 'Ի խաչելութն կամ 'ի վերայ խաչին. ըստ
այսց.

Սերով բնութ զոր զգեցար 'ի փայտ խաչին բևե-
ռեցար (շնոր. ճիգ):

Որ իջեր յերկնից վասն մեր՝ զառաջինն առեր ըզ-
յանցանս ադամայ, մերով բնութ բարձեր 'ի վե-
րայ խաչին (շնոր. ճծը).

8. 'Ի ժամու մահուանն. ըստ այնմ,

Քարոզի 'ի սքանչելեացս ած մարմնով վասն իմ
խաչեալ, մերով բնութս մեռանի ած անմահ
խոստովանի (շնոր. խէ):

§. 65. Զորրորդ նոյն եկեղեցին հայոց դաւա-
նի թէ միաւորութի երկուց այսց բնութեցս 'ի.քս՛.
եղև առանց շփոթութե և փոփոխման. որ է ասել
թէ երկոքին բնութիքն, ածայինն և մարդկայինն,
յետ միաւորութն ոչ կորուսին զիւրեանց յատ-
կութիւն, զտարբերութիւն, զամբողջութիւն և զկատա
րելութիւն. այլ երկոքին ևս կացին մնացին միշտ
ամբողջ, անփոփոխ և կատարեալ. ըստ այսմ քա
րոզէ հայոց եկեղեցին 'ի շարականի,

|| Ծածկեալ խորհուրդ յաւիտենին լռեցելոյ
;, և անճառելին՝ 'ի հասանել ժամանակին պար-

„ դեւեցաւ մարդկան ազին, էական բնութի բա-
„ նին խառնեալ Անշփոթ 'ի մեր բնութիս ( Հա-
ւատ. ճլէ ) ։

Նոյնն 'ի պատարագամատոյց խորհրդատետրն իւր աղօթէ առ Հայրն Աստուած ․ || Իսկ 'ի վախճան
„ աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ պարտեաց մե-
„ րոց խզեալ զդատակնիք՝ ետուր մեզ զորդիդ
„ քո միածին ․ ․ ․ քահանայապետ եւ պատա-
„ րագ ․ ․ ․ վասն զի եղեալ հաւաստեաւ եւ ա-
„ ռանց ցնորից մ՟դ, եւ Անշփոթ միաւորութ՟բ մարմ-
„ նացեալ յա՟ծածնին եւ 'ի ս՟բ կուսէն մարիամայ,
„ ճանապարհորդեաց ընդ ա՟մ կիրս մարդկային
„ կենցաղոյս ||։

Յընդհանրական գիրս Ներսեսի շնորհալւոյն (տպեալ 'ի սանկտպետերպուրկ յամի տն՟ 1788) առաւել եւս պայծառ բացատրի 'ի բազում տեղիս ճշմարտութիս այս ․ յորոց սակաւ ինչ քաղելով օրինակեմք աստ, թողեալ ընթերցողաց 'ի բուն գիրսն տեսանել զընդարձակն ։ Արդ-յերես, 9 ․ 10 ասի || Նոյն ինքն բանն ա՟յ էջ
„ յորովայն կուսին մարիամու, եւ առեալ 'ի
„ բնութէ նորա՝ մարմին եւ հոգի եւ միտս, խառնեաց
„ նոր եւ անճառելի միաւորութ՟բ ը՟ ա՟ծութե իւրում․
„ եւ ծնաւ ա՟ծ եւ մարդ կատարեալ Անշփոթ
„ էութ՟բ․ մի ք՟ն եւ մի անձնաւորութի նորա յերկուց
„ բնութեց միացելոց․ չարչարեցաւ անչարչարելին
„ չարչարելի բնութ՟բս 'ի վերայ խաչին ||։

Յերես ․ 83 ․ 84 ․ գրի || Բանն հօր որդին
„ միածին էջ յորովայն կուսին մարիամու, եւ
„ ձգեալ յինքն յարենէ ամենամաքուր կուսին՝
„ միացոյց ընդ ա՟ծութե իւրում անքննելին եւ ան-

„ ճառելի խառնմամբ, և եղև յերկուց կատա-
„ րեալ բնութեց, (քս) յածայնոյն և 'ի մարդկայ
„ նոյն, մի անձնաւորութի կատարեալ, անայլայլե-
„ լի և անբաժանելի բնութբ․ ոչ փոփոխելով
„ մարդկային թանձր և յօդական բնութիս՝ յան-
„ յօդ և 'ի պարզական բնութին այ՝ զիւրն կո-
„ րուսանելով․ և ոչ պարզ անմարմնական բնու
„ թիւնն այ խառնելով ընդ բնութե մարմնոյն՝
„ վրիպեաց յիւրն յաւէտ պարզութէ․ այլ խառ-
„ նի ընդ մարմնոյ անմարմին բանն, ոչ փոփո
„ խութն կամ այլայլութի ունելով 'ի միաւորութն,
„ այլ մնացեալ անփոփոխ՝ առողն և առեալն ||։

'Ի նոյն գիրս 'ի յեր․ 117․ 118․ ասի, ||Բո-
„ վանդակեցաւ յորովայնի կուսին՝ անբովանդա
„ կելին արարածոյ, յորմէ առեալ զմերս մեղսն
„ չական և ապականակիր բնութի՝ զհոգի և զմի-
„ տըս և զմարմին, խառնեալ միացոյց ընդ անմեղ
„ և անապական բնութե իւրոյ․ և եղև նոքօք մի և
„ անբաժանելի (անձն), անփոփոխ 'ի միաւորութն
„ պահելով զածային և զմարդկային էութին․ քան
„ զի բանն ոչ 'ի մարմին բնակեցաւ, այլ թանձ-
„ րացաւ 'ի մարմին․ ոչ փոփոխմամբ՝ այլ միա-
„ ւորութբ․ ոչ առ աչօք իբրև ընդ խողովակ ինչ
„ անցեալ՝ ըստ եւտիքեայ և համախոհից նո-
„ րին, այլ ճշմարտապէ մարմին զգեցեալ ․․․
„ ոչ ոմն և ոմն այսուքիկ, այլ մի էութի և մի անձ
„ նաւորութի 'ի յերկուց բնութեց 'ի մի Քս միա-
„ ցելոց անշփոթելի և անբաժանելի միաւո-
„ րութբ ||։

Ընդանօր յեր․ 140․ 141․ գրեալ լինի ||
„ Մին յերից անձնաւորութեց որդին խոնարհե-

„ցաւ ՚ի մերս բնութիւն, և էառ զկատարեալ
„մարդկային բնութիւնս զհոգի և զմիտս և զմար-
„մին ՚ի սրբոյ կուսէն Մարիամայ. և եղև նոր
„խառնումն ՚ի յերկուց անբաժանելի բնութեանց՝
„Աստուծոյ և մարդոյ՝ ՚ի մի անձնաւորութիւն միացեալ. և
„որդին Աստուծոյ՝ որդի մարդոյ եղեալ. ոչ փոփոխեալ
„յԱստուածային բնութենէն, և ոչ այլայլեալ ՚ի մարդ-
„կային գոյացութենէն. այլ անճառելի միաւորութիւն
„Աստուածութեան և մարդկութեան՝ մնաց անփոփոխելի և
„առանց յեղման բնութեանցն. վասն որոյ ոչ ընդ-
„նեստորի ՚ի յերկուս բնութիւնս և յերկուս դէմս
„բաժանեմք զմին Քրիստոս. և ոչ ըստ եւտիքեայ և
„համախոհից նորին՝ ՚ի մի բնութիւն ժողովեմք շը-
„փոթմամբ և այլայլութեամբ. այլ ունիմք ասել
„զերկու բնութիւնն ըստ մեծին Գրիգորի Աստուածաբա-
„նին, եթէ „բնութիւնք երկուք, քանզի Աստուած և
„մարդ „ եւ այս յիրաւի. զի թէ Աստուած միայն էր
„կամ մարդ միայն, ՚ի դէպ էր ասել մի բնութիւն
„ունել՝ կամ Աստուծոյ և կամ մարդոյ. իսկ յորժամ
„Աստուած է և մարդ միացեալ անճառելի խառնմամբ
„և անյեղապէս, յայտ է թէ Աստուածային ունէր
„բնութիւն և մարդկային, այլ միաւորեալ և ան
„բաժանելի ||: Հարկ է ընթեռնուլ և զգր-
եալսն յերեսն 158—174:

§. 66. Հինգերորդ՝ եկեղեցին Հայոց ՚ի Հաւա-
տապատում գիրս իւր յայտնապէս նզովէ զեւտի-
քէս և զաղանդ նորա զմի բնութիւն շփոթեալ. որպէս
՚ի յընդհանրական գիրսն Շնորհալւոյն, յեր.
143. 144, ասի || Զառ յեւտիքեայ և նորին
„նմանեաց զշփոթմանն յեղանակ խոտեցին և
„անարգեցին (Սուրբ հայրապետքն), և զանկորուստ

,, միայն Երկաքանչիւրոյն՝ 'ի միաւորութն , ծոյ
,, բնութն և մարդոյն , եղին ընդդէմ եւտիքեայ
,, և որոց նախ քան զնա և յետ նորա մի բնութի
,, ասողացն չարաչար . այդ և մեք ըստ ուղղափա
,, ռաց հարցն աւանդութն՝ նզովեմք զայնոսիկ՝ որք
,, վասն յեղման և այլայլութն մի բնութի ասեն բա-
,, նին մարմնացելոյ . . . . (յեր . 160) նզովեմք
,, և զամպարիշտն եւտիքէս , որ զմիութի ծնութն
,, և մարմնոյն՝ շփոթմամբ դաւանէր, և ոչ յատ-
,, կութ 'ի հայեցողութի բնութեցն . ընդունիմք խսկ
,, և երդակցիմք ս'ր և ծազգեաց հարցն , որք
,, այսոցիկ հերձուածոյս մահուչափ Ճգնեալ հա-
,, կառակ կացին , և ուղղափառ հաւատս ծա-
,, շունչ վարդապետութ իւրեանց գրով՝ ետուն
,, մեզ || : Տես դարձեալ և յերես . 234 , և 264 :

§. 67. Վ եցերորդ նոյն եկեղեցի 'ի նոյն գիրսն իւր խոստովանի զքս կատարեալ Ած և կատարեալ մարդ , Ճշմարիտ Ած և Ճշմարիտ մարդ . այսպ անպատրուակ դնի 'ի շարականս

Յառաջ քան զյաւիտեանս որդի նախայաւիտեան՝ այսօր յերկրի երևեալ Ած և մարդ կատարեալ , խանձարրօք պատի (հոգն . Բ) :

Մարդ Ճշմարիտ և գառն անարատ , որ դատաստորեցեր զմեղս 'ի մարմնի , այսօր խոնարհեցար (հոգն . ԽԷ) .

Եղեալ մարդ Ճշմարիտ եկիր կամաւ 'ի չարչարանս (հոգն . ՃԲ) :

Որ եկիր 'ի կատարումն կանխասաց մարգարէիցըն . յանձն առեր մարմնանալ 'ի սրբոյ կուսէն մարդ Ճշմարտապէս (հոգն . ՃԼ ) :

’ի սոյն վերածելն և բանք հանգանակին հայոց, յորում ասի, թէ Քս՟ || Նաւ զհոգի, զմիտս և զմարմին, և զամ՟ որ ինչ է ’ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք ||։

§. 68. Այս ամ՟ բանք, և այլ ևս բազումք զանց արարեալք, յայտնի քարոզեն՝ թէ եկեղեցին հայոց ոչ ընդունի ամենևին զմոլորութի եւտիքեայ, թէ նա ոչ ուրանայ՝ այլ դաւանի ’ի քս՟ զամբողջ ածային բնութի և զկատարեալ մարդկային բնութի. թէ մերժէ նա զմոլորութի մի բնութի ’ի քս՟ ասացողաց. և թէ ընդունի զուղղափառ դաւանութին զսահմանեալն հակառակ եւտիքեայ. յոյր սակս և մեք խորհրդով հաւաքեցաք զսակաւս զայս, մի՛ զի բուն որդիք մերս եկեղեցւոյ ունիցին ճանաչել զհաւատս իւրեանց ’ի հարազատ հաւատապատում մատենից եկեղեցւոյ իւրեանց, և ոչ յանշահ գրուածոց յեռնոց. երկրորդ՝ զի ’ի զրպարտիլն յայլոց իբր եւտիքական՝ ’ի ձեռին ունիցին և մարթասցին տալ նոցա զուղղափառ պատասխանի. և երրորդ՝ զի և մարդագող լատինահայք՝ ճանաչելով զուղղափառութի եկեղեցւոյն մերոյ՝ դադարեսցին ’ի պղտորելոյ զմիտս ժողովրդեան մերոյ, և ’ի փոխելոյ զնոսա յեկեղեցի լատինաց։

§. 69. Հ. Քանի՞ կամք և քանի՞ ներգործութիւնք են ’ի Քրիստոս Յիսուս։

Պ. Որովհետև ըստ ասացելոցս Քս՟ է կատարեալ ած և կատարեալ մարդ, ապա հարկաւ ունի նա թէ՛ զածային կամս և զներգործութիս, թէ՛ զմարդկային կամս և զներգործութիւնս. զայս ուղղափառութի յայտ յանդիման դաւանի և քարոզէ եկեղեցին հայոց ’ի հաւատապատում գիրս իւր։

Վերաձգողն երկնից մշտնջենաւոր հօր որդին՝ ներգործեալ խմոյս (կամօք, բնութ.) 'ի վեր քան զհրաշս, ծառայի առեալ զկերպ անկողոպտելի ածութն (շարակ. ջահահ. խէ):

Բաժակ մահուս յինէն անցցէ, ոչ իմ կամաւ՝ այլ քոյդ սեսցէ (շարակ. ջահ. խէ):

Որպէս խոստովանիմք՝ յՆերկուց Բնութեց մի (անձն) լեալ, և 'ի միաւորութն՝ ոչ կորուսեալ զմի ոք 'ի յերկոցունց (բնութեց), այսպէս և զկամսն ոչ այլևայլ (հակառակ) ասեմք, որպ թէ ածային կամքն հակառակ լինել մարդկայնոյն կամաց, կամ մարդկայինն՝ ածայնոյն, այլ 'ի միոյ էութն Երկին եղելոց Կամաց, ըստ այլևայլ ժամանակի երբեմն ածայինն՝ յորժամ զածութն կամէր ցուցանել զզօրութի, և երբեմն մարդկայինն՝ յորժամ զմարդկութն կամէր յայտնել զխոնարհութին.... Ըստ Կամացս օրինակի՝ զոր ասացաք Երկուց լինել անհակառակաբար, (յն) ածայինն և մարդկային, հաւատամք և Ներգործութեցն նոյնպէս լինել (Երկուց) ածային և մարդկային, 'ի միաւորութ անդ. միոյ անձնաւորութ զՆերկուսին զայսոսիկ խոստովանիմք, երբեմն որպ Ած զածայինսն ներգործելով, և երբեմն որպ մարդ՝ զմարդկայինսն (յընդհանրական. ջէրէ.. 119. 120).

Արդ խոստովանիմք համաձայն ձեզ (Յունացդ) 'ի քնի անճառ միաւորութն՝ զՆերկու Բնութ տեսութի, ոչ փայրապար կամ անբանաբար առանց զխտելոյ զորպէսն, այլ զի խորհուրդ տնօրէնութն յայս հայի. զի Ա՟Ծ զգեցաւ զընութի մարմնոյս, և որ զլանայ զմարդկեղէն բնութն յատկութի 'ի մի Քնն, ուրանայ և զիրաւամբք փրկութին : Տեսա-

նի 'ի նմա և կամք (մարդկային) որ է բնական հոգւոյս շարժումն. տեսանի և Ներգործութի (մարդկային) ըստ մարմնոյ, զի յայտնի լինի աշխատութբ մեր փրկութին և ոչ զօրութբ. կամէր ըստ Ածութն, վասն այնր և հետևեցուցանէր ածութն զկամս մարմնոյն և ասէր, ոչ իմ կամս՝ այլ քոյդ լինի (Անդ. յէջ. 172):

## §. 70. Հ. Զի՞նչ է տնօրէնութիւն որդւոյն Աստուծոյ. +

Պ. Են պէսպէս խորհուրդք մարդեղութեն նր յընթացս կենացն, որպէս են Յղութին, Ծնունդն, Մկրտութին, Քարոզութին, Հրաշագործութիք, Այլակերպութի, Չարչարանք. Մահ, Յարութի, Համբարձումն, և Նստիլն ընդ աջմէ հօր, զորս դաւանիմք 'ի հանգանակի մերում:

## §. 71. Հ. Զի՞նչ է փրկագործութիւն որդւոյն Աստուծոյ:

Պ. Է այն պաշտօն նորա զի զազգս մարդկան փրկեաց և ազատեաց 'ի բարկութեն այ, 'ի մեղաց, 'ի պատժոյ, և 'ի դատապարտութե դժոխոց, զորս լրացոյց նա .քաւակի, ա ուսուցանելով մեզ զամ ճշմարտութիս զայ և զածայնոց. բ բարի օրինակաւ անարատ վարուց իւրոց. գ, մահուամբ և հեղմամբ ար արեան իւրոյ. դ, արդիւնաւորելով մեզ զամ շնորհս այ. որովք եղև պաշտօնեայ և միջնորդ հաշտութե ընդ մէջ այ և մարդոյ՝ լցեալ զպաշտօն Քահանայի, Մարգարէի և Թագաւորի. վասն զի ըստ որում քահանայապետ նոր օրինացս ճիշդ օրինապահութբ և

պատարագաւ մարմնոյ և արեանն վճարեաց ածա-
յին արդարութեն, և վասն փրկութե մարդկան ա-
ղօթս և բարեխօսութիս առ հայրն Ած մատոյց,
ըստ որում մարգարէ՝ զկամս և զպատուիրանս
այ մեզ մեկնաբանեաց, հրաշս գործեաց, և արար
ազգի ազգի կանխաձայնութիս. իսկ ըստ որում թա
գաւոր՝ եղև տէր ամ երկնաւորաց և երկրաւորաց,
այլև գլուխ և կառավար եկեղեցւոյ սբյ (զնմա
գայս ամ 'ի մատթ. ա. 21: ղկս. բ. 11: մատթ. գ.
23: ե. 2: ից. 16: յովհ. ժգ. 14: եբրայ. ե.
4—10: է. 21—28: գործոց. գ. 22. 23: մատթ.
ի. 2: իա. 5: յովհ. ժը. 33. 37: եփես. ե.
23: կողոս. ա. 18. ևն):

§. 72. Հ. Ո՞րք 'ի կիր էառ Քրիստոս զերիս զայդ պաշտամունս. +

Պ. Զպաշտօն քահանայութե և մարգարէութե եղեց 'ի վիճակի ունայնացուցման, իսկ զպաշտօն թագաւորութե 'ի վիճակի բարձրութեան:

§. 73. Հ. Զի՞նչ է վիճակն ունայնացուցման քրիստոսի. +

Պ. Այն վիճակ կենաց՝ յորում զփառս ածութն ոչ 'ի կիր էառ Քս, այլ ծառայական կերպիւ զդառն չարչարանս և զմահ յանձին կալաւ վասն փրկութե մերոյ. այս վիճակ տևեաց 'ի յղութենէն մինչև ցթաղումն 'ի գերեզմանի (տես փի լիպ. բ. 5—10):

§. 74. Հ. Զի՞նչ է վիճակն բարձրութեան քրիստոսի. +

Պ. Այն վիճակ՝ յորում Քս 'ի բաց ե-

դեալ զմ՟ մարդկային տկարութ՟ և զնուաստութ՟, սկսաւ վարել զանձային մեծվայելչութ՟ իւր. որոյ աստիճանք են, իջումն նորա 'ի դժոխս, յարութ՟ն 'ի մեռելոց, համբառնալն յերկինս, նստիլն ընդ աջմէ հօր, և երկրորդ գալուստ նորա առ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, և հատուցանել իւրաքանչիւրոց զվարձս, ոմ՟ դաւանիմք 'ի հանգանակի մերում:

## §. 75. Հ. Ո՞ւ ի՞նչ պարտաւոր եմք մեք Քրիստոսի վասն փրկագործութեան նորա.

Պ. Որովհետև Քս՟ ազատեաց զմեզ 'ի մեղաց և 'ի դժոխոց, ամ՟ քրիստոնեայ պարտական է Նախ՝ ճանաչել և հաւատալ 'ի նա, դաւանիլ զնա և զուսումն նորա, և ոչ երբէք ուրանալ զհաւատս նորա (ընթերցիր, յովհ, գ. 40: ժ. 9. 10: ժբ. 26: ժէ. 3: մատթ. ժ. 32. 33): Երկ՟րդ՝ յարգել և պատուել զնա ծայրագոյն մեծարանօք, զի է էակից հօր, և միջնորդ այ՟ և մարդկան (տես ա՟ տիմոթ. բ. 6: եբրայ. ա. 6: է. 26: յովհան. ե. 23. փիլիպ. բ. 10): Երրորդ՝ յետ հօրն այ՟՝ զյոյս և զվստահութ՟ իւր դնել 'ի նա (յովհ. ժդ. 1: մատթ. իը. 18: հռովմ. ժդ. 9: եբրայ. բ. 17: փիլիպ. դ. 13): Չորրորդ՝ սիրել զնա 'ի բոլոր սրտէ և յամ՟ զօրութէ (յովհ. ժե. 13: ժդ. 21—24: ա կորնթց. ժզ. 22: ա յովհ. ե. 1): Հինգերորդ՝ նմանիլ վարուց և առաքինութեց նորա (ա պետր. բ. 21: յովհ. ժգ. 15: հռովմ. ժգ. 14: եփես. ե. 1: եբրայ. է. 26: ժբ. 2): Վեցե՟րդ՝ հնազանդիլ հրամանաց նր՟

և գործով կատարել զպատուիրանս նորա (մտթ. ԺԷ. 5: յովհ. ԺԴ. 17: ԺԵ. 10: ԺԶ. 23):

### §. 76. Հ. Որո՞վ փաստիւք ապացուցանի թէ Հոգին սուրբ իցէ ճշմարիտ Աստուած.

Պ. Առաւել հոգւոյն սրբոյ ապացուցանի Նախ այնուիկ, զի սր գիրք ընծայեն նմա զանունդ ԱԾ (գործոց. Ե. 3. 4: Ա կորնթ. Գ. 16. ԺԲ. 4—7: ղկս. Բ. 26—30): Երկրորդ՝ զի ընծային նմա ածային ստորոգելիք. որպէս են, ամենակարողութիւն (Ա կորնթ. ԺԲ, 11) ամենագիտութիւն (Ա կորնթ. Բ. 10). անսահմանութիւն (սղմս. ՃԼԸ. 7. 8). նախագուշակութիւն (Ա պետրոս. Ա. 11). Երրորդ՝ ընծային նմա գործողութիւնք միայնում Այ պատշաճեալք. այսպիսի են, ստեղծանել (ծննդց. Ա 2: սղմս. ԼԲ. 6: յոբ. ԼԳ. 4). պահպանել (սղմս. ՃԴ. 30). հրաշս գործել (մտթ. ԺԲ. 28. ղկս. Ա. 35). առաքել և օծանել զՄեսիայն (եսայ. ԿԱ. 16: գործոց. Ժ. 38: մտթ. Դ. 1). կառավարել զեկեղեցին և զպաշտօնեայս նորա (գործոց. Ի. 28: մտթ. Ժ. 20), սրբել, լուսաւորել, արդարացուցանել զհաւատացեալս (յովհ. ԺԴ. 26: Գ. 5: Ա կորնթ. Զ. 11: Գ. 16: Բ կորնթց. Գ. 17: գաղատ. Ե. 22: եփես. Ա. 13. ԵՆ): Չորրորդ՝ ընծայի նմա պաշտօն ածավայել յարարածոց (եսայ. Զ. 3: Ա կորնթ. Զ. 19: մտթ. ԻԸ. 19: եփես. Դ. 30. ԵՆ): Արդ այս ամ պատգամք յայտնի հաստատեն թէ Հոգին սր է որիշ անձն և ճշմարիտ ած հաւասար Հօր և Որդւոյ:

## §. 77. Հ. Յումմէ՞ ելանէ կամ բղխէ անձն Հոգւոյն սրբոյ.

Պ. Քս տէրն մեր պարզ բանիւ ուսուցանէ, թէ Հոգին սբ 'ի Հօրէ ելանէ (յովհ. ժե. 26). և ամ հաւատամպատում գրեանք հայոց եկեղեցւոյն այդպէս քարոզեն ամ ուրեք, ոչ 'ի շարականս, 'ի ժամագիրս ևս, ապա և մեզ պարտ է այդպէս հաւատալ՝ հետևելով քնի Աւետարանին և սբ հայրապետաց հայոց, և ոչ թէ լսել նորաստեղծ ինքնագիւտ ուսմանց ոմանց. որք՝'ի յետին ժամանակս հնարեցին ասել, թէ հոգին սբ բղխէ ոչ միայն 'ի հօրէ՝ այլ և յորդւոյ. զի ածաշունչ գիրք ոչ ուրեք և ոչ երբէք բացորոշ ուսուցանեն զայդ, վասն որոյ և չէ հնար ընդունել զայդ իբրև զմասն հաւատոյ: Խօսեցեալ եմք զայսմանէ ըստ բաւականին 'ի Ճառն մեր, Խորոց հաւատոյ ասացեալ, տես անդ:

## §. 78. Հ. Զի՞նչ են հաճութիւնք կամացն Աստուծոյ.

Պ. Են վճիռք և արտաքին ներգործութիւնք ածային կամաց. որք սահմանեն զդիպուն, զեղանակ և զայլ հանգամանս արարածոց, ըստ այնմ. Եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց՝ ըստ հաճութե իւրում (եփես. ա. 9): Այս հաճութիւնք կոչին ևս, հրաւիրան այ (հռովմ. ը. 28). խորհուրդ այ (ղկս. է. 30). յառաջագրութի այ (բ տիմոթ. ա. 9: եփես. ա. 11). կանխագիտութի այ (գործոց. բ. 23), և այլ նմանք, և բաժանին 'ի բացարձակ և 'ի թէական, 'ի հանրական և 'ի մասնական, և յայլս:

§. 79. Հ. Քանի՞ն են հաճութիւնք կամացն Աստուծոյ. +

Պ. Յինքեան յԱծ նկատեալ՝ մի միայն է կամք և վճիռ նորա. բայց ըստ մերոյս տկար իմացուածոյ՝ բաժանին յայլևայլ տեսակս. որոց գլխաւորքն են, Ստեղծագործուն աշխարհի, Հրրեշտակաց և մարդկան, Նախախնամուն, և Շընորհաբաշխուն. զայսոսիկ դաւանեմք՝ ՚ի հանգանակի մերում, յասելն || յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից . . . . որով ամ ինչ եղև յերկինս և ՚ի վր երկրի, ևն ||:

§. 80. Հ. Զի՞նչ է ստեղծագործութիւն աշխարհի. +

Պ. Է արտաքին գործողուն երեքանձնեայ Ածուն, որ յոչնչէ գոյացոյց զաշխարհս և զամ էակս ՚ի միջոցս վեց աւուրց՝ ՚ի ցոյց մեծվայելչուն փառաց իւրոց և յօգուտ մարդկայինս ազգի: Հանգամանք այսր արարչուն պատմին յառաջին գլուխն գրոց ծննդոց, և յայլ տեղիս սուրբ գրոց:

§. 81. Հ. Զի՞նչ են հրեշտակք.

Պ. Են ստեղծեալ ոգիք, աննիւթք, լրացեալք, իմացականք, և ազատակամք, կարգեալք ՚ի ծառայութի այ, որոց գոյուն հաստատի ՚ի սբ գրոց. և բաժանին ՚ի բարի հրեշտակս, և ՚ի չարս, որք ասին ևս՝ դևք, և գլխաւոր նոցա արուսեակ կամ սատանայ: Բազում բանք են յածաշունչ գիրս հին և նոր կտակարանաց վասն բարի և չար հրեշտակաց, զորս թողումք յառաջ բե-

րել, զի ոմ̃ ոք կարէ գտանել զայնս դիւրաւ ։

§. 82. Հ. Զի՞նչ է մարդն. +

Պ. Մարդն է կենդանի յիմացական յանմահ հոգւոյ և 'ի զգայական մարմնոյ բաղադրեալ, յա̃յ 'ի պատկեր նորա ստեղծեալ առ 'ի ծառայել նմա պատուիրանապահութբ̃ յայսմ աշխարհի, և 'ի վայելել զնա 'ի հանդերձեալ կեանս 'ի յաւիտեան (տե՛ս Ծննդ. ա̃. 26 ։ բ̃. 7 ։ ե̃. 1 ։ իմաստ. թ. 15 ։ սղմս. հէ̃. 39 ։ Ճխն̃. Դ. և այլ յանթիւ տեղիս սբ̃ գրոց) ։

§. 83. Հ. Զիա՞րդ ապացուցանի թէ հոգի մարդոյ իցէ անմահ.

Պ. Անմահութի̃ մարդկային հոգւոյ ապացուցանի նախ վկայութբ̃ ա̃ծաշունչ գրոց հին կտակարանի (զորոց տե՛ս Ծննդ. լէ̃. 35 ։ յոբ. գ. 11—24 ։ Ժ. 19—22 ։ սղմս. իզ. 3—7 ։ ձէ̃. 11. 14 ։ Ճժզ. 17 ։ եսայ. Ժդ. 9—12 ։ եզեկ. լա̃. 14—18 ։ լբ̃. 21—24 ։ լէ̃. 1—14) ։ Երկ̃դ վկայութբ̃ Քի̃ և առաքելոց 'ի նոր կտակարանի (տե՛ս. մտթ. Ժ. 28 ։ Ժթ. 17 ։ իբ̃. 30—33 ։ ղկս. Ժզ. 22—31 ։ իգ. 43 ։ յոհ. Ժա. 25. 26 ։ բ̃ կորնթ. ե̃. 1—11 ։ փիլիպ. ա̃. 23 ։ եբրայ. թ. 27 ։ ա̃ թեսաղ. դ. 12—17) ։ Երրորդ 'ի պարզութէ̃ և յաննիւթ լինելոյ նորին. իսկ աննիւթ լինելն յուցանի 'ի ներգործութեց̃ն, որք են ճանաչել և դատել զա̃մ արարածս, անդրադառնալ 'ի վերայ իւր, ազատութբ̃ տնօրինել զգործս իւր, խորհիլ զա̃յ և զա̃ծայնոց, վերացուցանել զբ̃հանուրս 'ի մասնաւորաց, զանցելոց զապագայս նա-

խաղուշակել, անլիանալի բաղձանօք ցանկալ յաւիտենական երջանկութեան, են. զի նիւթ ոչ զօրէ զայսպիսիս ներգործել, որպէս քաջ ապացուցանեն արդի փիլիսոփայք Ըդէմ Լոքայ և այլոց ոմանց: Չորրորդ հաստատի միաձայն վկայութեամբ նախնի փիլիսոփայից և բովանդակ հին և նոր կրօնապաշտ ազգաց յամ ժամանակս և յամ մասունս աշխարհի բնակելոց: Հինգերորդ այնուիկ, զի բովանդակ բնութիւն և համգամանք մարդոյ այնպէս է կազմեալ յոյ, զի կարէ նա յուսմունս գիտութեանց և յառաքինութիւնս յառաջադէմ զարգանալ 'ի ծայրագոյն աստիճանի. արդ զայս ծայրագոյն զարգացումն ոչ զօրէ մարդս ժառանգել 'ի սակաւօրեայ կեանս յայս. ապա հարկ է զի լիցի այլ կեանք յաւիտենական, յորում գիտութիւնք և առաքինութիւնք, ընդ նոսին և երջանկութիւն մարդոյ կատարելասցին 'ի ծայրագոյն աստիճանի. իբր զի և բարութեան և իմաստութեան այն հակառակ է 'ի չիք դարձուցանել զմարդն անդէն առ նախադրութիւնս խայծելոյ և ըն կելոյ կարողութեց նր: Վեցերորդ՝ բարոյական օրէնք պահանջեն, զի զառաքինութիւն գործեսցուք և ճշմարտութեան պաշտպանեսցուք եթ և 'ի վտանգի դնելով վասն նոցա զկեանս մեր. վասն զի առաքինութիւն և ճշմարտութիւն վասն գեղեցկութեան իւրեանց արժանի են, զի առ սէր նոցա զոհեսցուք զկեանս. իսկ արդ եթէ մարդն յետ մարմնաւոր մահուանըն 'ի չիք դառնայր, յայնժամ բարոյական օրէնք՝ առաքինութիւն և ճշմարտութիւն ոչ կարէին պահանջել 'ի մէնջ զոհել վասն նոցա զկեանս. այլ արժան լինէր առ 'ի պահել զկեանս՝ գործել հակառակ առաքինութեանց և ճշմարտութեանց. զոր օրինակ

հայհոյել զԱծ, մատնել զհայրենիս, սպանանել զծնողս, եւն. հետեւութիւնքս են սուտ, ապա և առաջարկութիւքն: Նօթնե՛րդ՝ անաչառ արդարութին և իրաւարարութին ոչ պահանջէ, զի առաքինութին վարձատրեսցի արժանաչափ պսակօք, և չարագործութին պատուհասեսցի արժանաւոր պատժօք. բայց սակայն յառաջ տեսանի, զի յայսմ աշխարհի ոչ առաքինիք վարձատրին և ոչ եղեռնագործք պատժին արդարութն ըստ արժանեաց, այլ ընդ հակառակն՝ արդարք տանջին որպէս նեղութք, ոպ ղաղարոսն այն (ղկս. Ժզ.) և չարագործք փափկանան յղփութք իբր մեծատունն այն. ուրեմն արդարութն ոչ հարկ է, զի բաց յայսց կենաց լիցի այլ կեանք՝ յորում արդարք և մեղաւորք ընկալցին զարդարադատ վարձ իւրեանց, և Ճշմարտեսցի գրեալն „ Սա աստ մխիթարի, և դու այդր պապակիս:

§. 84. Ութե՛րդ՝ եթէ մարդն յետ մահուանն չքանայր հոգւով և մարմնով, այս չքութի ունէր պատճառիլ կամ 'ի նոյն մարդոյ, կամ յայլ, կամ յայլ արարածոց. իսկ արդ և ոչ զմի յայսց հնար է հաստատել, ապա մարդս զկնի մահուանն ոչ չքանայ: Փոքր նախադասութիս հաստատի ըստ մասանցն. և նախ մարդն ոչ կարէ ինքն զինքն 'ի չքութի ածել. զի մարմինն փոխարկի 'ի հող, իսկ հոգին պարզ և աննիւթ լինելով ոչ կարէ չքանալ, ոպ ասացաք. երկրորդ այլ արարածք ևս չունին զօրութի չքացուցանելոյ զնա, այլ միայն զկերպն փոփոխեն. ոպ հուրն զփայտն փոխէ 'ի մոխիր, բայց ոչ ածէ զայն 'ի չքութի. և չիք բընաւ այդմ օրինակ 'ի բնութե իրաց. եթէ Ած

միայն կարէ այն 'ի չքուէ ածել ․ բայց սակայն մինչև ցայժմ ոչ ուրեք յայտնեաց նա թէ կամիցի զայդ ․ այլ հակառակ այդմ՝ թէ գերբնակս 'ի սուրբ գիրս և թէ՛ բնական եղանակաւ՝ բոլոր ազգի մարդոյ յայտնեաց, թէ մարդն յետ մահուանն ունի մնալ կենդանի հոգւով և մարմնով։ Իններորդ հանապազօրեայ փորձառութ՟ տեսանեմք զի ամ՟ մարդիկ բնական հակամիտութ՟ և ներքին թելադրութ՟ միշտ ցանկան և գուն գործեն լինել երջանիկ և բարեբաղդ ․ և այս ցանկուէ երջանիկ լինելոյ՝ որովհետև է հանրական յամ՟ մարդիկս և հարկադրութ՟ ինչ տպաւորեալ (ք՟ զոր չէ հնար մարդոյ 'ի բաց դնել), իրաւամբք հաւատացել լինի, թէ յայ՟ միայնոյ դրոշմեալ իցէ 'ի սրտի ամ՟ մարդոյ ․ իսկ արդ՝ հարկ է ևևս ուղիղ դատողութ՟ համարել, թէ այդ երջանկուէ լիցի յաւիտենական և աներկրական ․ ապա թէ ոչ, եթէ երբեմն ունէր դադարել՝ յայնժամ ոչ ևս լինէր ճշմարիտ, և մարդն նովին ոչ լինէր ճշմարտիւ երջանկացեալ ․ զի մտածելով զկորուստ նորին, միշտ տանջեալ լինէր չարաչար թշուառութ՟ ․ և նոյն ինքն Ա՟Ծ գոգցես համարեալ լինէր խաբեբայ, զի ստութ՟ տպաւորեաց 'ի մարդն զբաղձանս երջանկուէ ․ երևէր ևս անգութ բռնաւոր, զի բորբոքեալ 'ի սրտի մարդոյ զքաղց և զծարաւ, ոչ տայր նմա զյագուրդ ․ որ՟ թէ ոք առն անհնարինըս սովելոյ ցուցանէր միայն զկերակուր նմ՟ տայր միայն հոտոտել և յետս առնոյր, իբր թէ զուարճանալով ընդ թշուառութէ եղկելոյն ։ Այլ արդ այս ամ՟ հակառակ է իմաստութ՟, սրբութ՟ և մարդասիրութ՟ այ՟ ․ ուրեմն հարկաւոր է հաւատալ,

թէ որ եւս մարդոյ զբաղձանս ճշմարիտ և անեղծական երջանկութե՟, ունի ևս արգեամբք լնուլ զայն, կենդանի պահելով զնա յաւիտեանս յաւիտենից։ Զայս նիւթ յերկար կամեցաք ապացուցանել, զի յաւուրս մեր բազմացեալ են իմաստակ թերահաւատք, յորոց ուղղափառ քրիստոնեայն պարտի պաշտպանել զհաւատս իւր ։

## §. 85. Հ. Զի՞նչ է պատկերն Աստուծոյ, ըստ ո՟յ ստեղծեալ ասի մարդն ։

Պ. Բազումք բազմօրինակ մեկնեցին զբանդ, բայց ստոյգ կարծիքն այն է որ ուսուցանէ, թէ պատկեր և նմանութի՟ այ՟ 'ի մարդս իմացեալ լինի սրբ.ութե՟ն և անմեղութե՟ն կամաց, այլ և լուսաւոր գիտութե՟ և իմաստութե՟ մտաց, զորս ա՟մ մարդ պարտի ստանալ յայսմ աշխարհի. զի այժմ զկնի մեղանչելոյն ադամայ՝ մարդն աշխատանօք լինի պատկեր և նմանութի՟ այ՟. և այն երկու իրօքդ միայն, առաքինութե՟բ և գիտութե՟բ. ո՟պ յայտնի ուսուցանեն ս՟բ գիրք, զորս ընթերցի՛ր, կողոս. գ. 9. 10: իմաստ. բ. 23. եփես. դ: 22=24: յակոբ. գ. 8. 9: ա պետրոս. ա. 14=17: ա յոհ. գ. 9. 10: մտթ. ե. 48: ա տիմոթ. բ. 4. ևն :

## §. 86. Հ. Զի՞նչ է նախախնամութիւնն Աստուծոյ : +

Պ. Նախախնամութի՟ն է ներգործութի՟ ածային կամաց, որ զէութի՟ և զգոյութի՟ ա՟մ արարածոց պահպանէ, ներգործութե՟ց նոցին գործակից լինի,

և զամ՝ էակս առ վախճան նոցին ուղղելով կառավարէ , 'ի փառս իւր և յօգուտ ամ մարդկան, մանաւանդ արդարոց ․ ըստ այսմ նախախնամութ այ իմանին երրեակ ներգործութիւք նորին , այ Պահպանութի , Գործակցութի և Կառավարութի (դի՛տ 'ի մտթ․ ե․ 10—22 ։ զ․ 24—34 ։ ժ․ 28—31 ։ յովհ․ ե․ 17 ։ գործոց․ ժդ․ 15—17։ ժէ․ 22—29 ։ ժը․ 21 ։ հռովմ․ ա․ 19։ ե․ 3։ ը․ 28։ ժե․ 32։ ա կորնթ․ ը․ 6 ։ ժզ․ 7 ։ բ կորնթ․ ա․ 3—8 ։ գ․ 17—20 ։ կողոս․ ա․ 16 ։ ա թեսաղ․ գ․ 3—8։ ա տիմոթ․ ա․ 17 ։ բ տիմոթ․ գ․ 12 ։ դ․ 18 ։ եբրայ․ ա․ 3 ։ ժա․ 3 ։ ժբ․ 4—11։ ժգ․ 5—10։ յակոբ․ ա․ 13—17․ դ․ 13 ։ ա պետրոս․ ե․ 7 ։ բ պետրոս․ գ․ 5 ․ ևն) ։

## §․ 87․ Հ․ Օ՞րն է շնորհաբաշխութիւնն Աստուծոյ․

Պ․ Ա՝ արտաքին ներգործութի , ըստ որոյ Ած յանսահման սիրոյ իւրմէ շարժեալ՝ զպարգևս և զշնորհս իւր բաժանէ և ընծայէ ամ մարդկան , 'ի ճանաչումն և 'ի պաշտօն իւր կոչելով զնոսա , առաքինական գործոց նոցա նպաստելով, 'ի մեղաց արդարացուցանելով , և զիւրաքանչիւր ոք յետ մահուան ըստ արժանեայն վարձատրելով (ա․ տիմոթ․ բ․ 4 ։ եփես․ ա․ 7 ։ դ․ 7 ։ ա․ կորնթ․ ա․ 4—10 ։ հռովմ․ ժա․ 29 ։ բ պետրոս․ գ․ 9։ ղուկաս․ է․ 30 ․ ևն) ։

## §․ 88․ Հ․ Օ՞րինչ ճշդիւ նշանակէ բառն շնորհք․

Պ․ Շնորհքն՝ ըստ ոճոյ գրոց՝ նշանակեն զայնպիսի ներգործութիւնս այ , որք 'ի միտս և 'ի

կամս մարդոյ պատճառեն զգերբնապէս բարի գործողութիս, որք են ճանաչել և դաւանել զՀաւատս յԱ֊ծ և 'ի Քս, փոխել զչար վարս 'ի բարին, գործել զառաքինութիս, փախչել 'ի մեղաց, հանապազորդել 'ի հաւատս և 'ի բարեգործութիս, և սոյն նմանք (զորոց տես, բ֊ թեսաղ. բ. 15. 16: յովհ. զ. 44—47: գործոց. ժզ. 14: ա֊ կորնթ. զ. 11: ժբ. 3=12: փիլիպ. ա 6—12: բ. 13: եփես. բ. 4=12: գ. 16—20: կողոս. ա. 9—14: գաղատ. ե. 22. 23: ա֊ թեսաղ. ե. 23: բ֊ տիմոթ. բ. 25: տիտոս. գ. 4=9: ա֊ պետրոս. ե. 10):

### §. 89. Հ. Քանի՞ են միջոցք ընդունելոյ յԱստուծոյ զշնորհս: +

Պ. Են չորս, ոյք զզջումն 'ի մեղաց՝ որ բառնայ զարգելս շնորհաց. խոնարհութի՝ որ տրամադրէ. աղօթք՝ որ հայցէ և առնու. արխութի՝ որ 'ի գործ դնէ և յորդէ զընկալեալ շնորհս. յորս հարկ է յաւելուլ և զորդիական երկիւղ չկորուսանելոյ զԱ֊ծային շնորհսն, և զգործածութի սր֊ խորհրդոց եկեղեցւոյ:

### §. 90. Հ. Արդեօք կա՞ն այնպիսի նշանք, յորոց կարասցէ ոք իմանալ թէ իցէ ինքն 'ի շնորհս Աստուծոյ կամ 'ի վիճակի սրբութեան:

Պ. 'Ի բանից սր֊ գրոց հաւաքին քանի նշանք, յորոց ոչ ստոյգ գիտութի, այլ հաւանական հաւաստութի կարէ մարդ յապահովիլ, թէ իցէ ինքն 'ի վիճակի սրբութե կամ շնորհաց. գլխաւորք

յայտնի նշանաց են, պահպանումն պատուիրանացն Այ (յովհ. ԺԴ. 21.). առնլումն անցեալ մեղաց, և սարսափ չգործելոյ յապայն. արդիւնակատար սէր առ ընկերս շարժառիթ իւ Ածսիրուե (Ա յովհ. Դ. 21). երկար ժամանակ կենաց առանց ծանր մեղաց անցուցեալ (յովհ. ԺԵ. 1—8). սիրովն Այ հեռանալ 'ի մտադրեալ ներելի մեղանչականութէ. ջանք և ծարաւ զարդանալոյ յառաքինութիւ և նեղութիւ կրելոյ վս փառաց Տեառն և յօգուտ ընկերաց, այլովքն հանդերձ:

## §. 91. Հ. Զի՞նչ նշանակէ եկեղեցին:

Պ. Հաւաքական բառիս Եկեղեցի (որ է տառադարձեալն յունականիս, էքքլիզի՛ա) ճշդութբ նշանակեալ լինի ժողովն կամ ընկերութիւնն, ևսև հաւաքեալ բազմութին այնց մարդկան, որք դաւանին զկրօնն քրիստոնէական, և միմեանս ուղղափառ հաւատով և ճշմարիտ սիրով ընդ Այ և ընդ միմեանս (տես. մտթ. ԺԶ. 18. ԺԸ. 17: գործոց. Ե. 11: Ը. 1. 3: ԺԲ. 5. ԺԵ. 3—22: Ի. 28: Ա կորնթ. ԺԴ. 4—35: Բ կորնթ. Ը. 1—24: եփես. Ա. 22: Դ. 3—17: Ե. 22—33: կողոս. Ա. 18—25. Ա տիմոթ. Գ. 5. 15: Ա պետրոս. Բ. 5: ևն): Անյատուկ նշանակութբ՝ երբեմն ևս տեղին կամ շինուածն, ուր հաւաքին քրիստոնեայք 'ի պաշտօն կրօնի, կոչի Եկեղեցի, կամ ըստ մեզ Տաճար և տուն Այ (Ա կորնթ. ԺԱ. 18: ԺԴ. 33): Այս կրօնական ընկերութիւն քրիստոնէից՝ 'ի սբ գիրս փոխաբերեալ այլաբանութբ նմանեալ լինի այլևայլ իրաց. ըստ որում կոչի Մարմին, որոյ գլուխ է Քս, և անդամք են Քրիստոն

եայք (հռովմ. ժբ. 4. 5: ա կորնթ. զ. 15: եփես. ե. 30: կողոս. ա. 18: բ. 19. և այլն). Հօտ մի խումբ ոչխարաց (մաթ. իզ. 31: ղկս. ժբ. 32: գործոց. ի. 28. 29: ա պետրոս. ե. 2. 3). Գաւիթ կամ փարախ ոչխարաց (եսայ. կե. 10: յովհ. ժ. 1. 16), որոյ բուն հովիւն է Ածն և Քս, որ գերազանցութբ կոչի մեծ հովիւ, և պետ հովուաց (եբրայ. ժգ. 20. ա պետրոս. ե. 4), երկրորդական հովիւք են եպիսկոպոսք, վարդապետք և քահանայք (եփես. դ. 11. գործոց. ի. 28: ա պետրոս. ե. 2. և այլն). Իսկ ոչխարք և գառինք են քրիստոնեայք (մաթ. ժ. 6. 16: յովհ. ժ. 1—27. և այլն). Տաճար, տուն (ա կորնթ. գ. 16. 17: զ. 19: եփես. բ. 21: եբրայ. գ. 6: ա տիմոթ. գ. 15. և այլն). որոյ տանուտէր է Ած. վէմ անկեան, գլուխ անկեան և իսկական հիմն՝ է Քս (եսայ. իը. 16: գործոց. դ. 11: եփես. բ. 20. մաթ. իա. 42: ա կորնթ. գ. 10—12: ժ. 4. և այլն). երկրորդական հիմունք են ամ առաքեալք և մարգարէք (եփես. բ. 20: յայտն. իա. 14: մաթ. ժզ. 18). Իսկ բաղադրիչ վէմք են քրիստոնեայք (ա պետրոս. բ. 5). Այգի տեառն (եսայ. ե. 1—10: մաթ. ի. 1—8. և այլն). Արքայութի, Թագաւորութի Քսի (յովհ. ա. 49: ղկս. ա. 32. և այլն). Ընկերութի Քսի (ա կորնթ. ա. 9: ա յովհ. ա. 3—7). Սիւն և հաստատութի ճշմարտութե (ա տիմոթ. գ. 15). Հարսն Քսի (յովհ. գ. 29: յայտն. ժթ. 7. և այլն). Քաղաք սբց, Եկեղեցի սբց, Վիճակ սբց (եփես. բ. 19: ա. 18: ա կորնթ. ժգ. 33. կողոս. ա. 12: գոր-

ծոյ. Թ. 32: Ժղ. 18: սղմս. Ճխթ. 1. ևն)։

## §. 92. Հ. Զի՞նչ և քանի՞ է նիւթն եկեղեցւոյ.

Պ. Վերանկար գաղափարդ եցոյց քաջ, թէ եկեղեցին է եակ կամ բոլոր ինչ՝ բաղադրեալ 'ի բազում մասանց՝ կարգաւ իմն և յօդակապիւ ընդ միմեանս միաւորելոց. յորմէ և ինքնին իմանի, թէ նիւթ կամ բաղադրիչ մասունք եկեղեցւոյ՝ են միայն քրիստոնեայք մկրտեալք և 'ի պատճառս կցոնի ընկերակցեալք. որոց բաժանումն յայլևայլ դասս և 'ի վիճակս՝ առեալ լինի 'ի պէսպիսութե կրօնի նոցին. Ըստ այսմ Նախ՝ նըկատմամբ մտաւոր կրօնի (§. 13=19) անդամք եկեղեցւոյ բաժանին 'ի հաւատացեալս Ուղղափառըս, որք անթերի ընդունին զամ հաւատալի ճշմարտութիս սբ. գրոյ՝ առանց յաւելլոյ և յապաւելոյ իմն. և 'ի հաւատացեալս Հերետիկոսս, որք յամառութբ ուրանան զոմանս 'ի հաւատալի ճշմարտութեց ածաշնչին։ Ուղղափառութի և հերետիկոսութի մարթին կալ կամ ներքուստ միայն առանց արտաքնոյն. կամ արտաքուստ միայն առանց ներքնոյն. կամ ներքուստ և արտաքուստ միանգամայն (կարգա. գլս. Ժբ. 32: հռոմ. ը. 28: ա կորնթ. ժա. 19: Ժղ. 13: բ կորնթ. Ժգ. 5: եփես. դ. 5. 13: ա Թեսղ. գ. 10: բ Թեսղ. գ. 2: ա տիմոթ. ա. 4=20: դ. 1: տիտոս. գ. 10: այլուր ես։

§. 93. Երկրորդ՝ նկատմամբ կրօնի կամաց (§. 13. 14. 20) անդամք եկեղեցւոյ բաժանին յարդարս և 'ի մեղաւորս, կամ ըստ բանից Քի (մաթ. Ի. 16. Ժբ. 14. Իդ. 22. 24) յընտրեալս և 'ի կոչեցեալս։ Ընտրեալ ասին՝ որ իրօք

ունին զուղղափառ հաւատս, զսէրն ա՟յ և զընկերին և զա՟մ առաքինութիս. որք և օրինակին ՚ի սերմ՟ն բարի, ՚ի ցորեան, յօդիս, ՚ի բարի ձկունս, յուռ հաստատեալ յորթն, և՟ն (մտթ. գ. 12։ Ժգ։ 27=50։ իե. 31=46։ յովհ. Ժե. 1—7. և՟ն)։ Իսկ կոչեցեալ ասին չար և մոլի քրիստոնեայք, որք չունին պլիշեալ առաքինութիւն կամ զներքին կրօն, այլ միայն արտաքուստ դաւանին զքրիստոնէութի, օրինակեալք յորոմ՟ն, յայծիս, ՚ի յարդ, և՟ն։ Արդար կամ մեղաւոր մարթի լինել որք կա՟մ ներքուստ միայն առանց արտաքնոյն. կա՟մ արտաքուստ միայն առանց ներքնոյն. կա՟մ ներքուստ և արտաքուստ միանգամայն։

§. 94. Երրորդ՝ անդամք եկեղեցւոյ նկատմամբ ներքին և արտաքին կրօնի իւրեանց (§. 13. 14. 23) բաժանին յաներևոյթս և յերևելիս, կա՟մ յանճանաչելիս և ՚ի ճանաչելիս։ Աներևոյթ ասին քրիստոնեայք ՚ի պատճառս լոկոյ ներքին կրօնի ո՟յ ուղղափառ հաւատոց և ս՟ր վարուց իւրե՟նց, զ՟ո որոց մարդիկ որոշակի և անսխալ ոչ զօրեն ճանաչել զնոսա և զանազանել, այլ դուցէ միայն շփոթակի և աղօտաբար, վ՟ոկ ասին անճանաչելի և աներևոյթ. մանաւանդ երբ զուրկ մ՟ին ՚ի գործածութէ արտաքին կրօնի. ո՟ղի էին այն եօթըն հազար ծածապաշտք որք ոչ կրկնեցին ծունըր բահաղու (գ թգ՟ց. Ժթ. 14։ հռովմ. Ժա. 4) զորս և Եղիա սրակն տեսանող ոչ մարթացաւ ճանաչել. կամ այնք՝ որք փախուցեալք ՚ի հալածանաց՝ բնակէին յանապատս՝ ՚ի լերինս՝ յայրս և ՚ի փապարս երկրի՝ աներևոյթք ՚ի մարդկանէ (եբրայ. Ժա. 38). զայսպիսիս միայն Ած

ըստ որում սրտագէտ՝ որոշակի և անսխալ ճանաչէ (բ̅ տիմոթ․ բ̅․ 19։ յովհ՝․ Ժ․ 14)։

§․ 95․ Իսկ երևելի և ճանաչելի ասին անդամք վասն արտաքին արարողութեց, ծիսից, նշանաց կրօնի, և խորհրդակատարութեց իւրեանց, որովք մտաւոր կամ մարմնական աչաց մարդկան լինին զգալի և ճանաչելի։ Մարթի ուք լինել անդամ եկեղեցւոյ կամ միայն աներևոյթ և ոչ՝ երևելի․ կամ միայն երևելի և ոչ՝ աներևոյթ (ո՟պ մատնիչն յուդայ)․ կամ աներևոյթ և երևելի միանգամայն (ընթերցի՛ր զայդոսիկ մաթ․ ղ․ 4—19։ ը․ 11․ 12։ իդ․ 31։ ղկս․ ժգ․ 28—30։ ժէ․ 20․ 21։ յովհ․ դ․ 20—25։ Ժ․ 16։ ա̅ պետրս․ բ̅․ 5․ 9։ գ․ 4։ գործոց․ Ժ․ 34․ 35։ ժգ․ 48։ ա̅ յովհ․ բ̅․ 19։ գ․ 10։ հռովմ․ բ̅․ 28․ 29։ ը․ 9։ ժա̅․ 2—25։ ա̅ կորնթ․ դ․ 4—6։ ե̅․ 3։ ժա̅․ 19։ բ̅ կորնթ․ ժա̅․ 13։ եփես․ ե̅․ 10—14։ կողոս․ գ․ 3։ ա̅ տիմոթ․ ե̅․ 24․ 25։ բ̅ տիմոթ․ բ̅․ 19․ և այլուր)։

§․ 96․ Չորրորդ՝ նկատմամբ պաշտաման իւրեանց՝ անդամք եկեղեցւոյ բաժանին յուսուցիչս, ո՟պ էին և են՝ մարգարէք, առաքեալք, աւետարանիչք, հայրապետք, եպիսկոպոսք վրդ՟պտք քահանայք, որոց գումարն անուանի Ուսուցիչ կամ Աշակերտող եկեղեցի (տես, մաթ․ իը̅․ 19․ 20։ Ժը․ 17։ ա̅ կորնթ․ ժբ̅․ 28․ 29։ ա̅ տիմոթ․ գ․ 15․ և՟ն)․ և յուսանօղս, այն է՝ ժողովուրդն որ կոչի՝ Ուսանող կամ Աշակերտեալ եկեղեցի, (գործոց, ի․ 28։ ա̅ կորնթ․ գ․ 4։ ա̅ տիմոթ․ գ․ 5։ յայտն․ բ̅․ 1․ և՟ն)։

Զանազանին ևս անդամք եկեղեցւոյ ՚ի կեն-

դանի և 'ի մեռեալ (ը̅ հոգւոյ), կամ 'ի դալարի և 'ի չորացեալ (ղկս․ իգ․ 31։ յովհ․ զ․ 54։ ժե․ 4։ յակոբ․ բ․ 17—26։ հռովմ․ ը․ 9։ ա̅ կորնթ․ զ․ 15։ գաղատ․ ե․ 25։ ա̅ տիմոթ․ ե․ 6։ յայտն․ գ․ 1․ ևն)։

## §․ 97․ Հ․ Զի՞նչ և քանի՞ է կերպն եկեղեցւոյ․

Պ․ Որովհետև եկեղեցին է ընկերութի մարդկան, և ա̅մ ընկերութի փակէ յինքեան զյայտնի ն̅մ զլուելեայն դաշնակցութ̅ միաբանութի, վ̅ն կերպ եկեղեցւոյ լինի փոխադարձ հաւանութ̅ միաբանութին կամ դաշնակցութին բազմաց 'ի մի յայս նըպատակ պաշտելոյ զԱ̅ծ ք̅ական կրօնիւ․ և քանզի ներգործութիւք կրօնի բաժանին 'ի ներքին և յարտաքին (յաներևոյթ և յերևելի), ը̅ այսմ և կերպ կրօնի զանազանի նոյնպ̅ 'ի ներքին կամ յաներևոյթ, և յարտաքին կամ երևելի։

§․ 98․ Ներքին կերպ է հոգևոր միաբանութին այն, որ հիմնի 'ի միութեան ուղղափառ հաւատոյ, անկեղծ սիրոյ և ա̅ծահաճոյ վարուց, որոյ միջնորդութ̅ ընտրեալքն ներքուստ և աներևութաբար միաւորեալ ընդ միմեանս՝ կացուցանեն զընկերութի ինչ բարոյական և մտաւորական։ Կոչի սա 'ի ս̅բ գիրս Միաբանութի և ժողով յանուն Ք̅ի (մտթ․ ժը․ 19․ 20․ ա̅ կորնթ․ ե․ 3․ 4։) Միաբանութի հոգւոյ, հաւատոյ, գիտութե̅ (եփես․ դ․ 3․ 13։ փիլիպ․ ա․ 27)․ Միութի խորհրդոյ, շընչոյ, սրտի, հոգւոյ (գործոց․ դ․ 32։ փիլիպ․ բ․ 2)․ Հաղորդութի հոգւոյ, հաւատոյ (փիլիպ․ բ․ 1։ փիլեմ․ 6)․ Հաղորդութի ընդ Ա̅յ հօր, ընդ

որդւոյ նորա, ը֟ Յս֟ի Ք֟սի, ը֟ միմեանս (ա֟ յովհ. ա֟. 3. 6. 7: ա֟ կորնթ. ա֟. 9). Բաժանորդուն ընդ Ք֟սի, երկնաւոր կոչմանն (եբրայ. գ. 1. 14). Միութե֟ն անդամոց առ ՚ի կազմել զմի մարմին Ք֟սի (հռովմ. ժբ. 4. 5: ա֟ կորնթ. Ժ. 17: ժբ. 12—26: գաղատ. գ. 27. 28: եփես. ե. 30. ևն). Միութե֟ն ա֟ծանման (յովհ. ժէ. 11. 21—23). Ժողով որդւոցն ա֟յ ՚ի մի (յովհ. ժա. 52): Այս ա֟մ բանք ուսուցանեն, թէ ներքին կերպ եկեղեցւոյ՝ հիմն֟ի գլխաւորապ֟ ՚ի հոգին, ՚ի միտս, ՚ի կամս, ՚ի խորհուրդս և ՚ի դատողութիս մտաց, այն է՝ զոր դպրոցք կոչեն Միութի֟ բարոյական. որ ը֟ ինքեան է աներևոյթ իմն և անճանաչելի ՚ի մարդկանէ, սակայն է բուն և էական կացուցիչ եկեղեցւոյ:

§. 99. Իսկ արտաքին կամ երևելի կերպ եկեղեցւոյ է միաբանութին յարտաքին կրօնի, որ եդեալ կայ ՚ի միութե֟ պատճենի և վարդապետութե֟ հաւատոյ, ՚ի նոյնութե֟ ծիսից և արարողութե֟ց, ՚ի միօրինակ հրապարակական մատակարարութե֟ սը֟ խորհրդոց, և ՚ի միութե֟ հնազանդութե֟ միոյ ուրուք եպիսկոպոսի կամ հայրապետի (կարդա՛ ը֟ յովհ. 10: մտթ. Ժը. 19. 20: իգ. 27. 28: ա֟ կորնթ. ժա. 2—34: Ժդ. 4—35: գործոց. ը. 1—4: ժբ. 5: Ժգ. 1—5: Ժդ. 22. 26: այլուր ևս): Այս արտաքին կերպ ընկերակցութե֟՝ թէպէտ է գովելի ինչ և ա֟մ ջանիւք պահպանելի, սակայն ոչ է արձակաբար հարկաւոր առ էութի֟ ճշմարիտ եկեղեցւոյ, զի առանց սորին կարէ նա կեալ. ո֟պ ՚ի նախագրեալ օրինակն (§. 94) ա֟ծապաշտք այնոքիկ հալածեալք և թագուցեալք՝ չունէին զե-

րեւելի ընկերուն, բայց եկեղեցին այ կեայր 'ի նո-սին. նոյնպ 'ի լթադչել աշակերտաց Քսի 'ի ժա-մանակս չարչարանաց նորա (մտթ. իզ. 56։ մարկ. ժդ. 50 ։ յովհ. ի. 19) ոչ կորեաւ եկեղեցին. ոպ և 'ի գիրս յայտնուն (ժբ. 6) գուշակի, թէ եկե-ղեցին օրինակեալ 'ի կին՝ ունի երբեմն թադչել զաւուրս բազումս՝ յանապատս, ուր չզօրէ ունել զարտաքին և զերևելի միաբանուն անդամոց ընդ-միմեանս և ը գլխոյ ուրուք, բայց ունիցի անտա-րակոյս զներքին կերպն, որով տևեսցէ ցկատա-րած աշխարհի ։

§. 100. Անդամք եկեղեցւոյ՝ նկատմամբ կեր-պի նորին բաժանին նախ՝ յայնս՝ որ են այն յե-կեղեցւոջ, բայց չեն յեկեղեցւոյ. և յայնս՝ որ են և՛ յեկեղեցւոջ և՛ յեկեղեցւոյ (ըստ ա՛ յովհ. բ. 19). երկրորդ՝ յայնս՝ որ միայն ներքուստ և ոչ արտաքուստ են միացեալ. յայնս՝ որ միայն ար-տաքուստ միանան և ոչ՝ ներքուստ. և յայնս՝ որ միանան արտաքուստ և ներքուստ միանգամայն (§. 95). երրորդ՝ բաժանին յանդամս Միացելս, որք հաւատով և սիրով կապին ընդ այ և ը մի-միանս. և 'ի Հերձեալս կամ Հերձուածողս, որք 'ի պատճառս արտաքին ծիսից և արարողուեց ինչ բաժնին 'ի հաղորդակցուէ մայր եկղեցւոյ իւրեանց։

## §. 101. Հ. Զիա՞րդ բաժանի եկե-ղեցին.

Պ. Եկեղեցին կամ ընկերուին քրիստոնէից՝ նկատմամբ նիւթոյն և կերպին զանազանի յայլ-եայլ վիճակս. և նախ՝ ը որպիսուն հաւատոյ ան-դամոցն՝ բաժանի յեկեղեցի ուղղափառական,

հերետիկոսական , և անմաքուր ։ Ուղղափառ եկեղեցի է՝ որ զհաւատալի ճշմարտութիւն առնու միայն յածաշունչ գրոց , առանց յապաւելոյ և յաւելլոյ զօտար կամ զհակառակ ինչ ։ Հերետիկոս է՝ որ կրճատէ կամ ուրանայ զճշմարտութի ինչ հաւատոյ ՚ի սբ̅ գիրս պարունակեալ ։ Իսկ անմաքուր է՝ որ յաւելու ինչ իբր զմասն հաւատոյ կամ ըղհարկաւոր ինչ թէունի առ փրկութի ։ Երկրորդ Բ̅ քանակութե անդամոյն՝ բաժանի եկեղեցին յընդհանրական կամ կաթուղիկէ՝ որ է գումարն ա̅մ քրիստոնէից յա̅մ ժամանակի և յա̅մ տեղւոջ կեցելոց (մատթ. Ժզ. 18 ։ Ա̅ կորնթ. Ժբ. 23։ եփես. Ե. 23=32). ՚ի մասնական՝ որ է ընկերութե միոյ ազգի կամ լեզուի. և յեղական՝ ո̅պ միոյ տան կամ գեղջ ։ Երրորդ՝ ըստ ժամանակի կենաց անդամոցն՝ անուանի եկեղեցի Հին օրինաց ո̅ր յառաջ քան զՔ̅ս ածապաշտից. Նոր օրինաց՝ յետ Ք̅սի ՚ի նա հաւատացելոց. այլև՝ յաղթական եկեղեցի՝ որ է գումարն ննջեցեալ ս̅բց յերկինս. և զինուորեալ եկեղեցի՝ խումբն կենդանի հաւատացելոց յերկրի ։ Չորրորդ զանազանին ևս եկեղեցիք ըստ տեղւոյ, ո̅պ արևելեան , արևմտեան , քաղաքական , տնային , ևն. այլ և ըստ լեզուաց և ազգաց , ո̅պ հայկական , յունական , լատինական , ևն ։

§. 102. Հռչակաւոր է բաժանումն եկեղեցւոյ՝ յաներևոյթ և յերևելի , զոր կանխաւ մեծն բարսեղ (Ճառ. Ա̅. ՚ի սղմս. Ժզ) և այլք բազմք յետ ն̅ր , ո̅պ և Շնորհալին մեր՝ ծանեան և ուսուցին ։ Աներևոյթ՝ կամ ըստ Շնորհալոյն՝ (յ ընդհանս ա Կ. յէր. 11) իմանալի եկեղեցի է այն որ

բաղկանայ յաներևոյթ անդամոց (§. 94) և 'ի ներքին կամ յաներևոյթ կերպէ (§. 98) . յր է ընկերութին այն սբ. և ընտրեալ քրիստոնէից , որք ուղղափառ հաւատով և ճշմարիտ սիրով միանան ընդ այ և՛ ընդ միմեանս : Գոյուն և հանդամանք այսր եկեղեցւոյ՝ զոր Լատինք ուրանան , քաջ ապացուցանի Նախ 'ի յետագայ անստելի բանից սբ. գրոց , զորս հարկ է ամբ. ընթեռնուլ 'ի հռովմ . բ . 28 : ա պետրոս . բ . 5 . 9 : ղկս . ժէ . 20 . 21 : յովհ . դ . 23 . 24 : ժ . 16 : եփես . դ . 15 . 16 : ե . 25 . 26 : կողոս . բ . 19 : եբրայ . գ . 2=6 : ա տիմոթ . գ . 15 : մատթ . ը . 11 . 12 : ժզ . 18 . իդ . 31 : ղկս . ժբ . 32 : ժգ . 29 : յովհ . ժէ . 6=26 : ժը . 36 : գործոց . ժ . 34 . 35 : ժգ . 48 : ա սոլն . ա . 14—16 : հռովմ . ը . 9 : ժա . 2—25 : ա կորնթ . ա . 2 : գ . 9=11 : ե . 3 . 4 : զ . 10 . 11 : ժգ . 33 : բ կորնթ . ժա . 2 : գաղատ . դ . 26 : եփես . ա . 1=4 : եբրայ . ժբ . 22 . 23 : բ տիմոթ . բ . 19 : տիտոս . բ . 14 . այլուր ևս :

§. 103 . Երկրորդ՝ ապացուցանի 'ի գոյուէ աներևոյթ անդամոց (տես . §. 94) և աներևոյթ կերպին (§. 98) . իբր զի եթէ գոն աներևոյթ անդամք և կերպ , ապա գոյ և աներևոյթ եկեղեցի բաղադրեալ 'ի նոցունց . վս զի 'ի գոյուէ մասանց՝ ուղիղ մակաբերի և գոյուն բոլորին կամ բաղադրելոյն : Երրորդ՝ ապացուցանի յայնմանէ , զի 'ի հանդանակս հաւատոյ՝ յառաքելոց և 'ի ժողովոց յօրինեալս՝ եդեալ կայ բանս ,, Հաւատամք 'ի սբ. եկեղեցին ,, իսկ արդ՝ երևելի եկեղեցին ոչ է հաւատալի , այլ զգալի և տեսանելի . ըս որում հաւատքն ոչ է վերևելեաց՝ այլ զաներևութից

(հռովմ. ը. 24. 25։ եբրայ. ժա. 1). ապա ուրեմն գոյ աներևոյթ եկեղեցի, որում քրիստոնեայք հաւատան, և զոր իբր զմասն հաւատոյ դաւանին 'ի հանգանակի։

§. 104. Իսկ երևելի կմ զգալի եկեղեցի է այն՝ որ բաղկանայ յերևելի՝անդամոց (տես. §. 95.) և յարտաքին կերպէ (§. 99.), որ է զգալի ընկերակցութիւն սբ և անսբ քրիստոնէից, որք յայս կենչ տիպ հաւատոյ արտաքուստ միաբանին, այսպիսի լինչ ծիսիւ հրապարակաւ պաշտեն զած, և այս ոք երևելի գլխոյ եկեղեցւոյ հնազանդին։ Զայսպիսի եկեղեցւոյ խօսին բանք սբ գրոց 'ի մտթ. գ. 10։ է. 21։ ժգ. 24—51։ ժե. 8։ ժը. 17։ իբ. 1—15։ իգ. 27. 28։ ղկս. ը. 12—15։ ժգ. 7։ գործոց. ը. 1. 3։ ա կորնթ. ժա. 18։ փիլիպ. գ. 6։ բ տիմոթ. գ. 5։ տիտոս. ա. 16։ բ յովհ. 10։ և յայլ բազում տեղիս, յորս ցուցանին արտաքին անդամք, տեղիք կամ ծէսք լինչ եկեղեցւոյ։

§. 105. Ցած յերևելի եկեղեցիս՝ անսուտ վկայութբ Քսի և անխորշելի հարկաւորութբ (մտթ. ժը. 7։ ղկս. ժէ. 1, ևն) հանապազ 'ի սկզբանէ մինչև ցայժմ եղեալ են և միշտ լինելոց են զանազան գայթագղութիւնք, թերահաւատութիւնք, հերձուածք, հերետիկոսութիւնք, որոմունք, հայհոյութիւնք, երկպառակութիւնք, սուտ վարդապետութիւնք, խաբէութիւնք, և այլ նման մոլութիւնք և մոլորութիւնք ընդդէմ ճանաչելի և գործելի ճշմարտութեց. և այսմ տան վկայութի ոչ միայն բանք ածային տառից (մտթ. ժբ. 31։ ժգ. 25—40։ գործոց. ժե. 39։ բ պետրոս. բ. 1—22։ ա յովհ. գ. 1—7։ յու-

դայ. 4—17: հռովմ. ժզ. 17: ա կորնթ. ժա.
18. 19: բ կորնթ. ժբ. 20. 21: գղտ. ե. 19.
20: կողոս. բ. 22: եփես. դ. 14. 31: եբ-
րայ. ժգ. 9: ա տիմոթ. ա. 6. 7: դ. 1: զ.
10: բ տիմոթ. գ. 13: տիտոս. գ. 10. և այ-
լուր). այլև թէ օրինակք եկեղեցեաց՝ 'ի նոյն
իսկ 'ի Քսէ և յառաքելոց նորա հիմնելոց, յորս
գտան անդամք ուրացօղք, մատնիչք, թերահա-
ւատք, ոչ ուղիղ ընթացօղք, հերձուածողք, չարա-
գործք, մոլիք, ևս և պէսպէս մոլար վարդա-
պետութիք և սխալ ուսմունք հակառակ ճշմար-
տութեան աւետարանին և ածաշունչ գրոց (զորոց
տես զսակաւ վկայսն 'ի գործոց. ժե. 1. 2. 24:
ա կորնթ. ա. 10—18: գ. 1—8: ե. 1—13:
զ. 1—9: ժա. 17—23: ժե. 12: բ կորնթ. ժա.
12—23: գաղատ. ա. 5—8: բ. 4—16: գ.
1—6: ե. 7—14: փիլիպ. գ. 2—6: բ թեսղ. գ.
6—15, և այլ յոլով ուրեք), և թէ օրինակք ե-
կեղեցեաց զանազան ազգաց քրիստոնէից՝ ան-
դուստ յետ մահուան առաքելոց մինչև ցայսօր
տարածելոց, ոց վկայեն եկեղեցական պատմա-
գիրք ամենայն ազգաց:

§. 106. Յայսմ անուրանալի ճշմարտութե՝ ու-
ղիղ ոճով մակաբերի և այս ճշմարտութի. թէ ո-
րովհետև չեղև՝ և այժմ իսկ ոչ գոյ յաշխարհի
այնպիսի արտաքին և երևելի եկեղեցի ինչ՝ յո
կրօնապաշտ ընկերութի քրիստոնէից, որ ամ մա-
սամբք ազատ իցէ յամ արատոց և 'ի մոլութեց,
ապա ուրեմն ոչ ոք 'ի հայազգի եղբարց մերոց
կարող է անարատ խղճմտանօք թողուլ լքանել
զիւր ծնող եկեղեցին, և գնալ միանալ ը լատինս
կամ ը այլ քրիստոնեայս. վն զի լատին եկեղե-

ցին ոչ է առաւել սրբագոյն և լաւագոյն քան զհայոյն, որ ցուցեալ եմք այլուր. այլ մանաւանդ՝ եթէ ունի զածային եղբայրսիրութի՝ պարտի միալ 'ի ծոցի մերս եկեղեցւոյ, և թէ ելեալ է արտաքս՝ ամիւ պարտական է յետս դառնալ, և բոլոր զօրութ աշխատ լինել առ 'ի բառնալ զանկարգութիս ինչ կամ զանխորշելի դայթագղութիս. որոյ պատճառ այն է, զի մեք բազումքս մի մարմին եմք 'ի Քս, և իւրաքանչիւր մեք՝ միմեանց անդամ եմք (Հռովմ. ԺԲ. 5). իսկ արդ՝ հրամայէ Այ, զի մի լիցին հերձուածք 'ի մարմնի անդ, այլ՝ զի նոյնք զմիմեանց հոգասցեն անդամքն (Ա կորնթ. ԺԲ. 25), և զի խօսեսցուք զճշմարտութի իւրաքանչիւր Ը ընկերի մերում, այսու շարժաւթիւ զի եմք միմեանց անդամ (Եփես. Դ. 25) և փութասցուք պահել զմիաբանութի հոգւոյ յօդիւ խաղաղութ՝ լինելով մի մարմին և մի հոգի բարոյական, որ ուսուցանէ ածայինն Առաքեալ ։

§ 107. Հ. Զանի՞ ինչ այլ ուսանելիք կան զեկեղեցւոյն.

Պ. Զեկեղեցւոյ 'ի հանրի նկատելոյ քննելի է և ևս պատճառն, յատկութիք, գլուխ, սրբապաշտութի, խորհուրդք և պատուիրանք ։

§. 108. Հ. Ո՞վ է պատճառ եկեղեցւոյ.

Պ. Պատճառ արարչական է Այ, որ շարժեալ յամբաւ բարութ իւրմէ՝ կոչէ հաւաքէ և 'ի մի ընկերութի կապէ զճշմարիտ երկրպագուս իւր, զի հոգւով և ճշմարտութ պաշտեսցեն զնա յայսմ աշխարհի (կարդա, գործոց. Ի. 28. Ա տիմոթ.

ա̃. 9: յակ. ա̃. 18: ա̃ կոր. դ. 16)։ Իսկ պատճառ գործիական կամ գործիք այ̃՝ են քարոզիչք ա̃ծային ճշմարտութեց, որպէս էին մարգարէք, առաքեալք, և աւետարանիչք, և այժմ են բարենախանձ ուսուցիչք և քարոզատու վարդապետք. զորոց ստորև։

## §. 109. Հ. Զի՞նչ և քանի՞ են յատկութիւնք եկեղեցւոյ։

Պ. Յատկութիւնք և նշանք եկեղեցւոյ կոչին կատարելութիւնք կամ գերազանցութիւնք ինչ, զորս ունելոց են առաւելապէս անդամքն եկեղեցւոյ. և թէ քանի՞ իցեն՝ տարաձայնութի է առ հեղինակս. առաքելական կարծեցեալ հանգանակն դնէ զերկուս յատկութիս, զսրբութի և զկաթուղիկէութի ա̃ զընդհանրութի. հայք ժողովոյն նիկիոյ 'ի հանգանակին չխօսին ինչ զեկեղեցւոյ. առաջին ժողովն կոստանդնուպօլսի յամին 381 յաւել զերկուս ևս, զմիութի և զառաքելականութի. հանգանակն մեր եկեղեցւոյ դնէ զերիս, յասելն՝ հաւատամք 'ի մի միայն՝ ընդհանրական և առաքելական եկեղեցի. յորս 'ի ժամագիրս մեր յաւելեալ լինի և սրբութի. (ըստ այնմ, վասն միայնոյ, սր̃, կաթուղիկէ և առաքելական եկեղեցւոյ)։ Առ պապականս՝ ժողովն դրետենդինոյ դնէ զերկուս նշանս. սդավլէդոն դնէ զերիս. սալմէրոն՝ զհինգ. սանտերոս՝ զվեց. միքայէլ մետինա՝ զտասն. յակոբ ռայինկիոս՝ զերկոտասան. պելլարմինոս՝ զհնգետասան. սոկոլովիոս՝ զքսան. թոմաս պոզիոս՝ զհարիւր. այսչափ հերձուածք են 'ի պապական եկեղեցւոջ։ Մեզ բաւական լիցի մեկնել սակաւուց զչորս նշ-

շանս 'ի մեր հաւատապատում գրոց դաւանելս, որք են Միուն, Սրբուն, Կաթուղիկէուն, և Առաքելականութիւն։

§. 110. Միութիւն յանդամս եկեղեցւոյ՝ որ 'ի մօտոյ ցուցաւ՝ պարտի լինել ներքին և հոգևորն. զի վս̅ այնպիսի բարոյական միութեան քրիստոնէից աղօթեաց Քս̅ առ հայր իւր (յովհ. Ժ. 16։ Ժա. 52։ ԺԷ. 11. 21—23). և այն տիրապ պատշաճի աներևոյթ եկեղեցւոյ. իսկ յերևելի եկեղեցւոջ հանրական միութի արտաքին՝ ոչ երբէք եղև և ոչ իսկ գուցէ եղիցի, թէպէտ և ցանկալի էր յոյժ. բայց թէ գտցի ևս՝ այն ոչ է ճիշդ նշան ճշմարիտ եկեղեցւոյ, իբր զի և 'ի սուտ կրօնս գտանի. որպէս կռապաշտք, մահմետականք և հրէայք պահեն զարտաքին միութի կրօնի. թագաւորութի սատանայի ըս̅ վկայելոյն Քս̅ի՝ ունի և պահէ զմիութիւն (մտթ. ԺԲ. 25. 26). ահարոն և բոլոր ժողովուրդք իւր միաբանեցան 'ի ձուլել զորթն ոսկեղէն. քահանայք բահաղու և ժողովուրդք միաբան էին ըդ̅էմ եղիայի. բոլոր քահանայապետք և ազգն հրէից միացան ըդ̅էմ Քս̅ի 'ի խաչել զնա. արիանոսք ունէին զմիութի ը̅ պապին լիպերիոսի, և միակամադաւանք ը̅ պապին ոնորիոսի. ապա յայտանէ ուղիղ մակաբերել՝ թէ լոկ արտաքին միութիւն առանց ներքնոյն և ուղղափառ հաւատոյ՝ ոչ է ճշմարիտ նշան ուղղափառ եկեղեցւոյ և ճշ̅այլին կրօնի։

§. 111. Սրբութիւն եկեղեցւոյ պարտի լինել թէ 'ի հաւատս և թէ 'ի վարս անդամոց նորա. սրբութիւն նկատեալ 'ի հաւատս՝ կոչի ուղղութի հաւատոյ կամ Ուղղափառութի. իսկ նկատեալ 'ի վա-

ըլս՝ ասի առաքինուն, բարեգործուն. և ըստ երկոցունց մասանցդ՝ նշանս այս տիրաց պատշաճի միայն աներևոյթ եկեղեցւոյ (եփես. Ե. 26. 27. Ա կորնթ. գ. 17. ևն), որոյ անդամք են ուղղափառ և ընտրեալ քրիստոնեայք ։ Իսկ երևելի եկեղեցւոյ ոչ միշտ պատշաճի սրբուն ը̅ բոլորին և ը̅ անհատիցն. զի գտանին 'ի նմա ծածուկ հերետիկոսք, չար և մոլի քրիստոնեայք ։

Սրբուին երևելի եկեղեցւոյ ուրուք ճանաչի նախ եթէ հաւատքն՝ զոր քարոզէ՝ իցէ ճշդիւ համաձայն ա̅ծաշունչ գրոց. երկդ՝ եթէ վարդապետուին բարուց 'ի նմանէ ուսուցեալ՝ իցէ նոյնպէս համաձայն ա̅ծաշնչին. երրդ՝ եթէ 'ի նմա ծաղկեալ իցեն սք̅ և ա̅ծահաճոյ անձինք յերկար ժամանակաւ ։

§. 112. Կաթողիկէն է տառադարձեալն յոյն ածականիս՝ καθολικὸς, բարդեալն 'ի մակբայէս՝ καθὰ, պէս, ըստ. և յածականէս՝ ὅλον, բոլոր, ամբողջ, ամենայն, հանուր. յորոց և իմաստ բառին լինի՝ հանրական, բոլորական, ընդհանուր, ըստ ամենայնին. որով և յասելն՝ կաթուղիկէ եկեղեցի, ճշդիւ իմացեալ լինի՝ ընդհանուր բազմուն քրիստոնէից, բոլոր ընկերուն քնապաշտից 'ի միասին առեալ, ա̅մ անդամք քրիստոնէական ընկերակցուե, ընդհանրուին քրիստոնէից ։ Ուստի սխալին այն բառագիրք, որ կամ թանձր տըգիտուք, կամ նենգաւոր խաբէուք զբառսդ, քաթօլիք, քաթօլիկիսմ, ևն, մեկնաբանեն, ուղղափառ, ուղղափառուն, ուղիղ հաւատք, դաւանուն, ևն. զի զայդ իմաստ ոչ երբեք տայ՝ ոչ կազմուն և ոչ նշանակուն կամ գործածուն յոյն

բառին, ըստ որում ուղղափառն առ նոսա ասի՝ ορθόδοξος: Այլ աղաչեմք զհայազգի եղբարըս մեր, զի քաջ ուսցին և իրերաց ուսուսցեն զայս ուղիղ նշանակութիւն և զտարբերութիւն բառիցդ, ոպ̃ զի կարասցեն ազատիլ յորոգայթից բաժանեալ հայոց մերոց, որք զինքեանս՝ առանց ամենայն փաստից՝ քաթօլիկս կոչելով, և քաթօլիկ անուամբ՝ զուղղափառն իմանալով և մեկնելով, հրապուրեն զպարզամիտ և զանուսումն ժողովուրդս մեր 'ի թողուլ զեկեղեցին հայոց և 'ի յարել 'ի լատինս. որոց եկեղեցի և հաւատք՝ ոչ է և ոչ կարէ կոչիլ քաթօլիկ. ըստ որում ապացուցեալ եմք 'ի խորոց հաւատոց գլխոյն մեր:

Արդ՝ եկեղեցին կամ ընկերութիւնն ք̃ապաշտից կոչեցաւ կաթուղիկէ և ընդհանուր՝ նախ նկատմամբ թէ ժամանակաց և թէ տեղեաց. իբր զի յադամայ և այսր ևս ցկատարած աշխարհի յա̃մ ժամանակս և յա̃մ տեղիս եղեն և եղիցին ճշմարիտ ա̃ծապաշտք (տես, մաթ. ը. 11: ի̃դ. 31: ի̃ը. 19. 20: մարկ. ժ̃զ. 15: ղկս. ժ̃դ. 29. 30: գործոց. ժ. 34. 35. և̃ն): Եր̃կդ՝ նկատմամբ նիւթոյն. վ̃ն զի այդ ընկերութիւն ընդունի զա̃մ մարդիկ յոր ազգէ կ̃մ լեզուէ և լինիցին, և ոչ զոք արտաքսէ յիւրմ ծոցոյ: Եր̃րդ՝ բանիւ հաւատոյն, զի դաւանի զա̃մ ճշմարտութիւնս յա̃ծաշունչն բովանդակեալս առանց կրճատելոյ ի̃ն յայնցանէ՝ զորէն հերետիկոսաց:

§. 113. Սակայն գիտել արժան է նախ՝ թէ ընդհանրութիւնն կամ կաթողիկէութիւնն՝ ըստ

որում վերացեալ ինչ և մտօք միայն իմանալի, տիրապէս պատշաճի աներևոյթ եկեղեցւոյ ևեթ, զի երևելի ընկերու̃նք (եկեղեցիք) ոչինչ օրինակաւ և ոչ երբէք եղեն կամ մարթին լինել ը̃հանուր · բայց անուանին այնպիսի (ո̃ր կաթողիկէ) լոկ յայս սակս, զի մասն են այնր աներևոյթ և ը̃հանուր եկեղեցւոյ · միայն թէ ունիցին զուղղափառ հաւատս ։ Ը̃նդ՝ թէ ոչ ներգործական, այլ կարողական ը̃հանրու̃ին պատշաճի քրիստոնէական եկեղեցւոյ և կրօնի · վ̃ զի երբեմն արիանոսք բազմացան յոյժ քան զուղղափառս, և զի կրօնք ոչ քրիստոնէականք, ո̃չ են կռապաշտականն և մահմետականն, միշտ եղեն և այժմ ևս են առաւել հանրատարած քան զքրիստոնէականն · այսմ վկայեն և ս̃բ գիրք, որք զեկեղեցին քրիստոնէից կոչեն՝ հօտ փոքրիկ (տես · եսայ · ա̃ · 9 ։ զ · 13 ։ սոփոն · գ · 12 ։ մատթ · է̃ · 14 ։ ի̃ · 16 ։ ղկս · ժբ̃ · 32 ։ ծզ · 23 · և̃ն) ։

§ · 114 · Առաքելական լինելն եկեղեցւոյ այն է, զի ոչ միայն շինեալ է 'ի վ̃ր հիման ո̃ր քարոզու̃ և վարդապետու̃ առաքելոց (եփես · բ̃ · 20 · և̃ն), այլ և զի այժմ ևս անարատ պահէ զհաւատս ն̃ց · ուր ևթէ եկեղեցի ոք յաւելու օտար ինչ 'ի բանըս առաքելոց կամ կրճատէ զհարազատս, ոչ է համարելի առաքելական, թէպէտ և պարծեսցի այնպիսի լինել ։ Պապականք յաւելուն միւս ևս մեկնու̃ այսր նշանի, ասելով՝ թէ առ 'ի լինել և կոչիլ եկեղեցւոյ ուրուք առաքելական, հարկ է զի 'ի նմա լինիցի անը̃հատ յաջորդու̃ եպ̃ս յառաքելոց անտի սկսեալ · բայց՝ թէպէտ և մերս հայաստանեայց եկեղեցի ունի զայս կատարելու̃,

ոպ ցուցանելոց եմք ստորև . սակայն զճշմարիտն խօսելով՝ այդ միայնակ ոչ է ճիշդ նշան առաքելականութե . իբր զի մարթ է լինել և լեալ իսկ է արդեամբք՝ զի յեկեղեցւոջ ուրեք կայցէ տեղական կամ անձնական յաջորդութի եպսց և կոչումն առաքելական, բայց ներքին ձայնակցութին և յաջորդութին հաւատոյ ԺԲ առաքելոց՝ իցէ պակասել, փոփոխեալ կամ աղաւաղեալ : Զայս յայտնի քարոզեն որ գիրք իբր լինելոց (ընթերցիր գործ. ի. 29. 30 : բ թեսաղ. բ. 4 : ա տիմոթ. դ. 1=5 : բ պետրոս. բ. 1. 2. ևն), և հաստատեն օրինակք եպսկն աթոռոց հիմնելոց յառաքելոց անտի յանտիոք, 'ի հնդիկս, յարաբիա, յեգիպտոս, և այլուր : Յորոց իմանամք նախ՝ թէ ոչ այնչափ անձնական կամ տեղական յաջորդութի եպսց իցէ խնդրելի, որչափ հաւատական յաջորդութին և ուղղափառութին . և երկ՝ թէ 'ի դատելն զայսպիսեաց (նա՝ թէ զամ, իրաց) հարկ է միտ դնել՝ ոչ լոկ անուանն, այլ գոյութե իրին . քանզի յոլովակի պատահէ, զի անձն ոք կամ իր՝ կրէ սուտ զայսինչ անուն, բայց չունի արդեամբք զիրն նշանակեալ նովին . վնկ 'ի լոկդ անուանակոչութե չէ հնար ուղիղ մակաբերել զգոյութի նշանակեալ իրին . այսմ ճշմարտութե վկայեն և բանք որ գրոց, զորս կարդա, յայտն . գ. 1. 9 : բ. 9 : մատթ. իդ. 5 : ղկս. իա. 8 : յովհ. ը. 33—40 : ա կորնթ. ե. 11 : բ կորնթ. ժա. 13=15 : ա տիմոթ. զ. 20. ևն :

§. 115. Ա. Որդեօք չորեքին նշանքդ պատշաճին ճշդիւ Լուսաւորչական եկեղեցւոյն հայոց :

Գ. Լուսաւորչակրօն եկեղեցին Հայաստանեայց՝ որոյ գլուխ է Կաթողիկոսն աթոռոյն Էջմիածնի, լիապէս ունի և պահէ զքառեակ նշանսդ եկեղեցւոյ, որ հաստատի և մակածուն ։ Նախ եկեղեցին Հայոց (խմն զբոլոր անդամս նր, զեկեղեցական և զաշխարհական հայս 'ի միասին առեալ) ունի զմիուն թէ զնէրքին և թէ զարտաքին. վն զի հաւատայ 'ի մի յած և յերրորդուին նր՝ որում և այլ քրիստոնեայք հաւատան. Ըունի զմի ածա շունչ մատեան իբր զկանոն հաւատոյ, զհանգանակս և զսահմանս սբ ժողովոց, զեօթն խորհուրդս եկեղեցւոյ, և զայլ հաւատալիս. 'ի վր միոյ հիման Քսի և առաքելոց նր է կառուցեալ. միում գլխոյ Քսի հնազանդի, յոր և յուսայ. միով Ճշմարիտ սբ սիրով սիրէ զամ քրիստոնեայս՝ յինչ ազգէ և իցեն, ըս որում վն նդ աղօթէ առ Ած (տես 'ի ժամագիրս Հայոց 'ի զանազան տեղիս) Եւս բազմութիւնք անդամոց նր թէ ը միմեանս և թէ ը երևելի գլխոյ իւրեանց ը կաթողիկոսին Էջմիածնի՝ կարի քաջ միաբանին յամի ։ Այժմ արտաքին միուն ոչ վնասէ հերձուածն կաթողիկոսաց աղթամարայ և սսոյ, մի՝ զի նք պահեն ամիւ ըղնէրքին միութին հաւատոյ և սիրոյ, երկդ զի ազգն Հայոց ոչ Ճանաչէ զնս իբր զօրինաւոր հայրապետըս կամ գլուխս, այլ իբր զլոկ արք եպսունս. Երդ զի գործեն նք զայն անգիտութ թէ իրաւանց և թէ գործոյ ։

§. 116. Երկդ՝ նոյն եկեղեցի ունի եւս զսրբուին նախ զհաւատոյ, զի հաւատք նր է սբ և ուղղափառ, ոպ ցուցցուք սորև ։ Երկդ զվարուց՝ զի ամ բարոյական պատուիրանք նր, քարոզք, խրատք,

սաՀմանք ժողովոց, և եկեղեցական բարեկարգութիւնք են սբ. մաքուր և Համաձայն ածաշունչ պատգամաց. և լատինաՀայք ոչ երբէք ցուցին կամ ցուցցեն թէ եկեղեցին Հայոց ուսուցանէ զմոլորութիւն կամ զմոլորս ինչ ։ Այոց չէ Հնար դիմադրել ըղ մոլի վարս կամ զՀերետիկոսական կարծիս անՀատից ոմանց Հայոց . իբր զի մեք խօսիմք աստ զընդՀանուր եկեղեցւոյն Հայոց՝ ըստ բոլորին առեալ, և ոչ իբր երևելի արտաքին եկեղեցւոյ մտածեալ, յորում միշտ գտանին մոլիք 'ի Հաւատս և 'ի վարս . ոպ և 'ի լատինական եկեղեցւոջ՝ ոչ միայն յաշխարՀականս և 'ի գղերս, այլ և 'ի մէջ նոյն իսկ պապից Հռովմայ գտան Հերետիկոսք, արբեցողք, իշխանասէրք, կռուասէրք, կախարդք, սիմոնականք, և այլ մեղաւորք, զոր գիտ 'ի խտրոց Հաւատոյ գիրոն մեր ։

ԵՐԴ՝ յեկեղեցւոջ մերում ծաղկեցան Հազարաւոր սբք և նաՀատակք յեկեղեցականաց և յաշխարՀականաց Հայոց, 'ի սկզբանէ նր՝ դէթ ըստ խոստովանելոյ լատինաՀայոց իսկ՝ մինչև ցամ ամ 1700 . զայս անկեղծութ. ցուցանեն և խոստովանին իմաստուն մխիթարեանքն 'ի գիրս իւրեանց, ոպ ունիմք ցուցանել 'ի մօտոյ ։

§. 117. ԵՐԴ՝ լուսաւորչական եկեղեցին ամ Ճշմարտութ. է ևս կաթողիկէ (καθολική) և Հանրական, Նախ՝ նկատմամբ աքանչելաՀրաշ տևողութեան ժամանակի . զի սկսեալ յառաքելոյն թադէոսէ և բարթուղիմէոսէ անընդՀատ տևէ մինչև ցայսօր 'ի մէջ անՀամար պարագայ թշնամեաց իւրոյ . այնպէս զի ոչ մաՀաշունչ Հալածանք

հայ և օտար թագաւորաց յառաջին յերկս դարսըն, ոչ անտանելի չարչարանք և կոշկոճանք պարսից և տաճկաց յաւուրց անտի սրց վարդանանց մինչև ցայժմ, ոչ պէսպէս զրպարտութիւնք՝ նեղութիւնք՝ թշնամութիւնք և դաւադրութիւնք յունաց՝ լատինացւոց՝ ունիթոռաց և այժմեան լատինահայոց՝ կարացին բոլորովին շիջուցանել զեկեղեցին հայաստանեայց. որ ըստ խոստմանն Քսի կայ մնայ ցայսօր և մնասցէ ցկատարած աշխարհի՝ անյաղթելի և անվանելի ՚ի դրանց դժոխոց, թէպէտ և բազմօք պակասեալ ՚ի նախնի գեղեցկութենէ իւրմէ և զրկեալ ՚ի կիսոյ ժողովրդոց իւրոց, որք թէ ՚ի պատճառս բնածին օտարասէր բարուց իւրեանց, և թէ յաղագս անհոգութեան եկեղեցականաց իւրեանց՝ դարձան և այժմ խսկ դառնան ՚ի կրօնս պարսից՝ տաճկաց՝ յունաց և լատինացւոց: Եկդ՝ նկատմամբ տեղւոյ, զի անդամք նր բնակեցան և բնակին յոմ մասունս աշխարհի, յասիա, յափրիկէ, և յեւրոպիա: Երդ՝ զի ըունի ՚ի ծոց իւր զոմ մարդիկ յինչ ազգէ և դարձկին առ նա: Չրդ՝ զի է հնագոյն և նախատեղծ անդամ նորածին եկեղեցւոյն Քսի, և այժմ խսկ զոյգ ը այլոց ուղղափառ անդամակցաց՝ բաղադրէ զմտաւոր ըհանուր եկեղեցին աներևոյթ: Հինգերդ բանիւ ըհանուր հաւատոյն որ առանց բացառութեան ընդունի զոմ ճանաչելի և գործելի ճշմարտութիւնս ածաշունչ գրոց:

§. 118. Չրդ՝ հայաստանեայց սուրբ եկեղեցին պարծի ևս նշանաւ ճիշդ առաքելականութեան, մի՛ զի շինեցաւ ՚ի վր հիման քարոզութեան առաքելոցն

թադէոսի և բարթուղիմէոսի․ ե՟կդ՝ զի միշտ պահեաց և պահէ զառաքելական ուղղափառ հաւատըս՝ համաձայն գրոց առաքելոց, ո՟պ տեսցի ստորև․ եւ եր՟դ զի միշտ գտաւ 'ի նմա անմիջահատ յաջորդութի՟ եպ՟սաց 'ի թադէոսէ և 'ի բարդուղիմէոսէ ձեռնադրելոց անընդհատ շարունակու՟թ մինչև ցայժմեան կաթողիկոսն ։

§․ 119․ Ը՟ս ապացուցութի՟ սորին հարկ է գիտել կանխաւ, թէ լատինահայք վ՟ս պակասաւոր ցուցանելոյ զեկեղեցիս հայոց՝ ․քարոզեն, թէ միայն եկեղեցին հռովմայ է առաքելական, վ՟ս զի 'ի նմա միայն գտանի անը՟նհատ յաջորդութի՟ եպ՟սց 'ի սր՟յն պետրոսէ սկսեալ մինչև ցներկայ պապն․ իսկ յեկեղեցւոջ հայոց թէպէտ և սկսաւ ասեն ձեռնադրութի՟ յառաքելոցն, սակայն միջահատեալ պակասեցաւ այն մինչև ցսբ՟ լուսաւորիչն զամս իբր 200, յորում միջոցի թէ ո՞յք էին եպ՟սք կամ կաթողիկոսք հայոց՝ ո՛չ գրեն մատենագիրք ։ Սովին ոգւով հայրն Միքայէլ չամչեան յաղիւսակս անդ 'ի վախճան պատմութե՟ն՝ զշարս պապիցն սկսանի 'ի սր՟յն պետրոսէ․ իսկ զշար եպ՟սց կամ կաթողիկոսաց հայոց սկսանի ոչ 'ի թադէոսէ և 'ի բարդուղիմէոսէ, այլ 'ի լուսաւորչէն․ և զայս այսպ՟ առնեն նք՟ զի հաւանեցուսցեն զպարզամիտ ժողովուրդըս մեր թողուլ զեկեղեցին հայոց և փոխիլ 'ի լատինականն․ սակայն ը՟ս այ՟ և ը՟ս ճշմարտութե՟ դատելով՝ ասեմք նախ՝ թէ այդ բան լատինահայոց ը՟դէմ է իրաւանց և անհիմն ամենևին․ զի ոչ միայն 'ի լատինական, այլ և 'ի հայկական եկեղեցւոջ գտանի ճշմարիտ և շարունակ յաջորդութի՟ և ձեռնադրութի՟ եպ՟սց յառաքելոց մինչև ցսբ՟ն գրի

դոր Լուսաւորիչ և անտի մինչև ցայժմ. և ընդ թէ առ չափ՚ոս բազմօք այլայլեցաւ և խանգարեցաւ յաջորդութիւն այդ, ուր հայկականն միայն անփոփոխ։ Ա՛ռ ՚ի Լուսաւորչէն զաչս մտաց Ճշմարտասէր հայոց՝ ցուցցուք համառօտիւ զառաջին մասըն բանիցդ աստանօր, և զենդն ՚ի խորոցն հաւատոյ մեր։

§. 120. Նու արդ՝ զյաջորդութիւն եպս֊ց հայոց՝ յառաքելոց մինչև ց՚ր Լուսաւորիչն՝ յերկու դասըս, ապացուցանեմք ՚ի պատմական գրոց նախնեաց և արդեաց, ՚ը օրինակիս ըստ այսմիկ։

Յառաջին դարուն Քրիստոսի։

Թադէոս առաքեալ, քարոզեաց յամս Տեառն 32—49 ՚ի մեծ և ՚ի փոքր հայաստան, յեդեսիա, ՚ի միջագետս, ե՛ն (տես բաց յայամաւուրաց մերոց, նաև ՚ի վարս ս՚ց. հատոր. դ.)։

Բարթուղիմէոս առաքեալ, քարոզեաց ՚ի մեծ հայաստան յամսն 65—68 (վարք ս՚ց. հ՚որ. թ)։

Յուդայ Թադէոս, ՚ի մեծ հայաստան, յամսն 66—69 (անդ. հատոր. թ)։

Ադդէ եպս աշակերտ Թադէոսի յեդեսիա, յամսն 33—37 (անդ. հատոր. ժ).

Եղիշէ առաքեալ, յետ՛մ ձեռնադրեալ, քարոզեաց յամսն իբր 52—70 յաշխարհին հայոց և աղուանից (անդ. հ՚որ. ժբ. յեր. 145)։

Սամթէոս առաքեալ աշակերտ Թադէոսի, յամսն իբր 60—80. քարոզեաց ՚ի մեծ հայաստան (պ՚տմ. հայոց. հ՚տր. ա. եր. 299. և յայսմաւուրք հայոց. 27 ապրիլի)։

Զաքարիա՛ եպս աշակերտ Թադէոսի 'ի մեծ Հայաստան յամին իբր 40=70 (վարք սրց. հտր. դ. յեր. 17)։

Թէոփիլոս եպս; աշակերտ Թադէոսի, 'ի փոքր Հայաստան 'ի կեսարիա կապադովկացւոց, յամսըն իբր 40=70 (անդ. յեր. 18)։

Կոմսի եպս ձեռնադրեալ 'ի բարթուղիմեայ, 'ի մեծ Հայաստան, յամին իբր 67=90 (տես. ստեփան, ուռպել, պտմ, սիւնեաց. յորմէ առեալ դնի և 'ի ստորագր", հին Հայաստանի)։

§. 121. Երկրորդ դարուն Քսի.

Բարսումա եպս Հայկազն, յեդեսիա քաղաքի, յամին իբր 108=120 (տես. վարք սրց. հատոր. ա)։

Նպսք եդեսիոյ քաղաքի, որք անընդհատ յաջորդեցին ադդէի և բարսումայի, ոպ վկայէ և Հայրն մկրտիչ (վարք սրց. հտր. ժ. եր. 144)։

Բաբելաս եպս, յաջորդ կոմսեայ, 'ի գողթան և 'ի սիւնիս, յամին իբր 90=120 (պտմ, սիւնեաց, ուռպել.)

Նպսք՝ որք յաջորդեցին բաբելասայ 'ի սիւնիս։

Զոթիկոս եպիսկոպս կոմանայ քաղաքի հայոց, յամին իբր 160=190 (եւսեբ. պտմ. եկղց. ե. 16)։

Նպսք 'ի մեծ Հայաստան, 'ի շաւարշան կամ յայլ տեղիս, որք յաջորդեցին զաքարիա եպսի. զորոց զանուանս 'ի լոյս ածցեն յետագայ ազգասէրք մեր 'ի հին ձեռագրաց նախնեաց մերոց։

Նպսն կեսարիոյ կապադովկիոյ, որ մկրտեաց զեպսիքոս, յամին իբր 120=140. (տես. վարք սրց. հտր. ժբ. յեր. 154)։

Նպսք կեսարիոյ կապադովկացւոց, որք յա-

Ջորդեցին անդ Թէոփիլեայ և նախադրելոյդ·
զորոց զանուանս Թէպ ոչ գիտեմք, սակայն
ստոյգ է Թէ կային, որում վկայէ և Հայրն Մկր-
տիչ (վարք սրբց· Հար· դ· յեր· 18) ասե-
լով, || գնաց սրն Թադէոս և 'ի Մաժակ գամ-
„ րաց, որ և կեսարիա կապադովկացւոց, և ա-
„ շակերտեալ անդ զոմանս՝ հաստատեաց եկե-
„ ղեցի ուրոյն, և ձեռնադրեաց նց եպս զմի
„ ոմն յաշակերտելոց Թէոփիլոս անուն, որում
„ Յաջորդեցին և Այլք զկնի առաքելական
„ շաւղօք ||։

Մխիթար վանահայր (դուցէ՝ եպս) Թանահա-
տի վանաց 'ի սիւնիս, յամին իբր, 150—170·
(զորմէ ուռպել· 'ի պատմ· սիւնեաց)։

Փալմա եպս պոնտոսի յամին իբր 150 արար
ժողով 'ի 40 եպսց մերձակայ գաւառաց, յորս
'ի հարկէ գոյան և եպսք հայոց (եւսեբիոս·
պատմ· եկղց· դ· 24։ Ե· 23)։

§· 122· Յերրորդ դարուն Քրիստոսի·

Մեհրուժան եպս հայոց, 'ի մեծ հայաստան
յամին 250—280 առ որ դիոնեսիոս գրեաց գիր
(տես· եւսեբ· պատմ· եկղց· գրք· զ· գլ· 46)։

Նսպսն սեբաստիոյ հայոց, որ ձեռնադրեաց 'ի
քահանայ զԹանագինէս, յամին իբր 270—
290 (վարք սրբց· Հար· դ· յեր· 320)·

Նսպսն հայաստանի կամ պոնտոսի, որ զԹա-
գինէս ձեռնադրեաց յեպս, 'ի նոյն ժամանակս
(անդ· յեր· 322)։

Վլասիոս եպս սեբաստիոյ քաղաքի հայոց,
յամին իբր 290—315 (անդ· Հար· ա)։

Ակակիոս եպս ամդայ կամ տիգրանակերտի, յամին Քի 250=280, (անդ. հտր. Ժբ. եր. 26)։
Արքեղայոս ՞եպս ՚ի միջագետս հայոց, յամին Քի 260—280 (զոր յիշեն Քավէ, Պերդի, և այլք բազումք)։
Աղեքսանդր եպս ՚ի փոքր հայաստան ՚ի կեսարիա կապադովկացւոց, յամին Քի 210—230 (զորմէ եւսեբիոս յեկղց. պտմ. զ. 11)։
Փիրմիլիանոս եպս ՚ի նմին քաղաքի, յամին Քի 230=270 (զորմէ եւսեբիոս, քավէ, և այլ բազումք)։
Կղենէոս եպիսկոպոս նորին քաղաքի, յամին Քի 272—290 (վարք սրց. հտր. ժբ։ յեր. 326)։
Ղեոնդիոս եպս, ՚ի նոյն քաղաքի, որ յամի Տն 302 ձեռնադրեաց զսբ լուսաւորիչն մեր։
Գրիգոր լուսաւորիչ, առաջին պատրիարգ և կաթողիկոս հայոց, յամին 302=332. որում յաջորդեն մինչև ցայսօր կաթողիկոսք մեր։

§. 123. Ահա բազմուն և յաջորդուն եպսց յերկս դարս ՚ի թադէոսէ և ՚ի բարթուղիմէոսէ սկսեալ մինչև ցսբ լուսաւորիչն. որք զառաքելական պատիւն եպսուն ՚ի նախընթացից ընկալեալ՝ անցուցին ՚ի յաջորդս, և զեկեղեցին հայոց հովուեցին ՚ի մեծ և ՚ի փոքր հայաստան աշխարհի, կամ ՚ի մերձակայ սահմանս և ՚ի գաւառս, ուր զխորդ ներէր ժամանակն հալածանաց ՚ի կռապաշտ թագաւորաց հայոց հռովմայեցւոց և պարսից. թող զայն եպսս հայաստանի, զորոց զանուանս դեռ ոչ կարացաք գտանել, զորս և յանձնեմք յետագայից մերոց, զի ՚ի հին ձեռագիր մա-

տեմնից Հայոց յանկլւեա վանորէից կամ քաղա-
քաց փոշխացելոց՝ 'ի լոյս ընծայեսցեն և պայծա-
ռացուսցեն զեկեղեցի մեր ։

§ . 124 . Ընդդէմ այսմ յաջորդուեն եպսց՝ ոչ զօրեն ինչ առարկուԷք լատինահայոց . ոչ կարեն դիմադրել նախ՝ զայն , թէ այդ եպսք ոչ նստան իբր պետ կմ գլուխ եկեղեցւոյն Հայոց , մի զկնի միւսոյ անմիջապս ձեռնադրեալք և 'ի միում գլխաւոր աթոռոջ իբրու 'ի կենդրոնի միուե բազմեալք զօրէն յետադայ կաթուղիկոսաց կամ պատրիարքց, եւն . վս զի յայսմիկ դարս՝ ոչ միայն 'ի մէջ Հայոց , այլ և առ այլ քրիստոնեայս ոչ գոյր այդպիսի կանոնմն եպսց զմիոյ աշխարհէ կամ պատրիարգէ . զի պատուանունքդ արքեպսուե , պատրիարգուե , կաթողիկոսուե, մետրապօլտուե , եւն , 'ի վախճանի երդ դարուն կամ 'ի սկիզբն չրդին՝ 'ի պայծառանալ եկեղեցեաց քրիստոնեայ թագաւորօք 'ի ներքս մուծան , ոպ ցուցանեն պատմիչք և հնախօսք եկեղեցւոյ . և թէ այսմ առՃիշդ և անմիջահատ յաջորդուէ եպսուե Հայոց՝ շատ է այն, զի յեկեղեցւոջ կեսարիոյ կապադովկացւոց , որ թէ Հայ և յոյն պատմչաց՝ միշտ էր և կոչէր փոքր Հայաստան աշխարհ , հանապազ գտաւ յաջորդուէ եպսց յերիս դարս իսկ , 'ի թադէոսէ առաքելոյն սկսեալ մինչև ցսբն զլեոնդիոս . յորմէ ձեռնադրեալ սբ լուսաւորիչն մեր՝ փոխադրեաց զառաքելական յաջորդուԷն 'ի փոքուէ 'ի մեծն Հայաստան 'ի կաթողիկէ եկեղեցին էջմիածնի . ուր նըստան և նստին օրինաւոր յաջորդք նր մինչև ցայսօր ։ Ոչ կարէ ենդ դիմադրել ոք զայն , թէ ոչ էմ յիշեալ եպսքդ 'ի զանազան տեղիս Հայաս-

տանի՝ հայ էին ազգաւ. Եթէ զի 'ի նախկին դարս 'ի միում անդ եկեղեցւոյ՝ անխտիր առեալ լինէին եպսք յինչէ իցէ ազգաց՝ 'ի պաշտօն հովուութե որև իցէ ազգի. ահա ոսկեբերանն ասորի էր ազգաւ, բայց նստաւ պատրիարգ յունաց 'ի կոստանդնուպօլիս. Երինէոս յոյն էր ազգաւ՝ սակայն եղև եպս գաղղիացւոց 'ի լուգտոն. նա՝ 'ի նախնի պապս հռոմայ գտանին բազումք յազգէ յունաց՝ յասորւոց և յայլոց։

§. 125. Բայց ով զի լատինահայք առաւել ես հաստատեսցին ը̅ ստուգութե առաքելական լինելոյ եկեղեցւոյն հայոց, յառաջ բերից աստանօր զարդար վկայութի իմաստուն վարդապետի նց̅, հօրն մկրտչի աւգերեան, որ զուգիղ դատողութի իւր զայսմանէ՝ համարձակ դաւանի հրապարակաւ ('ի գիրսն վարք սրբց. հտր. թ. յեր. 446) յասելն, || Նւ ը̅ այսմ իրաւամբք ճանաչի եկեղեցի
,, հայաստանեայց աշակերտ հարազատ երկոցունց
,, սրբ առաքելոցս՝ բարթուղիմէոսի և թադէոսի,
,, և հայրապետութի հայոց կոչի՝ և է աթոռակա-
,, լութի ը̅ յաջորդութի աթոռոյ սրբյն բարթուղի-
,, մէոսի և թադէոսի. զի թէպէտ սրբ լուսաւո-
,, րիչն մեր 'ի կեսարիա ձեռնադրեցաւ, այլ նս-
,, տաւ յաթոռ սրբ առաքելոցս ը̅ 'ի վիճակ նց՝
,, որ է հայաստան աշխարհ, ուր ոչ երբէք պա-
,, կասեաց յաջորդութի քրիստոնէութե (ուր ճիշդ
,, պապասէրն խորհրդով կամ անխորհուրդ 'ի
,, բաց թողեալ է, զոր ճշմարտասէրդ յաւել
,, զանստելի բառդ) և Նշխսուե, ոչ միայն յե-
,, դեսխա՝ որ յետ միանգամ լուսաւորութն Միշտ
,, ունէր զհօտ (ասպա և զհովիւ) հաւատացելոց 'ի

,, ծոյլ իւրում, այլ և 'ի մեծն Հայս, ուր կային
,, (զամս իբր 250) քրիստոնեայք (ուրեմն՝ կային
,, և քահանայք և Եպիսկոպոսք, զի հօտ առանց հով-
,, ուի ոչ կերկար մնայ անկորուստ) սփռեալք աստ
,, և անդ հալածանօք հանդերձ, յորոց և զբա-
,, զումս նահատակեաց խոսրով արքայ հայոց հայ-
,, րըն տրդատայ. իսկ առ տրդատաւ յորմէ Ս.Ծ
,, լուսաւորիչ համօրէն տանս հայոց՝ զերկիրս երա
,, նելին զգրիգորիոս պարթև՝ ոսկ պարգևական
,, զաւակ կենդանի նշխարաց սրյն թադէոսի և
,, բարթուղիմէոսի, և առաքելական հոգւով ար-
,, ժանաժառանգ Աթոռոյ սր̃ առաքելոցս ]] :

## §. 126. Հ. Որդեօք հաւատք եկեղեցւոյն հայոց իցէ՞ ուղղափառ կամ ուղիղ:

Պ. Ուղիղ լինի իր ինչ՝ եթէ հաւասարի կամ համաձայնի չափոյ և կանոնի իւրում. ըստ որոյ և հաւատքն յայնժամ լինի ուղիղ՝ երբ համաձայնի և չափակցի կանոնի իւրոյ՝ որ է միայն Ածաշունչ մատեանն (տես. § .31). արդ՝ հաւատք եկեղեցւոյն հայոց ամ̃ մասամբ համաչափ է սր̃ գրոց, որ ապացուցանի Նախ այնուիկ, զի եկեղեցին հայոց ոչ միայն ըն̃ունի զբոլոր Ածաշունչ մատեանն առանց յաւելման և կրճատման, այլ և զիմաստ ճշմարտութեանց հաւատոց 'ի նմանէ քաղելոց՝ իմանայ և ուսուցանէ նովին մտօք և մեկնութ̃, զոր ուսուցին նախնի ընդունելի վարդապետք զանազան ազգաց: Երկ̃՝ զի 'ի հաւատապատում գիրս հայոց եկեղեցւոյն (որ̃ 'ի շարականն, 'ի Ժամագիրս, 'ի մաշտոցս, 'ի տօնացոյցս, և այլն) չիք և ոչ նշա-

նախեց մի դատապարտեալ կամ հերետիկոսական ուսմանց (զոր խոստովանին և նոյն իսկ լատինահայք), այլ ամ՟ է ուղղափառ վարդապետուե՟ համաձայն ած՟աշունչ գրոց և ընդունելի սր՟ ժողովոց, և որովհետև որպիսուե՟ հաւատոյ եկեղեցեաց՝ յոր գի և կշռի ը՟ հաւատապատում մատենից նոյին (ո՟պ ընդունելին և դիմախօսք մեր), ապա ը՟ այսմ՝ յուղղափառուէ՟ հաւատոյՃառ. գրոց՝ ուղիղ մակաբերի և ուղղափառուե՟ լուսաւորչական եկեղեցւոյն հայոց ։ Եր՟դ՝ զի նոյն եկեղեցի ներգործու՟ ընդունի զընդհանրական ժողովս՝ 'ի յունաց և 'ի լատինաց ընկալեալս • իբր զի զառաջին, զե՟կդ, զե՟րդ, և զեօթ՟ներ՟դ տիեզերական ժողովն ը՟ունի և տօնէ ներգործու՟ ('ի տօնացոյցս իւր և 'ի յայսմաւուրս) • իսկ զչ՟րդ, զհի՟նգեր՟դ և զվեցե՟րդ ժողովն ը՟ունի ը՟ այնց մասանց՝ որք համաձայնին դաւանուե՟ իւրում վե՟րնգոյն 'ի տնահամարսն § 61=70 բացայայտելոյ ։

§. 127. Զե՟րդ՝ զի եկեղեցին հայոց ա՟մ մասամբ համաձայնի հաւատոյ եկեղեցւոյն յունաց (բաց 'ի ծիսից ինչ որք չեն 'ի հաւատոյ) • իսկ արդ՝ չէ ումեք հնար հաստատել թէ եկեղեցին յունաց իցէ հերետիկոս կամ ոչ ուղղափառ (թողումք ըղլատինս՝ որք նման փարիսեցւոյն զա՟մ զայլ քրիստոնեայս՝ կոչեն հերետիկոս) • ապա ը՟ այսմ և եկեղեցին հայոց լինի ուղղափառ 'ի հաւատս իւր ։ Հի՟նգեր՟դ՝ հայկական եկեղեցին գլխովին համաձայնի և ս հաւատոյ մաքուր եկեղեցւոյն լատինաց, զի զոր դաւանէին լատինք գրեթէ ցակիզբն տասներ՟դ դարուն • վա՟ զի զնի այդ՝ բազում ինչ աւելորդ մուծին նք 'ի հաւատս իւրեանց, ո՟պ ցուց-

ցուք այլուր ․ այլ որդ՝ ոչ հաղորդմամբ եկեղեցին
լատինաց՝ թէ իւրեանց իսկ խոստովանելոյ՝ էր ուղ-
ղափառ, նոյնպէս և եկեղեցին Հայոց լինի ճշգրիւ ուղ-
ղափառ ։

§ . 128 . Վեցերորդ՝ վս ուղղափառութեան Հայաս-
տանեայց եկեղեցւոյ՝ վկայեաց հրապարակաւ ազգն
և եկեղեցին յունաց 'ի 12 դարուն յաւուրս Ներ-
սեսի շնորհալւոյն ․ զի մինչ այս հայրապետ՝ մանու-
էլի կայսեր և պատրիարգի յունաց այնչափ յայտ-
նի եցոյց զուղղափառ դաւանութի Հայոց, մինչև
բարեպաշտ կայսրն՝ հաւանութ. եկեղեցականաց իւ-
րոց՝ գրելով նամակ առ յաջորդն շնորհալւոյն՝
ետ վաւերական վկայութի, թէ հաւատք Հայոց յամէ
է ուղղափառ, և համաձայն եկեղեցւոյն յունաց ։
Ահա բանք նամակի կայսերն ․ Մանուէլ Քրի
„ այ հաւատարիմ թագաւոր ծիրանածին յոյ պա
„ կեալ արքայ . . . . գրիգորիոս պատուական
„ կաթողիկոս Հայոց՝ փրկութ. և շնորհօք նորին
„ բարերարութն, ողջ լեր . ղառաքեալ գիրս ձեր՝
„ թագաւորութիս մեր ընթերցաւ . . . և ծանեաք
„ 'ի գրոյս զբարի կամս ձեր՝ որ վս եկեղեցեաց
„ միաւորութ բաղձալոյ . . . . 'ի մէնջ հերե-
„ տիկոս կարծեցայք և անուանեցայք դուք՝ որ
„ Հաստատութ. խորհիք յՈւղղափառութին, ըստ
„ որում յառաքելոցս (յարանց մերոց և 'ի նամա
„ կաց ձերոց) լուաք և գոհացաք զայ . . . . ու-
„ վաւ ողջացուսցուք զմիմեանց կարծեօք զայթակ
„ ղին, և յետ քննութ և արդարապէս դատողութ.
„ տեսանելոյ զմիմեանց Ուղղութի՝ 'ի բաց բառնալ
„ զդայթագղութի մտաց մերոց, զմիջնորմն ցանկոյն
„ քակել . . . և զ'ի վերուստ փորանկեալ պատ-

„ մուճանն Քսի ի զաւ ՚ի նա ուղղափառութեն
„ խոստովանուլ, այլ ոչ տեսանել պատառեալ ․
„ այլ մի հաւատով երկոցունց կողմանցս՝ այնու-
„ հետեւ մի լինել կաթուղիկէ եւ առաքելական
„ եկեղեցի՝ առանց ամօթոյ խոստովանութս,։ Իսկ
„ նամակ քո սրբութդ՝ զոր գրեալ ես, հաճոյ
„ թուեցաւ թագաւորութես մեր՝ ոչ Ուղղափա-
„ ռի առ քո եւ մեզ ՚ի բարեպաշտութին Եր-
„ դակցի ։ Ծանիր եւ զայս, զի զդայթակղութին՝
„ որ կայր ՚ի սիրտս մեր յերգս ձեր եւ ՚ի պաշտօ-
„ նըս որ առ ած, բժշկեցաք քննութբ ․ վս զի ՚ի
„ մէջ ածաք եւ ծանեաք երեւելապէս ՚ի նոցանէ,
„ զի ՚ի բազում տեղիս (եկեղեցական գրոց ձերոց)
„ Երկու բնութբ զմի քս փառաւորէք, եւ պարտ է
„ զայս Ուղղափառութիս՝ որ իբրեւ թագուն է,
„ ամենեցուն ասել եւ ցուցանել ․ եւ ահա ոչ կայ ՚ի
„ մէջ մեր մեծ պատճառ, քանզի իբ բարեպաշտ
„ մտածութն Մի դտաք, այլ միայն՝ զոր ՚ի միտս
„ է բարեպաշտութի (՚ուղղափառութի) փութաս-
„ ցուք՝ զի երեւելի լիցի բարբառով բանի, եւն․
(՚ի ձեռագիր ընհանրականն շնորհալւոյն ․ յեր ․
83—86 ․ եւ ՚ի պատմ․ չամչեան, հտր․ գ․ յեր․ 115)։

§․ 129․ Յօթնեկըդ՝ ուղղափառութե եկեղեցւոյն
Հայոց վկայեն նաեւ երկոքին պապքն հռոմայ,
լիւսիոս եւ ուրբանոս, յորոց առաջինն յամի սն
1184 գրելով նամակ առ գրիգոր կաթողիկոսն հա-
„ յոց, ասէ ‖ լիւսիոս եպս՝ ծառայ ծառայից այ,
„ ամենապատուական եղբարց՝ գրիգորի կաթո-
„ ղիկոսի եւ այմ արքեպսց եւ եպսց ․ ․ ․ ողջոյն եւ
„ առաքելական օրհնութի ․ ․ ․ դուք եղբարք սի-
„ րեցեալք ․ ․ ․ որ յօդեալ էք յամ Ճշմար-

,, տուժս և յա՛մ գործս բարեաց՝ աղաչեսցե՛ք ըղ
,, բարերարութե՛ն ա՛յ . . . և զ՟ ողորմ խոստովա-
,, նիք զա՛մ Ուղիղ Դաւանութե՛ Հաւատոյ, ինչ՝
,, որ թերի է 'ի կարգաց՝ ուղղեսցե՛ք . . . փայլե՛ք
,, Պայծառ 'ի մէջ անօրինաց 'ի Հաւատս, և ըղ
,, ձեզ յԱմբիծ Հաւատսդ՝ զոր Ունիք՝ ողջա-
,, գուրեմ՛ք մեծաւ սիրով (Հայոց պատմութե՛ չամչեան,
հատոր, գ, երես, 143)։

Իսկ եկղ՟ն ուրբանոս Ե յամին 1364 գրելով առ ազգս Հայոց ասէ || Պատուական եղբարց մե-
,, րոց արքեպ՟սց և եպ՟սց, առաջնորդաց եկեղեցւոյ
,, և հարց վանականաց, աւագ իշխանաց և ազ-
,, նուական անձանց և ժողովրդոց՝ 'ի հանդէս
,, Ուղղափառութե՛ համօրէն ծաղկելոց 'ի թագա-
,, ւորութե՛ն Հայոց, ողջոյն և առաքելական օրհ-
,, նութե՛ . . . էր երբեմն՝ յորժամ թագաւորութե՛
,, հայաստանեայց ընդարձակածաւալ սփռեալ
,, տարածանէր, և 'ի նմա գերապանծ փայլէր
,, Ողջամիտ Հաւատոյ պայծառութե՛ . . . (այժմ)
,, տեսանեմք թէ զինորդ թագաւորութե՛ այդպիսի
,, մատնեալ կայ 'ի սորկութե՛ . . . նմին իրի և ուխ-
,, տիւք ցանկամք Ուղղադաւան այդմ ժողովր-
,, դեան հայկազեանդ տէրութե՛ ելս գտանել ('ի
նոյն գիրս. յեր. 355)։ Ա՛յլ արդ՝ եթէ ըստ վկայելոց պատկերց՝ հայոց եկեղեցին ուղղափառ էր 'ի յիշեալ թուականսդ, ապա և այժմ է ուղղափառ. զի յետ այդց ժամանակաց ոչ փոխեցին հայք զհաւատս իւրեանց։

§. 130. Ուրեմն՝ ուղղափառութե՛ հայաստանեայցս եկեղեցւոյ վկայեն նոյն իսկ այժմեան լա-

տինացեալ Հայք այսուիկ, զի նոքա յեկեղեցիս իւ-
րեանց 'ի գործ ածեն զայն հաւատապատում գըր-
եանս (զշարական, զժամագիրս, զմաշտոց, զտօ-
նացոյց, ե՛ն) որ սեփհական է եկեղեցւոյս մերոյ,
և որով մեք իսկ վարիմք մինչև ցայսօր. այլ արդ՝
եթէ նոքա դաւանութ̃ այնց մատենից համարին
զինքեանս ուղղափառս, ես առաւել Հայոց եկե-
ղեցին լինի ուղղափառ՝ ունելով զդաւանութ̃ նոյն
իսկ մատենից։ Զի՞ հնար այսմ դիմադրել զայն
թէ նք ուղղագրեն զայն մատեանս և այնպ̃ 'ի գործ
ածեն, մի՛ զի ահա հայրն գաբրիէլ առանց ուղ-
ղագրութ̃, առանց յաւելման և բարձման տպա-
գրեալ և բացատրեալ է զշարականն Հայոց 'ի վե-
նետիկ յամի տն̃ 1814. յորում և ասէ, թէ չէ
հարկ ամ̃ ուրեք յաւելուլ զբառն, և յորդւոյ,
վս̃ բղխման հոգւոյն սբ̃յ. միւս ես՝ զի այդ յա-
ւելուած 'ի ժամագիրս նց̃՝ ոչ է մասն հաւատոյ
հարկաւոր առ փրկութ̃. ոպ̃ յերկար ցուցեալ եմք
'ի ստէպ յիշեալ գիրսն մեր։

§. 131. Իններ̃դ՝ լատինահայք վկայեն ուղղա-
փառութ̃ Հայոց և այնուիկ, զի յեկեղեցիս և 'ի մա-
տեանս յինքեանց տպագրեալս ('ի տօնացոյցս,
յօրացոյցս, 'ի վարս սբ̃ց, 'ի պատմութ̃ Հայոց)
ը̃ունին իբր սբ̃ և տօնեն զբաղում հայազգի ան-
ձինս՝ յեկեղեցւոջ մեր տօնեալս կամ յիշատա-
կեալս, սկսեալ 'ի սբ̃ լուսաւորչէն դրեթէ մինչև
ցամ̃ տն̃ իբր 1700, որ է սկիզբն բաժանելոյ իւ-
րեանց 'ի մէնջ։ Իսկ արդ՝ այսու գործով ոչ ա-
պաքէն յայտնի վկայեն, թէ հաւատք Հայոց է
ուղղափառ։ վս̃ զի առանց Ճշմարիտ հաւատոյ չէ
և չէ հնար քրիստոնեայ լինել, թող թէ տօնելի

որք և նահատակ ։ Նա ստուգուն բանից մերոց՝ գնեմք աստանօր զանուանս և զժամանակ ննջելոյ կամ վկայելոյ սրբոյն այնոցիկ, զորս դոքա ըունին 'ի յիշեալ գիրս իւրեանց ։

Հայազգի ազգ նշանաւորք

Հատ ընտրեալք յամի Տեառն ՅԼԴ

334 · սբ Գրիգոր լուսաւորիչ ·
338 · արիստակէս որդի նորա ·
341 · տրդատ թագր̄, աշխէն և խոսրովիդխտ ·
342 · գրիգորիս աղուանից կաթողիկոս ·
354 · զուատ կամ զուխթա քահանայ ·
356 · վրթանէս որդի լուսաւորչին ·
362 · յուսիկ հայրապետ կաթուղիկոս ·
363 · ստեփաննոս ուլնեցի լր̄ ընկերօք ·
380 · խադ եպս̄, և սահակ աբեղայ ·
381 · մելետիոս հայ եպս̄ անտիոքայ ·
384 · ներսէս կաթուղիկոս պարթև ·
440 · սահակ կաթուղիկոս պարթև ·
441 · մեսրովբ վարդապետ ·
449 · ատովմեանք զօրավարք բզ̃ ընկերօք ·
450 · թաթուլ, վարոս և թովմաս ·
451 · վարդանանք 1036 մարտիրոսք ·
454 · ղևոնդեանք տասն նահատակք ·
458 · շուշան դուստր վարդանայ ·
461 · աբրահամ և խորէն երիցունք ·
470 · խաչիկ վարդապետ հոգետես ·
480 · եղիշա վարդապետ պատմագիր ·
482 · մովսէս եպս̄ խորենացի ·
490 · դաւիթ անյաղթ փիլիսոփայ ·
601 · սմբատ բագրատունի մարզպան ·

693 · դաւիթ դունեցի նահատակ ·
737 · վահան գողթնացի ·
786 · սահակ և համազասպ արծրունիք ·
808 · սահակ և յովսէփ կարնեցիք ·
852 · ատովմեանք զօրավարք ·
853 · գէորգ ակէացի և խոսրով գաբեղեան ·
854 · ստեփաննոս կոն նահատակ ·
855 · սմբատ սպարապետ ·
889 · աշոտ թագաւոր բագրատունի ·
897 · մաշտոց կաթողիկոս ·
914 · սմբատ թագաւոր նահատակ ·
917 · դաւիթ և գուրգէն գնունիք ·
977 · աշոտ թագաւոր ողորմած ·
1003 · գրիգոր նարեկացի ·
1012 · մակար եպիսկոպոս ·
1016 · սիմէոն միայնակեաց ·
1030 · պետրոս կաթողիկոս գետադարձ ·
1050 · դաւիթ աքանչելագործ ·
1105 · գրիգոր կաթողիկոս վկայասէր ·
1112 · գէորգ վարդապետ մեղրիկ ·
1113 · բարսեղ կաթողիկոս ·
1136 · գոհարինեանք չորք եղբարք ·
1150 · թէոդորոս աբեղայ ·
1165 · գրիգոր կաթողիկոս պահլաւունի ·
1170 · գէորգ աչիկայ, գրիգ՟, յովսէփ դունեցի։
1173 · ներսէս կաթողիկոս շնորհալի ·
1193 · գրիգոր կաթողիկոս՝ տղայ ասացեալ ·
1198 · ներսէս եպ՟ս լամբրոնացի ·
1200 · վարդենի կոյս ·
1201 · գրիգոր կաթողիկոս՝ ապիրատ կոչեց՟լ ·
1204 · թէոդորոս կեսարացի ·

1251 · ստեփաննոս քահանայ՝ արտամետցի ·
1252 · վանական յովհաննէս վրդ տաւուշեցի ·
1387 · ստեփաննոս եպս երկու վարդապետօք ·
1390 · աւագ վկայ բաղիշեցի ·
1391 · եղիսաբէթ արճիշեցի ·
1396 · զաքարիա կաթողիկոս աղթամարայ ·
1398 · թամար վկայուհի ·
1399 · խոսրով գանձակեցի ·
1403 · մելքիսեդ և կարապետ վանեցիք ·
1403 · յովհաննէս քահանայ չմշկածագայ ·
1417 · իսահակ պարսիկ՝ դաւրիժեցի ·
1418 · յիմար վկայուհի նահատակ ·
1421 · վարդան դատվանեցի մարտիրոս ·
1494 · շնոհփոր վկայուհի բաբերդացի ·
1642 · նիկողայոս ամդեցի վկայ ՚ի տիգրանկերտ ·
1652 · խաչատուր վկայ ամդեցի ·
1655 · սիրուն վկայ գնունեցի ·
1656 · աւետիս և մխիթար նահատակք ·
1676 · գրիգոր մանկ տաթևացի վկայել ՚ի մուշ ·
1682 · գրիգոր կարնեցի վկայ ՚ի կոստանդնպլիս ·
1707 · կոմիտաս քահանայ նահատակել ՚ի կոստանդնուպօլիս, և միքայէլ քահանայ ՚ի բրքնիկ ։

Զայսչափ բազմութե սրբոց մերոց տօնելով լատինահայոց զի՞նչ այլ ցուցանեն գործով, թէ ոչ զայս, թէ հաւատք հայոց է ճշմարտիւ ուղղափառ, և թէ կարի յոյժ կարելի է սրբ լինել յեկեղեցւոջ հայոց՝ առանց յարելոյ ՚ի լատինս և ՚ի պապըս նց · մինչ աղաչեմք զեկեղեցականս և զաշխարհականս լատինահայոց, զի հայելով ՚ի գործս և ՚ի բանս իւրեանց՝ թո՛ղ դադարեսցեն զըպարսել զմայր եկեղեցի մեր, և մի դարձուսցեն զմերայինս յիւրեանս ։

§. 132. Տամերդ՝ ՚ի վկայ ուղղափառութե̃ մերում ՚ի դէմս ածեմք լատինահայոց զաղդասէր վարդապետն նշ̃ զՀայր միքայէլն չամչեան, որ շարժեալ ՚ի ճշմարտութե̃ց մերոց՝ յօրինեաց զառանձին գիրս զայսմ նիւթոյ, մակագրեալ ՚ի նմանէ „ Հաստատութի Ուղղափառութե̃ Հայաստանեայց Եկեղեցւոյ „ զորոյ զբուն ձեռագիրն՝ Թշնամիք մխիթարեանց յարկեղէ հեղինակին ՚ի կոստանդնուպօլիս՝ յամին 1815 ՚ի 5 մարտի գողացեալ՝ տարան ՚ի հռովմ ՚ի հանել յատեան պապին՝ յամբաստանել զմխիթարեանս իբր զհերձեալս կամ զկուսակիցս հայոց ։ Ցայսմ մատենի (զորոյ զկարևոր քաղուածն ունիմք առ մեզ) Թէպէտ յերկուս հետս կաղայ հեղինակն, սակայն ՚ի բաց հանեալ զա̃մ խմորս պապականութե̃ նր̃, ՚ի մնացեալ բանսն քաջ ցուցանէ զուղղափառութի մեր, մանաւանդ ՚ի վր̃ տասանց կարծեցեալ հերետիկոսութե̃ց՝ յայլոց պապականաց մերումս եկեղեցւոյ ընծայելոց, որք են, 1 Թէ հայք մերժեն զժողովն քաղկեդոնի և զմեծն լևոն. 2 Թէ մի բնութի ասեն ՚ի Քս̃, և մի կամք և մի ներգործութի. 3 Թէ ոչ ընդունին զբղխումն հոգւոյն սր̃յ ՚ի հօրէ և յորդւոյ. 4 Թէ մոլար կարծիս ունին ՚ի վր̃ հանդերձեալ կենաց, ո̃ր ՚ի վր̃ կայանի ննջեցելոց, արքայութե̃, դժոխոց, ե̃լ. 5 Թէ զսր̃ ա̃ծն խաչեցարիւ ասեն. 6 Թէ զծնունդն Քս̃ի ՚ի վեցն յունվարի տօնեն. 7 Թէ ոչ խառնեն զջուր ՚ի բաժակն. 8 Թէ պահեն զխտրական օրէնս. 9 Թէ զվերջին օծումն ոչ ընդունին. 10 Թէ մերժեն զգըրխաւորութի առաքելական աթոռոյն ։ Մեք որովհետև ոչ յայսմ, այլ ՚ի միւս գիրս մեր՝ ՚ի Խըլա-

րոյն հաւատոյ մերոյ յանձն առեալ եմք բրբրել
զայդ ամ և զայլ քարինս գայթագղուէ նց , շատ
համարիմք առ տեղեաւս դրոշմել զվկայուն հօ-
րըն միքայելի զուղղափառուէ մերս հայաստանեայց
եկեղեցւոյ , զոր գրէ նա 'ի յառաջաբանուէ իւ-
րում , ուր յետ բազում բանից ասէ || Զայսն
,, զայս և եթ դիտելով կամեցայ բուռն հարկա-
,, նել գործոյս , և ակն յայտնի ցուցանել ամ՟ն՝
,, որոց տեսանել ախորժեն՝ զհաստատուն Ուղ-
,, ղափառուէ եկեղեցւոյն հայաստանեայց . Իսկ ո-
,, րոց ոչն տեսանեն առ 'ի թանձրամած ծխոյ ա-
,, տելուէ և դրգռուէ մթագնեալ աչօք , յայտ-
,, նաբարբառ հնչել յականջս նց , թէ Զունի՛
,, եկեղեցին հայոց զՄոլորուն ինչ . այլ յամի
,, Ողջամիտ վարդապետուէ ծաղկեալ է 'ի սկըզ-
,, բանէ և այսր , և նովին հաստատեալ կայ՝ յե-
,, ցեալ յանդրդուելի սիւնն հաւատուէ , 'ի
,, կաթողիկէ եկեղեցին Ած . . . ոչ քաջայայտ
,, ցուցցի յընթացս գրոցս || : Առ այժմ շատ
և գոհ եմք զազգասէր վարդապետէս , զՄա-
ցեալսն մաղեսցուք 'ի յիշեալ գիրս մեր :

## §. 133. Զ. Եկեղեցին հայոց եթէ ինք նագլուխ և անկախ յայլոց .

Պ . Ըստ արժանահաւատ պատմական ճշմար-տուէց՝ հայաստանեայցս եկեղեցի ամիւ է ինքնա-գլուխ և չունի ինչ կախումն ոչ զյունական և ոչ զլատինական եկեղեցւոյ ; այլ է Քնահիմն՝ անդ-րանիկ և նախածնունդ քան զեկեղեցիս այլ ամ ազգաց . վս զի զառաջին հիմն նորին՝ եդ նոյն ին-քըն Քս տէրն մեր , առաքելով զնա Ճակ և զպատ-

կեր իւր առ Թագաւորն մեր աբգար, և խոստանալով նմա յղել զաշակերտ իւր առ նա (Խորենացի, Բ. 32). յետ համբարձմանն նորա՝ Թովմաս մին յերկոտասանից ըստ հրամայելոյն Քրիստոսի առաքեաց զեղբայր իւր զԹադէոս (անդ. 33), որ զԹագաւորն մեր և զամենայն Հայաստան լուսաւորեալ հաստատեաց զեկեղեցի մեր. զկնի սորա հասին բարդուղիմէոս, յուդա Թադէոս և սիմոն կանանացի յերկոտասանից անտի, այլ և եղիշէ և ստաթէոս յեօթանասնից. սոքա ամենեքին յեդեմէ եկին 'ի Հայաստան. յորոց իմանի թէ մերս եկեղեցւոյ մի միայն ծնող և մայր՝ է առաքելական եկեղեցին եդեմի, յորմէ՝ ըստ պատուիրանաց Քրիստոսի (ղկս. Իդ. 47. ևս. գործոց. Ը. 14. ԺԵ. 2. Ժզ. 4: հռովմ. ԺԵ. 19—28) ունէին սկսանիլ և ծնանիլ այլ ամենայն եկեղեցիք: Այսու օրինակաւ՝ 'ի Քրիստոսէ հիմնեալ՝ յեդեմէ սկսեալ՝ և յառաքելոց շինեալ եկեղեցին հայոց (հռովմ. ԺԵ. 20: Ա. կորնթ. Ժ. 8. Ժդ. 10: եփես. Բ. 20. 21) տեւեաց յերկս դարս ըստ վարչութեան զանազան եպիսկոպոսաց յայլեւայլ քաղաքս Հայաստանի. մանաւանդ 'ի փոքրն Հայաստան 'ի կեսարիա կապադովկացւոց, ուրանօր ձեռնադրութեան Թադէոսի առաքելոյն եկաց մնաց անմիջահատ 'ի Թէոփիլոսէ եպիսկոպոսէն մինչև ցղևոնդիոս (§. 120—123). յորմէ ընկալեալ զեպիսկոպոսութիւն սուրբ լուսաւորիչն մեր, և միաբանեալ զԹագաւորն տրդատ և զազգն բոլոր՝ զընդ հալածանօք ծածկեալ զեկեղեցին հայոց՝ եհան 'ի լոյս հրապարակի. բայց վասն այսր ձեռնադրութեան չէ հնար կարծել, թէ եկեղեցին հայոց իցէ ծնեալ 'ի յունականէն. որոյ պատճառք են, մի՝ զի այն սրբազան պատիւ իջանէր 'ի

յատուկ առաքելոյն Հայոց 'ի Թադէոսէ. եկդ՝ զի այն աթոռ կեսարիոյ հիմնեալ էր 'ի նոյն առաքելոյն Հայոց. երդ զի երկիրն էր Հայաստան աշխարհ՝ առաջին՝ Հայք կոչեցեալ անդստին յաւուրց անտի արամայ նահապետին մերոյ, որպ ուսուցանէ խորենացին (ա. 14). և չրդ զի և ժողովուրդք երկրին՝ թէ ոչ բովանդակ, սակայն մեծաւ մասամբ հայ էին ազգաւ և լեզուաւ. վնկ զեկեղեցին կեսարիոյ համարիմք տիրապ հայկական և ոչ յունական, ը որոյ և փերմելիանոս եպս տեղւոյն գրեաց զգործս խոսրովու Հայոց արքայի և զնահատակել նր զհայս վն քնական հաւատոց (խորէնացւ. բ. 75). և 'ի գալ տրդատայ 'ի հռովմայ 'ի հայս նախարարք կեսարիոյ ընդ առաջ ելեալք ընկալան զնա իբրև զկուրեանց թագաւոր (անդ. բ. 82). Իսկ արդ՝ եթէ եկեղեցին կեսարիոյ ոչ էր յունական՝ այլ հայկական, ապա և առնուլն լուսաւորչին զձեռնադրութիւն անտի՝ ոչ նշանակէ զլինել նր ծնող հայկական եկեղեցւոյ. զի և նա յեէմայ էր սկզբնաւորեալ, և երկոքին եւս Մնան բնիկ դուստր մայր եկեղեցւոյն եէմի: Այժմ անժխտելի փաստ է և այն, զի որդի լուսաւորչին վրթանէս կաթողիկոս վն բարեկարգութեան եկեղեցւոյն իւրոյ դիմեաց վերստին յամին իբր 340 յեկեղեցին եէմի, և յառաջնորդէ նորին մակարիոս եպնէ ընկալեալ զկարգս ծխից զարդարեաց զմերս եկեղեցի. որպ պատմի 'ի կանոնագիրս մեր:

§. 134. Նաև առաւել չէ հնար ումեք կեղծել, թէ լատին եկեղեցին իցէ ծնող հայկականին զի այդմ չէք և ոչ նշանախեց մի փաստի. և թէպէտ հաստատեսցի եւս գնալն լուսաւորչին 'ի հռ-

ռովմ (զոր ո՛չ ոք զօրէ ապացուցանել), սակայն անուն և ոչ մի յաղթող փաստ ելանէ. զի այցելուն եպ՟ց բիւր պատճառս մարթի ունել. վ՟նզ լատինք առանց իրաւանց պարծին զՀռովմէական եկեղեցին կոչելով՝ մայր և ծնող և վարդապետ ամ՟ եկեղեցեաց. զի այդ բան ծագէ 'ի ծագ անհիմն է գտնէ նկատմամբ հայկական եկեղեցւոյն. որ օգուտ և ոչ մի, բայց վնաս բազում եւեթ 'ի կցորդութ՟ ընդ լատինս և ընդ պապս նց՟, ոպ՟ վկայեն պատմութիք կիլիկեցի թագաւորաց մերոց: Ապա անկախութի և ինքնատիրութի եկեղեցւոյն հայոց մեծայ անուրանալի, յորոց 'ի կնիք հաստատուն՝ դրոշմեմք աստանօր զվկայութի հնագոյն յոյն մատենագրի ուրուք, զոր յառաջ բերէ պետրոս ռեմարքա 'ի գիրս իւր || Արժան է գիտել՝ թէ այս նահանգ
,, (հայաստան) է ինքնագլուխ, ոչ է ենթարկեալ
,, առաքելական աթոռոյն (կոստանդնուպօլսի),
,, այլ պատուեալ լինի 'ի սակս ո՞րյն գրիգորի
,, հայոց եպսի, և իշխէ երկերիւր քաղաքաց և բեր
,, դեց ||: Զնոյն հաստատեն և ամ՟ եկեղեցական պատմիչք յունաց և լատինաց, զոր վանց առնեմք յառաջ բերել:

## §. 135. Հ. Որպիսի տարբերութիւնք գտանին ընդ մէջ եկեղեցեաց հայոց և յունաց.

Պ. Ոպ՟ վերագոյն ասացաք՝ 'ի նիւթս հաւատոյ ոչ գոյ ամենեւին զանազանութի ը՟ մէջ երկուց արեւելեան եկեղեցեացդ. այլ միայն 'ի ծէսս ինչ սբ՟ խորհրդոց և արարողութեց. ոպ՟ այն՟ք, զի յո՟ք ը՟ նոսա և ռուսք խմորուն հացիւ պատարագեն

'ի բաժակ մի խորհրդոյն ջուր արկանեն, զծնուն-
դըն Քրիստոսի 'ի 25 դեկտեմբերի կատարեն, զմի ան-
երգն առանց խաչեցարի ասեն, և այլ ոմանք. որք
չեն բան հաւատոյ, այլ արտաքին ծէսք, որք ոչ
բառնան զմիութիւն հաւատոյ և սիրոյ։ Սակայն յայս-
մանէ մի ոք հետևեցուսցէ, թէ արժան իցէ հա-
յոց թողուլ զծնող եկեղեցի իւր և գնալ միանալ
ընդ յոյնս. զի ըստ առաքելական պատուիրանին՝ իւ-
րաքանչիւր ոք յոր կոչումն կոչեցաւ, 'ի նմին
պարտի կալ և մնալ (ընթերցիր. Ա կորնթ.
Է. 15—25։ Հռովմ. ԺԴ. 29։ Եփես. Դ. 1։ ԵՆ).
մանաւանդ զի հայոց եկեղեցին՝ ոչ միայն նման
յունականին՝ ուղղափառ է, այլ և բազմօք գովե-
լի վասն պահելոյ զբազում հին ծէս նախնի առա-
քելական եկեղեցւոյն, որք են՝ բաղարջն և ան-
ջուր պատարագել ըստ օրինակին Քրիստոսի, զծնունդ
նորա ընդ մկրտութեան 'ի միում յունվարի տօնել, 'ի
զատկէն ցհամբարձումն ոչ պահել պահս, և այլ
բազումք, զորս յառաջ բերցուք յեկեղեցական
պատմութեան մերում։

## §. 136. Զ. Որ զանազանութիւնք գտանին ընդ մէջ հաւատոյ եկեղեց-ւոյն հայոց և լատինացւոց.

Գ. Հաւատք եկեղեցւոյն լատինաց՝ գրեթէ
մինչև ցհազարերորդ ամի թուականին Քրիստոսի՝ մա-
քուր էր և համաձայն մեր եկեղեցւոյ, յոր՝ նաև
և ոմանք 'ի նախնի վարդապետաց մերոց կամեցան
միաբանել ընդ նոսա. սակայն զկնի այդ ժամանա-
կաց՝ լատինք բազում ինչ նոր և օտար ուսումն
մուծին 'ի հաւատս իւրեանց, որով և բաժանե-

ցան նոքա 'ի հայոց և 'ի յունաց ։ Երևելիքն 'ի նորահնար վարդապետութեանց նոցա՝ որովք այժմ օտարանան յարևելեան եկեղեցեաց, համարին այտեքիկ ։ Նախ՝ ուսուցանեն նոքա, թէ բաց 'ի գրեալ բանից ա՟յ կամ բաց յա՟ծաշունչ գրոց, գոն ևս անգիր կամ ոչ գրեալ ա՟ծային բանք, զորս կոչեն՝ աւանդութիւնս ա՟ծայինս պահեալս յեկեղեցւոջ ։ 2՝ թէ հոգին ս՟բ ա՟յ բղխի ոչ միայն 'ի հօրէ, այլ և յորդւոյն ա՟յ ։ 3՝ թէ գոյ քաւարան ։ 4՝ թէ գոյ ներողութի՟ մեղաց և պատժոց՝ միայն 'ի պապէն դրամով գնելի ։ 5՝ թէ առաքեալն պետրոս էր գլուխ ա՟մ առաքելոց կամ ունէր զառաջնութի՟ իրաւանց յայլ առաքեալս ։ 6՝ թէ պապըն հռովմայ է յաջորդ ս՟բյն պետրոսի, որով և նման նմա՝ գլուխ և միապետական տէր այլ ա՟մ եպ՟սց ։ 7՝ թէ կառավարութի՟ եկեղեցւոյն Ք՟սի է միապետական ։ 8՝ թէ հարկ է ժողովրդոց հաղորդիլ միայն 'ի մարմնոյն Ք՟սի, և ոչ 'ի ս՟բ արենէն ։ 9՝ թէ ա՟մ քահանայից և սարկաւագաց հարկ է անկին լինել կամ ոչ ամուսնանալ ։ 10՝ թէ չէ արժան ժողովրդոց կամ աշխարհական անձանց ընթեռնուլ զա՟ծաշունչ գիրս ։ 11՝ թէ այն քրիստոնեայ որ ոչ հնազանդի կամ միաբանի ը՟ դ եկեղեցւոյն և պապին հռովմայ, ոչ կարէ փրկիլ և ոչ արքայութե՟ արժանանալ ։ 12՝ թէ չէ արժան աշխարհականաց ընթեռնուլ զգիրս յօրինեալս 'ի հերետիկոսաց, ո՟ր յայն ա՟մ քրիստոնէից՝ որք ոչ հնազանդին պապին և եկեղեցւոյն հռովմայ ․ ընդորովք իմանան և զհայս, վ՟ա և ոչ տան ժողովրդոց իւրեանց հրաման ընթեռնլոյ զգիրս 'ի մէջ յօրինեալս ։ 13՝ թէ պապն հռովմայ է մի միայն

անսխալելի դատաւոր ամ՟ վճռից ՚ի նիւթս հաւատոյ և վարուց։ Զլուծումն սոցա տես ՚ի խնդրոցն հաւատոյ։

§. 137. **Հ. Ո՞՛ր է գլուխ եկեղեցւոյ.**

Պ։ Մի միայն գլուխ երևելի և աներևոյթ եկեղեցւոյ՝ է Քս՟ տէրն մեր. որ ապացուցանի անժխտելի վկայութբ՟ ս՟բ գրոց, որք միայն զքս՟, և ոչ զայլ ոք անուանեն գլուխ եկեղեցւոյ (կարդա. ա՟ կորնթց. ժա. 3։ եփես. ա. 22։ դ. 15։ ե. 23։ կողոս. ա. 18։ բ. 19)։ Յատկութիւնք այսր գլխոյ են նախ՝ զի հեղու յանդամս իւր զհոգևոր կեանս զզգայմունս և զշարժմունս (եփես. ա. 3). Եկդ. զի միայնակ ուղղէ՝ վարէ և բարեկարգէ զամ՟ անդամսն. Եր՟դ զի անբաժանելի եղանակաւ կցեալ և յօդեալ է ը՟ ամ՟ և իւրաքանչիւր անդամս իւր. Չր՟դ զի պաշտպանէ և նախապահէ զամ՟ անդամսն յամ՟ փորձութեանց. և Հինգեր՟դ՝ զի ըստ մարդկային բնութեն համատեսակ է անդամոց իւրոց։

§. 138. **Հ. Արդեօք բաց ՚ի Քրիստոսէ գո՞յ այլ ոմն երևելի գլուխ, որ իբր մի միայն փոխանորդ և երեսփոխան Քրիստոսի կառավարեսցէ զընդհանուր եկեղեցին.**

Պ. Բաց ՚ի Քսէ՝ բնաւ ո՛չ գոյ յեկեղեցւոջ այդպիսի երևելի ընդհանուր գլուխ. որ իբրու մի միայն տեղակալ Քսի հովուեսցէ զամ՟ քրիստոնեայս զեկեղեցականս և զաշխարհականս. վս՟ զի նախ՝ Քս՟ ոչ կարգեաց զայդպիսի ոք ՚ի տեղի իւր. ը՟ որում զհոգ ժողովրդեանն ոչ յանձն արար միում, այլ երկոտասան առաքելոց հաւասարապէս.

առանց նախադասելոյ զոք՝ այլոց (տե՛ս մտթ. ԺԸ. 15=20 ։ ԻԸ. 16—20 ։ մրկս. ժզ. 14=20։ յովհ. Ի. 21—24 ։ Ա կորնթ. ԺԲ. 28 ։ եփես. Դ. 11)։ Երկրորդ՝ զի սուրբ գիրք ո՛չ երբէք յիշատակեն թէ բաց 'ի քէն՝ կայ այլ գլուխ եկեղեցւոյ, ապա և մեզ չէ արժան ճանաչել զայդպիսի գլուխ ։ Երրորդ՝ զի յատկութիւնք գլխոյ՝ զորս 'ի նախընթաց տանդ թուեցաք՝ ոչ պատշաճին մարդոյ ուրուք, այլ Աստուծոյ. ապա ուրեմն ոչ ոք 'ի մարդկանէ զօրէ լինել կամ կոչիլ միապետ գլուխ ընդհանուր եկեղեցւոյ ։ Չորրորդ՝ զի բնաւ իսկ չիք հարկաւորութիւն այդպիսի միապետ գլխոյ. զի որում եկեղեցին մարթի կառավարիլ, և իրօք իսկ կառավարեցաւ 'ի բազում դարս՝ ազնուապետական վարչութեամբ և ազգային գլխաւորաւ. որպէս հաստատեն պատմութիւնք եկեղեցեաց զանազան ազգաց 'ի սկզբանէ և այսր ։

§. 139. Հ. Որդեօք առաքեալն պետրոս եղև՞ գլուխ ամենայն քրիստոնէից և եկեղեցեաց.

Պ. Ո՛չ. Քրիստոս տէրն մեր կացոյց զպետրոս միապետ և գլուխ ամենայն եկեղեցեաց. ոչ ինքն սուրբն պետրոս այդպիսի ծանեաւ զինքն կամ վարեցաւ 'ի կեանս իւր. և ոչ միւս առաքեալք բանիւ կամ գործով ցուցին ինչ նշան այնպիսի իշխանութեան 'ի սուրբն պետրոս. վասն զի ասելի է թէ պատուով միայն գերազանց էր պետրոս քան զայլ առաքեալս, և ոչ թէ իշխանութեամբ կամ իրաւաբանութեամբ ։ Յերկար ապացուցցուք զայս ճշմարտութիւն 'ի գիրս մեր Խտրոց հաւատոյ. զոր հարկ է ամենայն ուղղափառաց ընթեռնուլ ։

### §. 140. Հ. Զի՞նչ է սրբապաշտութիւն եկեղեցւոյ. +.

Պ. Սրբապաշտութիւն (յուն. իերարխիա) է հրապարակական մի պաշտօնութիւն, յորոյ սահմանեալ, և օրինաւոր կոչմամբ՝ արժանաւոր անձանց յանձնեալ. որք այսու կարգաւ՝ պարտին յընկերութեան քրիստոնէից (յեկեղեցւոջ) զպատգամս այ քարոզել, զսբ խորհուրդս մատակարարել, և զկրթութիւն բարուց յամենայնի պահպանել՝ ՚ի փառս այ և ի փրկութիւն մարդկան:

### §. 141. Հ. ՚Ի սուրբ գիրս զի՞արդ կոչի սրբապաշտութիւնն.

Պ. Ուրեք ուրեք կոչի Կարգ (ա մնաց. ե. 11: նեեմեայ. ժգ. 30: գ. թգր. ժ. 5: ա կորնթ. ժդ. 20: եբրայ. ե. 6. և այլուր). այլուր կոչի Պաշտօն, պաշտօնութիւն, տնտեսութիւն, հազարապետութիւն, զինուորութիւն (գործոց. ա. 17. 25: գ. 4: ի. 24: կողոս. ա. 25: ա կորնթ. թ. 17: ա տիմոթ. ա. 12: բ տիմոթ. դ. 11: բ կորնթ. ժ. 3. 4: ա տիմոթ. ա. 18: և յայլ տեղիս). սակս և, Վերատեսչութիւն, կամ յունական ձայնիւ; Եպիսկոպոսութիւն, որպ ՚ի ա տիմոթ. գ. 1: գործոց. ա. 20. ուր յայն բնագիրն ասէ, Զեպիսկոպոսութիւն նր առցէ այլ: Ուր ծանիր, զի եպիսկոպոսութիւնն ոչ է անուն փառաց, պատուոյ, իշխանութեան, փառասիրութեան, տիրողութեան, ևն, այլ միայն հոգևոր գործոյ. որպ յայտնի վկայէ անդ սրն պաւղոս, Եթէ որ եպիսկոպոսութեան ցանկայ՝ բարւոյ Գործոյ ցանկայ:

## §. 142. Հ. Ի սուրբ գիրս զիա՞րդ կոչին անձինք զայդ սրբազան պաշտօն կատարողք .

Պ. Ի հին և ՚ի նոր կտակարանի զանազան այլաբանեալ կոչմունք ընծային նց վս գերազանցուն այսր պաշտաման . յորոց նշանաւորքն են անուանքս, Քահանայ (ծննդց . ԺԴ . 8: ելից . ԺԹ . 22 : սղմս . ՃԺ . 4 . այլուր յաճախ) . Տեսանող (Ա . Թգր . Թ . 9 : եսայ . Լ . 10 . և՟ն) . Այր այ, մարդ այ (Ա Թգր . Բ . 27 : Թ . 6 : Ա տիմոթ . Զ . 11 : Բ տիմոթ . Գ . 17 : և՟ն) . Հրեշտակ , կամ պատգամաւոր այ (մաղաք . Բ . 7 : Գ . 1 : մատթ . ԺԱ . 10 : ղկս . Է . 27 : յայտն . Ա . 20 : Բ . 1 . 8 . 12 : գղտ . Դ . 14 : Բ կորնթ . Ե . 20 : եփես . Զ . 20 : և՟ն) . Դէտ , Պահապան (եսայ . ԾԲ . 8 : եզեկ . Գ . 17 . 18 . ԼԳ . 2—7 : երեմ . Զ . 17 : ովսեայ . Թ . 8 . և՟ն) . Շինող (զտունն և զտաճարն այ յն զեկեղեցին), Ճարտարապետ ( սղմս . ՃԺԷ . 22 : մատթ . ԻԱ . 42 : գրծց . Դ . 11 . Ա պետր . Բ . 7 : եսայ . Գ . 3 : Ա կորնթ . Գ . 10 : և՟ն ) . Հովիւ (եսայ . ԿԴ . 11 : երեմ . Գ . 15 : եզեկ . ԼԴ . 2 : եփես . Դ . 11 : Ա պետր . Ե . 2 . և՟ն ) . Հայր (Դ . Թգրց . Զ . 21 : Ա կորնթց . Դ . 15: գղտ . Դ . 19 . և՟ն) . Տեսուչ, վերակացու, վերատեսուչ , որք են թարգմանութիւն յունին բառդբառոյս Եպիսկոպոս (Ա պետր . Բ . 25 : Ե : 2 . 3 . գրծց . Ի . 28 : տիտոս . Ա . 5, 7 : փիլիպ . Ա . 1 : Ա տիմոթ . Գ . 2) . Երէց (Ա տիմոթ . Ե . 17: գրծց . ԺԴ . 23 . տիտոս . Ա . 5 . և՟ն ) . Սարկաւագ , Պաշտօնեայ , Ծառայ , Սպասաւոր . որք

են բառք նոյնանշանք (փիլիպ. ա̅. 1 ։ ա̅ տի-
մոթ. գ. 8. 12. դ, 6 ։ ա̅ կորնթ. գ. 5 ։ բ̅
կորնթ. գ. 6 ։ զ. 4 ։ ժա. 15 ։ եփես. գ. 7 ։ զ.
21 ։ կողոս. ա̅. 7. 23. 25 ։ դ. 7 ։ ա̅ թեսաղ.
գ. 2 ։ հռովմ. ա̅. 1. ժե. 16 ։ ժզ. 1 ։ գործոց
ժզ. 16. այլուր). Վարդապետ, Ուսուցիչ,
Քարոզիչ (գործոց. ժգ. 1 ։ ա̅ կորնթ. ժբ. 28 ։
մատթ. ժ. 27 ։ եփես. գ. 11 ։ ա̅ տիմոթ. բ̅.
7 ։ բ̅ տիմոթ. ա. 11 ։ եբրայ. ե̅. 12. ևն).
Առաջնորդ, ի̅ Առաջին, Առաջինն ի̅դ 'ի քա-
րոզելն զբանն ա̅յ և 'ի ցուցանելն զուղիղ ճանա-
պարհն կենաց, Ուղեցոյց, Կարապետ, Գլխա-
ւոր (եբրայ. ժգ. 7. 17. 24 ։ գործոց, ժդ. 11 ։
ժե. 22 ։ մատթ. ժե. 14 ։ ի̅գ. 16. 24 ։ հռովմ.
բ̅. 19 ։ ղկս. ի̅բ. 26 ։ Սոյնն մօք առաքեալն
պետրոս կոչի՝ Առաջին, մատթ. ժ. 2. վ̅ա, զի
Առաջին քան զայլ առաքեալս դասանեցաւ դ.ք̅
մատթ. ժզ. 16. և Առաջին քարոզեաց զկրօնն
ն̅ր̅, գործոց. բ̅. 14). Դպիր (մատթ. ժգ. 52 ։
ի̅գ. 33). Աղ երկրի, Լոյս աշխարհի, Աշտա-
նակ (մատթ. ե̅. 13. 14 ։ փիլիպ. բ̅. 15 ։ յովհ.
ե̅. 35 ։ զաքար. դ. 2 ։ յայտն. ա̅. 13 ։ ժա̅.
4. ևն). Մշակ այգւոյ և հնձոց (մատթ. ի̅.
1—10 ։ մարկ. ժբ̅. 1—10 ։ մատթ. թ. 38 ։
յովհ. դ. 37 ։ ևն). Տնտես, Հազարապետ,
(ղկս. ժբ̅. 42 ։ ա̅ կորնթ. դ. 1. 2 ։ տիտոս.
ա̅. 7. ևն) և այլ նմանք։ Գումարն կամ բոլորն
այսց պաշտօնէից՝ կոչի Եկեղեցի Ուսուցիչ (§.
96) ։ Խորհրդով հաւաքեցաք զայս ա̅մ, զի կար-
դակից եղբարքն մեր՝ ճանաչելով զպարտաւորու̅
և պաշտօն իւրեանց՝ ջանասցին գործով կատա-

րեւ ղայնս, եւ մի՛ ինչ արասցեն հակառակ կամ նախատաբեր պատուոյ իւրեանց :

### §. 143. Հ. Ո՞վ է պատճառ սրբապաշտութեան.

Պ. Առաջին պատճառ կամ սահմանող եւ տուող այսր սրբազան պաշտաման՝ եւ պաշտօնէից է ինքն ա՟ծ (կարգ. երեմ. գ. 15: ա՟ կորնթ. դ. 6: ժա՟. 23: ժբ՟. 28: գաղատ. ա՟. 15, 16: բ՟ կորնթ. գ. 5: դ. 6: մատթ. ծ. 20. յովհ. ի. 21: եփես. դ. 11. 12: գործոց. ի. 28. եւն). իսկ երկրորդ պատճառ կամ գործիք, որով ա՟ծ վարի ՚ի կոչելն եւ ՚ի կարգելն զպաշտօնեայս, է ընտրող եկեղեցին, ա՟յ գումարն կամ ժողովն քրիստոնէից, զորմէ եւ սորա :

### §. 144. Հ. Ո՞վ է յարմար ենթակայ այսր սուրբ պաշտօնի.

Պ. Սրբապաշտութեան ընդունակ ենթակայ ոչ են հրեշտակք եւ ոչ կանայք (ա՟ կորնթ. ժդ. 34: ա՟ տիմոթ. բ. 12), այլ միայն մկրտեալ արք. բայց եւ սոքա ոչ անխտիր ամէն, այլ նոքա միայն՝ որք ճշմարտիւ ունին զտրամադրութիւն եւ զյատկանիշս հարկաւ պահանջեալս յօրինաւոր ընդունելութիւն եւ ՚ի կիրառութիւն այդպիսի ծանր պաշտաման :

### §. 145. Հ. Որք եւ քանի՞ են տրամադրութիւնքդ այդոքիկ.

Պ. Կարի հարկաւոր տրամադրութիւնք յընդունողս այսր սրբազան պաշտօնի են ութ այսոքիկ. կոչումն աստուածային, սրբութիւն վարուց, բաւական

գիտուն , ոգի հոլովական , կանոնադիր անարա
տուն , ժողովական ընտրողուն , առեննական փոր-
ձողուն , և հանդիսական ձեռնադրուն ։

## §. 146. Հ. Զի՞նչ և քանի՞ է կոչումն աստուածային ։

Պ. Կոչումն նշանակէ զայն ներգործուն այ , որ զոմանս 'ի մարդկանէ ընտրէ , կարևոր պար գևօք զարդարէ և կարգէ յեկեղեցւոջ առ 'ի պաշտել քրիստոնէից , և է կրկին ։ կոչումն անմիջական՝ երբ այ ինքնին առանց միջնորդի կոչէ և կարգէ զոք , որպ զմովսէս , զմարգարէսն, զառաքեալսն , զպաւղոս , եւն . և միջական որ լինի օրինաւոր ընտրողութբ այլոց անդամոց եկե-ղեցւոյ . և որովհետև անմիջականն այժմ դադա-րեալ է , միջական կոչումն միշտ և այլ հար-կաւոր է ամ պաշտօնէից եկեղեցւոյ՝ ոչ միայն 'ի պահել զբարեկարգուն (ա կորնթ . ժդ . 40 ) , այլ և առ 'ի լինել զհրամանս այ առ այս (կարդա . յովհ . ժ . 1 ։ Մատթ . դ . 21 ։ թ . 38 ։ գործ . ա . 24 ։ ի . 28 ։ հռովմ . ա . 1 ; ժ . 15 ։ եբրայ . ե . 4 ։ բ տիմոթ . բ . 2 ։ տիտոս . ա . 5=10 ։ եփես . դ . 11 ) ։

## §. 147. Հ. Ո՞րպիսի սրբութիւն պա-հանջի 'ի պաշտօնեայս եկեղեցւոյ ։

Պ. Ամենևին հարկաւոր է զի ձեռնադրելին ևս առաւել՝ ձեռնադրեալն լիցի ուղղափառ հա-ւատով , և զի կամ զանմեղութն մկրտութեն անկո-րուստ պահեալ լիցէ , կամ զանցեալ մեղս Ճշմա-րիտ ապաշխարութբ ջնջեալ , յամ մեղանչական

ունակութեց և 'ի չար սովորութեանց զերծեալ, և յամենայն առաքինութիս առաւել քան զաշխարհականս արմատացեալ և հաստատեալ իցէ։ Եկեղեցական անձանց՝ թէ որքան հարկաւոր իցէ սրբութին վարուց, յայտնի ցուցանեն հրամանք և սպառնալիք և պատիժք այ 'ի սբ. գիրս նշանակեալք, զորս գիտ և կարդա 'ի ղևտց. ժա. 2=24։ ժբ. 1—9։ թուոց. ծզ. 1—36։ ա թգրց. բ. 12—35. գ. 11։ սղմս. Ճլա. 9. 16։ եսայ. ժը. 7, 8։ երեմ. բ. 8, 9։ զ. 13=15։ ժգ. 11=40։ եզեկ. ժբ. 26=31։ խդ. 10=31։ միքեայ. գ. 11, 12։ մաղաք. ա. 6=14։ բ. 1—17։ և այլուր բազում)։

## §. 148. Հ. Որդեօք պաշտօնէից եկեղեցւոյ հարկաւո՞ր է ուսումն գիտութեանց.

Պ. Զծայրագոյն հարկաւորութի գիտութեց յեկեղեցականս ապացուցանեն նախ հրամանք և սպառնալիք այ 'ի սբ. գիրս, || Զի դու զգիտութի մերժեցեր, մերժեցից և ես զքեզ, զի մի քահանայանայցես ինձ, ասէ այ (ովս, դ. 6). և Քս ասաց, Վայ ձեզ՝ առաջնորդք կոյրք (մատթ. ժգ). Եւ սբն Պօղոս ասէ,, վայ է ինձ եթէ ոչ աւետարանեմ (ա կորնթ. թ. 16). Իսկ առ աւետարանել հարկաւ պահանջին բազում գիտութիք։ Կարդա ես, մաղաք. ա. 6։ բ. 7։ իմաստ. զ. 23։ առակ. ժէ. 23։ եսայ. ժը. 7։ ժ. 1։ երեմ. գ. 15։ զ. 27։ ը. 10։ ժա. 15։ ծզ. 16։ ժգ. 2։ եզեկ. գ. 17—22։ լդ. 1=31։ զաքար. ժա.

15 : յովհ. Ժ. 1—18 : ղկս. ժա. 52 : ա տիմոթ. գ. 2 : դ. 11—16 : բ տիմոթ. բ 2. 15 : դ. 3 : մատթ. իը. 19. 20 :

Ընդ կոչմունս պաշտամանց նորա վերադոյն (§. 142) յիշատակեալս, այն է՝ լինելն նորա ուսուցիչ, քարոզիչ, վարդապետ, առաջնորդ, պատգամաւոր, հովիւ, վերատեսուչ, դպիր, ևն. զի զայդ ամ պարտաւորութիս չէ հնար ումեք 'ի գլուխ հանել առանց ուսմանց ազգի ազգի գիտութեց, որոց գլխաւորքն են, քերականութի, ճարտասանութի, կրօնագիտութի, բարոյագիտութի, հաւատաճառ ածաբանութի, եկեղեցական պատմութի, և այլ նմանք, զորս անպատճառ պարտին լինել ուսանիլ ամ պաշտօնեայք եկեղեցւոյ :

Ընդ նոյն հարկաւորութի ուսմանց քաջ հաստատէ և պատմութի ազգիս՝ 'ի նկարելն զողբալի փոփոխութիւն կրօնի առ մեզ. զի 'ի պատճառս անուսումնութե եկեղեցականաց մերոց՝ և մա չքարոզելոյ նորա զբանն այ՝ ոմանք 'ի հայոց փոխեցան 'ի հաւատս յունաց (հայհոռոմ կոչեցեալք), ոմանք 'ի հաւատս լատինացւոց, և բազումք ևս 'ի կրօնս տաճկաց և պարսից. զորոց զարիւնն 'ի ձեռաց առաջնորդաց ունի պահանջել այ 'ի դատաստանի (տես. եզեկ. գ. 18. 20 : լդ. 1—12 : լգ. 1—5. այլուր յոլով) :

## §. 149. Հ. Զի՞նչ է ոգին հովուական.

Պ. Հովուական ոգի կամ սիրտ յեկեղեցական անձինս՝ իմացեալ լինի հակամիտութի կամ բերումն ինչ անկեալ յայ, որով չափահաս

մարդն ձգի և քաղցրութ՟բ մտանել լինի առ եկեղեցական վիճակ և պաշտօն , ոչ միայն իբրև կիմն հաճոյական և ախորժելի , այլ և իբրու յարդիւնաբեր հոգւոյ իւրոյ և ընկերացն , այն է՝ դիտելով նախ առաջին ծառայել այ՟ և եկեղեցւոյ նր՟ , հոգալ զփրկութի հոգւոյ եղբարցն , և առաջնորդել նց՟ 'ի կեանս յաւիտենականս՝ օրինակաւ և քարոզութբ՟ իւրով ։ Կերպարանք այսր ոգւոյ նկարին 'ի բանսն քնի՟ (յովհ . Ժ . 1—17) , յորս զանազանին Ճշմարիտ հովիւ , վարձկան , օտար , գող , աւազակ , գայլ ։ Քննեսցէ ապա նախ զինքն քահանայացուն , թէ զորո՞յ 'ի սոցունց զոգին զգայ յինքեան , և ապա յանձին կալցէ կամ հրաժարեսցի ։ ընթերցցի ևս և զնշանսն ածակոչ՟ հովուայ 'ի ա՟ տիմոթ . գ . 1—16 ։ դ . 5—16 ։ Ե . 1—23 ։ զ . 11—20 . 'ի բոլոր եկդ՟ թուղթն առ տիմոթ , և 'ի թուղթն առ տիտոս ։

§ . 150 . Հ . Զի՞նչ է կանոնական անարատութիւնն .

Պ . Է , թէութի ինչ յեկեղեցւոյ սահմանեալ , որ արգելու զի ըս՟ հոգւոյ և ըս՟ մարմնոյ արատաւոր կամ պակասաւոր անձինք մի բարձրասցին յեկեղեցական սպասաւորութի . գլխաւորք յայսպիսի արատաւորաց՝ որք ոչ կարեն ձեռնադրիլ , են սոքին . անչափահասք , մանկունք , ոչ մկրտեալք , տգէտ և անուսումն անձինք , անուղղայ հրապարակական մեղաւորք (զորօրինակ արբեցողք , պոռնիկք , ևն) , բանադրեալք , նզովեալք , մարդասպանք , կըրկին մկրտեալք և մկրտողք , պոռնկորդիք , շնորդիք , խելացնորք , վերնոտք , միականիք , անունչք ,

կամ ընդահատք, երեսօք ձառադէմք, ական-
ջատք, խուլք, մատնաթափք, միաձեռանիք, սա-
պատողք, կաղք, և այլ նման գձալի ծանր արա-
տաւորք, որ անպատիւ առնեն զսր կարգն (տես.
ա թիմոթ. գ. 10: տիտոս. ա. 6. 7: ղեւտաց.
իա. 16—24. բ օրինաց. իգ. 1—3):

## §. 151. Հ. Ո՞րն է ժողովական ընտրութիւն.

Պ. Է՛ ածատուր իրաւունք, ըստ որոյ բազմա-
թիւ անդամքն եկեղեցւոյ, այսինքն ժողովուրդքն հա-
սարակաց հաւանութբ ընտրեն 'ի միջոյ իւրեանց
զոմն արժանաւոր անձն, և առաջի առնեն կամ
նուիրեն զնա եպսի 'ի քննել և 'ի ձեռնադրել
'ի սպասաւորութի իւրեանց: Գոյութի և հանգա-
մանք այսր իրաւանց ժողովրդեան հաստատի նախ'
օրինակօք և վկայութբ ս գրոց (գործոց. ա. 15—26:
զ. 2—8: ա կորնթ. ա. 12: բ կորնթ. դ. 5:
կողոս. ա. 25. ևն). ենդ' 'ի պարտաւորութեց ան-
տի ժողովրդեան' զորս վերագոյն 'ի §. 36. թուե-
ցաք, զորս ընթերցիր վերստին. և երդ' 'ի
տիտղոսից անուանց սպասաւորաց որք 'ի ս գիրս կո-
չին' ծառայ ժողովրդեան (բ կորնթ. դ. 5),
պաշտօնեայ եկեղեցւոյ այսինքն ժողովրդեան (կողոս. ա.
24. 25: ա կորնթ. գ. 22. ևն), ապա ուրեմն
նոյն ժողովուրդն պարտի ընտրել և կարգել զնա
ըստ իւրում դատողութե և հաճութե:

## §. 152. Հ. Ո՞րն է ատենական փոր ձողութիւն.

Պ. Է՛ զգուշաւոր մանր քննութիւն, զոր

հրապարակաւ առնէ եպսն յատենի խուռն՝ առ 'ի Ճանաչել թէ նուիրեալն 'ի ժողովրդենէ ունիցի՞ զհարկաւոր յատկանիշսն (§. 145), իցէ՞ արդեօք արժանի այսր սրբազան պաշտաման, և չունիցի՞ արդեօք ինչ 'ի կանոնական արգելուածոց վերագոյն (§. 150) թուելոց. որ հրամայէ սրբն պաւղոս, թէ՝ Նախ փորձեսցին, և ապա 'ի պաշտօնն մատիցեն, զի անարատ լիցին (ա̄ տիմոթ. գ. 10). և թէ՝ Զձեռս վաղվաղակի յուրուք վր մի դնիցես, և մի կցորդ լինիցիս մեղաց օտարաց (ա̄ տիմոթ. ե̄. 22):

### §. 153. Հ. Զի՞նչ է հանդիսական ձեռնադրութիւնն.

Պ. Է՛ խորհրդական արարողութի, որով եպսն հրապարակաւ յայտ առնէ բազմութե ժողովրդեանն՝ զըստ օրինաց կոչումն և զփորձառութին ձեռնադրելի անձին, զոր ապա կոչմամբ հոգւոյն սրբ՝ աղօթիւք և ձեռն դնելով՝ յաշխարհական գործոց զատանէ, և տայ նմա զհոգևոր կարողութի առ 'ի մատակարարել զսր խորհուրդս, 'ի հովուել զժողովուրդն, 'ի գործ պաշտաման, և 'ի շինել զմարմինն (զժողովուրդն) քսի (տես զպօղոսին յեփես. դ. 12: ա̄ տիմոթ. գ. 14: բ̄ տիմոթ. բ̄. 1=5: գործոց. Ժգ. 2. 3: Ի. 17. 18. ևն):

### §. 154. Հ. Քանի՞ են ազգք պաշտամանց եկեղեցական սպասաւորաց.

Պ. Եկեղեցականք մահացու մեղօք պարտական են առաջի այ Նախ՝ քարոզել և ուսուցանել ամէն թէ զհաւատալի՝ թէ զգործելի Ճշմարտութիս սուրբ գրոց, զոր թէ զանց արասցեն՝ անկանին ընդ

վայլուք և անխծխուք այ (կարդա. ա կորնթ. թ. 16: մատթ. ժգ. 13: ժը. 19. 20: ղկս. ժա. 52: մարկ. ժզ. 15: գործ. ի. 20: հռովմ. ժ. 14. 15: ա կորնթ. ա. 17: ժբ. 28. 29: եփես. դ. 10: կողոս. ա. 28: գ. 16: ա տիմոթ. բ. 7: դ. 1: ե. 17: զ. 2—6: բ տիմոթ. ա. 11: բ. 2: դ. 2. և այլն): Երկ՝ սբ անարատ վարուք սուրբ ընկերաց զօրինակ բարի և զշինուլ (ընթերցիր. մատթ. ե. 13—16: բ կորնթ. ժ. 8: ժգ. 10: ա տիմոթ. գ. 2: դ. 12. 16: տիտոս. ա. 7—9. և այլն): Երրորդ՝ արժանաւոր պատրաստութբ մատակարարել ժողովրդեան զխորհուրդս եկեղեցւոյ (մատթ. ժը. 19: ա կորնթ. դ. 1: ժա. 23. ա տիմոթ. գ. 9. 10, և այլն): Չորրորդ՝ զանուղղայ հերետիկոսս, և զանզեղջ գայթագղեցուցիչ մեղաւորս՝ յեկեղեցւոյ արտաքս հանել (բանադրել), և զանարժանս ՚ի մասնակցութէ խորհրդոց զրկել (տիտոս. ա. 9: գ. 9—11. և այլն): Հինգերորդ՝ ըստ օրինաց վարել զփականս (մատթ. ժզ: 19: ժը. 15—19: յովհ. ի. 21—24) արքայութեան երկնից. որ է նոյն ինքն եկեղեցւոյն կամ ընկերութեն ածապաշտից, որ ՚ի սբ գիրս կոչի արքայութի երկնից կամ այ, թագաւորութի քսի, և այլն (տես, մատթ. թ. 35: ժգ. 11—52: իա. 31. 43: մարկ. դ. 11. 26. 30: ղկս. ա. 33: ը. 10: թ. 60. 62: ժգ. 29: ժէ. 20. 21: ժը. 29: յովհ. գ. 3. 5: գործ. ա. 3: ժթ. 8: կողոս. ա. 13: դ. 11: ա թեսաղ. բ. 12. և այլն): Վեցերորդ՝ զանձն իւր փրկել ՚ի մեղաց և ՚ի դժոխոց (գործոց, ի. 28: ա կորնթ, թ. 27: ա տիմոթ. դ. 16, և այլն): Եօթներորդ՝ հաշտեցուցանել զմեղաւորս ընդ այ

Բ· կորնթ, Ե, 18=21։ կողոս, Ա, 22․ եւն)։ Յայսցանէ իմացեալ լինի և վախճանն, օգուտն, և հարկաւորութին եկեղեցական սպասաւորութե։

### §· 155. Հ· Զի՞նչ և քանի՞ է կարողութիւնն փականաց·

Պ· Փականք՝ որոց գործք են բանալ և փակել, իմացեալ լինին կրկին հոգևոր կարողութիք (այլ ոչ, իշխանութիք), որոց առաջինն՝ է պաշտօնն քարոզելոյ և ուսուցանելոյ զոգէտս· յորոյ ուղիղ իմացուած՝ հարկ է 'ի միտ առնուլ, թէ մեղանչական գործողութին և ունակութին 'ի սբ գիրս նմանեալ լինի այնպիսի իրաց, որք բառնան զազատութի և զանձնիշխանութի մարդոյ, կամ արկանեն զնա 'ի ներքոյ բռնութե և հարկաց ինչ· և ըստ այսմ մեղքն փոխաբանութբ կոչին՝ Կապ, Կապանք, Ձեռնակապ, Ոտնակապ, Ծրար, Կնճիռն անխրատութե (տես, սղմս· կէ· 7։ Ճա· 21։ Ճզ· 8—16։ յովբ· լզ· 8—15։ եսայ· իը· 22։ իբ· 7։ լե· 14։ իթ· 9։ ծբ· 2։ ծը, 6։ ովսեայ, ժբ, 13։ զաքար, թ, 11, 12։ ղկս, ժգ, 16, եւն)· Տոռն, Պարան, Փոկ, Լար (սղմս, ճժը, 61։ ճլթ, 6։ առակ, ե· 22։ յովբ· լզ, 8։ եսայ, ե, 18, եւն)· Շղթայ (եսայ, ծը, 9։ եզեկ· Է· 27։ իմաստ, ժէ, 17)· Լուծ (եսայ· թ, 4։ Բ կորնթ, զ, 14։ գաղատ· ե, 1։ Ա տիմոթ, զ, 1)· Խաւար, Ստուեր մահու (եսայ, խբ· 7։ իթ, 9։ սղմս, ճզ, 10—14։ գործոց· իզ, 18, եւն)· Պարտք, Պարտիք, Բեռն (մտթ։ զ, 12։ ժա, 29։ ժը, 24—35։ սղմս, լէ, 5։ ղկս, Է, 41—50։ ժա, 4։ ժգ, 2, 4, եւն)․

Բանտ, Տուն կապանաց (Եսայ. ԽԲ. 7: Ա պետր. Գ. 19. եւն). Գուբ, Որոգայթ, Թակարդ (սղմս. ՀԸ. 3. յովբ. ԺԸ. 5=16: առակ. ԻԹ. 6: զաքար. Թ. 11. եւն). Գերութի, Ծառայութի, Կուրութի, Վախճանումն, Մահ, Մեռանիլ (սղմս. ՃԷ. 19: ՃԴ. 2. 3: եսայ. ԺԴ. 3: ԾԲ. 2, 3: ԿԱ. 1: մատթ. ԺԵ. 14: ԻԳ. 16=26: մարկ. Գ. 5: ղուկ. ԺԵ. 24, 32: յովհ. Ը. 34: հռովմ. Զ. 6=20: Է. 14: Բ կորնթ. Դ. 4: գաղատ. Ե. 1: եփես. Դ. 18: տիտոս. Գ. 3. յայտն. Գ. 1. 17. եւն). ըստ դոյին՝ եւ մեղաւորքն անուանին՝ Կապեալք, բանտեալք, գերեալք, վաճառեալք, մեռեալք, պարտապանք, կոյրք, ծառայք, եւն ('ի նոյն տեղիս), փակեալք ՚ի մեղս, ընդ օրինօք (գաղատ. Գ. 22. 23), արգելեալք յանհաւանութե (հռովմ. ԺԱ. 32): Համաձայն այդ փոխաբանութեց՝ կարողութին քարոզելոյ կոչի փականք, եւ քարոզիչքն ասին ունել զփականս (մատթ. ԺԶ. 18: ղուկ. ԺԱ. 52. եւն). ուխտն եւ սկսուածն քարոզելոյ՝ ասի բացումն դրան, բանալ փականօք զդուռն բանից (գխտ. դրծց. ԺԴ. 27: Ա կորնթ. ԺԶ. 9: Բ կորնթ. Բ. 12: կողոս. Դ, 3: յայտն. Գ. 7=10: մատթ. ԻԳ. 13: ԺԶ. 19. բաղդատեալ ընդ, գործոց. Բ. 14—41: Ժ. 25=48). չքարոզելն կոչի՝ փակել զարքայութին, թագուցանել զփականս (մատթ. ԻԳ. 13: ղուկ. ԺԱ. 52). իսկ յորժամ քարոզիչքն ուսուցանելով զճշմարտութին այ՝ մուծանեն զանհաւատսն յեկեղեցին կամ դարձուցանեն զմեղաւորս, այս ներգործութին նշ՝ ՚ի լեզուի սբ գրոց եւ ըստ յիշեալ այլաբանութեց՝ անուանի, Հանել զկապեալս ՚ի բանտէ, բանալ զաչս կուրաց (Եսայ.

խբ. 7), Ասել կապելոց՝ թէ ելէք (եսայ, խթ, 9). Քարոզել գերեաց զթողութիւն, և (քարոզել) կապելոց զարձակումն, աւետարանել աղքատաց, բժշկել զբեկեալս սրտիւք (եսայ. կա. 1: ղկս. դ. 19). Բանալ զաչս կուրաց, դարձուցանել 'ի խաւարէ 'ի լոյս, և յիշխանութենէ սատանայի՝ յած (գործոց. իզ. 17. 18). Տալ ժողովրդեան՝ ըզ գիտութի փրկութե առ 'ի թողուլ զմեղս նց (ղկս. ա. 77: ժա. 52: հռովմ. բ. 19. 20: ժե. 14: ա կորնթ. բ. 6: ժբ. 8: ժդ. 6: բ կորնթ. դ. 1=6: և այլուր). Լուսաւորել զխաւարեալս, զկոյրս, զաչս (մատթ. ե. 14. 16: ղկս. ա. 79: յովհ. ա. 9: բ. 18: գրծց. իզ. 18: բ կորնթ. դ. 1=6: եփես. ա. 17. 18: գ. 8. 9. ևն). Արձակել զմեղաւորս, թողուլ մարդկան զմեղս, փրկել 'ի մեղաց (մատթ. ժը. 15=19: ղկս. ա. 76. 77: գ. 3: ժէ. 3. 4: գրծց. Ժ. 42—48: իզ. 18. յակոբ. ե. 20: ա յովհ. ե. 16: գաղատ. զ. 1). Ապրեցուցանել զմար-դիկ, շահել, կեցուցանել, արդարացուցանել (ա կորնթ. թ. 19=22: Ժ. 33: բ կորնթ. բ. 15. 16: ա թեսաղ. բ. 16: ա տիմոթ. դ. 16. ևն). Երկնել, ծնանիլ զհոգիս մարդկան (ա կորնթ. դ. 15: գաղատ. դ. 19: փիլեմ. 10). Յարուցանել զմեռեալս (եփես, ե, 14: յայտն, ի, 5), և այլ նման ոճք բանից:

§. 156. Իսկ երկդն է՝ պաշտօնէական՝ փոխառական և գործիական կարողութին թողուլ տալոյ զզջացել մեղաւորաց, իսկ անզեղջ հրապարակական մեղաւորաց՝ զլանալոյ զթողուլ, և զրկելոյ 'ի մասնակցութէ ոչ խորհրդոց՝ մինչև ճշմարտիւ զղջացեալ հաշտեսցին ընդ այ (մատթ. ժզ. 19: յովհ. ի. 22. 23):

§. 157. Հ. Ո՞րն արդեօք աստիճանք 'ի սպասաւորս եկեղեցւոյ.

Պ: Որպէս 'ի հին օրէնս կային քահանայապետ, քահանայք, և ղևտացիք (Ելից. ԻԸ, 29. ղևտաց. Ի. 10: Թւոց. Ժգ. 6. ևն), նոյնպէս և 'ի նոր օրէնս եդ ած զոմանս առաքեալս, զոմանս մար-գարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս (եփես. դ. 11: ա կորնթ. ԺԲ. 28. ևն), ը որոց յաւուրց անտի առաքելոց և այսր սպասաւորք բաժանին 'ի վերին՝ 'ի միջին՝ և 'ի ստորին աստիճանս: Վերադոյնք են եպսք (վե-րատեսուչք) կամ քահանայապետք, որք 'ի չրդ-դարէ և այսր՝ միայն արտաքին պատուով բաժա-նեցան 'ի պսպ դասս, ոմն են պատրիարգք կ հայ-րապետք կամ կաթողիկոսք, մետրապօլիտք, ե-պիսկոպոսապետք կամ արքեպսք, վեհապետք, և քորեպսք: Միջականք են քահանայք կամ երէցք, ընդ որս դասին՝ արտաքին պատուով տար-բերեալքս, ծայրագոյն վարդապետք, վարդապետք, վանահարք, աբեղայք, և աւագ երէցք: Իսկ 'ի ստորին աստիճանի են սարկաւագք. յորս 'ի չրդ-դարուն յաւելան կիսասարկաւագք, ընթերցողք, ջահընկալք, երդմնեցուցիչք, և դռնապանք:

§. 158. Հ. Զի՞նչ և քանի՞ են խոր-հուրդք եկեղեցւոյ. +

Պ, Խորհուրդք եկեղեցւոյ են ծէսք կամ ա-րարողութիւնք ինչ յայ սահմանեալք, յորս միջնոր-դութե զգալի նշանակաց՝ ցուցեալ և տուեալ լի-նի արժանաց ընդունողաց՝ զօրութի և շնորհք այ. և են եօթն այսոքիկ. Մկրտութի, Դրոշմ,

Ապաշխարութեան, Հաղորդութեան, Քահանայութեան, Ամուսնութեան, և Օծման հիւանդաց. յորոց չորք առաջինքն ամենայն քրիստոնէի հարկաւոր են յոյժ. իսկ յետին երեք չեն հարկաւոր ամենեցուն, այլ ՚ի կամս իւրաքանչիւրոց թողեալ է առնուլ կամ չառնուլ զայնս:

§. 159. Զի՞նչ է մկրտութիւնն. +

Պ. Մկրտութիւն է խորհրդական արարողութիւն, յորում հաւատացեալն լուացեալ լինի մարմնով ՚ի ջուր՝ կոչմամբ անուանն Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որով ընդ հոգւոյն նորոգ ծնանի ՚ի նոր կեանս, և խառնի ՚ի խումբն աստուածապաշտից ըստ քրիստոնէական կրօնի և եկեղեցւոյ: Նիւթ այսր ծիսի է ջուրն բնական. կերպ՝ է կոչումն երից անձանցն Աստուծոյ. պաշտօնեայն՝ է եպիսկոպոսն կամ քահանայն. իսկ լուացումն լինի երիցս թաղմամբ ՚ի ջուր, այլ և հեղմամբ և սրսկմամբ (տես. մատթ. գ. 13—17: իը. 19. 20: մարկ. ժզ. 16: յովհ. գ. 5: գործոց. բ. 38. 41: ը. 18: իբ. 16: հռովմ. զ. 3. 4: եփես. դ. 5: ե. 26: գաղատ. գ. 27: կողոս. բ. 12: Ա պետրոս. գ. 21. և այլն):

§. 160. Հ. Զի՞նչ է դրոշմն. +

Պ. Դրոշմն է ծէս խորհրդաւոր, յորում խաչաձև օծմամբ միւռոնի ՚ի ճակատ մկրտելոյն՝ տուեալ լինի նմա ներքին օծութիւն Հոգւոյն սրբոյ, որով հոգի դրոշմելոյն զօրանայ շնորհօք և հաստատի ՚ի հաւատս և ՚ի սէրն առ Աստուած և ՚ի պատուիրանապահութիւն նորա (տես գործոց. ը. 17: ժթ. 6: Ա յովհ. բ. 20: 27: Բ կորնթ. ա. 21. 22: եբրայ. 6. 2. և այլն): Նիւթ այսր ծիսի՝ է օծումն

սր̄ մեռոնի․ կերպ կամ կերպական՝ են բանքն ա-ղօթից յօծանելն․ տեղի օծմանն՝ է ճակատն և այլ անդամք․ իսկ պաշտօնեայն է եպս̄ն կամ քահանայն ։

§. 161. Հ. Զի՞նչ է ապաշխարութիւնն կամ խոստովանութիւնն․ +

Պ. Ապաշխարութի̄ն է խորհրդական արարողութի̄, յորում մեղուցեալ և զղջացեալ քրիստոնեայն խոստովան լինի ա̄յ՝ առաջի քահանայի նո̄՝ զմեղս իւր, և ընդ յայտարարութե̄ թողութե̄ն բանիւ քահանայի̄ն՝ առնու յա̄յ զթողութի̄ մեղաց՝ ըստ հաւատոյ և տրամադրութե̄ իւրոյ (մատթ․ ժզ․ 19։ ժը․ 18։ յովհ․ ի․ 21=24։ բ̄ կորնթ․ ե․ 20․ և)։ Այսր ծխի իբր նիւթ համարին խոստովանութի̄ն բերանոյ և հայցելն զարձակումն (մատթ․ գ․ 6։ մարկ․ ա̄․ 5։ գործոց․ ժթ․ 18․ և̄ն)․ կերպական՝ են բանք արձակման քահանային․ պաշտօնեայն է եպս̄ն կամ քահանայն․ մասունքն են երեք, զղջումն, դարձումն, և հաւատք ։

§. 162. Հ. Զի՞նչ է զղջումն․ +

Պ. Զղջումն է ճշմարիտ ցաւ սրտի, որով մեղաւորն մտօքն ճանաչէ (բ̄ թգր․ ժբ̄․ 7=18։ սղմս․ ծ․ 5։ մտթ․ գ․ 6։ և̄ն) և կամօքն ատէ և զզուի յա̄մ մեղաց իւրոց, դադարի ՚ի չար սովորութե̄ց և յառաջադրէ չմեղանչել յառյապայն և ոչ ինչ օրինակաւ ։ Ներքին և արտաքին նշանք ճշմարիտ զղջման են սոքին, յետս կալ ՚ի սովորական մեղաց, որոնել զդէպ մեղաց (գործոց․ ի̄․ 37․ և̄ն), խոստովան լինել զմեղս իւր ա̄յ՝ առա-

ջի քահանայի նր՟ (սղմս․ լա՟․ 5 ։ մատթ․ գ․ 3 ։ մարկ․ ա՟․ 5 ։ գործոց․ ժթ․ 18 ։ ա՟ յովհ․ ա՟․ 9․ ևն)․ արտասուք յաչս (սղմս․ ղ․ 7 ։ մատթ․ ի՟զ․ 75 ։ է՟․ 38․ ևն)․ քուրձ զգենուլ (յովնան․ գ․ 5․ 6)․ բաղխել զկուրծս (ղկս․ ժը․ 13)․ պատառել զհանդերձս (ծննդ․ լէ․ 34 ։ յովել․ բ՟․ 13․ ևն)․ պահել 'ի կերակրոց (յովնան․ գ․ 5 ։ դանի․ ժ․ 3․ ևն)․ հատուցանել զրկելոց (ղկս․ ժթ․ 8․ ևն)․

## §․ 163․ Հ․ Զի՞նչ է դարձումն․ +

Պ․ Դարձումն է գործունեայ շարժումն կամաց, որով մեղաւորն ատելով զա՟մ անօրէնութիւնս՝ դադարի և յետս կայ խապառ յա՟մ մեղանչական գործոց, հատանէ զաւխթս և զորոգայթս մեղաց և սկիզըն առնէ գործել զառաքինութիւնս (տես, սղմս․ է՟․ 13 ։ եսայ․ ծե՟․ 7 ։ յովել․ բ՟․ 12․ զաքար․ ա՟․ 3 ։ եզեկ․ ժգ․ 6 ։ լգ․ 11․ 12 ։ յովնան․ գ․ 8․ 9 ։ մատթ․ ե՟․ 29․ 30 ։ ժը․ 6—10 ։ ղկս․ ժե՟ 14—18 ։ գործց․ գ․ 19․ յակոբ․ դ․ 8 ։ ե՟․ 20 ։ եբրայ․ դ․ 16 ։ ժ․ 22 ։ ա՟ կորնթ․ ը․ 13․ ևն)։

## §․ 164․ Հ․ Ո՞յք են շարժառիթք զղջման և դարձի․ +

Պ․ Զօրեղ շարժառիթք զղջման են անարգանք ա՟ծային մեծվայելչութե՟, զազրութի՟ մեղաց, խայթ խղճի մտաց, կորուստ հաւատոյ և ա՟մ առաքինութե՟ց, զրկումն 'ի շնորհաց և 'ի սիրոյն ա՟յ, ծանրութի՟ ժամանակաւոր պատժոց, դայթակղութի՟ տուեալ օտար եղբարց, սաստկութի՟ ա՟ծային դա-

տաստանի, զրկել 'ի յաւիտենական կենաց, անկանել ը̅ պատժովք դժոխոց, հանդերձ նմանեօք։

### §. 165. Հ. Զի՞նչ է հաւատքն յապաշխարողս. +

Պ. Է՛ շնորհք հոգւոյն սրբոյ, որով զղջացեալ մեղաւորն զխոստմունս ա̅յ և զարդիւնս ք̅ի մտօքըն ճանաչէ, կամօքն ը̅ունի, և որդիական վըստահուը̅ անձին սեփհականէ, որով և արդարանայ (տես. ամբակ. բ̅. 4։ յովհ. ա̅. 22. գ. 16։ Ժէ. 8։ գործոց. Ժ. 53. Ժզ. 31։ Իզ. 16։ ա̅ յովհ. բ̅. 1. ե̅. 1։ հռովմ. գ. 25. դ. 16։ ե̅. 17։ ա̅ կորնթ. զ. 17։ գաղատ. բ̅. 20։ գ. 11—27։ կողոս. բ̅. 6։ ա̅ տիմոթ. ա̅. 15. այլուր ևս)։

### §. 166. Հ. Զի՞նչ է հաղորդութիւնըն. +

Պ. Հաղորդութին է սրբազան ծէս կամ զործողութի, 'ի ք̅է սահմանեալ, յորում ընդ կերպարանօք հացի ճաշակեմք զմարմինն ք̅ի, և ընդ կերպարանօք գինւոյ ըմպեմք զարիւնն ք̅ի՝ վասն թողութ̅ մեղաց մերոց և առ 'ի ժառանգել զկեանս յաւիտենից (կարդա. մատթ. Իզ. 26։ մարկ. Ժդ. 22։ ղկս. ԻԲ. 19։ ա̅ կորնթ. ժա̅. 24—29։ յովհ. զ. 52—64)։ Նիւթ այսր խորհրդոյ է հացն և գինին. կերպական՝ են բանք քահանային ,, առէք կերէք են. պաշտօնեայ՝ են եպս̅ք և քահանայք. ընդունակ՝ են ա̅մ զղջացեալ և խոստովանեալ քրիստոնեայք։

### §. 167. Հ. Զի՞արդ պարտիմք հաղորդիլ մարմնոյն քրիստոսի. +

Պ. Արժանաւոր պատրաստութ՟, առ որ պահանջի նախ՝ զերծ լինել 'ի մահացու մեղաց 'ի ձեռն նախընթաց զղջման և խոստովանութ՟. երկ՟՝ ճշմարիտ հաւատով՝ բորբոքեալ սիրով և ծայրագոյն յարգութ՟ մատչիլ 'ի հաղորդութի՟. երր՟՝ ծոմ լինել 'ի կիսոյ նախընթաց գիշերին և մաքուր ըստ մարմնոյն ևս. չոր՟՝ յետ հաղորդելոյն գոնէ կէս ժամ աղօթել առած՟, գոհանալ զնմանէ, և խոստանալ պահել զպատուիրանս նր՟ (ա՟ կորնթ. ժա՟. 27—32։ մատթ. ե՟. 23. 24. ևն՟)։

## §. 168. Հ. Յի՞նչ օգտէ մեզ հաղորդութիւնն. +

Պ. Յարժանաւո՟ ընդունողս յաւելու զշնորհս այ՟, արժանի առնէ թողութ՟ թեթև մեղաց, միաւորէ ընդ քի՟, տայ հոգևոր սնունդ և զարգացումն 'ի բարիս, պահպանէ յապագայ մեղաց, և փառաւորէ զմարմին ընդունողին 'ի յարութեանն (յովհ. զ. 52—64)։

## §. 169. Հ. Ե՞րբ և քանի՞ցս պարտիմք հաղորդիլ. +

Պ. Քանիցս անգամ տեսանէ մարդս զինքն կարօտ նախադրեալ պտղոյ հաղորդութ՟, անխափան պարտի հաղորդիլ, զի զօրասցի հոգւովն, բայց ըստ պատուիրանի եկեղեցւոյս մերոյ՝ պարտիմք հաղորդիլ 'ի հինգ մեծ տօնս եկեղեցւոյ կամ 'ի տաղաւարս, կամ գոնէ 'ի զատկին և 'ի ծննդեան քի՟։ Նոյնպ՟ պարտական է քրիստոնեայն հաղորդիլ՝ երբ առաջի կայ նմա վտանգ մահուան, որպ՟ են ծանր հիւանդք, ճանապարհորդք 'ի ծովու կամ 'ի վտանգաւոր ցամաքի, յղի կանայք, այլ

և 'ի ժամանակս մահաբեր ժանտախտի, և յայլ նման դիպուածս ։

§. 170. Հ. Զի՞նչ է քահանայութիւնն. +

Պ. Է՝ որբազան արարողութի, յորում անձն արժանաւոր՝ դրութբ ձեռաց և աղօթիւք եպսին առնու զհոգևոր կարողութի պաշտելոյ յեկեղեցւոջ և մատակարարելոյ զսբ խորհուրդս ։ Տես 'ի վերոյ §. 137—154 ։

§. 171. Հ. Զի՞նչ է ամուսնութիւնն. +

Պ. Ամուսնութին է ծէս խորհրդաւոր, յորում այր և կին ազատ հաւանութբ իւրեանց՝ աղօթիւք և օրհնութբ քահանային՝ լծակցին, 'ի պատկեր հոգևոր միաւորութեն քսի ընդ եկեղեցւոյ, առ 'ի ծնանիլ զաւակ և 'ի սնուցանել զնոսա 'ի քսական կրօնի ( եփես. Ե. 31. 32. եբրայ. կ. 4. ևն ) ։

§. 172. Հ. Զի՞նչ է օծումն հիւանդաց. +

Պ. Է խորհրդաւոր ծէս, յորում քահանայն իւղով օծանելով և ձեռն դնելով աղօթէ 'ի վերայ հիւանդին, զի ընկալցի յայ զառողջութի մարմնոյ և զթողութի մեղաց (մարկ. Զ. 13 ։ յակոբ. Ե. 14. 15) ։ Նիւթ արարողութես է իւղն և դրութին ձեռաց. կերպական՝ են մաղթանք և բանք աղօթից. սպասաւոր՝ է քահանայն ։

§. 173. Հ. Եկեղեցի մեր ե՞րբ պաշտէ զայս խորհուրդ.

Պ. Հայաստանեայցս եկեղեցի կատարէ զայս խորհրդաւոր արարողութիւն գրեթէ ՚ի վերայ ամ՟ հիւանդաց՝ ըստ նշանակելոյ ամ՟ մաշտոցագրոց, յորս ՚ի նախնի հայրապետաց մերոց կարգեալ կան այլ և այլ յայս ծէս վերաբերեալ սաղմոսք, ընթերցուածք, աւետարանք, աղօթք և շարականք, զորս քահանայն պարտի ընթեռնուլ ՚ի վերայ հիւանդաց՝ խաչիւ և աւետարանաւ, երբեմն և նշխարօք սրբոց. որոց զօրութեամբ յոլով հիւանդք առնուն զբժշկութիւն ախտից ըստ հաւատոց իւրեանց: Այսոքիւք կատարի առ մեզ այս խորհուրդ, զի և զօրութիւն նորին յաղօթս և ՚ի հաւատս բովանդակի, ըստ յայտնի նշանակելոյ նոյն իսկ առաքելոյն՝ յակոբայ, թէ՝ Աղօթքն ընդ հաւատոյ
„ լծորդեալ, առողջութիւն տացէ հիւանդին և տէրն
„ կանգնեսցէ զնա . . . . աղօթս արարէք ՚ի
„ վերայ միմեանց՝ որպէս զի բժշկեսջիք, քանզի յոյժ
„ զօրաւոր են Աղօթք արդարոց յօգնականութիւն||:
Իսկ գործածութիւն իւղոյն զոր անդէն նշանակէ առաքեալն, կանխաւ խափանեալ է առ մեզ վասն բանաւոր պատճառաց, զորս գտցես յերկար ՚ի Խտրոցն հաւատոյ մերոյ:

### §. 174. Հ. Զի՞նչ և քանի՞ են պատուիրանք եկեղեցւոյ.

Պ. Ուսուցանող եկեղեցին՝ որովհետև սահմանեալ է զպաշտօն առաջնորդելոյ ժողովրդեան ՚ի հոգևոր կատարելութիւն, ցուցանէ նոցա զեղանակն ա՟ծպաշտութեան ՚ի մասնաւոր դիպուածս ինչ, զորս ամ՟ ժողովրդականք պարտին երկիւղածութեամբ պահպանել, զորս և կոչեմք պատուիրանս կամ հրա-

մանս . երևելիքն յայնցանէ են, 1 խոստովանիլ զնմ մեղս իւր ըստ առաջի իմաստուն քահանայի՝ գոնէ միանգամ յամին . 2 հաղորդիլ 'ի մարմնոյ և յարենէ քնի գէթ միանգամ 'ի տօնի զատկին . 3 պահել ծոմ և պահս յնմ հրամայեալ աւուրս, որք են՝ աղուհացք մեծի պահոց, շաբաթապահք, և երկու աւուրք յնմ եօթնեկի . 4 տեսանել զամբողջ պատարագ յնմ կիւրակէս, և յայնպիսի տօնըս՝ յորս պահի կիւրակէ . 5 զտասանորդս ընչից տալ եկեղեցւոյ և սպասաւորացն որին . 6 ոչ պսակիլ ընդ մերձաւոր արիւնակիցս մինչև ցեօթըն աստիճան . 7 չառնել հարսանիս և պսակ յարգելեալ աւուրս : 'ի կանոնագիրս մեր՝ բաց 'ի սոցունց գտանին և պատուիրանք վասն եկեղեցական պաշտօնէից, եպսց, վարդպետց, առաջնորդաց, վանականաց, և այլոց աստիճանաւորաց, զորս նոյնպէս պարտին լնուլ նքանթերի :

## §. 175. Հ. Զի՞նչ և քանի՞ են վերջինք մարդոյ . +

Պ. Վերջինք ասին այպգայ վիճակք՝ որ մընան մարդոյ 'ի վերջանալ այսր կենաց, և համարին հինգ . այն է՝ մահ, յարուլի մեռելոց, դատաստան յետին, երանուլի յաւիտենական, և թշուառութիւն մշտնջենաւոր :

## §. 176. Հ. Զի՞նչ է մահն . +

Պ. Մահն մարմնաւոր (առ 'ի զանազանել յայլաբանական մահուանէ հոգւոյ §. 155) է լուծումն կամ բաժանումն հոգւոյ մարդոյ 'ի մարմնոյ իւրմէ (փիլիպ . ա . 23 : բ կորնթ . ե . 1 : բ տիմոթ . դ . 6), որոյ և ժամանակն և եղանակն անյայտ է մեզ (ղկս . ժբ . 35—46 . ևն) .

## §. 177. Հ. Զի՞նչ լինի մարմնոյ զկնի մահուան. +

Պ. Մարմին մարդոյ՝ յետ մահուան ըստ ածային վճռոյ (ծննդ. Գ. 19: Ժղվ. ԺԲ. 17) դառնայ և փոխի 'ի հող, յորմէ յետ ժամանակաց յառնելոց է և միաւորելոց ընդ հոգւոյ իւրում, առ 'ի դատիլ յայ և յառնուլ զվարձս ըստ արժանեացն:

## §. 178. Հ. Զի՞նչ պատահէ հոգւոյ յետ բաժանելոյն 'ի մարմնոյ.

Պ. Հոգի մարդոյ որովհետև ոչ դառնայ 'ի չքունի, այլ պահէ զէունի և զգոյունի իւր յանվախճան յաւիտեանս կամ մնայ անմահ ( որպ յերկար ցուցաւ 'ի վերոյ §. 83. 84) յետ բաժանելոյն 'ի մարմնոյն ներկայ լինի այ՝ առ 'ի դատիլ 'ի նմանէ կամ յառնուլ զվիճակ իւր՝ ըստ արժանեաց գործոց և կենաց իւրոց յայսմ աշխարհի: Այսպ հաստատեն զայս նախ՝ բանք ածաշնչին, ըստ այնմ ,, Կայ մնայ մարդկան միանգամ մեռանել, յետ այնորիկ դատաստան (եբրայ. Թ. 27). կարդա՛ և ս և յովբայ. ԼԱ. 13: ղկս. ԺԶ. 22. 23: Իգ. 43: սիրաք. ԺԱ. 29: յովհ. Ե. 24. 25: Բ կորնթ. Ե. 8: փիլիպ. Ա. 23. ԵՆ. Եւ եկդ դաւանուի եկեղեցւոյ և սր վարդապետաց մերոց. որպ 'ի ժամագիրս մեր ասի
,, Քեզ միշտ մերձ ծանիր քուն մահու եկեալ
,, քննող դատաւոր ||. 'ի շարականի մեր երգեմք
,, Յանջատման հոգւոյս 'ի մարմնոյս՝ 'ի քակտիլ
,, գեղեցիկ շինուածոյս՝ զարհուրիմ 'ի սպառնալեց
,, Թագաւորին Թէ պահանջէ յինէն զտաղնդ պատ

ուխրանին || . եւ սր̃ն գրիգոր նարեկացին մեր ասէ || Վ՝այ ինձ առ ելս անարժան հոգւոյս յեղկելի մարմնոյս՝ ի՞բր դատաւորին ճշմարտի յանդիմանեցայց || ։

## §. 179. Հ. Յի՞նչ վիճակ փոխին հոգիք ննջեցելոց.

Պ. Եթէ ամենեւին սբ̃ են, արդար եւ ազատ 'ի մեղաց՝ արժանանան տեսութե̃ն ա̃յ եւ միաւորին ընդ նմա յարքայութե̃ նորին, առեալք զպսակն երջանկութե̃ եւ յաւիտենական երանութե̃. որում վկայեն բազում բանք ա̃ծաշունչ գրոց, ո̃պ Ք̃ս ասաց աւազակին, թէ Այսօր ընդ իս իցես 'ի դրախտին (ղկս. իգ. 43). վասն աղքատին ասաց՝ թէ հրեշտակք տարան զնա 'ի գոգն աբրահամու (անդ, ժզ. 22). վասն հաւատացելոց վկայեաց թէ, փոխին կամ անցանեն 'ի մահուանէ 'ի կեանս (յովհ. ե. 24) սր̃ն պաւղոս ցանկայր ելանել 'ի մարմնոյ եւ մտանել առ ա̃ծ, կամ ընդ ք̃սի լինել (բ̃ կորնթ. ե. 1—8. փիլիպ. ա. 23). ստեփաննոս խնդրեաց 'ի յ̃սէ ընդունել զհոգի իւր (գործ. է. 58), ո̃պ ինքն յ̃ս 'ի ձեռս հօր աւանդեաց զհոգի իւր (ղկս. իգ. 46). մովսէս մարգարէ վաղուց վախճանեալ երեւեցաւ 'ի թաբոր ընկալեալ փառօք (ղկս. թ. 31). եւ 'ի գիրս յայտնութե̃ (է. 9—17) ասի թէ ժողովուրդ բազում կային առաջի աթոռոյն ա̃յ, ընկալեալք զհանդերձս եւ զարմաւենիս։ տես եւս, յովհ. ժբ. 26 ։ ժէ. 24 ։ յայտն. գ. 21 ։ ծդ ։ Իսկ եթէ հոգին անզերծ 'ի ծանր մեղս է՝ մտանի 'ի տանջանս, ըստ օրինակի մեծատանն (ղկս. իզ. 43) ։ Բայց

որովհետեւ 'ի սր̃ գիրս կան եւ այնպիսի բանք, որք ցուցանեն, թէ ոչ խոկոյն զկնի մահուան, այլ 'ի կատարածի աշխարհիս ընդունելոց են բարիք եւ չարք զվարձս իւրեանց (ոտ̃ 'ի մատթ. ի̃. 8. 9: իզ̃. 34: ղկ. ժդ. 14: բ̃ տիմոթ. դ. 8: եբրայ. ժա̃. 39. 40. եւն̃), վ̃ն զայդ՛ կարծիս կալան ոմանք 'ի նախնի վարդապետաց յունաց եւ լատինաց. մանաւանդ իրինէոս, իլարիոս, տերտուղիանոս, որոգինէս, լակտանտիոս, ոսկեբերան, ամբրոսիոս, օգոստինոս, բեռնարտոս եւ այլք. ընդ որս եւ ոմանք 'ի մեր վարդապետաց:
Այլ սակայն ուղղափառ եկեղեցի մեր՝ 'ի հաւատաճառ գիրս իւր զառաջին կարծիքն ճշմարիտ համարի եւ ընդունի. ըստ որում յամ̃ աւուր 'ի շարականս եւ 'ի ժամագիրս իւր՝ վասն մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, եւ այլոց նըն-ջեցել քրիստոնէից քարոզէ եւ դաւանի՝ կատարեալ եւ անցեալ եւ ներկայ ժամանակ բայիւք, թէ նք̃ արդէն|| Ընկալան զանապական պսակն... փոխեցան յերկնից յարքայուի̃ն... երկնից արքայուե̃ն եղեն ժառանգորդք... պսակեցան 'ի քս̃է ընդ վերին զուարթունսն... 'ի մահուն իւրեանց կենդանացան՝ ելին 'ի կամարն երկնից՝ խառնեցան 'ի գունդս զուարթնոց... ընկալան ըղպսակս անապականս յանստուեր լուսոյն եւ միշտ ուրախանան ընդ հրեշտակս 'ի յերկինս... եղեն օթեւանք սր̃ երրորդուե̃ն զանճառականն ընկալեալք զկեանս՝ եւ բարեխօսեն առ տէր վասն անձանց մերոց... անթառամ պսակն ձեզ աւանդեալ Յս̃ի քան զականս պատուականս գերագոյն հրաշիւք... որք փորձեցայք շիջանուա

հրով՝ ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայութին . . . փոխանակեալք զանցաւորս՝ առէք զանանցն բարութիւն . . . համբերութ̃ ձերով ընկալայք 'ի քէն զպսակս անթառամս, և դասաւորեցայք 'ի յերկինս ընդ անմարմնոցն դասս . . . դասաւորեալ ընդ անմարմնական բազմութեան և 'ի հոգւոյն սրբոյ էք պսակեալ . . . այսօր վերափոխեալ 'ի յերկնային խորանսն երանելին բասիլիոս . . . վերափոխեցեր այսօր յերկնից թագաւորութիւն . . . աղաչեմք ծածանին Այսօր հանգի՛ և զմեր զննջեցեալսն ընդ սրբս քո . . . այսօր մարդասիրութ̃դ քո զննջեցեալսն մեր ընկա՛լ և հանգո՛ ընդ սրբս քո . . . զորս հաւասարեցեր ընդ սրբս քո՝ հաղորդել մարմնոյ և արեան քո՝ տէր՝ այսօր ընկալեալ հանգո՛ զհոգիս նոցա կենագործելով 'ի կեանս յաւիտենից . . . . և այժմ աղաչեմք զստեղծողդ ամենից՝ ընկա՛լ և հանգո՛ զհրաժարեալ հոգիս յեօթնատեղեան լուսեղէն խորանս, և̃ն ։ Ըստ այսոցիկ և. 'ի մաշտոցս մեր դասին բազում ոճք բանից, որք պայծառանըշանակեն, թէ հոգիք ննջելոց արժանանան տեսանեն ոյ̃ յետ բաժանելոյն 'ի մարմնոյ ։ Զայս խնդիրս յայս նիւթ, խմա՛ զմիջական տեղի հոգւոց, զաղօթս վասն ննջեցելոց, և զնմանս, պարզեսցուք 'ի Խորոց Հաւատոյ գլխան մեր ։

## §. 180. Հ. Զի՞նչ է յարութիւնն մեռելոց.

Պ. Յարութիւն մեռելոց է ներգործութի̃ ածային, որ զնոյն մարմինս ա̃մ մարդկան, արդարոց և մեղաւորաց՝ յերկրէ յարուցանէ և ընդ հոգ

ւոյ նոյին միաւորէ, առ 'ի հրապարակաւ դատել զնոսա և հատուցանել իւրաքանչիւրոցն զկատարեալ երանութի կամ զթշուառութի՝ ըստ արժանեաց նոցա, 'ի ցոյց արդարութե իւրոյ (կարդա՛. մատթ. իբ. 22—33: ղկս. ի. 39: յովհ. ե. 27—30: զ. 39: գործոց. իդ. 15: հռովմ. ը. 11: ա կորնթ. ժե. 12—56: բ կորնթ. ե. 10: փիլիպ. գ. 21: ա թեսաղ. դ. 12—17. և այլուր բազում):

### §. 181. Հ. Զի՞նչ է վերջին դատաստանն.

Պ. Վերջին դատաստանն է ածային ներգործութի, ըստ որոյ ածամարդն յս քս երևելի կերպարանօք յայտնեալ 'ի վախճանի աշխարհիս՝ զամ մարդիկ կացուցէ յատենի իւրում, զհաւատս և զգործս նց դատեսցէ, և հատուսցէ արդարոց զյաւիտենական երանութի, իսկ մեղաւորաց զթըշուառութի մշտնջենաւոր (տես. մատթ. իե. 31—46 յովհ. ե. 21—29: զ. 39—54: գործոց. ժ. 42: ժէ. 31: ա կորնթ. դ. 5: հռովմ. ժդ. 9. 10: բ կորնթ. ե. 10: բ թեսաղ. ա. 6. 7: բ տիմոթ. դ. 1: յայտն. ի. 12. ևն):

### §. 182. Հ. Զի՞նչ է երանութիւնն յաւիտենական.

Պ. Երանութին է նոր և անճառելի վիճակ ապագայ կենաց, յորում ած զարդարս և զսրբս հաղորդս առնէ տեսութե իւրոյ, երանայուցեալ զնս յաւիտեանս անպատում փառօք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ (մատթ. ժգ. 43. ժթ. 28: յովհ.

ժե. 3—25 : ա կորնթ. ժա. 9 : կողոս. գ. 4. փիլիպ. գ. 21 : այլուր բազում) : Այս անմահական վիճակ 'ի սակս անսահման գերազանցութեց խուռոց փոխաբերութբ 'ի սբ գիրս կոչի, Արքայութի, թագաւորութի, կեանք յաւիտենական, երջանկութի, երանութի, պսակ անթառամ փառաց, և այլ նմանք (մատթ. ե. 21 : ժթ. 16—29 : իե. 46 : ղկս. ժբ. 33 : ժդ. 14 : ժը. 30 : յովհ. գ. 3 : ա կորնթ. ղ. 9. 10. ա պետրոս. ե. 4 : ևն) : Տեղին կամ վայրն սբց կոչի Երկինք (մատթ. ե. 12), դրախտ (ղկս. իգ. 43), գոգ աբրահամու (ղկս. ժզ. 22), նոր եդեմ, լեառն սիոն, քաղաք այ կենդանւոյ, դաս հրեշտակաց, խորան երկնային, եկեղեցի անդրանկաց, յարկ՝ դաւիթ՝ տուն այ, և այլ նոյնպիսիք :

## §. 183. Հ. Ո՞ք են աստիճանք կամ սահմանք երանութեան սրբոց.

Պ. Թէպէտ և երանութին սբց անըմբռնելի և անմեկնելի է այժմ մեզ (ա կորնթ. բ. 9: բ կորնթ. ժբ. 2—5), սակայն յայնցանէ՝ զորս ածաշունչ մատեանք յայտնեալ են, քաղելով՝ գտանեմք, զի երջանկութի արդարոց բոլորի նախ այնուիկ, զի կեան ընդ այ, կամ ընկերանան և կենակցին միշտ ընդ նմա (յովհ. ժէ. 3—25 : ժդ. 1. 2 ա: թեսաղ. դ. 16 : փիլիպ. ա. 23 : բ տիմոթ. բ. 11. 12 : ևն). երկդ՝ զի ըստ չափու արժանեաց իւրեանց պայծառ ճանաչեն մտօք կամ տեսանեն զած, զանսահման կատարելութիս նորա, և զխորս ամ ճշմարտութեց (մատթ. ե. 8 : մարկ. ժբ. 10: յովհ. ժդ. 19—23 : ժէ. 3 : ա կորնթ. ժգ.

10 . 12 : ա յովհ . գ . 2 . ևն) . երրդ՝ զի անհամեմատ ծայրագոյն բոցով սրտի և կամաց սիրեն զած և անլոյծ կապանօք միասրտութե յարին 'ի նա (ա յովհ . գ . 12 : դ . 16 : հռովմ . ե . 5 : յովհ . ժզ . 22 : ա կորնթ . ժգ . 1—9 : գաղատ . ե . 22 : եփես . գ . 16 . 17) . չրրդ՝ զի մարմինք նց փառաւորին զանազան սքանչելի ձիրիւք . որոց գլխաւորքն են՝ անապականութի կամ անմահութի (ղկս . ի . 36 : ա կորնթ . ժե . 50—56 : յայտն . ի . 14 : իա . 4) . անկրելութի կամ առողջութի (յայտն . է . 16 : իա . 4 : ա կորնթ . ժե . 43) . նրբութի և թեթևութի (փիլիպ . գ . 21 : յովհ . ի . 19 . 26 : ա կորնթ . ժե . 40—45 . ա թեսղ . դ . 16) . գեղեցկութի , պայծառութի և արեգակնակերպ լուսափայլութի (մատթ . ժգ . 43 : փիլիպ . գ . 21 : ա կորնթ . ժե . 43) . հինգերրդ զի յամբաւս զուարճանան կենակցութբ հրեշտակաց և ած սրբց (մատթ . ը . 11 : ղկս . ժզ . 22 : ի . 36 : իգ . 43 : եբրայ . ժբ . 22 . 23 : բ տիմոթ . բ . 11) . վեցերրդ՝ զի ազատին յամ թշուառութեց և չարչարանաց մարմնոց և աշխարհիս (հռովմ . ը . 21—24 : ա կորնթ . ժե . 26—55 : բ թեսաղ . ա . 7 : եբրայ . դ . 9—12) : Այս երանութի սրբց ըստ էականին եղիցի յամենին հաւասար , բայց ըստ պատահականացն՝ զանազանեալ աստիճանօք ըստ իւրաքանչիւրոյն արդեանց և վաստակոց (մատթ . իե . 14—25 : ղկս . ժթ . 16—19 : յովհ . ժդ . 2 : հռովմ . բ . 6 : ա կորնթ . գ . 14 . 15 : բ կորնթ . թ . 6 : ա պետրոս . ա . 17 . ևն) :

§. 184. Հ. Զինչ է թշուառութիւնըն յաւիտենական .

Պ. Թշուառութին կամ սատակումն յաւիտե-

նից է մթերք ամ աղետից տանջանաց և չարեաց, զորս արդար դատաստանաւն այ կրել ունին յաւիտեան հոգւով և մարմնով ամ անզեղջ մեղաւորք և անհաւատք ։ Այս դառն զարհուրելի վիճակ կոչի ՚ի սբ գիրս, Կորուստ, սատակումն, մահ երկր, տանջանք յաւիտենական, դատաստան, դատապարտութի, նեղութի, անձկութի, անպիտանութի, անարգութի, խոտումն, ևն (մատթ. Է. 13 ։ իե. 46 ։ հռովմ. բ. 9 ։ ը. 1 ։ ա կորնթ. 27 ։ բ կորնթ. Ժգ. 5=7 ։ բ թեսաղ. ա. 6—9 ։ ա տիմոթ. Ե. 12 ։ յայտն. Բ. 11 ։ Ժէ. 1 ։ Ի. 6. այլուր) ։ Իսկ վայրն դատապարտելոց՝ անուանի, Դժոխք, գեհեան, տեղի տանջանաց, հուր յաւիտենական, վիհ խաւարին, լիճ հրոյ, անդունդ, գուբ, ևն (մատթ. Ե. 22=30 ։ իե. 46 ։ ղկս. ը. 31 ։ Ժզ. 28 ։ սղմս. խը. 16 ։ յուդայ. 13 ։ յայտն. թ. 1. 2. 11 ։ Ժա. 7 ։ Ժէ. 8 ։ Ի. 1. 3. ևն) ։

Աստիճանք այսր թշուառութե են, իսպառ բաժանումն ՚ի տեսութենէ այ (մատթ. Է. 23 ։ իե. 41. ղկս. Ժգ. 27), կորուստ անճառելի երանութեն (մատթ. իե. 32. 33. 46 ։ ղկս. Ժզ. 19=31. հռովմ. Զ. 23), զարհուրելի տանջանք հոգւոյ և մարմնոյ (եսայ. Կզ. 24 ։ մարկ. Թ. 42—48 ։ իմաստ. Դ. 16=20 ։ մատթ. Ը. 12. ղկս. Ժզ. 24=27. բ թեսղ. ա. 8 ։ եբրայ. Ժ. 27 ։ յայտն. Ի. 9=15), խայթ խղճի մտաց կամ որդն անմահ, սմօթ, խաւար, ողբ, կրճումն ատամանց, ընկերութի դիւաց, հուր, ծծումբ, և յաւիտենականութի այդ ամ տանջանաց. թէպէտ և լիցին յայնմ թշուառ կմ սաստիկ աստիճանք ըստ չափոյ մեղաց իւրաքնչիւրոյն (մտթ. Ժ. 15 ։ Ժա. 22 ։ ղկս. Ժբ. 47. 48 ։ հռովմ. բ. 6=8. ևն) ։

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

## Յաղագս բարուց.

### §. 185. Հ. Զի՞նչ է բարոյագիտութիւնն. +

Պ. Բարոյագիտութիւն է հմտութի, որ ուսուցանէ ուղղել զգործս մարդոյ համաձայն օրինաց այ և ուղիղ բանականութե՛ առ 'ի լինել երջանիկ յայսմ և յապագայ աշխարհի. կամ, ուսուցանէ թէ մարդս զիա՞րդ պարտի դատել՝ զգալ՝ կամիլ՝ գործել՝ և կենցաղավարիլ, զի լիցի բարի և առաքինի: Այսր գլխաւոր ենթակայ՝ է միտք մարդոյ. առարկայ՝ է բարքն. նպատակ՝ է ուսանիլ և լնուլ արդեամբք զգործելի ճշմարտութիւնս:

### §. 186. Հ. Զի՞նչ է բարքն. +

Պ. Բարք անուանին՝ մարդկային հոգւոյ կարողութիւնք և ներգործութիւնք. այնք են՝ դատողութիւնք, կամեցողութիւնք, զգայմունք, կիրք, և սոցունց հետևակ արտաքին գործողութիւնք. որք երբ կարգին առ հիմնական օրէնս այ և լուսաւոր բանականութե՛ ընկալեալք զձևոյն կամ

ղշխարուն՝ կոչին Բարք, բարոյք (Բ Մակաբ. Ե. 22։ ԺԵ. 12։ Ա Կորնթ. ԺԵ. 33. Եբրայ. ԺԳ. 5. այլուր ևս)։ Զարտաքին գործողութիւն դոցին մարթ է կոչել՝ Վարք, որ է վարումն ընդ այլ էակս, կամ կենցաղավարութիւն։

§. 187. Հ. Որո՞վք գլխաւորի ուսումն բարուց. +

Պ. Ընդարձակ է յոյժ գիտութիւն, բայց մեզ առ համառօտութեան շատ լիցի չորիւք հատուածովք ուսուցանել. նախ՝ զներգործութիւն հոգւոյն. երկ՝ զօրէնս՝ որոց պարտին համաձայնիլ ներգործութիւնք. երդ՝ զներգործութիւնս ընդ առարկայիցն մտածելոյ. և չրդ՝ զպտուղս օրինապահ ներգործութեանց։

## Հատուած առաջին.

Ներգործութիւնք հոգւոյ.

§. 188. Հ. Ո՞յք և քանի՞ են հոգևոր ներգործութիւնք. +

Պ. Ներգործութիւնք և կարողութիւնք հոգւոյ բազում են՝ 'ի հոգեբանից և 'ի տրամաբանից պէսպէս ճառեալք. բայց յայս գլուխ նկատին առաւելապ՟ դատողութիւն մտաց, կամեցումն, բնատուր դրդիւ, զգայական բաղձանք, և կիրք։

§. 189. Հ. Զի՞նչ է դատողութիւնն մտաց.

Պ. Դատողութիւն է ներգործութիւն մտաց, որ

զանելի անհատ գործն՝ հայեցմամբ օրինայն այ և իւր՝ կշռէ քննէ և դատէ, ըստ որոյ և հրամայէ այլոց կարողութեան առնել զայն կամ չառնել: Կոչի սա 'ի սբ գիրս Միտք, Խիղճ մտաց (գործոց. իդ. 1: եբրայ. Ժգ. 18: ա տիմոթ. ա. 19: ա կորնթ. ը. 10. 12: Ժ. 25: բ կորնթ. ա. 12: իմաստ. ԺԷ. 10. ևն). Սիրտ (առակ. դ. 23: ա յովհ. գ. 21. ևն). Հոգի (ա կորնթ. բ. 11. ևն). Հաւատք (հռոմ. ԺԴ. 22. 23. ևն): Այս դատողութի գործոյ՝ կամ գործադատութի ըստ պսպ հանգամանացն՝ առնու այլևայլ անուանս. և նախ՝ նկատմամբ ժամանակին՝ կոչի Նախընթաց, որ դատէ զապագայ առնելի գործն, զոր կամ հրամայէ, կամ արգելու, կամ թոյլ տայ, կամ չափաւորէ. Զուգընթաց՝ որ զներկայ գործն կամ 'ի գործելն անդ դատէ, և Վերջընթաց՝ որ զանցեալ գործն 'ի կշիռ դնէ: Երկ՝ թէ որոշ ճանիցէ զօրէնս, զգործն և զյարաբերութի նոցին յիրեարս, ասի՝ պայծառ. իսկ թէ ոչ մարթի բացորոշ ճանաչել զդոսին, կոչի՝ մթին. թէ աշխոյժ արի է 'ի քննել՝ ասի հսկել. թէ անփոյթ է 'ի դատել՝ ասի թէ ննջէ. թէ խաւար դադարեալ է 'ի զննութէ, կոչի մեռեալ:

§. 190. Երրդ՝ դատողութին կամ խիղճն մտաց թէ անսխալ ճանաչէ զօրէնս և զգործն և զկապակցութի նոցին՝ կոչի ուղիղ. իսկ թէ սխալի 'ի ճանաչման դոցին՝ ասի մոլար: Ողորմելի է վիճակ մոլորախիղճ մարդոյ. իբր զի՝ թէ ըստ թելադրութե նորին գործեսցէ՝ մեղանչէ տգիտութբ (տես զօրինակս. ծննդոց. ԺԲ. 14—20: Ի. 2—18: ղկս. ԻԳ. 34: յովհ. ԺԶ. 2. 3: գործ. ԻԶ.

9=16 ։ ա̄ տիմոթ․ ա̄․ 13․ ևն)․ իսկ եթէ հակառակ այնր արասցէ՝ նոյնպ մեղանչէ՝ ընդդէմ դատողութե իւրոյ գործելով (կարդա գլս․ ժը․ 47 ։ հռովմ․ ա̄․ 32 ։ ել․ 20․ 23 ։ ա̄ կորնթ․ ը․ 7=13․ ևն)․ վնկ պարտի ջան դնել 'ի փարատել զտգիտութի իւր և 'ի կազմել զուղիղ դատողութիւն յազատիլ 'ի մեղաց ։

§․ 191․ Զո̃դ՝ ըստ որում հետև դատողութիւն հիմնի միշտ 'ի զօրութիւն փաստից և նշանակաց ճշմարտութե, խիղճն մտաց սոյն նկատմամբ պէսպ անուանի․ զի թէ դատաստան նորին ունիցի փաստս ամենևին ճշմարիտս՝ բաւականս՝ և յաղթահարիչս, կոչի՝ Ստոյգ․ թէ փաստքն իցեն միայն ճշմարտանման, խիղճն ասի՝ Հաւանական․ իսկ եթէ կայցեն երկուստեք փաստք հաւասարազօրք այնպէս զի դատն մնասցէ 'ի կախ անվճիռ, խիղճն ասի Երկբայական․ յորում դիպուածի չէ արժան հետևիլ այնմ, այլ բառնալ պիտի զերկբայութիւն՝ որչափ մարթ իցէ, և զգուշութն իւր առնել ստոյգ կամ հաւանականագոյն ։

§․ 192․ Հինգերորդ՝ դատողութին եթէ արդարացուցանէ զգործն պահպանութբ օրինացն Այ, անուանի՝ Բարի խիղճ․ իսկ եթէ ցուցանէ զգործն լեալ հակառակ օրինաց, կոչի Չար․ որ յանդիմանէ և դատապարտէ զգործողն, և կոչի՝ խայթ, խայթոց՝ կամ խածուած խղճի (տես հռովմ․ բ․ 15 ։ յովբ․ իէ․ 6 ։ իմաստ․ դ․ 20․ ա̄ տիմոթ․ ա̄․ 19 ։ ա̄ պետր․ գ․ 16 ։ ևն) ։ Որպ զի խիղճ մտաց մարդոյ լիցի բարի, հարկ է զքրիստոնեայն նախ՝ աշխատ լինել քաջ ուսանիլ զօ-

ըչնս այ, զի ազնուին է մայր ամ՝ մեղաց և թշուառութեց (կարդա՛ §. 30—34)։ Եկդ՝ զի յետ ճանաչելոյ զայնս հետևեսցի գործով կատարել առանց ծուլութե և աշխարհասիրութե. և երրդ՝ զի զկնաւոր շարժառիթ օրինապահութե նր լիցի հնազանդութին և սէրն առ ածն։ Մեծ է զին և օգուտ բարի խղճի մտաց, զի բերէ մեզ պարծանս և հանգստութի սրտի (բ կորնթ. ա. 12), զմխիթարութի ՚ի ձախորդութիս (ա կորնթ. դ. 1—5), զուրախութի ՚ի սոսկալի ժամու մահուան (բ կորնթ. ե. 8—11: բ տիմոթ. դ. 6—8), զհամարձակութի առ ածն յաղօթս և յամ՝ պէտս (ա յովհ. գ. 20—22) եւս զուղղափառ հաւատս (ա տիմոթ. ա. 19)։

§. 193. Միջոցք առ ստանալոյ զբարի խիղճ են, 1՝ յընթացս աւուրն յամ՝ ժամու յիշել զպատգամն ,, յոր երկնիր և զվճարումն նորա պահեա՛, զի այս է մարդն ամենևին (ժողով. ժբ. 13). 2՝ յուշ ած անդադար զգին և զօգուտ բարի խըղճի մտաց. 3՝ յաճախ խորհեաց զշարժառիթս առաքինագործութեց. 4՝ ՚ի զարթնուլդ ՚ի քնոյ դիր հաստատ յառաջադրութի չմեղանչելոյ յայնմ աւուր. 5՝ յերեկոյին յառաջ քան զննջելդ քըննեա՛ զխիղճդ և թէ մեղուցեալ ես յաւուրն, զըղջա՛ ապաշաւեա՛ և դու քեզէն քեզ դիր ապաշխարանս ինչ ՚ի հատուցանել այ ըստ կարեացդ. 6՝ ստացիր զարթնութի հոգւոյ (ընթերցիր մատթ. իդ. 42. 43: մարկ. ժգ. 33—36: ա կորնթ. ժ. 12: ժե. 34: ժզ. 13: յայտն. ժզ. 15. 16. եփես. զ. 18: ևն). 7՝ միշտ աղօթեա՛ զի մի անկանիցիս ՚ի փորձութի. 8՝ զմոլութիւդ և զպակասութիւդ

՚դժուն գործեա ուղղել, և զնոյն դիմադրեալ առաքինութիւնն տանալ ։

Զայդաւիկ միջոցս ՚ի գործ ածելով, և զգլին բալի խղճմտանաց խորհելով պարտի ա̄մ մարդ հեռանալ ՚ի չար և մեղանչական խղճէ մտաց, որ թէ որքան զարհուրելի թշուառութի լիցէ և ծր-չափ վնասաբար՝ ցուցանեն օրինակք Ադամայ և Եւայի (ծննդ. գ. 8), կայենի (ծննդ. դ. 14) եղբարցն յովսեփայ (ծննդ. խբ. 21), անտիոքայ (ա̄ մակաբ. զ. 10. 12), յուդայի (մատթ. իէ. 5) և այլոց բազմաց. ընթերցիր ևս իմաստ. ժէ. 10։ սղմս. լէ. 4—8։ մարկ. թ. 45. ա̄ տիմոթ. ա̄. 19։ ե̄ն ։

§. 194. Զ. Զի՞նչ է կամեցումն.

Պ. Կամքն է կարողութի հոգւոյ, որ ըստ երևեցուցանելոյ նմա մտաց զիր կամ զգործ ինչ իբր զբարի կամ զչար՝ եռանէ ՚ի ներգործութի և ձգի ՚ի միանալ ընդ նմ կամ խորշիլ յայնմանէ։ Այս երևեցուցումն բարւոյ կամ չարի՝ անուանի շարժառիթ հոգւոյ, զորմէ ստորև ։

Ներգործութիք կամաց բաժանին ՚ի բնական՝ որ չեն յիշխանութե գործողին, այլ են գործք մանկանց, խելագարաց, յափշտակելոց, ևն. և յազատական՝ երբ մարդն բանական դատողութ, և անբռնի գործէ՝ յիւրում իշխանութե ունելով զկարողութին դնելոյ կամ ոչ՝ զնոյն գործ (տես. ա̄ կորնթ. է. 37. փիլեմ. 14. ևն)։ Առ ՚ի լինել ներգործութե ինչ ա̄մբ ազատ՝ պահանջի 1՝ զի մարդն ինքն իցէ արարչական պատճառ նորին ոչ բռնաձգել յայլմէ. 2՝ զի արասցէ ընտրողութ

՚ի բզի՛ կարելի՛ գործոց զմին նախադասելով (Բ՟ օ-րինաց. Լ. 19։ յեսու. Իդ. 15. ևն). 3՝ զի լինի վա-րիչ կամ ուղղիչ գործոյն՝ բացորոշելով զայն ըստ սկզբանց խըղճի. 4՝ զի պայծառ ծանիցէ զբա-րութի կամ զչարութի նորին. 5՝ զի և հակառակն գործոյն կարելի մնասցէ յիշխանութե գործողին (տե՛ս զօրինակն, գործոց. Ե. 1=9)։

Նմանայն ազատ ներգործութի ունի հայեցումն և վերաբերութի առ օրէնս Այ և մտաց, որոց ՚ի համաձայնիլն՝ կոչի բարի. իսկ ՚ի հակառակիլն ասի չար. այս բարի և չար որակութի կոչի Բա-րոյականութի գործոց։ Առ բարութին պահանջի. զի ոչ միայն արասցէ ոք զհրամայեալն յօրինաց (նիւթական), այլ և զի վն յարգելոյ (կերպական) զօրէնս և զօրէնսդիրն արասցէ, ևս և զի պտղո-գայքն լիցին բարի (տե՛ս, մատթ. Զ. 1—7։ Ա, կորնթ. Ժգ. 1=4, ևն). յորոց թէ մին պակա-սեսցի, գործն լինի չար և մեղանչական։

## §. 195. Հ. Զի՞նչ և քանի՞ է շար-ժառիթ հոգւոյ.

Պ. Շարժառիթ յընդհանուրս ասին՝ այն ամ զգայմունք, որք զբաղձողական կարողութիս հոգւոյ հանեն ՚ի ներգործութի, բացորոշեալ պայմա ձգել յայս կամ յայն առարկայ. և վասն զի պ՟ղ է եղանակ զգածելոյ սոցա զհոգին, յայն սակս և զանազան անուամբ կոչեցեալ լինին յայլևայլ դէպս. Իբր զի երբ մտածին իբր պատճառ որո-շիչ զբաղձող կարողութիս՝ անուանին խթան. որք դարձեալ յերկուս ազգս հատանին. զի ումանք մի-այն ՚ի բանականութէ առաջարկին, և ասին Առիթ

( առթող , յոյն , եղադիր ), և ոմանք 'ի զգայա-կանութէ ծագին և կոչին Մղանք · իսկ յորժամ մտածին իբր հեշտացուցիչ օգտաբեր ինչ գործելի 'ի մարդոյ՝ անուանին՝ Վախճան · որ երբ լոկ դիտեալ լինի 'ի մտաց, ասի Նպատակ ։ Այն ինչ՝ որով միջնորդութ[եամբ] վախճանն կամ նպատակն ստացեալ լինի, կոչի Միջոց ։

Ունիթն 'ի բանականութէ առաջարկեալ կամ երևեցուցեալ՝ է զգայութին որ յարգէ և մեծարէ զօրութի և զարդարութի օրինաց · և այս մեծա-րանք պարտի լինել մի միայն բարոյական շար-ժառիթ, որ ձգեսցէ զքրիստոնեայն 'ի կատարել զամ օրէնս այ և զուղիղ բանականութե ։ Թողումք վասն համառօտութե զայլ բազում խնդիրս յայս ճառ վերաբերեալս ։

§. 196. Հ. Զի՞նչ են գրգիռ, բաղձանք և կիրք ·

Պ. Գրգիռ ասին հակամիտութիք կամ բեր-մունք ինչ 'ի բնութէ 'ի մեզ անկեալք · որոց գլխաւորք են երկու, անձնասիրութի կամ սիրել զինքն, և օգտասիրութի կամ ջանք զօգուտ և ըղշահ իւր քաղելոյ ամենուստ · ինքնին չեն նք չար կամ մեղանչական, այլ բարեկարգելի են 'ի լուսաւոր բանականութէ, որով լինին պիտանի առ բազում ինչ ։

Զգայական բաղձանք են բուռն շարժմունք և յուզմունք հոգւոյ՝ ծագեալք 'ի ստորնութէ յօ-ժարութեց կամ ընդդիմութեց, որպիսի են ուրախութի, տրտմութի, բարկութի, նախանձայուզութի, ևն. բնութ[եամբ] անմեղ են և անտարբեր, նա՝ թէ հար-

կաւոր 'ի բաղում դէպս, ըստ որոյ և գտան 'ի Քս (մարկ. գ. 5: ղկս. Ժ. 21. ԺԹ. 41: իբ. 44: յովհ, Բ, 14—17: ԺԲ, 27):

Կիրք են սաստիկ և մեղանչական հակամիտութիւնք հոգւոյ առ չար ինչ. որպէս, ատելութիւն, ագահութիւն, արբեցութիւն, բղջախոհութիւն, ևն, որք զհետ ձգեն զոգի՛ վնասակար հետևութիւնս. զի խաւարեցուցանեն զմիտս և տան Թիւր դատել, զկամս ձգեն 'ի սիրել միայն զոր ինքեանք կամին, զրկեն զմարդն յայլոց անմեղ ուրախութեանց, նուազեն զբարոյական ազատութիւնն, յոլովակի վնասեն մարմնոյ՝ առողջութեան՝ հարստութե՛՝ համբաւոյ՝ պաշտաման, ևն, զրկեն 'ի յաւիտենական երանութենէ, և առնեն զմարդն Թշուառ: Ապա զգոյշ լիջուք չլինել ծառայ կրից, իսկ Թէ արդէն լեալ եմք՝ ազատեսցուք զանձինս:

—************************—

## Հատուած երկրորդ.

### Օրէնք կանոնաւորիչք ներգործութեանց.

### §. 197. Հ. Օ՞րինչ են օրէնք ներգործութեանց. +

Պ. Քանզի ամ՛ ներգործութիւնք հոգւոյ են դիւրափոփոխք և ընդունակք բիւր պէսպիսութեանց, առ 'ի լինել ուղիղ և բարի՝ հարկաւ կարօտին ունել ինքեանց առաջնորդ և գաղափար զկանոնս ինչ որք կոչին օրէնք, և առ զանազանութե՛ այլոց բաղմաց՝ օրէնք բարուց. որք և սահմանին, Օրէնքըն է վճիռ և դատողութի՛ մտաց առաջադրեալ

'ի դատաւորէ իբր կանոն ; որում ա՟մ բանական էակք միշտ պարտական են համաձայնել զբարս իւրեանց ։

### §. 198. Հ. Ո՞վ է օրէնսդիր բարուց.

Պ. Առաջին և գերագոյն օրէնսդիր է միայն Ա՟ծ, որ անպարագիր իմաստութ՟ իւրով սահմանեալ զանփոփոխ կանոնս բարուց՝ անջինջ 'ի բընութ՟ տպաւորեաց ['ի միտս ա՟մ մարդկան. ո՟պ վկայեն և ս՟բ գիրք, ըստ այնմ,|| Պատուիրանս
,, այս . . . ոչ է թաքուն 'ի քէն և ոչ է հեռի
,, 'ի քէն . . . այլ յոյժ մերձ է քեզ բանս (պատ
,, ուիրանս) այս, 'ի բերանի քում և 'ի հօգւոջ
,, քում (դրոշմեալ) է և 'ի ձեռս քո է առնել
,, զայն (Երկ. օրինաց. Լ. 11—15) . . . . հե-
,, թանոսք՝ որ չունին զօրէնս ինչ (գրեալս 'ի
,, մատենի) թելադրութ՟ բնութ՟ (բանականութ՟)
,, զհրամայեալսն յօրինաց կատարեն. և զօրէնս
,, (գրեալս) ոչ ունելով՝ ինքեանք իբրու թէ օ-
,, րէնք են անձանց իւրեանց. որովհետև զօրէն-
,, սըն կատարելով յայտ առնեն, թէ հրամանքն
,, օրինաց տպաւորեալ են 'ի սրտի իւրեանց, վը-
,, կայելով այսմ ևս և խղճի մտաց նց՟՝ երբ դատո-
,, ղութ՟ մտաց զմիմեանս պարտաւորեն կամ ար-
,, դարացուցանեն (Հռովմ. Բ. 14, 15). տես
ևս, եսայ. Ծա. 7։ երեմ. Լա. 33։ մտթ. Է. 12. ե՟ն։
Այսու յա՟յ 'ի միտս տպաւորեալ օրինօք վարեցան մարդիկ յադամայ ցմովսէս՝ զամս իբր 3700. յետ որոյ 'ի յաճախել չարութ՟ մարդկան, և 'ի չլսել նց՟ օրինաց մտաց՝ ձեռամբ մովսէսի ետ ա՟ծ գրեալ օրէնս տասն, ո՟պ և միջնորդութ՟ մարգա-

րհից և առաքելոց, մանաւանդ որդւոյ իւրոյ յս̃ի ք̃ի հեռահետէ հրապարակեաց զայլ բազում օրէնս բարուց ։ Յայսմանէ իմացեալ լինի թէ յետ Ա̃Յ և Յիսուսի Քրիստոսի՝ ե̃կղ օրէնսդիր բարուց է միտք իւրաքանչիւր մարդոյ կամ խիղճն մտաց ։

## §. 199. Հ. Ի՞Ւ հաստատի թէ միտքն է օրէնսդիր, և թէ մարդս պարտի հնազանդիլ օրինաց նորա.

Պ. Ապացուցանի այդ նախ ՚ի սահմանելոյն ա̃յ, որ տպաւորեաց ՚ի հոգւոջ մարդոյ զբնական օրէնս, ո̃պ վկայութ̃ք ցուցաք ՚ի նախընթաց տանդ. ե̃կղ՝ ՚ի հրամանաց յս̃ի ք̃ի և առաքելոց նորա, որք բազում անգամ պատուիրեցին՝ յա̃մի ՚ի կիր առնուլ զլուսաւոր բանականութ̃ի և զառողջ դատողութ̃ի մտաց, դատնել զճշմարտութ̃ի յա̃մ իրս, և հեռանալ ՚ի տգիտութ̃է. ո̃պ յասելն, || Մի՛ ըստ աչս դատէք, այլ ուղիղ
,, դատաստան (՚ի միտս ձեր) արարէք (յովհ. Է.
,, 24) . . . ընդէ՞ր և անձամբ իսկ ձերով՝ ձե-
,, րըդ մտօք՝ ոչ դատէք զայն ինչ՝ որ իրաւացի է
,, (ղկս. ժբ̃. 57) . . . եթէ լոյսդ որ ՚ի քեզ
,, է (ներքին լոյսդ, միտքդ) խաւար է, որչափ
,, ևս առաւելանայ ՚ի քեզ (արտաքին) խաւարն
,, (մատթ, զ, 23) . . . տեսեալ յս̃ի թէ ի-
,, մաստուն մտօք ետ (դպիրն) պատասխանին՝
,, ասէ ցնա, չես հեռի յարքայութենէ ա̃յ (մարկ.
,, ժբ̃. 34) . . . եթէ ոք կամի զկամս նորա (ա̃յ)
,, առնել, գիտասցէ (դատողութ̃բ մտաց իւրոց
,, իմասցի) վասն վարդապետութեն իմոյ, յա̃յ ի-

„ ցէ արդեօք այն, եթէ ես ինչ յանձնէ իմմէ
„ խօսիմ (յովհ, է. 17) . . . ծանիջիք զճշմար-
„ տութին, և ճշմարտութին (ուղիղ դատողութին մը-
„ տաց) ազատեսցէ զձեզ (յա՟մ մոլորութեց, յովհ.
„ ը. 32) . . . . հոգի է ա՟ծ և երկրպագուաց նորա
„ պարտ է հոգւով և ճշմարտութբ (մտաց) երկր-
„ պագանել նմա (յովհ. դ. 24) . . . տակաւին
„ դուք ևս ոչ ունիք զսուր իմացողութի, և ոչ 'ի
„ միտ առնուք (մատթ. ժե. 16) . . . եղբարք
„ մի՛ լինիք տղայ մտօք, այլ 'ի չարեաց տղայացա-
„ րուք, և մտօք կատարեալ լինիջիք (ա՟ կորնթ.
„ ժդ. 20) . . . կատարելոցն (մտօք) է հաստա-
„ տուն կերակուր, որոց միտքն վ՟ն չափահասութե
„ կրթեալ են առ 'ի ընտրել զբարին և զչարն
„ (եբրայ. ե. 14) . . . հեզութբ ընդունիջիք զ
„ բանն (զուղիղ դատողութի մտաց) ընդաբոյս (որ
„ ընդ բնութե բուսեալ է 'ի հոգւոջ ձերում), որ
„ կարող է կեցուցանել զհոգիս ձեր (յակոբ. ա.
„ 21) . . . զա՟մ ինչ փորձեցէք, զբարին ընկա-
„ լարուք (ա՟ թեսաղ. ե) . . . իբրև ընդ իմաս-
„ տունս խօսիմ (ը՟ ձեզ) դատեցէք դուք ձեզէն՝
„ զոր ասեմս . . . եթէ մեք ուղիղ դատէաք ըզ-
„ մեզ, ոչ անկանէաք ընդ դատաստանաւ ա՟յ (ա՟
„ կորնթ. ժ. ժա) . . . հեթանոսք գնան ունայ
„ նութբ մտաց իւրեանց, որոց խաւարեալ են միտք,
„ և օտարացեալ են 'ի կենաց անտի ա՟յ վ՟ն տգի-
„ տութեն որ է 'ի նս՟ա, վ՟ն կուրութե սրտից իւրեանց
„ (եփես. դ. 17) . . . պղծոց և անհաւատից ոչ
„ ինչ է սբ, այլ պղծեալ են միտք և խղճմտանք
„ նց (տիտոս. ա. 15) ։ Ու սոյնս հային և գըր-
եալքն, եսայ. խդ, 18=20 ։ երեմ. լա. 33։ գործ.

ժէ. 11, 26. 27 :| հռովմ. է. 23 : ժբ. 1. 2 : ա կորնթ. ժդ. 15 : եփես. ե. 7—11 : փիլիպ. ա. 9. 10 : ա տիմոթ. բ. 3. 4 : դ. 3—6 : բ տիմոթ. գ. 8 : ա յովհ. դ. 1. զորս հարկ է ընթեռնուլ :

§. 200. Հ. Որդեօք գո՞յ մի ոմն առաջին և արմատական օրէնք բարուց.

Պ. Որովհետև կան բազում բնաւորք օրէնք՝ հարկ է զի լիցի 'ի նոսին և մի ոմն առաջին՝ արմատ և աղբիւր այլոց. զի ամ բազմուն 'ի միուէ սկսանի. արդ՝ ըստ ուսուցման արդի իմաստասիրաց առաջին օրէնք բարուց կամ բարոյական ներգործուեց՝ է այս բան, || Միշտ գործեա համաձայն առողջ դատողուե մտայդ կամ լուսաւոր բանականուեդ ||: Զիմաստ այսր օրինաց՝ այլ հեղինակք բացատրեն յետագայ բանիւքս, || 'Ի գործելդ զայն կանոն պահեա, որում ամ ուղղադատ բանականք կարեն և պարտին հարկաւ հաւան դտանիլ, և 'ի նոյնպիսի դիպուածս՝ ըստ քոյդ կանոնի գործել, կամ, զկանոնն քո լեր զընդհանուր օրէնս ընդունիլ . . . 'ի գործելդ կալ քեզ կանոն զայնպիսի, զոր՝ թէ լինէիր ընդհանուր օրէնսդիր, զօրէիր սահմանել իբր հանրական օրէնք ամ բանականաց . . . յամ գործս քո միշտ ցոյց զարժանաւոր յարգուն առ ամ բանական էակս . . . այնպէս գործեա, զի զբանականուին՝ որ 'ի քեզ և յայլս՝ միշտ ունիցիս իբրև ըղ վախճան, և ոչ թէ վարեսցես զայն իբր զլուկ գործի կամ միջոց ||: Իմաստ այս ամ բանից մի և նոյն է, և զայն կամի ասել, թէ մարդս իբրև մտաւոր էակ՝ միշտ պարտի հետևել ուղիղ և անսխալ

դատողութ՟ գործադատ մտաց լուրոց, այն է խիղճ մտացն. սքանչելի պատկեր ա՟ծութ՟ ՚ի մարդն, մի և միայնակ օրէնսդիր, օրէնք, դատաւոր, վկայ, և դատախազ ա՟մ գործողութ՟ց ՚ի մարդումն ։

## §. 201. Հ. Բաց յառաջին օրինացդ կա՞ն այլ ևս օրէնք բարուց.

Պ. Զկնի դորին՝ հռչակաւոր են տասն պատուիրանք ա՟յ, որք են անսխալ կանոնք բարուց ՚ի ներքուստ տպաւորեալք ՚ի միտս ա՟մ մարդկան ՚ի ստեղծման անդ նոցա. և արտաքուստ ևս հրապարակեալք նախ ձեռամբ մովսէսի մարգարէի (տե՛ս ելից, ԺԹ. Ի. ԼԱ. ԼԲ. ԼԴ. եկդ. օրինաց, Ե. Զ. (Թ. Ժ. ևն՟) և ապա ՚ի քս՟է հաստատեալք, և յերկուս օրէնս՝ այն է՝ ՚ի սիրել զա՟ծ և զընկերն իբրև զանձն՝ վերածեալք (տե՛ս, մտթ. ԻԲ. 37—40 ։ մրկս. ԺԲ. 29 ։ մատթ. ԺԹ. 17—20 ։ ևն՟), որք պարտաւորեն զամենայն մարդիկ ՚ի պահել զայնս անթերի. զի պատուիրանքն այնս են հրամայեալք յա՟յ և յաւուրց բանականութ՟է, և երջանիկ առնեն զունելս ։

## §. 202. Հ. Ո՞յք են տասն պատուիրանքդ Աստուծոյ. +

Պ. Են այսոքիկ. առաջին՝ ես եմ տէր ա՟ծ քո, մի ունիցիս քեզ զայլ ա՟ծ բաց յինէն. երկ՟ մի արասցես դու քեզ կուռս ըստ ա՟մ նմանութ՟՝ որ ինչ յերկինս ՚ի վեր, և որ ինչ յերկիր ՚ի խոնարհ, և որ ինչ ՚ի ջուրս ՚ի ներքոյ երկրի, մի երկիրպագանիցես նոցա և մի պաշտեսցես զնոսա. եր՟դ՝ մի առնուցուս զանուն տ՟ն ա՟յ քո ՚ի վերայ սնոտեաց. չո՟դ՝ յիշեա՛ սրբել զօրն շաբաթու զի

զկիւրակէս · հինգերորդ՝ պատուեա՛ զհայր քո և զմայր քո՝ զի քեզ բարի լինիցի · վեցերորդ՝ մի սպանաներ · եօթներորդ՝ մի շնար · ութերորդ՝ մի գողանար · իններորդ՝ մի սուտ վկայեր զընկերէ քումմէ · տասներորդ՝ մի ցանկանար կնոջ ընկերի քո, մի ծառայի նորա և մի աղախնոյ նորա, և մի ամի՝ որ ինչ ընկերի քո իցէ ։

## §. 203. Հ. Զի՞արդ պարտ իցէ իմանալ զիմաստ այդց պատուիրանաց.

Պ. Առ ուղիղ իմանալոյ զմիտս դոցին՝ հարկ է առաջի աչաց ունել զայսոսիկ ծանօթութիս ։ Նախ՝ տասն լինելն պատուիրանացդ թէպէտ պատահական ինչ է, սակայն յայնոսիկ բովանդակին ըստ բաւականին պարտաւորութիւնք մեր թէ առ Ած ՚ի չորս առաջինսն նշանակեալք, և թէ առ ընկերս՝ ՚ի յետին վեցն պարունակեալք ։ Երկրորդ՝ դոքա պարտաւորեն թէ զներքին և թէ զարտաքին կարողութիս մեր · այն է զմիտս, զկամս, զզգայմունս և զամ գործողութիս՝ կատարել հնազանդութե ։ Երրորդ՝ ՚ի հրամայական պատուիրանդ պարունակին և արգելականք նոցին · ընդ հակառակն յարգելականսն պարունակին և հրամայականք · զի ուր առաքինութիւն ինչ հրամայի, նմին հակառակ մոլութին արգելեալ լինի · և ուր մոլութի ինչ արգելանի՝ նորին դիմադրեալ առաքինութին պատուիրի ։ Չորրորդ ուր հրամայի կամ արգելանի սեռն, ընդ նմին իմացեալ լինի և տեսակն և անհատն, և յանդրադարձ սակի ։ Եւս և ուր դնի կամ բառնի գործն, ընդ նմին իմանի և պատճառն · ուր յիշի մին յառնչականաց՝ ի-

մոցեալ լինի և միւս տանջակիցն ․ ո՛չ՝ յասելն՝ մի՛ շնար, արգելեալ լինի և ամ՟ պղծութի յայն վերածելի ։ Զինգերորդ՝ առ լրումն իմաստից պատուիրանացդ յուշ ածել պարտ է և զվարձս պահողաց և զպատիժս զանցառուաց նոցին ։

§ . 204 . Հ . Զո՞ր առաքինութիւնս հրամայէ և զո՞ր մեղս արգելու առաջին պատուիրանն . +

Պ . Ասելովն՝ ես եմ տէր Ա՟Ծ քո, հրամայէ մեզ ճանաչել զնա, հաւատալ և յուսալ ՚ի նա, սիրել զնա, երկնչել ՚ի նմանէ, երկրպագանել և աղօթել առ նա, հանդերձ այլովք ․ իսկ ասելովն՝ մի՛ ունիցիս քեզ զայլ ած, արգելու զմեղս անածութն, կռապաշտութն, անհաւատութն, հերետիկոսութն, հերձուածողութն, թերահաւատութն, ուրացութն, յուսահատութն, գաղջութն, և սոյին նմանս ։

§ . 205 . Հ . Զի՞նչ հրամայէ և զի՞նչ արգելու երկրորդ պատուիրանն . +

Պ , Արգելու մեզ զնիւթապաշտութի, զաւելոպաշտութի, զկախարդութի, զթովչութի, զհմայութի, զկեղծաւոր ածպաշտութի, զսուտ պաշտօնասիրութի (գործոց . ժէ . 22), զծխապաշտութի, եւն . և հրամայէ ունել զառաքինութիս դոցին դիմադրեալս ։

§ . 206 . Հ . Զի՞նչ հրամայէ և զի՞նչ արգելու երրորդ պատուիրանն . +

Պ . Հրամայէ բազում երկիւղիւ և ջերմեռանդութ յիշել զանունն ած ՚ի խօսակցութիս մեր, երդ-

նուլ անուամբ նր̅՝ բայց 'ի Ճշմարիտ լոյս միայն և 'ի յայժ հարկաւոր ժամանակս, միշտ աղօթել առ նա և խնդրել զհոգևոր բարիս, գովաբանել զանուն և զկատարելութիւն նր̅, շնորհակալ լինել ըղնմանէ վս̅ բարերարութեանց նր̅ առ մեզ և առ այլս, հռչակել զսքանչելիս նր̅ (սղմս, ճզ. 11—16.), խոստովանիլ 'ի հարկաւոր ժամանակի զհաւատս և զկրօն մեր, փառաւորել զա̅ծ գործովք մերովք (մատթ. ե. 16: ա̅ պետրոս. բ. 12) ևն: Իսկ արգելու զհակառակս դոցին, որք են՝ յիշել զանուն ա̅յ թեթևամտութ̅բ, հայհոյել, յիշոց տալ, անիծանել զա̅ծ՝ զսր̅բս կամ զմարդիկ, առանց հարկի կամ ստութ̅ երդնուլ, փարխեցաբար աղօթել, խօսիլ կամ ծիծաղիլ յեկեղեցւոջ, զբանս սր̅ գըրոց յիշել վայրապար կամ թիւր մեկնել, ևն:

## §. 207. Հ. Զի՞նչ հրամայէ կամ արգելու չորրորդ պատուիրանն. +

Պ. Հրամայէ սր̅ պահել զաւուրս կիւրակէից և այլոց հանդիսաւոր տօնից, յորս հարկ է ա̅մ քրիստոնէից առանց ծուլութե̅ հաւաքիլ 'ի սր̅ եկեղեցին, և անդ 'ի միասին հրապարակաւ պաշտել զա̅ծ և աղօթել առ նա, յարգութ̅ լսել և ընդունիլ զքարոզս և զա̅ծային պատգամս, հաղորդիլ մարմնոյ և արեան տն̅, զօրն ողջոյն պարապիլ 'ի բարի գործս, ընթեռնուլ զա̅ծաշունչ գիրս և զայլ հոգևոր մատեանս, այցել յիշել զա̅ծ, քըննել զխղճմտանս իւր, ցաւիլ և զղջանալ 'ի մեղաց իւրոց, դնել զբարի զխոստմունս, բարիս առնել ընկերաց, տալ զողորմութի̅ աղքատաց, խրատել զմոլորեալս, ուսուցանել տգիտաց զհարկա-

ւորս առ հոգւոյ փրկութ՟ , յայց ելանել հիւանդաց և բանտարկելոց , հեռանալ յամ՟ մեղանչական գործոց , դադարել յամ՟ մարմնական աշխատանաց , որ է 'ի գնելոյ , 'ի վաճառելոյ , յերկրագործութ՟ , յարուեստական աշխատութ՟ց , ևն ։

### §. 208. Հ. Զի՞նչ հրամայէ կամ արգելու հինգերորդ պատուիրանն .+

Պ. Հրամայէ սրտիւ և գործով պատուել , սիրել , հնազանդիլ , ծառայել , և ոչ ինչ կերպիւ անարգել թէ զմարմնաւոր ծնողս մեր և թէ զայլ մեծաւորս , որ զվարդապետս , զեկեղեցական հովիւս , զթագաւորս , զիշխանս , զուսուցիչս , զոր բախնամս , և զայն ամ՟ անձինս՝ որք առաջնորդեն մեզ 'ի հոգևոր կամ 'ի մարմնական բարիս . որով և կապէ զամ՟ մարդիկ , զհասարակ ժողովուրդս , զհպատակս , զորբս , զաշակերտս , զծառայս , զընդնական որդիս . և ամ՟ն արգելու զանհնազանդութ՟ զօրինազանցութ՟ , զապստամբութ՟ , զապերախտութ՟ , և զայլ նման մեղս ։

### §. 209. Հ. Զի՞նչ հրամայէ և արգելու վեցերորդ պատուիրանն . +

Պ. Արգելու ամ՟ առանձնական մարդոյ ոչ սպանանել զինքն կամ զայլս , ոչ ըստ մարմնոյ և ոչ ըստ հոգւոյ . ոչ ցանկանալ և ոչ նպաստել մահուան այլոց կամ իւրն . ոչ անդամատել զինքն կամ զայլս . ոչ գանել կամ վիրաւորել . ոչ ատել՝ նախատել՝ մատնել՝ կռուիլ՝ վատանուն առնել և բամբասել զընկերն . ոչ սպանանել հոգւով չար խրատս կամ օրինակս մեղաց տալով և գայ-

թագղեցուցանելով զայլս • այլ ամիւ նպաստել ըն-կերին, զի հոգևոր և մարմնաւոր կեանք նր աճես-ցի և անսասան մնասցէ ։

§. 210. Հ. Զի՞նչ արգելու կամ հրամայէ եօթներորդ պատուիրանն. +

Պ. Սովին նախ՝ հրամայի մաքրուն և ողջա-խոհուն ամ վիճակի մարդկան, մանաւանդ ամուս-նացելոց, որք պարտին սրբութ ճանաչել զիւրենց ամոն, և ոչ զայլոց • եւդ ամ մարդոյ արգելեալ լինի որևիցէ պղծուն սրտի՝ լեզուի և գործոյ, զոր-օրինակ, չար մտածմունք, ցանկունք սրտի, զա-զիր խօսակցունք և երգք, հայեցուած, գիճուն, շօշափմունք, շնուն, պոռնկուն, սոդոմական, և այլ գարշունք • եւդ արգելեալ լինին և ամ չար միջոցք և լուցկիք որք ածեն յայդպիսի մեղս, ար-բեցուն, որկրամոլուն, դատարկուն, պիղծ պատ-կերք կամ մատեանք, մոլորեցուցիչ ընկերք, ևն։

§. 211. Հ. Զի՞նչ արգելու կամ հրամայէ ութերորդ պատուիրանն. +

Պ. Արգելեալ լինին ամենակերպ գողունք և յափշտակունք, անիրաւ դաշնադրունք, վաշխա-ռունք, արծաթասիրուն, խաբէունք ՚ի վաճա-ռականուն, խարդախունք ՚ի չափս և ՚ի կշիռս, գնել զգողօնն իրս, զրկել զաղքատս, հատանել զվարձս մշակաց և ծառայից, չհատուցանել ըզ-պարտս, չդարձուցանել զաւանդն, զգրաւն, զգտեալ իրս, զխոստմունս, ևն • և հրամայի պա-հել զարդարուն ամ ուրեք ։

§. 212. Հ. Զի՞նչ արգելու կամ հրամայէ իններորդ պատուիրանն. +

Պ. Ընդելեալ լինի իմ ստախօսութ̃ նախ 'ի դատաստանի, յորում ամ̃անդամք, դատաւորք, վկայք, ամբաստանողք, պաշտպանք, և նոյն իսկ յանցաւորք պարտին փախչիլ յիմ սրտէ. Եկդ. արտաքոյ դատաստանի իմ մարդոյ արգելանի խօսիլ սուտ 'ի վնաս ընկերին, որպէս են վատահամբաւութ̃, չարախօսութ̃, քսութ̃, բամբասանք, յանդուգն դատողութ̃, երգիծանք, բանսարկութ̃, գովել զանարժանս, մանաւանդ զգաղտնի խորհուրդս ևն. և հրամայեալ լինի ճշմարտախօսութ̃ յիմ տեղիս և յիմ ժամանակի, այն է խօսել այոն՝ այո, և ո՛չն՝ ո՛չ, 'ի բարին մեկնել զբանս և զգործս ընկերին, 'ի պիտանիս վարել զլեզուն 'ի շինութ̃ եղբարց, ևն:

## § 213. Հ. Զի՞նչ արգելու և հրամայէ տասներորդ պատուիրանն.+

Պ. Արգելու զչար ցանկութ̃ սրտի առ որևիցէ իր եղբարց մերոց, ոչ նախանձել ընդ ներքին և արտաքին բարութ̃ այլոց, ո՛չ յափշտակել ինչ յընկերաց, շատանալ ընդ վիճակ իւր՝ որչափ պարգևեալ է ինձ, ոչ կամիլ վնասել ինչ այլոց. ո՛չ զարտաքին գործս միայն՝ այլ և զներքին չար խղճս և զցանկութ̃ մեր խորտակել. միով բանիւ՝ ճշմարտիւ սիրել և բարիս առնել եղբարց մերոց, որ է լրումն պատուիրանի ընկերսիրութեան:

## § 214. Հ. Կա՞ն այլ ևս օրէնք և օրէնսդիրք մարդկային գործոց.

Պ. Բաց յաստուծոյ կան ևս արտաքին օրէնսդիրք, որք ունին յԱ̃յ իշխանութ̃ օրէնս և պատ-

ուխտանս դնելոյ, և զգործս մեր զարտաքինս՝ համաձայն կամ հակառակ օրինաց գործելոյ՝ դատելոյ՝ վարձատրելոյ և պատժելոյ, որք բաժանին յեկեղեցականս և յաշխարհականս: Վ̄ս եկեղեցական դատաւորաց ընթերցիր (բ̄ օրինաց. ժէ. 8. 12: բ̄ մնացորդ. ժթ. 8. 9: մաղաք. բ̄. 7. երեմ. ա̄. 9. 10: մարկ. զ. 11: ղկս. թ. 5: եբրայ. ժգ. 7. 17: ա̄ յովհ. դ. 6: մատթ. ժը. 17: լգ. 2. 3): Իսկ վ̄ս աշխարհական դատաւորաց տես (հռովմ. ժգ. 2—8: մատթ. ժէ. 23—26: իբ. 21: տիտոս. գ. 1: ա̄ պետրոս. բ̄. 13—19. ևն):

## §. 215. Հ. Զիա՞րդ կոչին գործք յօրինաց հրամայեալք.

Պ. Այն ներգործութի՝ որ ունի համաձայնիլ օրինաց և յորոյ վ̄ր դնի պարտաւորութի առ ՚ի կատարել, կոչի Պաշտօն (հռովմ. ժբ. 1: բ̄ տիմոթ. դ. 5: բ̄ կորնթ. թ. 12. 13: եբրայ. թ. 6, ևն). իսկ որ կատարէ զայն՝ անուանի՝ Պաշտօնեայ (ա̄ կորնթ. գ. 5: դ. 1: բ̄ կորնթ. գ. 6: զ. 4, ևն). և որովհետև ա̄մ քրիստոնեայք պարտական են պահել զօրէնս ա̄յ և զբնականութե՝ վ̄ս ա̄մ բարոյական գործողութիք ն̄ց կոչին՝ պաշտօն. յորս միշտ զանազանելի են Նիւթ, որ է նոյն իսկ գործողութին հրամայեալ յօրինաց, ո̄պ՝ պահեմ ըղ կեանսդ. և Կերպ՝ այն է եղանակն կատարելոյ զայնս ուղիղ կամ անուղիղ շարժառթիւ. զո̄ր օրինակ պահել զկեանս վ̄ս յարգելոյ զօրէնս և զօրինադիրն, կամ վ̄ս որկրամոլութե, ծառայելոյ հայրենեաց, ևն: Երբ գործողութի կամ պաշտօն ինչ կատարի համաձայն օրինաց և շարժառթի ուրոյ (որ

է միայն յարգելն զօրէնս և զօրինադիրն) անուանի բարի՝ թէ բարոյական և թէ օրինական. թէ կատարի համաձայն օրինաց, բայց թիւր շարժառիթիւ, կոչի՝ բարի օրինական, բայց բարոյական չար. իսկ որ կատարի հակառակ օրինաց և թիւր շարժառիթիւ, կոչի օրինազանցութիւն, անօրէնութիւն, որ այն ինքն է՝ մեղք:

## §. 216. Հ. Զի՞արդ բաժանին պաշտամունք մարդոյ.

Պ. Պաշտամունք նկատմամբ ենթակայից բաժանին ՚ի հանրական, որ ամենայն մարդկան անկ են, որպէս սիրել զԱստուած. ՚ի մասնական՝ որ ումանց միայն պատշաճին, որպէս քարոզել. և յանհատական՝ որ միում ումեք յարմարի: Իսկ նկատմամբ առարկայից բաժանին՝ առ Աստուած, առ անձն իւր, և առ ընկերս. զորոց

# Հատուած երրորդ.

Ներգործութիւնք ընդ առարկայից համաձայնք.

## §. 217. Հ. Զի՞նչ է մտածել զպաշտամունս ընդ առարկայից.

Պ. Այն է շաղկապել զդիտանականն ընդ գործականին, և ուսուցանել զեղանակն ուղղելոյ զանհատ ներգործութիւնս, զի իմասցի թէ յայս ինչ կամ յայն դէպս՝ զի՞նչ և զիա՞րդ արժան իցէ գործել կամ խորշիլ: Արդ՝ առարկայք պաշտամանց մարդոյ են երեք, այն է՝ Աստուած, անձն իւր, և ընկերն.

զոր նշանակէ և ս՟բն պաւղոս յասելն || Զգաս-տու՟բ (առ անձն մեր), արդարու՟բ (առ ընկերս) և ածպաշտու՟բ (առ ա՟ծ) կեցցուք յաշխարհիս (տի-տոս . բ . 12) . վա՟կ և ազգք պաշտամանց մարդոյ լինին երեք, զորս թէ մարթ իցէ՝ կոչեսցուք, ածպաշտու՟թի, անձնապաշտու՟թի, և ընկերպաշտու՟թի, և զորոց զկարևորսն ճառեսցուք 'ի յետագայ յե ; րիս յօդուածս :

## Յօդուած առաջին .

### Աստուածպաշտութիւն .

### §. 218. Հ. Զի՞նչ և քանի՛պատիկ է պաշտօն մարդոյ առ աստուած .

Պ. Պաշտօն առ ա՟ծ կամ ածպաշտու՟թի կոչին այն գործողութիւնք, զորս կատարէ մարդս՝ առարկայ և շարժառիթ ունելով այնց միայն զա՟ծ՝ իբր ըծայրագոյն վախճան ամենակատար և ամենասուրբ, առ 'ի յարգել և փառաւորել զանսահման արժանաւորութիւնս և զկատարելութիւնս նո՟ր գործովք իւրովք : Տեսակք այդպիսի պաշտամանց առեալ լինին 'ի հանգամանաց մարդոյ . որ քանզի բաղկացեալ է 'ի հոգւոյ պ՟պ կարողութիւնք ճոխացելոյ, և 'ի մարմնոյ ազգի ազգի զգայութիւնք զարդարելոյ, հարկաւ 'ի յայս դայ, թէ ըստ ա՟մ կարողութեցդ ներքուստ և արտաքուստ պարտի պաշտել զա՟ծ (տես, ա՟ կորնթ . Ժ . 31 : Ժդ . 14 . 15 : հռովմ . ղ . 12 . 13 . 19 : ևն) : Բայց առ դիւրին մտաւորու՟թ ա՟մ ցեղք ածպաշտու՟թ բաժանին յերկուս, 'ի ներքին և յարտաքին : Ներքին պաշտամունք են՝ զորս մարթ է միայն հոգւով՝ մտօք և կամօք առանձնակի կատա-

րել, ոմն են յետագայքս. Ճանաչել զա̄ծ, Հաւատալ 'ի նա, Յուսալ, Սիրել, Երախտագէտ լինել, Երկնչել, Հնազանդել, Շատանալ, և Նմանել: Իսկ արտաքին են, որ ոչ լոկ հոգւով այլ և գործակցութ̄ մարմնոյ և զգայարանաց կատարին, կամ առանձին կամ հրապարակաւ. որոց գլխաւորքն են, Գովել զա̄ծ, խոստովանել, երկրպագանել, աղօթել, տօնել, երդնուլ, նախանձայոյզ լինել հաւատոյ: Յայսցանէ զՃանաչելն զա̄ծ և զհաւատալն 'ի նա՝ մեկնեցաք 'ի նախընթաց գլուխդ. զմնացեալսն քննեմք համառօտ 'ի յետագայսդ, կարգեալ զնոսին (որք և յայլ հետեւեալ յօդուածսն) 'ի ձև օրինադիր հրամայական պատուիրանի, ըստ որում ենն իսկ Ճշմարտիւ օրէնք՝ յա̄յ և յուղիղ բանաւորութ̄է հրամայեալք:

Յուսա՛ և Հաւա՛հ չէր յԱԾ.

## §. 219. Հ. Օրի՞նչ է յոյսն և վստահութիւնն յաստուած.

Պ. Յոյսն է ստոյգ ակնկալութ̄ի ընդունելոյ յա̄յ զա̄մ Ճշմարիտ բարիս, մանաւանդ զյաւիտենական երանութ̄ի. իսկ վստահութ̄ին է սաստկագոյն և կատարելագոյն աստիճան յուսոյ. որոց հիմն են անսուտ խոստմունք ա̄յ, ամենակարողութ̄ին, իմաստութ̄ին և բարութ̄ին (հռովմ. գ. 4: դ. 21: բ̄ կորնթ. ա̄. 18—21: ա̄ թեսաղ. ե̄. 24. և̄ն):

Շարժառիթք յուսալոյ և վստահանալոյ յա̄ծ են, 1՝ զի յոյսն է ազդու միջոց և գործի զօրացուցանելոյ և կատարելագործելոյ զայլ ա̄մ առաքինութ̄իւնս: 2՝ զի 'ի նոյնս պարտաւորեն զմեզ հաւատք մեր և խոստմունք ա̄յ: 3՝ զի զայնս հրամայէ

մեզ ա՟ծ բազում ուրեք յածաշունչ գիրս (մատթ․ զ․ 25—34։ հռովմ․ ժբ․ 12։ եբրայ․ Ժ․ 35։ ա պետրոս․ ա․ 13։ Ե․ 7։ առակ․ Ժզ․ 20։ սաղմ․ Ղ․ 14, ևն)։

Ներգործութիւնք յուսոյ են, 1՝ զի շարժէ զմեզ յուղղել զմոլի վարս մեր․ 2՝ բարեկարգէ զսէր երկրաւոր բարեաց․ 3՝ ոգևորէ զմեզ ՚ի չար փորձութիւնս․ 4՝ մխիթարէ ՚ի խաչակրութիւնս և տայ զօրութի ՚ի ձախող դէպս․ 5՝ հաճոյ առնէ զմեզ ա՟յ և մարդկան․ 6՝ խաղաղէ և հանդուցանէ զմիտս և զհոգի մեր․ 7՝ բերկրեցուցանէ զմեզ ՚ի ժամու մահուան (տես․ Բ կորնթ․ ա․ 10—15։ փիլիպ․ գ․ 20․ ա յովհ․ գ․ 3․ ևն)։

§․ 220․ Միջոցք հաստատելոյ զյոյս և զվստահութի մեր յա՟ծ են, 1՝ հեռացո՛ զխափանարարս նոցին, որք են մեղսալից խղճմտանք՝ որ զինքն անարժան համարի շնորհաց ա՟յ, երկբայութի զնախախնամութէն ն՟ր, օրինակ տառապանաց արդարոց, յաջողութի մեղաւորաց, ևն․ 2՝ գո՛ւն գործեա մաքուր պահել զխիղճ մտացդ․ 3՝ ջա՛ն դիր ստանալ զպայծառագոյն ճանաչումն զա՟յ և զկատարելութեն ն՟ր, մանաւանդ զամենազօրութեն (սղմս․ ՃԼԸ։ մատթ․ զ․ 8։ եբրայ․ դ․ 12․ 13․ ևն), զամենակալողութեն (ծննդ․ ա։ ղկս․ ա․ 37։ հռովմ․ դ․ 17․ ևն)․ զբարութեն (հռովմ․ ը․ 32։ յակոբ․ ա․ 17։ ա յովհ․ դ․ 16․ ևն)․ զճշմարտախօսութեն (հռովմ․ գ․ 2։ ա կորնթ․ Ժ․ 13․ ևն)։ 4՝ ստէպ յո՛ւշ ած զպաշտպանութիս ա՟յ, զորոց ըղփորձ առին նահապետք, մարգարէք, Քրիստոս, առաքեալք ն՟ր, մարտիրոսք, հին և նոր եկեղե-

ցէք, և այլ երևելի անձինք, զորոց գրեն պատմութիւնք. 5՝ յուշ ած զնպաստս, զոր դու ինքն ընկալար յա՟յ բազում անգամ 'ի կեանս քո, ծանիր զտկարութիւն քո, և զանպտղութիւն աւելորդ հոգացողութեանց (մատթ. զ. 27. ևն). 6՝ հանապազորդեան յաղօթս, որ է ընկեր և զօրացուցիչ յուսոյ (փիլիպ. դ. 6. ևն): Յատկութիւնք ճշմարիտ վստահութեան են, 1՝ զի լինի ընդհանուր, յա՟մ դիպուածս և 'ի պարագայս, յա՟մ ժամանակս՝ յա՟մ տեղիս, և ըստ ա՟մ հոգևոր և մարմնաւոր բարեաց, զորս տալ մեզ խոստացաւ ա՟ծ. 2՝ զի լինի բանաւոր և ուղիղ դատողութ՟բ հիմնեալ և 'ի հարկաւոր դէպս. որում հակառակի յուսալն անհարկաւոր և անպատշաճ իրաց (մատթ. դ. 5=10). 3՝ զի լինի անփոփոխ՝ ո՟չ ա՟ծ է անփոփոխելի, թէպէտ և բազում իցեն խափանարարք և թշնամիք, կամ յապաղեսցի օգնութիւն. 4՝ զի լինի համաձայն կամացն ա՟յ, այնպէս զի մի ակնկալցուք հակառակաց փրկութեան մերոյ:

§. 221. Յուսոյ և վստահութեան հակառակ են, 1՝ Ապաւինիլ միայն յինքն կամ յայլ մարդիկ՝ առանց օգնութեան ա՟յ (սղմս. ճժէ. 8. 9. ճխե. 3: երեմ. ժէ. 5=8. ևն). իսկ երկրորդաբար միայն ապաւինիլ 'ի մարդիկ իբրև 'ի գործիս ա՟յ՝ ոչ միայն չէ մեղք, այլ և հարկաւոր է մեզ: 2՝ Թերայուսութիւն, որ երկնչի յա՟յ՝ որպէս թէ թողլոց իցէ զմեզ 'ի հարկաւորութեան մերում. որ ծագէ 'ի տգիտանալոյ զա՟ծ և զզօրութիւն նո՟ր, 'ի չար խղճմտանաց, 'ի չար օրինակաց թերահաւատից. ևն: հարկ է խորշիլ 'ի թերայուսութենէ, զի անարժան է քրիստոնէի (մատթ. զ. 30: ժզ. 8. ևն). զի ապա է զ՟էր

և զհնազանդութի մեր առ ած, զայթակղեցուցանէ զտկարս, տանջէ զմեզ, ծանրացուցանէ զկարծեցեալ վնասն, և Ճանապարհ բանայ առ յուսահատութի: 3՝ Յուսահատութի, որ է բոլորովին հատանել զյոյս մեր յայ առ 'ի ընդունել 'ի նմանէ զհոգևոր և զմարմնաւոր բարիս. է սա ծայրագոյն նախատինք այ, չար օրինակ այլոց, աղբիւր ամ մոլութեց, և ամենայնաթշուառ վիճակ հոգւոյ: միջոցք խորշելոյ 'ի յուսահատութենէ են, 1՝ կալ զպայծառ Ճանաչումն զայ, զկատարելութե նր, և զզօրութի շնորհացն (մատթ. ժթ. 26. ևն). 2՝ զմտաւ ած զխոստմունս այ 'ի հարկաւոր կարիս մեր (սղմս. Ճբ: յովհ, ժզ. 23: եսայ. խա. 8—17. ևն). 3՝ յուշ ած զօրինակս այնոցիկ, որք գտին զօգնութի այ 'ի ծանր դիպուածս, մանաւանդ զկանանոյ և զաղջկանց, որք հզօրացան յուսովն այ. քան զալս. 4՝ կշռեալ զանհնարին թշուառութիս կորուսելոց 'ի յուսահատութե. որպի եղեն, կայէն, յուդայ, և այլ բազումք: Հակառակ յուսոյ է և Յանդգնութին, այն է չափազանցութի և առաւել քան զարժանն յուսալ յած, 'ի մարդիկ, կամ յանձն իւր. որ ընդդէմ է պատգամաց այ, արգելեալ 'ի սբ գրոց (առակ. գ. 5—8: յակոբ. դ. 13—16), նախատինք այ, հակառակ ուղիղ բանականութե մերոյ, և վնասակար առ ստացութի հոգևոր և մարմնաւոր բարեաց: բժշկի ախտս այս Ճշմարիտ Ճանաչմամբ այ, խոնարհութի, աշխարհային ձախողութի, և ընթերցմամբ հոգեՃառ մատենից:

### Սէրն՝ զԱստուած:

§. 222. **Հ. Զի՞նչ է սէրն աստուծոյ**

Գ. Սէրն այ՟ է զգայուն՟ հոգւոյ, որ յորդէ զա՟ծ, հրճուի նովաւ, զա՟մ ինչ զիւր յա՟ծ ուղղէ, զկամս նր՟ ցանկայ լնուլ, և յա՟մի նմա հաճոյանալ գուն գործէ (եկղ՟ օրինց՟. զ. 5: մատթ. իբ. 37: ա՟ տիմոթ. ա. 5: ա՟ յովհ. դ. 19): Այս քանական սէր եթէ գուցէ 'ի սրտի ուրուք՝ մատնէ զինքն հետագայ նշանակօքս. որք են, 1՝ վառեալ ցանկալի խորհելոյ, հրճուելոյ և խօսակցելոյ զա՟յ և զա՟ծայնոյ (սղմս. լա. 11. լը. 1. կբ. 7. ևն): 2՝ այգու աշխատանք 'ի գլուխ հանելոյ զա՟մ հաճոյս ա՟յ (յովհ. ժդ. 31. ա՟ յովհ. ի. 5. ե. 3. ևն): 3՝ պատրաստուի սրտի համբերելոյ ա՟մ խաչից և նեղութց՟ վա՟ սիրոյ նր՟ (գործոց. ե. 41. ի. 24: հռովմ. ը. 35. ևն): 4՝ ծայրագոյն խնդուի փառացն այ՟ և ջանք առաւել քան զառաւել փառաւորելոյ զնա (փիլիպ. ա. 3—6: կողոս. ա. 3=6): 5՝ տրտմութի վա՟ անարգանացն այ՟ 'ի մէնջ կամ յայլոց (եղից. լը. 19: եսայ. ա. 4. դանի. թ. 3=20. ևն): 6՝ ծայրագոյն բաղձանք միանալոյ ընդ այ՟ և վայելելոյ զնա դէմ յանդիման (սղմս. իզ. 8. խա. 2=8. ևն): Բայց յայսմ բանական ճշմարիտ սիրոյ գտանին և սէր բարեկամութն՟, հաճութն՟, գոհութն՟. սէր սկսեալ, զարգացեալ, սաստկացեալ, մաքուր, անմաքուր կմ՟ շահախնդիր, կատարեալ, անկատար, գործունեայ, անգործ, զգայական, ներգործական, ունակական, և այլ նմանք:

§. 223. Շարժառիթք սիրելոյ մեր զա՟ծ են, 1՝ զի այս է առաջին պատուիրան հրամայեալ յայ՟ և յուղիղ բանականութէ մերմէ (մատթ. իբ. 37. 38: մարկ. ժբ. 30): 2՝ զի այս սէր է էութի և հիմն՟ այլ ամ՟ առաքինութց՟ մերոց: 3՝ զի սէրն միաւորէ

զմեզ կատարելապէս ընդ ա՟յ աստ և 'ի հանդերձելումն (յովհ. ժդ. 23, 24: ա՟ յովհ. դ. 16. և՟ն): 4՝ զի տայ մեզ զանդորրութի և զխնդութի հոգւոյ ևս և 'ի ձախող դէպս: 5՝ սիրոյ խոստացեալ են մեծամեծ վարձք հոգւոյ և մարմնոյ (ա՟ կորնթ. բ՟. 9. և՟ն): 6՝ առ 'ի սիրել զա՟ծ սովորեն զմեզ անսահմանն գերազանցութիւնք և կատարելութիւնք ն՟ր (սղմս. ժէ. 2: յայտն. դ. 11. է. 12): 7՝ զի անճառ սէր ն՟ր ցուցեալ առ մեզ յարարչութե, 'ի պահպանութե, 'ի խնամարկութե, և 'ի փրկագործութե՝ 'ի նոյն շարժեն զմեզ (ա՟ յովհ. դ. 19: հռովմ. ե. 8. և՟ն): 8՝ անհամար հոգևոր և մարմնաւոր բարերարութիւնք և շնորհք, զորս հանապազօր ընդունիմք 'ի ձեռաց նէ ն՟ր (սղմս. ճբ՟. 1—15: ղկս. է. 47: ա՟ յովհ. դ. 10—19. և՟ն): 9՝ անսուտ խոստմունք անկըշռելի բարեաց և երջանկութե յարքայութե երկնից, զոր տալ խոստացաւ նա ա՟մ սիրողաց զինքն (ա՟ կորնթ. բ՟. 9): 10՝ բայց յա՟յ ո՞չ գոյ այլ ի՞նչ էակ, որ արժանի լինի սիրոյ մերում:

§. 224. Որակութիւնք կամ յատկութիւնք ա՟ծսիրութե են, 1՝ զի լինի մաքուր, այն է զի առաջին հիմն սիրոյ մերոյ լիցէ նոյն ինքն ա՟ծ: 2՝ զի լիցէ ճշմարիտ և անկեղծ՝ այն է՝ 'ի սրտէ բղխեալ, ևս և բանիւք և արդեամբք պսակեալ: 3՝ զի լիցէ իշխեցող և նախադասեալ քան զայլ ա՟մ մեզ հաճոյականս, ևս և քան զկեանս մեր (մատթ. Ժ. 37: ղկս. Ժդ. 26. և՟ն): 4՝ զի լինի պտղաբեր և գործունեայ, որ ցուցցէ զինքն աճեցուն պտղովք (յովհ. Ժդ. 23. 24: ա՟ յովհ. ե. 3. և՟ն): 5՝ զի լիցէ հաստարմատ հիմնացեալ, միշտ տևեսցէ և ոչ

մինչ իրօք գայթակղեսցի (Հռովմ. ը. 35–39. եւն):

Միջոցք առաւել քան զառաւել բորբոքելոյ զսէր մեր առ Ած̃ են, 1՝ ջա̃ն գործել պայծառագոյն ճանաչել զԱծ̃ և զկատարելութիւնս նր̃: 2՝ ստէպ յուշ ածել զայս գեղեցիկ վճիռ, Ած̃ սէր է (Ա̃ յովհ. դ. 16): 3՝ յա̃մ առաւօտու 'ի միտ ածել զպատուիրանն, Սիրեսցես զտէր Ած̃ քո յա̃մ սրտէ քումմէ եւն (Մատթ. իբ. 37): 4՝ ստէպ քննել և կշռել զօրինակս սիրողացն զԱծ̃. զոր օրինակ զՔրիստոս, զպետրոս, զպաւղոս, զաբրահամ, զդաւիթ, և զայլս: 5՝ հեռացի՛ր յա̃մ մեղաց, որք հակառակին սիրոյն Այ̃: 6՝ զմտաւ ածել զանթիւ բարիսն զխոստացեալս Ա̃ծասիրաց: 7՝ առթիւ Ա̃ծսիրութե̃ առն զայլ բարեգործութիւնս, ո̃պի են աղօթք, պահք, ողորմութիւնք, անձնուրացութիւնք, և այլ նմանք:

§. 225. Մոլութիւնք Ա̃ծսիրութե̃ դիմադրեալք՝ են 1՝ Ցրտութի̃ սրտի, որ հազիւ կամ ոչ երբէք խորհի և խօսի զԱ̃յ և զԱ̃ծայնոց, և զոր ոչ շարժեն և ոչ զգածեն Ա̃ծային և հոգևոր իրք. որոյ պատճառք են թանձր տգիտութի̃ զԱ̃ծայնոց, կոյր սէր աշխարհային իրաց, խղճմտանք մեղօք ծանրացեալք, և այլ մոլութիւնք: վերոգրեալ շարժառիթք սիրելոյ զԱ̃ծ շարժեն եւս զմեզ խորշել յայսմ ցրտութե̃ և յանձին բերել զեռանդն Ա̃ծսիրութե̃: 2՝ Աշխարհասիրութի̃, այն է անկարգ սէր երկրաւոր իրաց, յոր ժամ մարդ բոլորով սրտիւ յարի յայնս և անցանէ զպատուիրանօք Այ̃. իսկ բարեկարգ սէրն երկրաւորաց ոչ հակառակի Ա̃ծսիրութե̃: Առ 'ի ճանաչել, թէ սէր մեր առ երկրաւորս իցէ՞ արդեօք ան

կարգ, հարկ է քննել, թէ ո՞ր և ո՞պի իրք առաւելապէս յածին ՚ի խորհուրդս և ՚ի սիրտս մեր, ո՞պի միջոցիւք վարիմք, պի՞նչ ինչ իբր զվախճան գուն գործեմք ստանալ, և որո՞վք արգելս դնեմք զարգացման յառաքինութիս: Պարտիմք փախչել յայսպիսի անկարգ սիրոյ աշխարհի, զի հակառակի այն ա՟ծսիրութե՟, զոր հետ զհետէ խրատու ուսուցանէ, և զի ա՟ծային պատգամք արգելուն մեզ զաշխարհասիրութիւն (կարդա՛ ա՟ յովհ. բ՟. 15—17: փիլիպ. գ. 18: ա՟ կո՟րնթ. է. 29—31. և՟ն). 3՝ Ատելութի՟ առ ա՟ծ, որ ճանաչի երբ մարդս ունակաբար արհամարհէ զպատուիրանս ա՟յ և խրատու անփոյթ է սրբել զինքն ՚ի մեղաց, և ծնանի ՚ի չափազանց սիրոյ երկրաւորայս և ՚ի պիղծ խղճմտանաց (հռովմ. ը. 7: յակոբ. դ. 4. և՟ն): Թէ ո՞րչափ զարհուրելի և դիւական իցէ ախտս այս, և թէ վս՟ է՞ր փախչելի իցէ յայնմանէ, ցուցանեն ցայս վայր ասացեալքս զսիրոյն աստուծոյ:

§. 226. Սաստիկ աստիճան ա՟ծսիրութե՟ կոչի՝ Ջերմեռանդութի՟, որ է ամենապատրաստ յօժարութի՟ կամաց, ըստ որոյ մարդն աշխոյժ նկատողութ՟բ ա՟ծային կատարելութե՟ց և հիացմամբ անսահման մեծվայելչութե՟ նո՟ր՝ նուիրէ զինքն յամ՟ ազգս ծառայութե՟ն ա՟յ (կարդա՛, կողոս. գ. 23: բ՟ կորնթ. ժ. 6, 7: սաղմ. ծ՟գ. 8: կ՟թ. 5: հ՟զ. 4: ճ՟դ. 3. 4: ճ՟ժը. 10: ղկս. ժ. 27: ելից. լե՟. 21. 29: փիլիպ. դ. 4. և՟ն):

## Լ՛ր երախտագէտ առ Աստուած.

§. 227. Հ. Զի՞նչ է երախտագիտութիւնն.

Գ. 'Ի Ճշմարիտ ա̄ծսիրութէ ծնանի երախտագիտութի̄, որ է սէր առ բարերարողն մեր. երբ Ճանաչելով զընկալեալ բարիս և շնորհս՝ գուն գործեմք ըստ կարեաց փոխարինել գործով կամ սրտիւ. այս առաքինութի̄ պարտաւորէ զմեզ, 1՝ զի համապազ շնորհակալութի̄ մատուսցուք ա̄յ. վ̄ բիւրապատիկ բարերարութե̄ց նո̄ առ մեզ (եփես. Ե̄. 20 : ա̄ թեսաղ. Ե̄. 13. և ն̄). 2՝ զի հուշակեսցուք առաջի այլոց զբարութի ա̄յ (սաղմ. ՃԺԵ. 12. Ճխ̄ղ. 5=10). 3՝ զի 'ի բարին 'ի կիր արկցուք զպարգևս նո̄ (ա̄ կորնթ. ԺԵ. 10). 4՝ զի որչափ ինչ հոգևոր և մարմնաւոր բարութիս ունիմք զայն ա̄մ ծանիցուք ընկալեալ յա̄յ (ծննդ. ԼԲ̄. 10: ա̄ կորնթ. Դ. 7. ԺԵ. 10: ե̄կղ. կորնթ. Դ. 15). 5՝ զի առաջի ա̄յ խոստովան լիցուք զանարժանութիս մեր (ծննդ. ԼԲ̄. 10: յովբ. Է̄. 17: սաղմ. Ը. 5. Ճխ̄դ. 3: մատթ. Ը. 8: ա̄ կորնթ. ԺԵ. 9. 10). 6՝ զի ուրախ լիցուք ընդ պարգևս ա̄յ, մեզ և ընկերաց մերոց ընծայեալս, զի վ̄ այնց առաւել ևս սիրեսցուք զա̄ծ, զի 'ի ժամանակս ձախորդութե̄ց մի տժգոհասցուք զա̄յ (սաղմ. ԺԷ. 2: յովբ. Ա̄. 22. Բ̄. 10: ղկս. Ա̄. 46=55: Բ̄ կորնթ. ԺԲ̄. 9). 7՝ զի յայսմ երախտագիտութե̄ անընդհատ համապազորդեսցուք ցվախճան կենաց, և 'ի դիպել առթից ակներև ցուցցուք ամենեցուն (եփես. Ե̄. 20). 8՝ զի յայսմ առթէ շարժեսցուք առ եռանդագին պահպանութիւն պատուիրանացն Աստուծոյ:

Շարժառիթք, որք յորդորեն զմեզ առ 'ի լինել երախտագէտ առ ա̄ծ են, 1՝ ուղիղ դատողութի̄ զյատկութե̄ այսր առաքինութե̄, իբր զի Ճանաչել զե-

րախտին՝ է բնական ինչ տնկեալ յարարչէն 'ի սրտի ամենայն կենդանեաց և անասնոց, յորս առաւելուն շունք, և այլք ոմանք. 2՝ երախտագիտութին առաւել ևս բորբոքէ զսէր մեր առ ած. 3՝ զի հաճոյական և ընդունելի է յոյժ այ (ղկս. ժէ. 11—20) և մարդկան, զորս և բարի օրինակօք շինէ. 4՝ զի ընդունակ առնէ զմարդն նորանոր պարգևաց (մատթ. ժգ. 12). որպէս ընդհակառակն, ապերախտութին կապէ զձեռս բարերարին. 5՝ զի սրբ գիրք հրամայեն մեզ երախտագէտ լինել առ ած (սղմ. խթ. 14. ղթ. 3. 4. ճգ. 1—8. ճղ. 1. 2: եսայ. ա, 1—3: երեմ. լգ. 11. ղկս. ժէ. 16—19: ա կորնթ. ժե. 57: կողոս. գ. 15—17: եփես. ե. 20: ա թեսաղ. բ. 13. ե. 18: բ թեսաղ. ա. 3: ա տիմոթ. բ. 1. ևն):

§. 228. Միջոցք յանձին բերելոյ զայս առաքինութին են, 1՝ յուշ ած, զի որ ինչ և գտցի քեզ յայսմ աշխարհի, ամն յառաջ գայ 'ի ձեռանէ այ (հռովմ. ը. 28: եբրայ. ժբ. 5—12). 2՝ ծանիր քաջ՝ զի ամ՝ բարութիք և պարգևք, որ կան 'ի մեզ և յընկերս մեր ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, ձրի տուեալ են մեզ յայ առանց ամ՝ արժանաւորութե մերոյ (տիտոս. գ. 5: հռովմ. թ. 16. 17: ա յովհ. գ. 1). 3՝ ուշի ուշով կշռեա զմեծութին և զբազմութին պարգևացն այ. 4՝ ծանիր զանարժանութին քո և թէ որչափ ապերախտ գտար առ բարերարն քո՝ ծանր ծանր մեղօք չարիս հատուցանելով նմա փոխանակ երախտագիտութե. 5՝ խորհեսջիր միշտ զօրինակս երախտագէտ անձանց, ոպն եղեն Դաւիթ (սաղմ. ճգ. ճզ. և ճծ), Քն տէրն մեր

(մատթ. ժե. 36. իգ. 27: յովհ. ղ. 11. ժա. 41. ևն), մայրն քի (ղկս. ա. 47) և առաքեալքն նր (հռովմ. ա. 8: ա կորնթ. ա. 4. ժե. 57: բ կորնթ. լթ. 15. ևն): 6՝ աղօթեմ հանապազ. զի օրինաւոր աղօթքն սնուցանեն և զօրացուցանեն զերախտագիտութիւն. 7՝ կշռեմ զգործուն ապերախտութեն, որ է մոլութին հակառակ երախտագիտութեն. և ծնանի ՚ի ագահութէ, ՚ի հպարտութէ, յանկրօնութէ և ՚ի յաջողութէ բաղդին. յոյր սակս և ածաշունչ գիրք հրամայեն փախչել յայնմանէ (բ օրինաց. լբ. 6: ղկս. ժէ. 17: հռովմ. ա. 21. ևն):

### Երկիւղ յաստուծոյ.

§. 229. Հ. Զինչ է երկիւղն.

Պ. Երկիւղն է սրբազան ինչ յարգումն և մեծարանք առ այ, որ տայ մեզ զգուշանալ անձնապահ լինելոյ յայն ամ գործոցն, որք անհաճոյ են նմա, հակառակ սբ օրինաց նր (երկիւղ որդիական), և ընդ իւրեանս բերեն զպատիժ հոգւոր և մարմնաւոր (երկիւղ ծառայական):

Շարժառիթք՝ որ յորդորեն զածասէրն յերկնչիլ՝ են, 1՝ զի ած ինքն հրամայէ մեզ ունել զորդիական երկիւղ առ նա (մատթ. ղ. 10. եբր. ժբ. 28: ա պետրոս. ա. 17. ևն). 2՝ զի երկիւղ սկն է ճշմարիտ իմաստութե (յոբ. իը. 28: սղմս. ճժ. 10. ևն). 3՝ զի առանց երկիւղի կործանին ամ առաքինութիւնք և փոխին ՚ի մոլութի (հռովմ. գ. 18). 4՝ զի լնու նա զհոգի մեր ծայրապատար խնդութբ և առնէ եւս հաճոյ առնէ զմեզ այ (սղմս ը. 20. յուդիթ. ժզ. 19. ղկս. ա. 50. ևն). 5՝ ՚ի նոյն պարտաւորէ զմեզ ծայրագոյն գերագանցութե այ և ճանաչելոյ մեր զնմանէ (երեմ. ժ. 6:

Է: յայտն. ԺԲ. Դ). 6՝ սրբութի օրհնացն այ, երախ
տագիտութին մեր, եւ ճշմարիտ խոնարհութի շարժեն զմեզ երկնչել յայ (սաղմ. ԾԲ: ՃԺ. 10. առակ. Թ. 10). 7՝ մեծամեծ փորձառութիւնք եւ յաւիտենական երանութին երկիւղածացն այ (սաղմ. ԼԴ. 8—10. Ճիէ. 1. 2: յայտն. Ժա. 18: գործ. Ժ. 35). 8՝ յետին թշուառութիւնն նոց, որք ոչ երկնչին յայ, որով թաւալին յամ մեղս եւ յաւիտենական դատապարտութե արժանանան (երեմ. Բ. 19. 20: դ. թագ. ԺԷ. 25: մատ. Ժ. 28. եւն):

Միջոցք առ ստանալոյ զերկիւղն այ են՝ 1՝ քաջ ՚ի միտ առնուլ զվերոգրեալ շարժառիթս. 2՝ լաւ ճանաչել զկախումն եւ զվերաբերութի մեր առ այծ. 3՝ զմտաւ ածել զանսպառ բարիսն՝ ծնեալս յերկիւղէ տեառն. 4՝ յուշ ածել զամենուրեք ներկայութի այ. 5՝ հեռանալ յանկրօն եւ ՚ի լիրբ ընկերաց. 6՝ սաէպ աղօթել: Զինչութի մոլութե երկիւղի տան հակառակելոյ, որ կոչի Աներկիւղութի, եւ շարժառիթք անձնապահ լինելոյ մեր յայնմանէ, իմացեալ լինին ՚ի վերոգրելոցդ:

Հնազանդութի Աստուծոյ.

## §. 230. Հ. Զ՞ինչ է հնազանդութիւնն.

Պ. Հնազանդութին է ենթարկել զկամս մեր ՚ի ներքոյ այծային կամաց, այն է՝ ջանք կատարելոյ զամ հրամայեալսն այ, եւ խորշելոյ յայնմ ամէ որ արգելեալ է ՚ի նմանէ: Առ ՚ի լնուլ զայս պարտաւորութի հարկ է ամ քրիստոնէից, 1՝ զի գիտասցեն զամ պատուիրանս այ զխոստմունս եւ

զսպառնալիս նորա, զօրինակս քնի և զբոյն այ (հռովմ. ե. 19: փիլիպ. բ. 8. ևն). 2՝ զի զուն գործեսցեն քաղցրախորժ ունել ինքեանց զօրէնս ածայինս (սաղմ. ա. 2. ճժը. 69: մատթ. ժա. 29. 30). 3՝ զի յամի միտ դիցեն անձանց իւրեանց, ութիւ, պարզապայից, և հանգամանաց գործոց իւրեանց զորս և համաձայն օրինաց այ ՚ի գլուխ հանցեն (եփես. ե. 15). 4՝ զի զայս հնազանդութի մատուսցեն այ կատարելապէս ըստ սաստկութ, ըստ տարածութ և ըստ տևողութ նորին (յակոբ. բ. 10. 11: գղտ. գ. 10: բ պետրոս. բ. 20. 21). 5՝ զի հնազանդեսցին այ թէպէտ և ոչ ինչ օգուտ կամ վարձ յուսասցի, այլ մանաւանդ վասնզի և փառք երևեսցին, վն զի հնազանդել պարտ է այ առաւել քն մարդոյ:

Յատկութիւնք այսր առաքինութ են, 1՝ զի լիցի դիւրապատրաստ առանց ծուլութ և խուսափմանց. 2՝ զի լիցի մաքուր, այն է վն սիրոյն այ, և վն հրամանաց նորին. 3՝ զի իցէ ընդհանուր և տարածեալ առ ամ պատուիրանս այ. 4՝ զի լիցի հաստատ և անփոփոխ կամ մշտնջենաւոր, ըստ որում չի՛ք վայրկեան, յորում մարթ իցէ չհնազանդել մեզ Աստուծոյ:

§. 231. Շարժառիթք հնազանդելոյ այ են. 1՝ լրումն ածային կամաց՝, ըստ որում նա պատուիրէ և պահանջէ ՚ի մէնջ զայն (ելից ժե. 26. ծթ. 5: բ օրին. լ. 2—20: եսայ. ա. 11—20: երեմ. է. 23). 2՝ զի սա է միմիայն և անսխալ նշան սիրելոյ մեր զած (յովհ. ժդ. 21: ա. յովհ. բ. 3. 4: ե. 3. ևն). 3՝ զի ած է ծայրագոյն և բացարձակ տէր, ստեղծող, պահապան և դատաւոր մեր, ըստ որոյ և ունի իրաւունս պահանջելոյ ՚ի մէնջ զհնազանդութի. 4՝ զի սովիմբ արժանի լինիմք մեք առաւե-

Լոյսն շնորհաց այ, թէ աստ և թէ զկնի մահ-ուան (մատթ. ԺԹ. 17. ևն)․ տես ևս 'ի վերոյ զշարժառիթս երկիւղին այ, յորմէ ծնանի այս հնազանդութիւն ։

Միջոցք ստանալոյ զայս առաքինութիւն են, 1՝ Ճա-նաչել, թէ քրիստոնեայք անտնօրինելի կապանօք պարտաւորեալ են պահել զօրէնս այ. 2՝ սաէպ յուշ ածել զպարտաւորութիւնս այս, և զբարիս յայն մանէ ծագեալս (հռոմ. Բ. 13 ։ յակոբ. Ա. 22). 3՝ Ճանաչել զտկարութիւն մեր և յուսալից հաւատով կոչել զած յօգնութիւն. 4՝ սաէպ յուշ ածել զհնա-զանդութիւնս սբց, զորօրինակ, զքսի (եբրայ. Ե. 5—10. փիլիպ. Բ. 8. ևն), զառաքելոց (գործ. Ե. 29. ևն) և զայլ սբց. 5՝ յաճախակի նորոգել զյառա-ջադրութիւն հնազանդելոյ այ (սաղմ. ՃԺԸ). 6՝ յաղ-թել սիրոյ մարմնաւոր ցանկութեց, և ճանաչել ըղ-քաղցրութիւն և զթեթևութիւն պատուիրանաց ան (Ա յովհ. Ե. 3. ևն). 7՝ աղօթիւք սաէպ հայցել յայ զշնորհս հնազանդութեան ։

§. 232. Այսմ հակադրի Անհնազանդութիւն առ ած և առ անձինս. զորոյ զդարշութիւն, զծանրութիւն, զպատիժսն, զվնաս, և զշարժառիթսն հեռանա-լոյ յայնմանէ՝ կարես իմանալ ընթեռնլով զյե-տադայ բանս և զօրինակս սբ գրոց (ծննդ. Գ. 16. 17 ։ ԺԹ. 26 ։ ղևտ. Ժ. 1. 2 ։ ԻԴ. 14—23 ։ Թը-ւոց. ԺԴ. 27. 41 ։ ԺԶ. 1—50 ։ Բ օրինաց. Ը. 20 ։ ԺԱ. 16—28 ։ ԻԷ. 12 ։ ԻԸ. 15. 16 ։ Ա թագ. ԺԵ 23. 24 ։ Գ թագ. ԺԳ. 21—26 ։ եսայ. ԻԴ. 5. 6 ։ երեմ. ԺԱ. 3—8 ։ ԻԷ. 27 ։ գործ. Է. 39 ։ հռոմ. Բ. 8. Ե. 19 ։ Բ կորնթ. Ժ. 6 ։ Բ թեսղ. Ա. 8 ։ տիտոս. Ա. 10. և այլուր) ։

## §. 233. Հ. Զի՞նչ է շատացումն .

Պ. Շատանալ կամ հանգչել յԱծ՝ է ունել զհոգի իւր միշտ հանդարտ և բաւական . հաւաստալով սոյգ, թէ ամ՟ ինչ՝ որ պատահի մեզ յայսմ աշխարհի՝ յառաջ գայ 'ի հայրախնամ ձեռայն այ, յորմէ միշտ բարին և կատարելագոյնն ընծայի մեզ և լնանի կամք նր 'ի մեզ . վնկ ամ՟ քրիստոնեայ պարտի սոյգ հաւատալ, 1՝ թէ և ոչ մի ինչ պատահի ինքեան առանց կամելոյն կամ թոյլատուութեն այ (մատթ. Ժ. 29. 30). 2՝ թէ յանբաւ իմաստուէ նր միշտ տուեալ լինի մեզ այն ինչ, որ յարմար և օգտակար է վիճակի մերում (սաղմ. իբ. 2 : իգ. 8—10: ճզ. 13). 3՝ ապա շատացեալ և գոհ լիցի վիճակաւ իւրով և լաւագունին մի ցանկասցի, բայց եթէ թէուն կամելոյն այ (մատթ. իզ. 39). 4՝ 'ի դիպել ինչ ձախորդուեց մի տժգոհասցի զայ կամ զմարդկանէ, այլ զբովանդակ յոյս իւր և զելս գործոյն յանձնեսցէ յԱստուած (եսայ. լէ. 16—20. են):

Շարժառիթք հանգչելոյ յԱծ են, 1՝ մտածել թէ ած է բացարձակ տէր ամ՟ արարածոց, որ ըզպարգևս իւր ըստ հաճոյից իւրոց բաժանէ ոմ՟ և որչափ կամի (հռովմ. ժա. 36 : մատթ. ի. 15. են). 2՝ գիտել ստուգիւ, թէ մարդս ինքնին միայնակ ոչ ինչ մարթի արդիւնաւորել . 3՝ հաւատալ՝ թէ իմաստունն այ լաւագոյն քան ըզմեզ ճանաչէ զկարիս մեր, և բարուէ նր ոչ գըլանայ զհարկաւորսն մեզ . 4՝ յուշ ածել զօրինակս սրբց, որ գոհ և շատացեալ էին Աստուծով (սաղմ.

Ժէ. 2. 3: յովբ. ա. 21: մատթ. իզ. 39). 5՝ ապաւել կատարածի որեւիցէ դիպուածոյ, զի յոլովակի մեզ վնասակար եւ դառն թուեցեալքն յանդէն յօգտակար լինի եւ 'ի քաղցր:

§. 234. Միջոցք ստանալոյ զառաքինութիս զայս են, 1՝ ճանաչել զամ ինչ գալ յայ յօգուտ մեր (իմաստ. Ժդ. 3). 2՝ ճնշել եւ կրճատել զաւելորդ ցանկութիս մեր (ա տիմոթ. զ. 6—11). 3՝ զատանել զճշմարիտ հարկաւորութիս 'ի կեղծ եւ յաւելորդ բարեաց. 4՝ չընծայել անձին զյարգ կմ զարժանաւորութի առաւել քան զչափն (Ծննդ. լբ. 10). 5՝ կշռել, թէ յայսմ աշխարհի անհնար է ազատել յամ չարեաց եւ 'ի փորձութեց. 6՝ յուշ ածել զանպատմելի պսակս եւ զվարձս պատրաստեալս մեզ յարքայութե այ, յորում իւրաքանչիւր ումեք հատուցեալ լիցի բաւականաբար չափ վարձուց:

Այսմ առաքինութե հակառակին 1՝ Անբաւականութի հոգւոյ, որ տեսչութե եւ նախախնամութեն այ ոչ շատանայ. ծնանի 'ի տգիտութէ, 'ի նախանձուէ, յանկարգ անձնասիրութէ, յերկրասիրութէ, յածայնոց տգիտութէ եւ 'ի նման պատճառաց. 2՝ Անյագութի, որ ոչ ինչ բարեօք աշխարհիս շատանայ, այլ միշտ զառաւելագոյնն խնդրէ. 3՝ Տժգոհութի եւ բամբասանք ընդդէմ այ, որ արդարութե եւ բարութե նր մեղադիր լինի. 4՝ չար նախանձ, որ երջանկութե այլոց ոչ կարէ տանել. 5՝ յանդուգն դատողութի զեղանակէ կառավարութեն այ. 6՝ անհամբերութի եւ յուսահատութի: յայս ամ մոլութեց պարտիմք հեռանալ վա վերոգրեալ շարժառթից: Արժան է գիտել աստանօր, թէ այս առա-

փինուլ ոչ արգելու մեզ՝ արտմիլ. ուրեք երբեք ընդ ձախողակ դիպուածս, աղօթել առ ած, խնդրել 'ի նմանէ զօգնութին 'ի խաչից, հոգ տանել հարկաւորաց, 'ի գործ ածել զմարդկային միջոցս (ա. տիմ. ե. 8. ևն) և զայլն նմանս :

Նմա՛ն չէր Աստուածոյ բնա հարէ :

## §. 235. Հ. Զի՞նչ է նմանութիւնն ընդ աստուծոյ.

Պ. Աստնմանութին է ջանք և եռանդն զամ գործողութիւնս իւր յանկելոյ գաղափարի ներգործութեան այ և բարոյական կատարելութեան նր ըստ մարթելոյ :

Արժանիք սորին են, 1՝ զի մարդս ստեղծեալ է ըստ պատկերի և ըստ նմանութեան այ, զոր կորուսեալ մեզ պարտի վերստին ստանալ (ծնն. ա. 26. 27 : եփես. դ. 23. 24. ևն). 2՝ զի քրիստոնեայն գոլով որդի այ պարտական է զնմանութի հօր իւր յանձին իւրում կերպարանել (եփես. ե. 1 : ա կորնթ. ժա. 1 : ա թեսաղ. ա. 6 : մատթ. ե. 48. ևն). 3՝ զի քրիստոնեայք են աշակերտք Քի, և ըստ այսմ հարկ է նց նմանել վարդապետի իւրեանց (մատթ. ժ. 38 : ժզ. 24. ևն). 4՝ 'ի նոյն շարժէ զմեզ օրինակն ծայրագոյն կատարելութեան այ, և գերազանցութի նմանակցութեն ընդ նմա. 5՝ ճշմարիտ ածսիրութին հարկաւ տայ մեզ նմանել նմա. վն զի յաննմանս չիք սէր, և նմանն միայն զնմանն սիրէ. 6՝ անսահման ապագայ բարիք խոստացեալք այնոցիկ, որք կերպարանակից եղեն որդւոյն այ (հռոմ. ը. 5 :

ը • 17 • և̃ն ) • 7՝ զի հրամանն ա̃յ պարտաւորէ զմեզ նմանել նմա (տե՛ս ղևտ • ժա̃ • 44 • 45 ։ մատթ • ե̃ • 43—48 ։ ղկս • զ • 35 • 36։ եփես • դ • 24 • ե̃ • 1 ։ կողոս • գ • 10 ։ ա̃ պետրոս • ա̃ • 15 • 16։ հռովմ • ը • 29։ փիլիպ • բ̃ • 5։ ա̃ յովհ • բ̃ • 6 ) • 8՝ զի ուղիղ բանականութիւն զնոյն թելադրէ մեզ , այն է , առնուլ 'ի գաղափար նմանութե զամենակատար նախատիպն՝ որ է միայն ա̃ծ • 9՝ պատիժք ոչ նմանելոյ ա̃յ , որք թողեալ զաղբիւրն սրբութե առնուն ինքեանց յօրինակ զաշխարհ և զսատանայ (յովհ • ը • 44։ հռովմ • ժբ̃ • 2 • և̃ն ) ։

Միջոցք ստանալոյ զայս առաքինութի են, 1՝ զուն գործել ճանաչել 'ի կատարելութեց ա̃յ և 'ի սբ̃ գրոց , թէ զիա̃րդ դատէ՝ կամի և գործէ ա̃ծ • 2՝ անջինջ դրոշմել 'ի մտի քում, թէ ա̃մ գործք ա̃յ են կատարելագոյն գաղափարք և օրինակք ներգործութեց մերոց • 3՝ ծանիր զգուշութ̃ թէ որո̃ց կատարելութեց և որո̃վ չափով պարտիս և զօրես նմանել • զի բազում են գործք ա̃յ՝ որոց չէ̃ մեզ հընար նմանել • 4՝ յետ ճանաչելոյդ զնմանելի օրինակսն՝ աշխատ լեր ըստ կարեացդ յանձին բերել զկերպարանս նոցին ։

Գործք՝ զԱստուած •

## §• 236• Հ • Զի՞նչ է գովել զԱստուած •

Պ • Գովաբանել զա̃ծ է ջերմեռանդն սրտիւ զանուն , զկատարելութիւնս և զգործս նր̃ բանիւ և լեզուաւ քարոզել այլոց՝ առանձին կամ հրապարակաւ • որոյ շարժառիթք են, 1՝ զի գովութիւն անբաժան կից է ընդ սիրոյ • զի զոր սիրէ ոք ճշմարտիւ , գովէ և քարոզէ զնա և զկատարելութիւնս նր̃ • 2՝ զի զայդ հրամայէ մեզ ա̃ծաշունչ գիրն 'ի բա-

դուռն տեղիս (տես. կողոս. Գ. 16: եբր. ԺԳ. 15: Ա պետրոս. Բ. 9: հռովմ. ԺԵ. 6: եփես. Ե. 19. 20. և այլուր յաճախ, մանաւանդ 'ի սաղմոսս Դաւթի). 3՝ զի այսու արտաքին գովութ̄ տածի և զարգանայ ներքին ջերմեռանդութի̄ մեր. 4՝ զի սովին տուեալ լինի շինութի̄ և բարի օրինակ ամ̄ ընկերաց մերոց, որով առաքինիք առաւել խարսխանան 'ի բարիս, իսկ մեղաւորք յոլովակի շարժին թողուլ զչար ճանապարհ իւրեանց. 5՝ 'ի սոյն յորդորեն զմեզ օրինակք հրեշտակաց և սրբոց այ̄, որք միշտ գովեցին և քարոզեցին զանուն և զփառս այ̄ (զորոց տես, եսայ. Զ. 3: դանիէլի. Է. 10: ելից. ԺԵ. 1—8: դատաւ. Ե. 2—8: ղկս. Ա. 46—80. ևս և բազումք 'ի սաղմոսաց Դաւթի):

Միջոցք ստանալոյ զայս առաքինութի̄ են, 1՝ ըզկատարելութիւն և զգործս այ̄ 'ի կարգի բնութե̄՝ շնորհաց՝ և փառաց՝ ծանիր ճշդութ̄բ, զի ըստ չափու ճանաչմանն շարժի մարդս 'ի գործել. 2՝ կալ 'ի սրտի քում զարժանաւոր մեծարանս զայ̄ և զած̄այնոց, զի 'ի յաւելուածոյ սրտի խօսի բերանն. 3՝ 'ի դիպել պատշաճաւոր առթից՝ մի զանց առնասցես քարոզել զփառս այ̄. 4՝ մտադրութ̄բ լուր ամենեցուն, որք գովաբանեն զած̄ առանձին կամ հրապարակաւ. 5՝ գովեա զած̄ ոչ լեզուաւ միայն այլ առաւել գործելով և կրելով (մատթ. Ե. 16: սաղմ. ԽԹ. 16). 6՝ զայդ ամ̄ այնպէս յանկ ածիցես, զի 'ի նոսին ոչ զքո, այլ զփառս այ̄ միայն խնդրեսցես:

§. 237. Այժմ առաքինութե̄ ուղղակի և անուղղակի հակառակին մոլութիք ոչ սակաւք. որոց զըլխաւորք են, 1՝ արհամարհութի̄ և հայհոյութի̄ այ̄, այ̄ն է, խորհել և խօսել նախատանօք զայ̄ կամ զած̄

ային իրաց ։ 2՝ յանպատշաճս յիշումն ա՟ծային անուան, որ յաճախ է 'ի բերանս ռամկաց ․ 3՝ ծաղրածութիւն որ և իցէ կրօնի, մանաւանդ քրիստոնէականի ․ 4՝ սուտ երդումն և երդմնազանցութիւն ․ 5՝ Սեղանակապտութիւն, այն է պղծել զսրբազան անձինս, կամ զիրս, կամ զտեղիս ։ 6՝ Սիմոնականութիւն, որ է գնումն և յօժարակամ վաճառել կամ գնել զիր ինչ եկեղեցական և հոգևոր ։ (գործ․ ը․ 18) ․ 7՝ դիւթութիւն կամ կախարդութիւն, որ է միջնորդութիւն սատանայի և անարգելով զա՟ծ գործել կամ ստանալ ինչ գեր քան զբնականն (ը օրին․ ժը․ 9—13 ։ ելից․ Է․ 11 ։ դանի․ ը․ 2 ։ գործ․ ը․ 9․ 10)․ պ՟նք են տեսակք սր, յորս յայտնի կամ ծածուկ կոչումն և գործակցութիւն դիւաց ասի լինել ․ և ամենեքին են ծանր մեղք ընդդէմ ա՟յ և գրեթէ միշտ դժուարաբուժելի ։

Ա՟ռ 'ի յետս կալ մեղ յայս ամ՟ տեսակաց մեղաց՝ շարժեն, 1՝ խորին արգելումն ա՟յ, որ սպառնայ այսպիսեաց պատիժս ծանունս (ելից․ ի․ 7․ ղևտ․ իդ․ 16․ և՟ն)․ 2՝ ծայրագոյն սրբութիւն անուանըն ա՟յ, զոր հրեշտակք անդամ մեծարանօք փառաւորեն (եսայ․ զ․ 3․ և՟ն)․ 3՝ բացայայտ հրաժարումն յա՟յ՝ յարարչէ և 'ի փրկչէ իւրմէ (մատթ․ ժը․ 30)․ 4՝ դաշն և խոստումն մկրտութեան, յորում յա՟մ մասնակցութենէ սատանայի հրաժարեցաք և զմեզ բոլորովին պաշտաման ա՟յ նուիրեցաք (մատթ․ իը․ 19)․ 5՝ անձուկ կապակցութիւն սատանայի, որ է հայր ստութեան (մատթ․ իե․ 41)․ 6՝ օրինակ անբան անասնոց և կենդանեաց, որք զանուն ա՟յ փառաւորեն (սաղմ․ ծը․ 2․ և՟ն)։

Դառնալէ՛ և խոստովա՛ն չէր զԱստուած ․

§․ 238․ Հ․ Զ՞ինչ է խոստովանել զԱստուած ․

Գ. Խոստովանութի կամ դաւանութի կրօնի՝ խմա-
ցեալ լինի բանիւ կամ արտաքին ինչ նշանօք բա-
ցայայտել առաջի այլոց զհաւատս իւր կամ զկր-
օնն քրի. ընդ որում թէ կցորդեալ լիցի և կո-
րուստ կենաց վն կրօնի, յայնժամ կոչի Վկայութի,
կամ յունական բառիւ՝ Մարտիւրոսութի:

Շարժառիթք, որք պարտաւորեն զմեզ առ 'ի դաւանել զած հրապարակաւ՝ են 1՝ զի պարտաւոր եմք գովել և փառաւորել զած, որ 'ի վերոյ ցուցաւ. և այնր առաքինութն մասն է դաւանելն զնա մանաւանդ 'ի ժամու հարկաւորութն (տես. մատթ. Ժ. 32. 33: հռովմ. Ժ. 9. 10: եբրայ. Ժ. 24. ևն). 2՝ զայն պահանջէ արդար համարումն և զին ճշմարտութեն այ: 3՝ փրկութի և շինութի ընկերին 'ի սոյն զմեզ յորդորէ: 4՝ 'ի ճշմարիտ սիրոյն այ ստիպիմք ևս դաւանել զնա. զի որ սիրէ ոք՝ ոչ կարէ լռութբ ծածկել: 5՝ զի ածաշունչ պատգամք յայտնապս զայն մեզ հրամայեն (ընթերցիր. մատթ. Ժ. 32: ղկս. Թ. 26. Ժբ. 8. 9: հռովմ. Ժ. 10: ա պետր. Գ. 15. Դ. 13=16: բ տիմոթ. Բ. 10—14: եբրայ. Ժ. 26. ևն). 6՝ զի թէ վն այսր խոստովանութն կորուսանեմք ինչ, փոխանակ այնր առնումք յայ զանչափ մեծագոյնս և լաւագոյնս (մատթ. Ժ. 36. 39: ղկս. Ժը. 28—30: բ տիմոթ. Բ. 11=13. Դ. 7. 8):

§. 239. Պարտաւորութիւք հրապարակաւ և վըտանգաց յանձնառութբ դաւանելոյ զած և զկրօնն նր ստիպեն զմեզ առաւելապէս 'ի յետագայ դիպուածըս. 1՝ յորժամ զօրութբ պաշտաման մերոյ ոչ կարեմք լռել կամ զանց առնել (գործ. Դ. 19. 20). 2՝ երբ հրապարակական դատաւորն կամ իշխանն հարցանէ և հրամայէ յայտնել նմա զհաւատս և

զկրօն մեր (յովհ. Թ. 18—28. Ժը. 33—37). 3՝ յորժամ ընկերք մեր ցանկան ուսանել 'ի մէնջ (ա պետր. գ. 15). 4՝ երբ լռելն մեր կարծիս տայ այլոց ուրանալոյ զճշմարիտ հաւատս, կամ դաւանելոյ զկրօն ինչ սուտ (յովհ. Է. 50: ղկս. ԻԳ. 50. 51: ա կորնթ. Ժ. 20—29): Յայսմանէ ծնանի և պարտաւորութին փախչելոյ 'ի հաղորդակցութէ հերետիկոսաց, սուտ վարդապետաց, և յայնցանէ՝ զորս ոք ճշմարտիւ համարի հերձեալս և մոլորեալս (տես. եբր. զ. 4—6. մատթ. Ժզ. 6: Է. 15: տիտոս. գ. 10: յայտ. Բ. 14: սղմ. ա. 1. ևն):

Մոլութիք խոստովանութե հաւատոյ հակադրեալք, են 1՝ ուրանալ, կամ արտաքուստ միայն, և կամ ներքուստ և արտաքուստ զճշմարիտ կրօնն, կամ միանալ ընդ սուտ եկեղեցւոյ (եբր. զ. 4—6). 2՝ հայհոյել և հալածել զճշմարիտ կրօնն և զդաւանօղս նորին, որ է մեղք ընդդէմ հոգւոյն սբյ (մատթ. ԺԲ. 24—32). 3՝ Անտարբերութի, է բառնալ զզանազանութի ճշմարիտ և սուտ կրօնի, նոյն համարելով զոր և իցէ աղանդ քրիստոնէական կրօնի և եկեղեցւոյ. 4՝ մարդահաճութբ կեղծաւորիլ և յանձին բերել զնշանս սուտ կրօնի. 5՝ յանդուգն խոստովանութի, այն է, առանց հարկաւորութե կամ փառասիրութբ և թեթևամտութբ մատնել զինքն 'ի վտանգ դաւանելոյ զճշմարիտ կրօնն յայնպիսի տեղիս և 'ի ժամանակս, յորս ոչ հրամայէ սէրն այ և ընկերին (մատթ. Է. 21. 22. ևն):

### Երկիր պագ Աստուծոյ.

§. 240. Հ. Զի՞նչ է երկրպագութիւնն.

Պ. Երկրպագութին է ծայրագոյն աստիճան մեծարանաց առ ա՟ծ, և ենթարկումն կամ նուաստումն մերոյ առ նա. զոր ցուցանեմք կամ ՚ի ներքուստ միայն, ո՟ր է հոգւով և սրտիւ. կամ ներքուստ և արտաքուստ, ձայնիւ՝ զերկիր համբուրելով և այլովք ինչ նշանօք մատուցանելով ա՟յ յարգանս և մեծարանս:

Շարժառիթք, որք հրամայեն մեզ երկրպագանել ա՟յ, են 1՝ անսահման մեծվայելչութի ն՟ր. 2՝ կախումն մեր ընդ մանէ. 3՝ ներկայութի ն՟ր ամեն ուրեք. 4՝ օրինակ հրեշտակաց և ս՟րց (եսայ. զ. 3: եբրայ. ա՟. 6. ևն). 5՝ անսահման բարերարութիւնք և պարգևք ն՟ր առ մեզ. 6՝ խոստմունք և վարձք պատրաստեալք մեծարողաց զա՟ծ. 7՝ հրաման ա՟ծային, որ ՚ի ս՟բ գիրս յոլով ուրեք պատուիրէ մեզ (տես. սաղմ. իա՟. 28: եսայ. կզ. 23: մատթ. դ. 10: յովհ. դ. 24: եբրայ. ա՟. 6. յայտ. իբ. 8. 9. ևն). 8՝ զի զայդ հրամայէ ուղիղ բանականութին, ճշմարիտ առաքինութին, և իսկութիւնն քրիստոնէութեան:

Սմա հակառակին նախ՝ արտաքին լոկ երկրպագութի, առանց ներքին մեծարանաց (յովհ. դ. 24. ևն), և երկ՟՝ երկրպագանել այլոց արարածոց (ելից. ի. 5. իգ. 24: մատթ. դ. 10. ևն):

Աղօթեա՛ առ Աստուած և կոչեա՛ զնա.

## §. 241. Հ. Զի՞նչ է աղօթքն.

Պ. Աղօթել առ Ա՟ծ և կոչել զնա յիւր օգնութի՝ է ճանաչել զամենակարողութի ն՟ր, զկարօտութի և զպակասութի մեր, և խնդրել ՚ի նմանէ զբարիս հարկաւորս հոգւոյ և մարմնոյ մերոյ:

Աղօթել հնար է կամ մտօք միայն (աղօթք մտա

ւոր) կամ մտօք և ձայնիւ (աղօթք ձայնաւոր) խնդրելով զբարիս կամ վս՟ իւր, կամ վս՟ այլոց (բարեխօսութիւն):

Յատկութիւնք կամ որպիսութիւնք աղօթից են, 1՝ զի լինիցի սր՟, այն է՝ զի միայն զհոգևորս և զա՟ծային յերկնից խնդրեսցուք, և մի զանարժան կամ զաշխարհային իրս, զորս միայն թէուր պարտ է մեզ խնդրել (ա՟. յովհ. ե. 14). 2՝ զի լիցի խոնարհ ճանաչելով զտկարութիւն և զանարժանութիւն մեր, հեռի յա՟մ մեծամտութենէ (սաղմ. ճա՟. 18: ղկս. ժը. 9—14). 3՝ զի լիցի ջերմեռանդութբ՟ և ուշադրութբ՟, առանց ցնդման խորհրդոց մտաց յիրս անպատշաճս. 4՝ զի լիցի անկեղծ՝ ՚ի հոգւոյ յառաջացեալ և ընդ յուսոյ կապակցեալ (մատթ. է. 7—11: ժե. 7: մարկ. ժա՟. 24: ղկս. ժա՟. 5—13. ժը. 1—4: յովհ. դ. 24: յակ. ա՟. 5—8). 5՝ զի գործակից լիցուք ա՟յ, և զի յանուն քի՟ խնդրեսցուք (մատթ. ժը. 19. 20: յովհ. ժդ. 13: եփես. ե. 19: կողոս. գ. 16):

Արժանիք, որք պարտաւորեն զմեզ աղօթել՝ են, 1՝ կատարելութիւնք ա՟յ, կարողութիւն, բարութիւն, իմաստութիւն, տէրութիւն և այլք, որոց կարօտիմք ՚ի կեանս մեր. 2՝ անթիւ և հանապազօրեայ հարկաւորութիւնք և պակասութիւնք մեր, զորս ոչ այլ ուստեք՝ բայց եթէ յա՟յ միայն կարեմք ստանալ. 3՝ հրաման ա՟ծային միշտ աղօթելոյ, և խոստումն ն՟ր առ ՚ի լսել մեզ (տես. սաղմ. խթ. 15: եսայ. կե. 24: մատթ. զ. 8: ղկս. ժը. 1: յովհ. ժզ. 23. 24: փիլիպ. դ. 6: ա՟ թեսաղ. ե. 17: ա՟ տիմոթ. բ. 1). 4՝ դիւրութի՟ խղճի մտաց, ես և զուարճութի՟ և մխիթարութի՟ հոգւոյ, ծագեալք յարժանաւոր աղօթից (սաղմ. ծը. 17—19. ճը. 4

գործոց . դ . 31 . ևն) . 5՝ օրինակն քնի՟ և այլոց սրբ՟ց (մատթ . Ժդ . 32 ։ մարկ . գ . 46 ։ ղկս . զ . 12 . թ . 24) . 6՝ զի աղօթքն է զօրաւոր միջոց ընդունելոյ յա՟յ զա՟մ շնորհս և զառաքինութիւս, այլ և գործի յաղթելոյ փորձութեանց և նեղութեանց աշխարհիս։

§. 242. Միջոցք արժանաւոր աղօթելոյ են, 1՝ զմտաւ ած զվերոյիշեալ շարժառիթս . 2՝ ծանիր զկարիս և զկարօտութիւս քո . 3՝ յուշ ած զպտուղս աղօթից, զօրինակս քնի՟ և զսրբ՟ց . 4՝ լեր հաւատի թէ լսել ունի ա՟ծ աղօթից քոց, և թէ քաղցըր և ախորժ են նմա . 5՝ զի խոստացաւ ա՟ծ լսել քեզ և ոչ ստէ զխոստմունս իւր . 6՝ հեռացիր յըն կերուէ չարաց . 7՝ մաքուր կալ զխղճմտանս քո 'ի մեղաց . 8՝ յուշ ած, զի քն՟ և հոգին սր՟ բարեխօս են վա՟ քո և ուսուցանեն քեզ աղօթել (հռովմ . ը . 26—34 ։ ա՟ յովհ . բ . 1—4 . ևն) ։

Օգուտ կամ շահ, զոր քաղեմք յաղօթից՝ բազում են և պէսպէս, որոց գլխաւորք են, 1՝ այն՝ զի յաղօթս ստէպ յիշելով զա՟ծ՝ հաստատին հաւատք մեր առ նա, որով և այլ ա՟մ առաքինութիւք առնուն ինքեանց ոյժ և զօրութի։ 2՝ զի աղօթք յուշ ածեն մեզ զկատարելութիւս ա՟յ, որով շարժիմք առաւել ևս ջերմեռանդն լինել առ նա, մանաւանդ յիշելով զնախախնամութին, զբարութին, զիմաստութին, և զսէր նր՟ առ մեզ ։ 3՝ զի 'ի միտ ածեն մեզ զբազում ճշմարտութիս կրօնի իբր զշարժառիթս առաքինութեանց ։ 4՝ առաջի առնեն մեզ զկախումն մեր զա՟յ, զտկարութիս մեր, և զպա՟պ անկատարութիս, որովք ազատիմք 'ի հպարտութէ ։ 5՝ տան մեզ ճանաչել զորպիսութի հոգւոյ և սրտի մերոյ, թէ յինչ առաւելապէս ձգին հակամիտութիք և բաղձանք մեր ։ 6՝ լնուն զմեզ կարևոր շնորհօք ա՟յ, ա-

ղատեն 'ի պա̃պ հոգևոր և մարմնաւոր փորձուե̃ց, և աճեցուցանեն զյոյս և զվստահութի մեր առ ա̃ծ : Տեղի և ժամանակ աղօթելոյ ո̃չ է որոշեալ, այլ հրամայեալ բարի քրիստոնէից, զի յա̃մ ժամանակի և յա̃մ տեղւոջ աղօթեսցեն առ ա̃ծ հոգւով և մտօք : Բայց սակայն հրամանաւ եկեղեցւոյ պատուիրեալ է, զի գո̃նէ միանգամ յեօթնեկի յաւուր կիւրակէի հաւաքեսցին յեկեղեցին, և անդ 'ի միասին հրապարակաւ աղօթեսցեն առ ա̃ծ. բաց յայսմանէ յա̃մ աւուր գո̃նէ կէս ժամ 'ի տան իւրում պարտաւորին աղօթել յառաւօտու և յերեկոյին (մատթ. Ժզ. 25 : յովհ. դ. 24. և̃ն) :

§. 243. Մոլութիւնք՝ որք հակառակին աղօթից են, 1՝ ո̃չ աղօթել բոլորովին, կամ հազիւ ուրեք (սաղմ. Հը. 6 : եսայ. Է. 4—10. և̃ն). 2՝ յանդուգն հայցուած, որ խնդրէ յա̃յ զանարժանս, կամ եզր և թէութի դնէ կատարման աղօթից (յուդիթ. Է. 23. և̃ն). 3՝ տատանումն, որով ալեկոծին խորհուրդք մտաց յանպատշաճս կամ ընդ ստուգութե̃ խոստմանցն ա̃յ (յակոբ. ա̃. 6. 7. և̃ն). 4՝ գաղջութի յաղօթելն անդ, մանաւանդ եթէ ո̃չ ընկալցի ոք զխնդիր իւր յա̃յ (ղկս, Ժը. 10 : մատթ. ժե. 22—28). 5՝ աղօթք փարիսեցական, որ ուռուցեալ բարեգործութ̃ք իւրովք մատչի առ ա̃ծ, գուցէ և արհամարհելով զընկերըս (ղկս. Ժը. 11. 12) :

Սովորական ոճք աղօթելոյ 'ի լեզուի մերում, են՝ տէրունական աղօթքն, Հայր մեր ևն. Հանգանակն հաւատոյ մերս եկեղեցւոյ. հռչակաւոր աղօթքն ներսեսի շնորհալւոյ, Հաւատով խոստովանիմ. երգքն Առաւօտ լուսոյ, փառք 'ի բարձունս ա̃յ. Սաղմոսարան դաւթի, սքանչելի

գիրքն աղօթից գրիգորի Նարեկացւոյ, ժամագիրք, և նմանք:

Տօնէա՛ զԱստուածայինն.

## §. 244. Ե. Զի՞նչ է տօնակատարութիւն.

Պ. Տօնել զա̄ծայինս նշանակէ սրբութ̄ և ջերմեռանդութ̄ յարգել զայն ա̄մ ծէսս և արարողութիւնս եկեղեցւոյ, որք վերաբերին առ ա̄ծ. որոյ վախճան է հաստատել զմեզ 'ի բարի գործս և շինութիւն տալ ընկերաց շարժելով զնո 'ի ճշմարիտ ա̄ծպաշտութիւն: Առաքինութեանս յատկութիւնք են, զի 1՝ կատարեսցին պարկեշտութ̄ և ը̄ կարգի (ա̄ կորնթ. ժդ. 40). 2՝ զի իցեն համաձայն կանոնաց քրիստոնէական կրօնի. 3՝ զի հեռի լինիցին այն ա̄մ, որ շփոթեն զմիտս և զբարեկարգութիւն. 4՝ զի համաձայնեսցին օրինաց 'ի սբ̄ գիրս մեզ առաջի եդելոց (տես, ա̄ կորնթ. ժա̄ և ժդ. եփես. ե. 19: կողոս. գ. 16: ա̄ տիմ. բ̄, 8—15: եբրայ. ժ. 25). 5՝ զի կատարեսցին յարգութ̄ և ներքին և արտաքին պարկեշտութ̄ որովհետև անպարկեշտ տօնակցութիւն է անարգանք ա̄յ, հակառակ նպատակի ա̄ծային տաճարաց (մատթէա̄. 12: մարկ. ժա̄. 16) և անխրատութիւն քրիստոնէական ընկերակցութ̄: 6՝ զի լիցին մտադրութ̄, զուշ մտայն սևեռելով յերգս և 'ի սրբազան ծէսս՝ յեկեղեցւոջ կատարեալս. ըստ որում լոկ մարմնական ներկայութիւն անընդունելի է ա̄յ. 7՝ զի լինիցին եռանդեամբ սրտի, անձին իւրում մերձեցուցանելով զա̄մ ծէսս, զինքն 'ի բարւոջ հաստատելով, և սբ̄ յառաջադրութիւնս դնելով:

Շարժառիթք կատարելոյ զտօնս են, 1՝ զի հրամայէ մեզ նոյն ինքն Ա̄ծ (ա̄ կորնթ. ժա̄: եբրայ.

Ժ. 19—30. եւն). 2՝ զի տօնք են հարկաւոր միջոցք և գործիք պահելոյ և զարգացուցանելոյ զկրօնն, առանց որոյ տկարանի տիրէ և ապականի վարուց յաճախէ. 3՝ զի ներկայանի հաւատակից եղբարց ընկերութեան, աղօթք, երգք, քարոզք, թափօրք և այլ հոգևոր ծէսք՝ սաստիկ օրինակաւ ազդեն ՚ի զգայութիս և ՚ի միտս մարդոյ, որովք և շինութի լինի ամէն ՚ի հոգևորս. 4՝ զի տօնք են գործունեայ միջոցք զարգացման եղբարց, որք մերով օրինակօք ձգին ՚ի յարգել զԱծ, ՚ի հաստատիլ ՚ի կրօնի, և ՚ի յանձին բերել զԱծ առաքինութիս. 5՝ զի են շաղկապ եղբայրսիրութե, որով քրիստոնեայք կապին ընդ իրեարս իբր արարածք Այ, իբր որդիք միոյ հօր, և իբր փրկեալք միով Քնիւ առանց խտրութե աղքատի և հարստի։

§. 245. Առ այս վերաբերի եւ սրբելն զկիւրակէս և զայլ տօնս եկեղեցւոյ, առ որ պարտաւորիմք, 1՝ ՚ի պատուիրանաց Այ (տես, ելից, Ի. 8–12։ Լա. 13—18։ Թուոց. ԺԵ. 32—36։ եսթեր. Թ. 17=25։ յովհ. Ժ. 22. եւն). 2՝ օրինակաւն Քնի, որ զշաբաթս և զտօնս պահէր ըստ մովսիսական օրինաց (մատթ. ԺԲ. 2=14։ղկս. Բ. 21=51։ Իբ. 7. 8։ յովհ. Ե. 2=18). 3՝ ՚ի սակս բաղմապատիկ հոգևոր օգտից, յորս պարտալին քրիստոնեայք յաւուրս տօնից. 4՝ յաղագս ազատելոյ ՚ի ծանր պատժոց, որք յԱյ սպառնացեալ լինին պղծողաց զտօնըս (տես, ելից. ԼԵ. 2։ Թուոց. ԺԵ. 32=40։ եսայ, Ա. 13. 14։ երեմ, ԺԷ. 27։ ամովս, Ե. 21։ Ը. 10. եւն)։ Զեղանակն սրբելոյ զտօնս տես ՚ի վերոյ § 207։

Երրորդ յօդուած.

§. 246. Հ. Զինչ է երդումն.

Պ․ Երդումն է կոչել զԱծ ՚ի վկայ՝ առ ՚ի հաստատել զճշմարտութի ինչ, որ բաժանի յերդումն հաստատողական և ՚ի խոստացողական, ՚ի հանդիսական և յառանձնական, և յայլ տեսակս։ Թէպէտ և ըստ պատուիրանին Քի չէր հարկաւոր երդնուլ՝ եթէ ամ քրիստոնեայք լինէին ճշմարտախօս, բայց որովհետև յամ ժամանակի չարք խառնեալ են ընդ բարիս, վսկ ՚ի պահանջել հարկին առ ՚ի ցոյց ճշմարտութե իւրոյ կարէ քրիստոնեայն երդնուլ․ որոյ արժան և օրինաւոր լինելն հաստատի ՚ի բանից Ածաշունչ գրոց, ևս և յօրինակէ Քի և առաքելոց նր (ընթերցիր, Բ օրին․ զ․ 13։ ելից, իբ․ 10․ 11։ եսայ, Ժթ․ 18։ մատթ․ իգ․ 16—23։ իզ․ 63․ 64։ հռովմ, ա․ 9։ Բ կորնթ․ ա․ 23։ եբրայ, զ․ 12—20։ ևն)։

Յատկութիք երդման են, 1՝ զի լինիցի անուամբն Այ, որ է առաջին ճշմարտութի (տես Բ օրին․ զ․ 13։ եսայ․ Ժթ․ 18։ եբր, զ, 16)․ 2՝ զի լինիցի մտադրութբ և դիտաւորութբ, քանզի առանց ուշադրութե լոկով սովորութբ երդնուլն թէպէտ և մեղք է, բայց ոչ պարտաւորէ ՚ի կատարել զերդումն․ 3՝ զի հաստատական երդումն լինիցի յիրս ճշմարիտս, իսկ խոստացողականն յիրս օրինաւորս և ՚ի բարոյապէս բարիս, իբր զի վն սուտ և վն չար իրաց չէ երբէք արժան երդնուլ․ 4՝ զի լինիցի վն ծանր հարկաւորութե և վն ստիպող պատճառաց․ զի երդնուլն է ներգործութի Ածային կրօնի, զոր չէ արժան վն սնոտեաց ՚ի կիր առնուլ։ Այս յատկութիք երդման բացայայտին ՚ի հրամանին Այ, որ գրեալ կայ ՚ի մարգարէութե երեմիայ (դ․ 2)։ Գոն դիպուածք, յորս դադարէ պարտաւորութին լնլոյ զերդումն իւր․ այսպիսի են, 1՝

եթէ երդմամբ խոստացեալն իցէ չար ինչ և մեղանչական, ոպ թէ ոք երդնուցու զողանալ կամ սպանանել ։ 2՝ եթէ լրումն երդման լինիցի անկարելի․ 3՝ եթէ թէուլին ընդ երդման կապեալ կամ զօրութ իմացեալ՝ ոչ անցի ՚ի կատար․ 4՝ եթէ երդուողն չունէր զբանականութ կամ զպայծառ դատողութ․ 5՝ եթէ նա որում երդուար՝ արձակեսցէ զքեզ ՚ի պարտաւորութէ ՚ի գլուխ հանելոյ ։

§․ 247․ Դիմադրի այսմ Ստերդմութին, որով սուտի բանից կամ գործոց ինչ հաստատի, կամ խոստացեալ լինի ինչ՝ զոր չկամի ոք կատարել․ սա է մեղք մահուչափ, յորմէ ամ քրիստոնեայ պարտի հրաժարել, 1՝ զի արգելեալ է ՚ի սբ գրոց (տես․ մտթ․ ե․ 33․ ա տիմոթ․ ա․ 10)․ 2՝ հակառակ է մեծվայելչութն այ, է ծայրագոյն անարգութի նր և չարաչար վարումն անուան նր (տես․ ելից․ ի․ 7=16)․ 3՝ զի ստերդմունք զրկեալ են յարքայութէն այ և յընկերութէ սրբոց (սաղմ․ ժդ․ 4․ իզ․ 4)․ 4՝ զի հակառակ է բարւոյն հասարակաց և թշնամի երջանկութե մարդկային ազգի, իբր զի երդումն է հարկաւորագոյն և ազդողագոյն միջոց պահպանելոյ յամի զփոխադարձ հաւատարմութի բանից․ վսյ ՚ի յաճախել սուտ երդման, կործանի ամ երջանկութի մարդկային ընկերութե․ 5՝ զի սուտ երդուողն մեղանչէ ընդդէմ դատաւորին և ամ ատուր իշխանութե նր, զոր խաբէ․ նոյնպս և մեղանչէ ընդդէմ ընկերացն և անձին իւրոյ, անարգելով զարժանաւորութի մարդկութե յինքն և յընկերս ։

Միջոցք խորշելոյ ՚ի սուտ երդմանէ են, 1՝ քաջ ՚ի միտ առ զծանրութի այսր մեղաց․ 2՝ ծանիր զգերագոյն մեծվայելչութիւն այ․ 3՝ գոն գործեա

անկեղծ սիրել զընկերդ, զի զոր սիրէ ոք՝ ոչ խաբէ զնա. 4՝ 'ի միտ առ զունայնութի երկրաւոր բարեաց, զի մի առ սէր նոց յանցանիցես ընդդէմ այ. 5՝ յուշ ած զչարաչար կատարած և զհետևանս սուտ երդման. 6՝ կշռեա, զի ցորչափ ոչ ուղղես զայս չար սովորութի, ոչ զօրես յուսալ զթողութի նորին յայ. 7՝ առէպ զմտաւ ած զծանրութի և զմեծութի այ, զյաւիտենականութե, զմահուան և զդըժոխոց, ևն:

Կա՛լ զնախանձ ուղղափառ կրօնի.

## §. 248. Հ. Զի՞նչ է նախանձայուզութիւն.

Պ. Նախանձայուզութի կրօնի է եռանդագին ջանք հաղորդելոյ ընկերաց մերոց զճանաչումն ուղափառ կրօնի և զսէր առաքինութեց: Այս առաքինութի է բնական պտուղ ճշմարիտ ածսիրութե և անկեղծաւոր եղբայրսիրութե. և ոյ զի իցէ ածահաճոյ՝ հարկ է, 1՝ զի լինիցի համաձայն ուղիղ ճանաչման մերոյ զայ և միայն զճշմարտութիս քարոզեսցէ, որովհետև զսուտս չէ արժան տարածել յայլս (հռովմ, Ժ. 2). 2՝ զի ծնեալ իցէ 'ի մաքուր դիտաւորութէ, ոչ այլ ինչ խնդրելով՝ բայց եթէ զտարածումն ճշմարտութեց և առաքինութեց յընկերս. 3՝ զի 'ի գործ դիցի զզուշաւոր խոհականութբ և ուղիղ ընտրութբ միջոցաց և պարագայից, առանց նենգութե և խաբէութե. 4՝ զի արասցի բազում հեզութբ՝ քաղցր սիրով և խոնարհութբ, հեռի յամ բռնութէ (գկս. Թ. 51=56. յովհ. Ժզ. 2): Հակադրի այսմ նախ՝ Զեղոքութի, որ ոչ ինչ հոգայ զկրօնէ այլոց, մանաւանդ ըղ

հպատակաց իւրոց. ենդ՝ կայր կատաղի Բանդա գուշանք, որ զա̄մ զայլոյ կրօնի անդամս դուն գործէ փոխել 'ի կրօնն իւր, կամ հալածէ և խաբէ չարաչար: Զ բանս և զօրինակս բարի և արդար նախանձայուզութե տես, ելից. լբ. 11–28: ա̄ թագրց, ժա̄. 6: գ թագր. ժթ. 9. 10: մատթ. գ. 7. իա. 12: յովհ. բ. 17: գործ. ե. 51: ժգ. 10. 11: ժէ. 16: ա̄ կորնթ. ժբ. 31: ժդ. 1. 12. 39: գաղատ. դ. 17. 18: ա̄ տիմոթ. և. 8: այլուր ևս: Իսկ զկայր և զոչ գովելի նախանձու օրինակս կարդա՛, թուոց ժա. 28. 29: բ̄ թագ̄ց. ժդ. 9=15: մատթ. ժե. 1—15: ժզ. 21=23: ժթ. 13. 14: իգ. 15: իզ. 51=54: մարկ. բ̄. 18=28: է. 1—9: ժդ. 3—9: ղկս. թ. 49—56: ժգ. 14: իբ. 50: յովհ. գ. 26. 27: գործ. ե. 17. 18: ժգ. 45: իա. 20: ա̄ կորնթ. ժե. 9: գաղատ. դ. 17. 18. և այլ տեղիս:

## Յօդուած Երկրորդ:

### Անձնապաշտութիւն.

### §. 249. Հ. Զի՞նչ և քանի՞ է անձնապաշտութիւնն.

Պ. Պաշտօն առ անձն իւր կոչին այնպիսի ներգործութիւնք մարդոյ, որոց եզր և առարկայ է նոյն իսկ գործողն՝ ըստ ա̄մ մասանց հոգւոյն և մարմնոյն՝ մտածեալ իբր վախճան թանկագին և արժանայարգ: Ազգք դյնօրինակ պաշտամանց յո-

լով են, ոմանք առ հոգին վերաբերեալք, և ոմանք առ մարմինն, ոմանք հրամայականք, այլք արգելականք, ևն. սակայն գլխաւորք յայնցանէ են սոքին, Ճանաչել զինքն և զյատկանիշ իւր, ուղիղ համարումն ունել, սիրել, խոնարհիլ, լուսաւորել զմիտս, սրբել զկամս, ուրանալ զհեշտութիս զգայութեց, բարւոքել զմարմինն, գանձել պատիւ և հարստութի, պատրաստիլ յերջանիկ մահ, և յամի պահել զխոհեմութի։ Խօսեսցուք զայսցանէ կարճառօտ ը կարևորութն ՚ի մեր պիտոյս։

Ծանի՛ր զքեզ և զչափ անձինդ.

## §. 250. Գ. Զի՞նչ է ճանաչումն անձին.

Գ. Ճանաչումն անձին տայ մեզ ՚ի միտ առնուլ թէ զի՞նչ եմք, ո՞վ եմք, ո՞րպիսի եմք, զո՞ր զերազանցութիս, կարողութիս, ներգործութիս, կատարելութիս, անկատարութիս, և պակասութիս ունիմք. զի՞որդ զգամք, խորհիմք, դատեմք, ցանկամք, գործեմք, կրեմք, ևն։ Գերազանցութիք մարդոյ են բնական, գերբնական, և ստացական. բնականք են՝ զքանչելի կազմուած մարմնոյն ըստ ներքին և արտաքին զգայութեցն (Ծննդ. Ա. 3։ Ելք. ԼԳ. 20։ Ա կորնթ. ԺԱ. 7), տիրողութի ՚ի վր ամ արարածոց (Ծննդ, Ա. 26—30։ սաղմ. Ը. 6—10։ Իմաստ. Թ. 2. 3. ևն), ոգեղինութի կամ աննիւթութի հոգւոյն (Ա կորնթ. Բ. 11։ Ժողով. ԺԲ. 7։ մատթ. Ժ. 28), անմահութի նորին (տես §. 83). միտք կամ զՃշմարտութիս ճանաչող զօրութի և բանականութի, ազատ անձնիշխանութի կամաց, ընտրողութի, բարոյականութի, առաքինագործութի, երջանկութի, անսահմանութե ընդունակութի, և սոցին

նմանք ։ Գերբնական են արդարութիւն կամ սըրբութիւն կամաց, ճանաչումն ճշմարտութեանց, համաձայնութիւն մտաց և կամաց՝ յորս դնի պատկերն այ (տես §. 85), բարոյական կատարելութիւն, որ է՝ ձայնակցութիւն գործոց մերոց ընդ օրինացն այ, կամ ջանք նմանակից լինելոյ այ, երջանիկ երանութիւն և 'ի հանդերձեալ կեանս (ա պետր․ ա․ 9 ։ ե․ 10 ։ ա յովհ․ գ․ 2 ։ հռովմ․ ը․ 22 ։ ա կորնթ․ ժգ․ 12 ։ ա տիմոթ․ բ․ 4 ։ յայտն․ ի․ 4=6․ և այլն), հրաշափառ յարութիւն մարմնոց (§. 180), և այլ նմանք ։ Ստացականք են՝ ջանիւք մարդոյ գանձեալ հոգևոր և մարմնաւոր բարիք, զանազան գիտութիւնք, արուեստք, խոհեմութիւն, բարեգործութիւնք, արդար հարստութիւն, ճոխութիւն, պատիւ, բարեկամք, ընտանիք, կալուածք, պէսպէս արժանաւորութիւնք յեկեղեցական կամ յաշխարհական վիճակի, այլովք հանդերձ ։

§. 251. Ծայրագոյն հարկաւորութիւն ճանաչելոյ զանձինս մեր հաստատէ նախ՝ այնու իսկ, զի ինքն այ յոլով ուրեք 'ի սբ գիրս հրամայէ մեզ զայն և զոչ ճանաչելն զմեզ դատապարտէ (կարդա․ բ օրինաց․ դ․ 9 ։ իը․ 28․ 29 ։ ժողով․ է․ 26 ։ եսայ․ ե․ 12 ։ իզ․ 20 ։ ամբակ․ բ․ 1 ։ բ մակաբ․ թ․ 11 ։ մաթ․ է․ 1—5 ։ մարկ․ ժգ․ 33 ։ ղուկ․ ը․ 41=45 ։ գործոց․ ի․ 28 ։ յակոբ․ ա․ 23․ 24 ։ ա յովհ․ դ․ 1 ։ գ․ 19 ։ ա կորնթ․ բ․ 11․ 15 ։ ժա․ 28 ։ բ կորնթ․ ժգ․ 5 ։ գաղատ․ ը․ 4 ։ եփես․ ե․ 7=12 ։ ա տիմոթ․ դ․ 16․ և այլն) ։ Երկրորդ՝ զի առանց ճանաչելոյ զմեզ ոչ կարեմք ստանալ ո՛չ զլուսաւորութիւն մտաց՝ և ոչ զպէսպէս առաքինութիւնս․ զի թէ ոչ գիտես զորպիսութիւն քո՝ զիա՞րդ իմասցիս զտկարութիւն և զմոլորութիւն, զիա՞րդ գործեսցես կամ տեսցես 'ի

բարի գործս. ոպ̃ 'ի դիմի հարցիս մեղաց, Իբր խուսափեսցես յորոգայթից և 'ի փորձութեանց, Իւ ծառայեսցես կամ օգնեսցես եղբարցդ: Եթէ՝ առանց անձնաճանաչութեան անհնար է մեզ 'ի ձեռս բերել ո՛չ զաշխարհային և ո՛չ զյաւիտենական երջանկութի, զի անգիտացեալ զկարողութիւդ՝ կամ ո՛չ ձեռըն արկանես 'ի ծանր և յօգտակար պաշտամունս, կամ յանդուգն զայնս ստանձնեալ՝ վնասուք յետս կասիս. Եւ առաւել թշուառութբ կորուսանես ըզհանդերձեալ կեանս, զի ո՛չ գիտայեր գանձել զայն քեզ քոյովդ գործակցութեամբ:

§. 252. Խափանարարք այսր առաքինութե են 1՝ բռնակալ զգայականութի, որ խաւարէ զմիտս և ոչ ներէ ճանաչել զանձն. 2՝ մեղսալից խիղճ մտաց, որ զարհուրի զննել զինքն և տեսանել զխայտառակութի իւր. 3՝ չափազանց զբաղմունք աշխարհի, որ ոչ տայ վայրկեան անձին միտ դնելոյ. 4՝ կոյր անձնասիրութի՝ որ զինքն միշտ կատարեալ համարի. 5՝ բաղդատել զինքն ընդ չարագունս, առ որովք արդար երևիմք, 6՝ սուտ կարծիք և դատողութիք աշխարհականաց, ըստ որոց՝ ինչ ինչ մոլութիւնք երևին մեզ առաքինութի, և առաքինութիք կարծին մոլութի. 7՝ խաբողորակ երեսպաշտք, որք զմոլութիս մեր ծածկեն կամ անմեղադիր առնեն, և առաքինութիս կեղծեօք մեզ վերագրեն. 8՝ տգիտութի բարոյական իմաստութե և առաքինութեանց գիտութեանց, են:

§. 253. Միջոցք ճանաչելոյ զանձինս մեր՝ են. 1՝ բարձ զորդի յիշեալ խափանարարսդ. 2՝ անդադար հասուն քննութբ զննեմ զանուիդ, և ուշադրութբ 'ի միտ առ զամ ներքին շարժմունսդ, ըստ զմտածութիսդ, զզգացմունս, զբաղձանս, զընդ-

զխմունս, զյօժարունս կամացդ, զներգործունդ և զդոյին պատճառսն. 3՝ քննեա՛ թէ զի՞նչ խօսին և դատեն զքէն թէ բարեկամքդ՝ թէ թշնամիքդ, որք երբեմն առաւել ճշմարիտ գին հատանեն մեզ քան սիրելիք մեր. 4՝ անաչառ և անկողմնապահ մտօք համեմատեա՛ զվարս քո ընդ վարուց բարեկրօն առաքինեաց. 5՝ ընթերցի՛ր զվարս և զպատմուն երևելի անձանց, զորոց զյատկանիշսն քննեա՛ յանձնդ յանկելով. 6՝ կարդա՛ զհոգեբանուն, զտրամաբանուն, զմարդկային բնաբանուն, և զպատմուն տէրուեց և ազգաց. 7՝ յաճախ կենակցեա՛ ընդ կատարեալ իմաստունս և ընդ քաջուսումն առաքինի անձինս. 8՝ մի՛ լինիր ծառայ չար կրիցդ, և փախի՛ր ՚ի չար ընկերաց։

Ծանի՛ր զբարոյական յատկանիշ սո.

## §. 254. Հ. Զի՞նչ է յատկանիշն.

Պ. Բարոյացոյց յատկանիշն (յուն. խարաքդի՛ր) է հանգամանք կամ որակուն ինչ հոգւոյ, որ իբր հանրական պատճառ եղանակաւորէ զդատողուխս մտաց, զյօժարուխս կամաց, զեռուն զգայուեց և զամ ազդս գործողուեց մարդոյ, այն է, բոլորական բացորոշ եղանակն դատելոյ, կամելոյ զգալոյ և գործելոյ մարդոյն։ Ընդհանրապ բաժանի ՚ի մտաւոր և ՚ի մարմնաւոր, այլ և ՚ի բարի և ՚ի մոլի։ Բարի առի յատկանիշն՝ երբ բորք մարդոյ ուրուք՝ ստացական հակամիտուն իբրու ինքնին բերի ՚ի կատարել զօրէնս Այ և ՚ի սանձել զհաճոյս զգայուեց. ուր ընդ հակառակն՝ եթէ առ ՚ի լնուլ զյօժարուխս զգայուեց՝ անարգեսցէ զօրէնս Այ և զբանականուն, առի չար և մոլի. զորոց զօրինակն յոլովակի նշմարեմք յընկերս և

'ի կենակիյս մեր, տեսեալ թէ ոմանք 'ի նոցունց խուռովի ինքնին ձգին միշտ յայս կոյս առաքինութե կամ 'ի մոլութի, և ոմանք՝ յայն. ոմանք փառասէր են կամ արծաթասէր՝ հեշտասէր՝ կռուասէր, են, և ոմանք՝ մարդասէր՝ խաղաղասէր՝ ուսումնասէր, են: Թէ բարի և թէ մոլի յատկանիշն սանի զթուլ և զսաստիկ աստիճանս, և մարթի աճել կամ մեղմանալ, բարին յուրանայ, և մոլեկանն սրբանայ. ուստի մի ծնասէր քրիստոնեայ պարտական է մանրաքննութբ ջանալ զյատկանիշ բարուց խուրոց և զորպիսութի և զսաստիկն նորին, զոր թէ գտցէ չար կամ թերի՝ մի ջանիւք պարտի ուղղել, 'ի կիր առնլով զշարժառիթս և զմիջոցս առաքինութեց, զլանալով կրից զգայութեց, զօրէնս մի միշտ կատարելով, 'ի մեղաց հեռանալով, և նմանեօք:

Կա՛լ ուղիղ վարկած դժէն.

## §. 255. Հ. Ո՞րն է վարկումն անձին.

Պ. Յուղիղ ջանաչմանէ գերազանցութեց անձին՝ ծնանի արդար վարկումն կամ համարումն և յարգ բարոյական բնութե և արժանաւորութե մերոյ. յուշ մեր տարրացեալ՝ թէ որ և է մարդ գերակատար գործուած է մեծային իմաստութե և կարողութե, տէր և իշխան այլ մի արարածոց, էակ անմահական հոգւոյ ունակ՝ մտաւոր և ազատակամք, ջոխ մի պիտոյից առ ստացութի վսեմ վախճանի խորոյ՝ բարոյականութե. անդամ բարոյական թգ՞ութե որոյ գլուխ է էակն անսահման, առ որ հանապազօր հուպ պարտի մատչել՝ մշակելով զկարողութիս

հոգւոյ իւրոյ, գործելով զառաքինութիւն, արհա-
մարհելով զանցաւոր բարիս, կամ իբրու գոր-
ծեօք վարելով նոքումբք, միշտ յերկնայինսն դի-
մելով, և զզգայութիւն ամ ուրեք բանականութեն
հպատակելով: Սակայն հարկ է արթուն կալ, զի
մի համարումն արժանաւորութեն անձին՝ ելեալ ըստ
չափ ուղիղ բանականութեն՝ փոխեսցի 'ի մոլութի ինք-
նապարծութեն, որ է զիւրոյ անձին միայնոյ կատարե-
լութիւն յանչափս ամբառնալ, ուր ուղիղ վարկածն
զամենայն մարդիկ միօրինակ յարգէ 'ի բարոյա-
կան կարգի:

Մեղքս գոռ ըմբռ.

§. 256. Հ. Զինչ է սէրն անձին.

Պ. Սէր անձին կամ ճշմարիտ անձնասիրութի
է արդիւնալիր ջանք աճեցուցանելոյ զառաքինու-
թիւնս՝ զկատարելութիւն և զերջանկութիւն իւր. և է
մեզ բնատուր և ծննդակից (եփես. ե. 29), յու-
ղիղ բանականութենէ հրամայեալ, և յոյ և 'ի յոյէ
քօէ իբրու գաղափար եղբայրսիրութեն յանձն առա-
րեալ (ղևտաց. ժթ. 18: մատթ. իբ. 39):

Ցանկութիւնք կմ որպիսութիւնք գովելի անձնասիրութեն
են, 1՝ զի բարեգործութեց, հոգևոր երջանկութեց
և լուսաւորութեն մտաց զհետ կրթեսցի. 2՝ զի զճըշ-
մարիտ եղբայրսիրութին յինքեան բովանդակեսցէ
(մատթ. իբ. 39: փիլիպ. բ. 4. ևն). 3՝ զի զամ
միջոցս ստանալոյ զառաքինութիւն՝ 'ի կիր առցէ, և
ամ դժուարութեց և ոտնառու խոչընդակաց յաղթես-
ցէ. 4՝ զի յայնմ ամէ՝ որ թշուառացուցանէ զին-
քըն՝ յդ. 'ի ողխոութեց և 'ի մեղաց՝ հրաժարեսցի.
5՝ զի զսէրն այ և զկամս նր միշտ նախադաս արաս-
ցէ քան զամ ինչ զիւր (ծննդ. իբ. 12: բ օրինց.

ժգ. 6—11 ։ ղկս. ժդ. 26. ևն). 6՝ զի յամ յանիրաւ և յանկարգ շահասիրութէ հեռի լիցի (տես զօրինակսն, ա թգր. ժե. 30 ։ յովնան. ա. 12 ։ բ կորնթ. ժբ. 14. ևն) ։

§. 257. Շարժառիթք սիրելոյ զանձինս մեր են 1՝ զի ընդաբոյս և 'ի բնութէ տնկեալ է 'ի մեզ այն (եփես. ե. 29). 2՝ զի ած յայտնի հրամայէ մեզ (ղևտաց. ժթ. 18 ։ մատթ ։ իբ. 39 ։ հռովմ. ժգ. 9. ևն). 3՝ զի եմք գործած ձեռին այ, վսկ պարտիմք մեծապին յարգել զմեզ (հռովմ. ժդ. 20 ։ ա կորնթ. գ. 9. ևն). 4՝ զի սիրելն այ զմեզ այնչափ՝ մինչև զորդին իւր միածին ետ (յովհ. գ. 16 ։ հռովմ. ը. 31. 32) հարկէ զմեզ նոյնպս սիրել զանձինս. 5՝ զի եմք տուն և տաճար այ, բնակարան հոգւոյն սբյ, և գնեալ անգին արեամբըն քսի (ա կորնթ. գ. 16. 17 ։ ա պետրոս. ա. 18. 19. ևն), ապա պարտիմք սիրել զայսպիսի ածահաճոյ գանձ. 6՝ զի զայս պահանջէ և երջանկութին ապագայ կենաց՝ որում յուսամք, ևն ։

§. 258. Մոլութիւք՝ ուղիղ անձնասիրութե հակադրեալք, են նախ՝ Անձնատեցութի կամ բնաւ չսիրել զինքն, որ երևի թէ խպառ անգոյ է 'ի մարդիկ. եկդ անկարգ Ինքնասիրութի (Եսութիւն), յաճախեալ յամ մարդիկ, որոյ անթուելի են ճիւղք և ծիլք, ոմն են, միայն զինքն և զօգուտ իւր իբր վախճան սիրել և որոնել ամ ուրեք, ընդ պետրոսի հարցանելով յամ գործս,, Զինչ լինիցի մեզ (մատթ. ժթ. 27). զած վն լոկոյ շահու սիրել, զոր յովբայ ընծայէր սատանայ (ա. 9—12), անիրաւ միջոցիւք ճոխանալ (ղկս. ժզ. 4—12), զանարգս և զանցաւորս նախադասել ճշմարիտ բարեաց (մատթ. ը. 34), ոչ շատանալ վիճա-

կաւ իւրով, որոնել բարիս վերադոյնս քան զարժանն իւր (Ծննդ. Գ. 5. 6։ Գործոց. ԺԲ. 21—23. ևն), և այլ անհամարք, զորս քաջ գիտուք մարթի ամ ոք յանձին իւրում տեսանել։

Լե՛ր խոնարհ ճշմարտիւ.

§. 259. Հ. Զի՞նչ է խոնարհութիւն.

Պ. խոնարհութիւն է ուղիղ և զուգակշիռ դատողութիւն զօրութեան անձին մերոյ. յատկանիշք այդպիսի դատողութեան են 1՝ զի զամ բարիս և պարգևս յանձին երևեալս՝ յԱյ միայնոյ ճանաչէ (Ա կորնթ. Դ. 7). 2՝ զպակասութիւնս և զանկատարութիւնս իւր ոչ յինքենէ ծածկէ (Ա յովհ. Ա. 10։ ղկս. ԺԵ. 18։ ԺԸ. 13). 3՝ զկատարելութիւնս իւր հակառակ ճշմարտութեան ոչ ուրանայ. 4՝ առաւել քան զերևելն՝ անձին ոչ վերագրէ, և ոչ ամբառնայ զինքն մտօք. 5՝ ոչ զոք 'ի մարդկանէ արհամարհէ. 6՝ զամ ոք ըստ արժանեաց նոյին ճանաչէ և պատուէ. 7՝ վիճակաւ իւրով շատանայ. 8՝ զինքն նուաստ քան զայլս համարի. 9՝ մեծաւորաց՝ թէպ և արատաւորաց՝ առանց բամբասանաց հնազանդի. 10՝ ընդ ստորինս քաղցրութ. վարի։ Ճշգրտահան պատկեր այսպիսի խոնարհութեան է առաքելն պաւղոս 'ի բանսն Ա կորնթ. ԺԵ. 9. 10։ Ա տիմոթ. Ա. 15։ Բ կորնթ. ԺԱ և ԺԲ։

§. 260. Շարժառիթք խոնարհ լինելոյ մեր են, 1՝ զի զայն հրամայէ մեզ ինքն Ած (փիլիպ. Բ. 3։ կողոս. Գ. 12։ Ա պետրոս, Ե. 3։ յակոբ. Ա. 9։ Դ. 10. այլուր յաճախ). 2՝ զի լուսաւոր բանականութիւն թելադրէ ուղիղ դատել զամ ինչ, այս և զհանգամանս մեր. 3՝ զի խոնարհութիւն է հիմն և նեցուկ ամ առաքինութեանց, առանց որոյ կործանին

որք և անհաճոյ են այ․ 4՝ զի 'ի նոյն յորդորեն ըզ մեզ օրինակք ք̄ի (մատթ․ ԺԱ․ 29։ փիլիպ․ Բ․ 5․ ե̄ն), կուսին մարիամու (ղկս․ Ա․ 48) և այլ ա̄մ սր̄ց․ 5՝ զի անթիւ են բարիք խոնարհաց խոստացեալք յա̄յ (սղմս, ՃԴ․ 19։ առակ․ ԻԹ․ 23։ եսայ․ ԿԶ․ 2։ մատթ․ Ե․ 3։ ԺԱ․ 29։ ԺԸ․ 4։ ղկս․ ԺԸ․ 13։ ԺԵ․ 18․ 19։ յակոբ․ Դ․ 10։ ա̄ պետր․ Ե․ 5․ ե̄ն)․ 6՝ զարհուրելի պատիժք և վնասք 'ի հպարտութէ ծագեալք՝ ցուցանեն զհարկ խոնարհելոյ․ 7՝ խոնարհն յինքն ձգէ զսէր և զշնորհս ա̄մ մարդկան յայսմ աշխարհի։

§․ 261․ Միջոցք ստանձնելոյ զխոնարհութի՝ են, 1՝ քաջ կշռել և 'ի միտ առ զշարժառիթս և ըզ պարտաւորութիս խոնարհ լինելոյ․ 2՝ միշտ յուշ ած զպատգամն,, Զի՞նչ ունիս՝ զոր ոչ ելես առեալ և եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրև զչառեալ || ․ 3՝ ծանիր զքեզ ուղղադատ մտօք, և տեսցես զճշմարտութի գրելոյն ('ի յակոբ․ Դ․ 2։ ա̄ յովհ․ Ա․ 8=10)․ 4՝ հայեաց յօրինակս ք̄ի և ա̄մ սր̄ց․ 5՝ փախիր յերեսապաշտ շողոքորթողաց, և յընկերակցութէ հպարտաց․ 6՝ մի՛ բաղդատեր զքեզ ընդ չարագունից քան զքեզ (ղկս․ ԺԸ․ 11), այլ ընդ լաւագունից․ 7՝ խորհեաց զունայնութի երկրաւորացըս․ 8՝ սաէպ յուշ ած զմահդ, զդատաստանն այ և զդժոխս․ 9՝ թէ անմեղ երևիս անձինդ՝ յանձին կալ զխրատն (ա̄ կորնթ․ Ժ․ 12։ գաղատ․ Զ․ 1)․ 10՝ աղօթիւք խնդրեա յԱստուծոյ զհոգի խոնարհութեան, ե̄ն։

§․ 262․ Մոլութիք խոնարհութե հակառակք՝ են երկու, հպարտութի և սուտ խոնարհութի։ Հպարտութին է չափազանց և անկարգ համարումն զանձնէ և զգերազանցութեանց իւրոց, որով փքացեալ կամ

ուսուցեալ սիրտ ուրուք՝ լի և բաւական վարկա-
նի զինքն ինքեամբ, զՏէր մարդիկ արհամարհէ,
յամէն պատուիլ կամի, ոչ ումեք հնազանդի,
ամէն նախադասիլ նկրտի, և թէ քանի՞ մեծ վար-
կանի զինքն՝ բանիւ և շարժմամբ արտայայտէ:
Պատճառք մոլութես են, 1՝ պակասութի ուղիղ անձ-
նաճանաչութե · 2՝ սխալ դատողութի զգերազան-
ցութեց իւրոց · 3՝ մոլորական գաղափար պատուոյ
և փառաց · 4՝ զեղծ դաստիարակութի 'ի մանկութէ ·
5՝ երեսպաշտութի մարդելուզաց, և նմանք:

§· 263· Շարժառիթք փախչելոյ 'ի հպար-
տութէ են, 1՝ զի Տծ ատելու մեղ զայն (հռովմ ·
Ժա · 20 : Ժբ · 3 · 16 : ա տիմոթ · զ · 17 · ևն) ·
2՝ զի պիղծ և ատելի են այ հպարտք (ղկս · Ժզ · 15 ·
Ժը · 9—15 : ա պետրոս · ե · 5 : առակաց · զ · 17 :
ը · 13 : ժե · 25 : Ժզ · 5 : և բազում ուրեք) · 3՝
զի պատժէ Տծ զհպարտս բիւր եղանակաւ, կորոյ
տես զօրինակն (ծննդ · Ժա · 4—9 : ելից · ե · 2 ·
և Ժդ · 26 : թուոց · Ժբ · 1—10 : բ թգւոց · Ժե ·
10 · Ժը · 14 : իդ · 15 : դ թգւոց · Ժթ · 20—32 :
յուդիթ · թ · 6—16 : եսթեր · Ժզ · 12—19 :
սղմս · Ժէ · 28 : Ղ · 24 : ՃԵ · 12 : ԾԸ · 13—17 :
եսայ · գ · 16—26 · և այլուր բազում յոյժ) · 4՝
զի հակառակ է ուղիղ դատողութե մտաց և յայտնի
յիմարութի ընծայել անձին սուտ ինչ և պանծոյ
(գաղատ · զ · 3) · 5՝ զի խափանարար՝ կործանիչ և
քայքայիչ է ամ առաքինութեց, որք ընդ հպարտութե
ամենևին ոչ կարեն կեալ 'ի հոգւոջ ուրուք · 6՝
զի աղբիւր և շտեմարան է բազմաթիւ մոլութեց
և մեղաց, յանդգնութե, մնապարծութե, սուտ փա-
ռասիրութե, կեղծաւորութե, անհնազանդութե, կա-
մապաշտութե, բամբասանաց, նախանձու, բար-

կուն, ատելուն, վրէժխնդրուն, գժտուն, բռ-
նաւորուն, և այլոց. Դ՝ զի խռովէ զհոգի, զմիտս
և զկեանս մարդոյ բնաւ անկարգութ. Ց՝ զի ատե-
լի և խորշելի առնէ զմեզ ա՛մ բարեսէր և ողջա-
գատ մարդոյ, ևն։

§. 264. Սուտ խոնարհութ տեսանի Նախ՝ 'ի
նա, որք զշնորհս կամ զկատարելութիս՝ զոր իրօք
ունին՝ փոքրոգութ ուրանան կամ ծածկեն, առ որ
և իցէ պաշտօն եղբայրսիրութ՝ զինքեանս անար-
ժան համարին, խորշին յընկերակցութէ մարդկան,
և անձանց միայն առանձին ապրին. այսպիսիք մե-
ղանչեն հակառակ յայտնի հրամանաց ա՛յ՝ որ պատ
ուիրէ յարգել զտաղանդ մեր յօգուտ եղբարց (ա
պետրոս. դ. 10. 11։ ա կորնթ. ժբ. 7։ մատթ,
իե. 14—30. ևն)։ Երկ՝ 'ի նա՝ որք իրօք հպարտ
լինելով՝ կեղծեն զինքեանս խոնարհ գոլ. որք կո-
չեն զինքեանս մեղաւոր կամ պակասաւոր, իսկ երբ
այլք ընծայեն նց զնոյն պակասութիս՝ դառնանան և
վրէժ խնդրեն. որք սուտ գլխակորութ, ակնկո-
րութ, և զլօկ արտաքին նշանս խոնարհաց ցուցա-
նելով զայլս խաբել և զանուն առաքինւոյ ժա-
ռանգել նկրտին, ևն։

Լուսաւորեա՛ զմիտս իմ ճշմարտութեամբ.

§. 265. Հ. Օ՞րինչ է լուսաւորու-
թիւն մտաց.

Պ. Լուսաւորել զմիտս է ամբարել յայնմ
զճշմարտութիս ա՛մ իրաց, կամ գանձել զճշմարիտ
ճանաչմունս և զգիտութիս օգտակար և հարկաւոր
առարկայից. առ այս պատրաստուրեն զմեզ բազում
շարժառիթք, որք են, 1՝ Ած, որ 'ի մէ գիրս յա-

ճախ հրամայէ մեզ ստանալ զլուսաւորուի, զճըշ-մարտուի, զգիտուի և զիմաստուի (կարդա՛, զա·քար · Ը · 16 ։ մատթ · Ե · 37 ։ Ժղ · 26 ։ յովհ · ԺԷ · 17 ։ Ա պետրոս · Բ · 2 ։ յակոբ · Ե · 12 ։ Բ կորնթ · Դ · 6 ։ Ժղ · 8 ։ եփես · Ա · 17 ։ Դ · 16 · Ե · 8 · 9 ։ Զ · 14 ։ փիլիպ · Ա · 9 ։ Դ · 8 ։ կողոս · Ա · 9 · 28 ։ Գ · 16 ։ Ա թեսաղ · Ե · 5 · 20 ։ եբրայ · Ժգ · 9 ։ Ա տիմոթ · Բ · 4 · և այլ ուրեք ) · 2՝ անհամար հոգևոր և մարմնաւոր բարիք՝ յիմաստուէ և ՚ի ճշմարտուէ մեզ պարգևեալք (տես սղմս · Ժդ · 2 ։ լոբ · 3 ։ Ծգ · 12 ։ Ճնր · 18 ։ իմաստ · Զ · Է · Ը · Ժ ։ եսայ · ԼԳ · 6 ։ յովհ · Ը · 32 · ՚ի գիրս առակաց, և այլուր յաճախ) · 3՝ զարհուրելի չարիք և թշուառութիք ՝ ՚ի տգիտուէ և յանլուսաւորուէ ծագեալք (ովսեայ · Դ · 1 · 6 ։ իմաստ · Գ · 11 ։ ղկս · ԺԱ · 52 ։ յովհ · Ը · 44 ։ հռովմ · Ա · 18 · 25 ։ Բ · 8 ։ Բ թեսաղ · Բ · 11 ։ եբրայ · Ժ · 26 · 27 ։ Ա տիմոթ · Զ · 5 ։ Բ տիմոթ · Բ · 18—26 ։ Գ · 7 · 8 · յայլ տեղիս ) · 4՝ ճշմարիտ անձնասիրուին, զի ըստ չափու իմաստուե և լուսաւորուե մերում առաւելուն ՚ի մեզ անձնական երջանկուիք հոգւոյ և մարմնոյ · 5՝ պարտիքն բարեգործուե, ըստ որում լուսաւոր միտքն ազդողագոյնս շարժէ զկամս ՚ի հետևիլ առաքինուեց · 6՝ ուղիղ եղբայրսիրուին, քանզի որչափ քաջ ճանաչեմք զճշմարտուիս, այնչափ առաւել կարեմք ծառայել ընկերաց մերոց · 7՝ պատուիրանն Ածսիրուե, զի Ած ոչ զոք սիրէ՝ բայց զայն որ ընդ իմաստուե կեցցէ, և ոչ ընդունի ՚ի մէնջ՝ եթէ ոչ զպաշտօն բանականուի՝ ճշմարտուի և ուղիղ մտօք մատուցեալ (կարդա՛, իմաստ · Է · 28 ։ հռովմ · ԺԲ · 1—4 ։ յովհ · Դ · 23 · 24 · ևն ) · 8՝ նպատակն ստեղծման

մերոյ. զի վ̅ այն ետ ա̅ծ մեզ զմիտս և զբանականութի, զի ուսցուք զճշմարտութիս ա̅մ իրաց, որ է մի միայն առարկայ մտաց. 9՝ Հարկն նմանելոյ ա̅յ (§. 235), որ վ̅ զի է առաջին ճշմարտութի, ոչ այլով ինչ՝ բայց եթէ ճշմարտասիրութ̅ զօրեմք նըմանակցել նմա: Ընդ սոյն պատուիրանաւ և պարտաւորութ̅ փակի և պաշտօնն մշակելոյ զյիշողութին, զերևակայութին և զզգայութիս. զորոց զեղանակն ուսուցանեն հոգեբանութիւնն և տրամաբանութիւնն:

§. 266. Օգտակար առարկայից՝ որոց ճշմարտութ̅ք պարտիմք լուսաւորել զմիտս մեր, այս է կարգն, զի գուն գործեսցուք ուղիղ ճանաչել նախ՝ զա̅ծ և զճշմարտութիս առ նա վերաբերեալս (զորոց տես §. 15=20). 2՝ զճշմարիտ կրօնն և զհաւատս առ ա̅ծ (տես §. 12=15). 3՝ զանձինս և զյատկանիշ մեր (§. 254). 4՝ զմարդիկ, կամ զընկերս մեր և զյատկանիշ նց̅, զորմէ սորև. 5՝ զայն ա̅մ արտաքին հանգամանս՝ որք երջանիկ կամ թշուառ առնեն զկեանս մեր. 6՝ զկարևոր լեզուս, զգիտութիս և զուսմունս հարկաւոր արուեստից, և որ 'ի դոյնս բերին:

§. 267. Զճշմարտութի և զիմաստութի ուսանել պարտիմք 1՝ մաքուր դիտմամբ և միայն սիրով ճշմարտութե. 2՝ կամօք 'ի գործ դնելոյ զճշմարտութին յօգուտ մեր. 3՝ առանց ծուլութե և զանյառութե առթից. 4՝ ընտրանօք, զառաւել օգտակարն և զհարկաւորն քաղելով. 5՝ զա̅մ լուսաւորութիս ուղղելով յայն, զի նորօք զառաքինութիս ստասցուք. 6՝ ա̅մ եղբարց և կարօտելոց հաղորդելով զճշմարտութիս մեր աննախանձ սրտիւ, չլինելով քանքարաթաղից ծառայ չար:

§. 268. Խափանարարք ճշմարտաճանաչութե՟ են, 1՝ բռնակալ զգայապաշտուի՟՝ որ տաղտկանայ ընդ հոգևորս. 2՝ կեանք բազմազբաղ՝ որ ոչ տայ վայրկեան որոնելոյ զճշմարտուի՟ն. 3՝ հեղգուի՟՝ որ փախչի յաշխատանաց 'ի խնդրելն զճշմարտուի՟. 4՝ օգտասիրուի՟՝ երբ սուտն և մոլորուի՟ն շահեկան կամ հեշտալի են մեզ, յորոյ առ 'ի չըզրկիլ՝ զանց առնեմք որոնել զճշմարտուի՟. 5՝ հպարտուի՟ որ անպատիւ համարի փոխել զկարծիս իւր ևս և զմոլարն. 6՝ հեղինակուի՟ այլոց, որոյ կուրօրէն հաւատամք առանց քննելոյ զճշմարիտն. 7՝ համարում՟ հնութե՟, ըստ որոյ զա՟մ ինչ 'ի նախնեաց աւանդեալ՝ ուղիղ վարկանիմք, և զնորոյն՝ սուտ. 8՝ սէր նորութե՟, որ յոլովակի առանց մանր քննութե՟ ճշմարիտ դատէ զնոր ինչ գիւտ. 9՝ սուտ կարծիքն ռամկաց՝ որ զա՟մ բեռն ուսմանց բառնան 'ի վ՟ր ուսոց եկեղեցականաց. ըստ որոյ և ասեն յաճախ,, Կարգաւոր լինելոյ չեմ, որ գիտուի՟ ուսանիմ,, ո՟ղ թէ ինքեանք չիցեն մարդիկ, կամ չունիցին միտս և բանականուի՟ յա՟յ ընկալեալ. 10՝ սխալ մեկնուի՟ բանից ք՟ի (ղկս. ժ՟բ. 48), յորմէ և առակ կազմեալ ծուլից՝ ասեն,, Տգէտն թեթև մեղանչէ և սակաւ պատժի, ապա լաւ է տըգէտ լինել քան իմաստուն,, սակայն դոյա հարկ էր ուսանիլ և զայն հրամանս ք՟ի և զառաքելոյ ս՟յ, զոր յառաջ բերաք 'ի վերոյ 'ի §. 199:

§. 269. Այսմ պաշտօնի հակառակի տգիտուի՟ն մոլորուի՟, խաւար, սուտի՟, խաբէուի՟, ոչ ճշմարտուի՟, կուրուի՟ և անլուսաւորուի՟ մտաց. որք թէ ո՟րքան ողբալի թշուառուի՟ իցեն հոգւոյ, քանի՞ չարիս պատճառիցեն, և ո՟ղ պատժիցին յա՟յ աստ և յապագայ կեանս, ցուցանեն ա՟ծային պատգամքս

՚ի յոբ . դ . 21 ։ իթ . 7 ։ իմաստ . բ . 21 ։ է . 28 ։ ժ . 8 ։ եսայ . ե . 13 ։ իէ . 11 ։ ծղ . 10 . 11 ։ մատթ . ժգ . 15 ։ ժե . 14 ։ իբ . 29 ։ իգ . 16 ։ մրկ . ժբ . 24 . 27 ։ յովհ . դ . 22 ։ դ . 19—21 ։ ը . 44 ։ ժբ . 35 ։ գործոց . ե . 3 . 4 ։ ժէ . 23 ։ յակոբ . գ . 14 ։ հռովմ . ա . 18 . 25 ։ բ . 8 ։ ա կորնթ . ժգ . 38 ։ եփես . դ . 18 ։ բ թեսաղ . բ . 10 ։ եբրայ . ե . 2 ։ ա տիմոթ . զ . 5 ։ բ տիմոթ . բ . 18—25 ։ դ . 4 ։ տիտոս . ա . 14 ։ սղմս . ե . 7 ։ եզեկ . ժգ . 3—23 ։ յայտն . գ . 9 ։ և այլուր յաճախ, մանաւանդ ՚ի գիրս առակաց և իմաստուե ։

[illegible]

## §. 270 . Հ . Օ՞րինչ է սրբութիւնն կամաց .

Պ . Ասացաւ ՚ի վերոյ (§. 194) թէ կամքն է կարողուլ, որ բաղձայ բարւոյ և հեռանայ ՚ի չարէ՝ ըստ երևեցուցանելոյ մտաց . բայց այս երևեցուցումն կամ շարժումն լինի ընդ կերպարանօք կամ ճշմարիտ կամ սուտ բարւոյ և չարի . յորմէ և կամք մարդոյ յոլովակի ձգի ՚ի սուտ բարիս և խորշի ՚ի սուտ չարեաց . ապա սրբել զկամս՝ նշանակէ, առնել՝ զի կամքն զճշմարիտ բարիս միայն (զգիտուլս և զառաքինուլս) սիրեսցէ, զուտկերպարան բարիս (զհեշտուլս, են) ատեսցէ, ՚ի ճըշմարիտ չարեաց (՚ի մեղաց և ՚ի տգիտուեց) խորշեսցի, ՚ի հեշտանալոյն մեղօք և ՚ի հակամիտելոյն ՚ի չարն՝ դադարեսցի, ձգտիլ առ բարիս սովորեսցի, ՚ի վաստակս առաքինագործուեց տարրայեալ ունակասցի, նոյն և ցվախճան կենացն ՚ի դոյնս հանապազորդեսցէ ։ Այս գերագոյն փոփոխուլ կամաց ՚ի չարէն ՚ի բարին՝ ՚ի սրբազան տառս կոչի

Վերածնունդ կամ վերստին ծնունդ՝ յայտ է՝ ըստ հոգւոյ (յովհ. գ. 3—8: տիտոս. գ. 5: ա̄ պետրոս. ա. 3—5: ա̄ յովհ. ե. 1. ևն), Դարձումն առ Ած (տես. երեմ. գ. 12—23: լա. 21: եզեկ. ժը. 21—32: յովէլ. բ. 12. 13: մատթ. ժգ. 15: ղկս. ա. 16. 17: ժէ. 4: գործոց. գ. 19. 26. իզ. 18: յակոբ. ե. 19. 20. այլուր), Կենդանութիւն, կեցուցումն, կենագործումն (եփես. բ. 5: ա̄ պետրոս. բ. 24: կողոս. բ. 13. ևն), Նոր արարած (բ̄ կորնթ. ե. 17: գաղատ. զ. 15. ևն), Յարութիւն 'ի մեռելոց (եփես. բ. 6: կողոս. բ. 12. ևն), Ապաշխարութիւն, ապաշաւ, զղջումն (մտթ. գ. 2. 8. դ. 17: ղկս. գ. 3. 8: ե. 32: ժգ. 3. 5: գրծց. բ. 38: ը. 22: բ̄ կորնթ, է. 9. 10: բ̄ տիմոթ. բ. 25. այլուր բազում յոյժ), Սրբութիւն (յովհ. ժէ, 17—19: ա̄ կորնթ. ա. 2: զ. 11: եփես. դ. 24: ա̄ յովհ. գ. 3. ևն): Զկարևորութիւն այսր պաշտօնի և զհանգամանսն՝ ուսուցանեն նշանակեալ բանքդ Ածային տառից, բաց յորոց ընթերցիր ևս վերագոյն 'ի տնահամարսն §. 20. 155. 162. 163. 164. 193:

§. 271. Այսմ պատուիրանի հակադրեալ մոլութեանց առաջինն է՝ Ծուլութիւն, պղերգութիւն, այն է՝ անհոգ լինել առ 'ի սրբել զհոգի իւր 'ի մեղաց, չունել փոյթ զառաքինութեանց, զմիջոցաց նոցին, և զփրկութենէ հոգւոյ, ևն. որոյ պատճառք են՝ տգիտութիւն, անկարգ աշխարհասիրութիւն, սովորեալ մեղանչականութիւն, օրինակ և կենակցութիւն ընդ ծուլից, անհիմն յոյս յողորմութեան Այ, և այլ նմանք:

Շարժառիթք հեռանալոյ 'ի ծուլութենէ են, 1՝ զի հակառակ այն առաջին պատուիրանի Ածսիրութեան. 2՝ զի Ած արգելու և պատժէ զայն (տես,

մատթ. ի. 6։ լու. 13—30։ հռովմ. ժբ. 9—11։ ժգ. 11։ փիլիպ. բ. 12։ բ. պետր. ա. 5—10։ ա տիմոթ. ե. 13։ եզեկ. ժզ. 49. 'ի գիրս առակաց բազում ուրեք). 3՝ հակառակի ուղիղ բանականութեն, որ թելադրէ՝ ծանր խորհրդոց մեծաջան փոյթ տանել. 4՝ ծնանի զանթիւ մոլութիւս, և բերէ մեծամեծ թշուառութիւս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. 5՝ չար օրինակ և գայթագղութի տայ ընկերաց. 6՝ ատելի և զզուելի է այ (յայտն. գ. 15—18). և այլ բազումք։

Ընդ մոլութեն կոչի՝ Մեղսասիրութի, մնալ 'ի մեղանչական վիճակի հոգւոյ, հեշտանալ ընդ մեղս, զորմէ յայլում վայրի։

Ուրացի՛ր զհեշտութիւնս.

## §. 272. Հ. Զի՞նչ է ուրացութիւն հեշտութեանց.

Պ. Ի սանձումն անկարգ չար ցանկութեց՝ ամենայն օրինաց հակառակելոց, և համբերութի վշտաց առ սէր առաքինութեց, ըստ որոյ և զօրութի այսր օրինաց բացատրի բառիւքս, Հրաժարեա՛, Համբերեա՛. այս է, 'ի հրապուրել մարմնոյ՝ ոռովանաց՝ զգայութեց և չար ընկերաց զքեզ 'ի մեղանչել ընդդէմ այ, Հեռացի՛ր, հրաժարեա՛, յետս կաց. իսկ թէ 'ի պէտս օրինապահութեն և բարեգործութեն հարկ լիցի քեզ կրել վիշտս՝ նեղութիւն՝ աղքատութիւն՝ ձախորդութիւն՝ հալածանս՝ միով բանիւ՝ ազգի ազգի խաչս, Համբերեա՛, յանձն առ զխաչ, լե՛ր խաչակից քրի և ամ սրբոց, մի՛ լսեր խռո. զգայութեցդ, բանականութիդ տիրեսցէ և իշխեսցէ զգայարանացդ։

Շարժառիթք՝ որ պարտաւորեն զմեզ ուրանալ զանձինս, են 1՝ զի տէր ինքն հրամայէ մեզ զայն (տես, մատթ. Ե. 29. 30: ԺԱ. 12: Ժզ. 24: մարկ. Ը. 34: ղկս Թ. 23. 24: հռովմ. Զ. 6: Ը. 12: գղտ. Բ. 19: Ե. 24: Զ. 14: կողոս. Գ. 5. և՛ն). 2՝ բանականութիւն և միտք բանիւ ստեղծման իւրոյ՝ սահմանեալ է առ ՚ի տիրել զգայականութե, և ոչ թէ ծառայանալ նմա. 3՝ առանց այսր անհնար է յաղթել մեղաց և գործել զառաքինութիս. 4՝ չէ ինչ օգուտ մարդոյ զաշխարհ ամ շահել (հետևելով զգայութեց) և զանձն իւր կորուսանել (մատթ. Ժզ. 26. և՛ն). 5՝ յիմարութի է՝ զտէ անարգելով գանձել զկորստական բարիս, որք գուցէ հրամանաւ այ փութով բառնին ՚ի մէնջ (մատթ. Զ. 28: ղկս. ԺԲ. 20: և՛ն). 6՝ անթիւ փառաց և վարձուց արժանի է վս այ կրել խաչ և նեղութի (մատթ. Ժ. 37—42: Ժթ. 27—30: ղկս. ԺԸ. 29, 30: գրծց. Ե. 41. հռովմ. Ը. 17. 18: և՛ն):

§. 273. Միջոցք ստանալոյ զայս առաքինութի են, 1՝ յուշ առ զվերոյգրեալ շարժառիթսդ. 2՝ խոկա զթշուառութիս մարմնապաշտ զգայասէր անձանց. 3՝ ուրացիր երբեմն զօրինաւոր հաճոյս, ընդդէմ կալ ևս և թեթև շարժմանց զգայութեցդ. 4՝ ուսիր զարդար զին և զյարգ երկրաւոր բարեաց. 5՝ քաջ ծանիր զարժանաւորութի և զպատիւ անձինդ (§. 250—256). 6՝ յիշեա թէ որչափ ինչ կրեն մարդիկ յոլովակի վս բարեկամութե, կենցաղավարութե, մարդկային ակնածութե, սուտ կրօնի, և՛ն. զիարդ ոչ կրեսցուք ապա մեք վս այ՝ արքայութե և փրկութե հոգւոյ. 7՝ հայեաց յօրինակս քսի, և սրբոց այ (ա կորնթ. Ժ. 27: փիլիպ.

գ. 7—9. ևն). Տ՝ ՚ի միտ առ թէ ոչ հրամայի քեզ անկարելի ինչ, ոչ պահանջի ՚ի քէն՝ զի հեռասցիս յամենայն ախորժելեաց զգայութեանց, զի ուրասցիս քեզ զօրինաւոր ուրախութիւնս, զընկերութիւնս, զզբօսանս, ևն, այլ միայն զայնս՝ որ անցանեն ըստ չափ ուղիղ բանականութեան և համեստութեան:

Բարւոքեա՛ զմարմինդ.

## §. 274. Հ. Ո՞ր ինչ է բարւոքել զմարմինն.

Պ. Բարւոքել կամ կատարելագործել զմարմինն նշանակէ պահել և աճեցուցանել զզօրութիւնս նորին ըստ բոլորին և ըստ մասանցն՝ ըստ ներքին և արտաքին զգայարանացն. զորոյ բազում ինչ պիտանի աւանդեն տրամաբանութիւն՝ հոգեբանութիւն և բժշկութիւն, զորս թողեալ ընթերցողաց ՚ի զննել, սիրով համառօտութեան՝ խօսեսցուք աստանօր զպահպանութենէ կենաց՝ առողջութեան՝ և անդամոց:

Պահեա՛ զկեանս քո և զառողջութիւնդ.

## §. 275. Հ. Ո՞ր ինչ է պահպանութիւն կենաց.

Պ. Գոյութիւն և կենդանութիւն մարդոյ յաշխարհի՝ է պարգև Այ, տուեալ իբր գործիք, յորոյ ձեռն հոգւոյն առնու զծանօթութիւնս ճշմարտութեանց, վարժի յառաքինութիւնս, ելուզանէ զներգործութիւնս արտաքին կրօնի, ծառայէ ընկերացն, և գանձէ ինքեան վարձս յապագայ կեանս. վասն այսորիկ ամենայն մարդ պարտական է պաշտել զկեանս իւր, ոչ հեռանալ յամենայնէ՝ որ կարճէ զկեանս կամ վնասէ

առողջութն, և վարել այնու ամի՝ որ յերկարաձգը գէ զկենդանութին և զառողջութին. ու որ բայ 'ի գրելոյդ՝ պարտաւորի մարդս և 'ի պատգամաց այ, որ 'ի սբ գիրս հրամայէ նախ՝ խնամել զկեանս և զողջութի մեր (կարդա, սաղմոս. ղ. 15. 16: մատթ. թ. 1—12: Ժ. 29. 30: յովհ. ե. 5—16: գործ. Ժէ. 25: իէ. 33. 34: հռովմ. Ժբ. 1=5: ա կորնթ. ղ. 13: եփես. ե. 29: կողոս. բ. 23: ա տիմոթ. ե. 23: ղ. 8. այլուր ես). երկրորդ փախչել 'ի վտանգաց և յորոգայթից կորստեան կենաց (մատթ. դ. 6. 7: Ժ. 23: յովհ. ը. 59: գործ. թ. 24. 25. ես). երրորդ՝ 'ի վտանգիլն կենաց կամ 'ի կորուսանելն զառողջութին՝ պատուիրէ 'ի գործ ածել զհարկաւոր և զանմեղ միջոցս վերստին ստանալոյ (տես. տուբիթ. ը. 6: դ. թգաց. ի. 5=8: բ մնացոր. Ժզ. 12: եսայ. լը. 2=8. ղկս. ը. 41=47: Ժէ. 12—20. և այլ տեղիս). չորրորդ՝ արգելու ես մեղանչական օրինակաւ պաշտօն տանել կենաց և մարմնոյ (մատթ. ե. 29. 30: Ժ. 28: հռովմ. ղ. 13=19: Ժգ. 14: ա կորնթ. ղ. 15—19: փիլիպ. գ. 19. ես):

§. 276. Միջոցք պահելոյ և բարւոքելոյ զկեանս են նախ՝ օդ և կերակուր առողջարար, շարժումն մարմնոյ, վարումն անդամոց, չափաւոր աշխատանք՝ քուն և հանգստութի, յստակութի մարմնոյ՝ անդամոց՝ զգեստուց՝ բնակարանաց՝ անօթոց՝ կերակրոց և ամ գործեաց. զայս ամ՝ ուսցիս 'ի բժշկական գրոց:

Նկդ՝ զուարթութիւք սրտի և հոգւոյ, անմեղ ըղբօսանք, խաղք, կոչունք, տեսարանք, թատրոնք, և նման զուարճութիւք, զորոյ զօրինաւոր լի-

նելն, զըսպխումն, և զխարեպաշտ եղանակն՝ ուսիր 'ի բանից և յօրինակաց սբ գրոց (սղմս, ձգ. 14. 15 : ժողով. ե. 17=20 : թ. 7=10: մատթ. ժա. 19 : ղկս. ԺԴ. 7—24 : յովհ. բ. 1—12 : գործոց. Ժ. 13 : ԺԴ. 16 : հռովմ. ԺԴ. 14=24 : ա կորնթ. Ը. 8—13 : Ժ. 23—31 : ա տիմոթ. Դ. 4. ևն) :

§. 277. Նշդ՝ Բարեխառնութ, Ողջախոհութ, զգաստութ, կամ չափաւորութ 'ի կերակուրս՝ յըմպելիս՝ 'ի հաճոյս զգայութեց՝ հեշտութեց և կրից, յուսմունս՝ և յամ գործս և 'ի կիրս. բստ որում չափազանց և անկարգ կիրառութ ամի դոցուն՝ վնասէ ոչ միայն առաքինութե հոգւոյն, այլ և առողջութե և կենաց մարմնոյ. որում վկայեն հանապազօրեայ փորձառութիւք և օրինակք մարդկան. իսկ զչափաւորութին և զուղղադատ վարումն պատուիրէ և ած 'ի սբ գիրս (տես, ծննդ. խթ. 5. 6 : ղկս. իա. 34 : հռովմ. Ժգ. 13: Ժդ. 17=21: ա կրնթ. Է. 5 : 29=32 : Ժ. 31 : գաղատ. ե. 16. 17 : եփես. դ. 26. ե. 18 : ա տիմոթ. գ. 2 : դ. 4 : տիտոս. բ. 2—12 : ա պետրոս. ա. 13 : բ. 11 : ե. 18 : և այլուր) :

§. 278. Ընդդէմ պատուիրանիս լինի մեղանչել բազմօրինակ, որք են 1՝ Անձնասպանութ, որ է ծանր մահաբեր մեղք՝ արգելեալ յած 'ի սբ գիրս (ելից. ի. 13 : գործոց. ժէ. 25. 26. ևն). 2՝ Անդամատութ, այն է՝ կամաւոր կըճատումն արական կամ այլոյ անդամոյ (բ օրինաց. իգ. 1). 3՝ Չարաչար վարել զմարմինն կամ զանդամս 'ի գործս մեղաց (հռովմ. զ. 12. 13 : Ժգ. 14 : եփես. դ. 25=32. ևն). 4՝ 'Ի սպառ անխնամ թողուլ զմարմինն և զանդամս (հռովմ. Ժգ. 14 : կողոս.

բ̃ . 16 . 23 ։ ա̃ կորնթ . ժ . 31 . ժգ . 3 ։ փիլիպ . դ . 8 ։ ա̃ պետրոս . դ . 3—7 . և ն̃) . 5՝ Որկրամոլութիւն կամ վնասուք առողջութեան ուտել կերակուր (սղմս . հէ . 29—31 ։ ղկս . ժղ . 19—22 ։ ժե . 16 ։ ղ . 25 ։ հռովմ . ժղ . 18 ։ ա̃ կորնթ . ղ . 13 ։ փիլիպ . գ . 19 ։ եբրայ . ժբ . 16 ։ ժգ . 9 ։ և ն̃) . 6՝ Արբեցութիւն, որ է մեղք բնուրօրինակ արգելեալ և պատժեալ յա̃յ, կուրացուցիչ բանականութեան, վնասակար առողջութեան՝ հարստութեան՝ համբաւոյ՝ պատուոյ, մայր բազմաթիւ մեղաց՝ սպանութեան՝ բղջախոհութեան՝ բամբասանաց՝ կռուոյ, և ն̃ . զորոց զօրինակս և զվկայութիւնս տես (Ծննդ . թ . 21 ։ ժթ . 32 ։ ելից . լբ . 6 ։ ղևտաց . ժ . 8 . 9 ։ բ̃ օրինաց . իա̃ . 20 . 21 ։ յուդիթ . ժբ̃ . 20 . ժգ . 3 . 4 ։ առակաց . ի . 1 ։ իա̃ . 17 ։ իգ . 20—35 ։ լա̃ . 4 ։ եսայ . ե . 11—21 ։ իը . 7 . 8 ։ ծզ . 12 ։ եզեկ . ժզ . 49 ։ ովսեայ . դ . 11 ։ ա̃ մակաբ . ժզ . 16 ։ մատթ . ղ . 25 ։ ղկս . ժէ . 27 ։ իա̃ . 34 ։ հռովմ . ժգ . 13 ։ ա̃ կորնթ . ղ . 10 ։ գաղատ . ե . 21 ։ եփես . ե . 18 . 19 . և այլուր բազում) ։ 7՝ Բղջախոհութիւն կամ վաւաշոտութիւն, այն է՝ չափազանց կիրառութիւն մարմնական ցանկութեան՝ մինչև վնասել առողջութեան՝ մարմնոյ՝ և ոգեաց (առակաց, ե . 3—23 ։ լա̃ . 3 ։ իթ . 3 ։ յոբ . լա̃ . 11 . 12 ։ ղկս . ժե . 13 . 30 . և ն̃) . 8՝ Դատարկակեցութիւն, պարապորդութիւն, մեղկութիւն, կըննատութիւն, չգործել ինչ պիտանի կամ օգտակար, որով տկարանան ջիլք և զօրութիւնք մարմնոյն. զորոյ զբազմապատիկ վնասն տես (եզեկ . ժզ . 49 ։ յովնան . ա̃, 6 ։ մատթ . ժբ . 44 . 45 ։ ի . 6 ։ իե . 30 ։ եփես . դ . 27 . 28 ։ ա̃ թեսաղ . դ . 10 . 11 ։ բ̃ թեսաղ . գ . 10 . 11 ։ ա̃ տիմոթ . ե . 13 . և ն̃). տես 'ի վերոյ §. 271 և զծուլութիւն ։ 9՝ Զաղմաղբաղութիւն,

այս է՝ առաւել քան զչափն և վնասելով առողջութե̃ պատաղիլ ’ի հոգս և ’ի զբաղմունս կենցաղոյս, որ արգելեալ է յա̃յ (կարդա՛, Ելից. Իգ. 21: Ղևտաց. Իե. 20. 21: Սղմս. Ծդ. 23: Մատթ. Զ. 25. 31. 34: Ժգ. 22: Ժզ. 7. 8: Ղկս. Ը. 14: Ժբ. 16—30: Ա Կորնթ. Է. 32. 33: Փիլիպ. Դ. 6: Ա Տիմոթ. Զ. 8: Ա Պետրոս. Ե. 6. 7. ևն):

Ստացի՛ր չէք պատիւս՝ փառս՝ և արժանապատուութիւնս.

## §. 279. Հ. Զի՞նչ է պատիւն և փառք.

Պ. Պատիւն է մեծ համարումն կամ մեծարանք և վարկումն՝ զոր այլք ունին ’ի միտս իւրեանց զմէնջ, և արտաքին նշանօք յարգանաց ցուցանեն մեզ: Հիմն այդպիսի մեծարանաց են գերազանցութիւնք մեր, կա̃մ ներքինք՝ ո̃ր առաքինութիւնք, մեծագործութիւնք, գիտութիւնք, իմաստութիւնք. կա̃մ արտաքինք, ո̃ր ազնուականութի̃ և հարստութի̃ իրաւամբք ժառանգեալ. սոքա առ այլս ծնանին զբարի վարկած և համարումն, այն է՝ Անուն բարի. և սա երբ տարածի առ բազումս՝ կոչի Համբաւ. իսկ թէ միաձայն դատողութ̃ բազմութե̃ ճշմարտել հաստատեսցի, անուանի Փառք: Երբ զարդարեալն ճշմարիտ համբաւով և փառօք ամբարձեալ լինի ’ի բարձր պաշտօն հրապարակական յունել իշխողութի̃ ’ի վ̃ այլոց՝ յառաջնորդել ընկերաց և յորոշիլ առանձին պատուով ինչ, այս միձակ կոչի՝ Արժանապատուութի̃: Այս սահման փառաց՝ է հոգալ և ջան դնել, զի գիտութի̃ք և առաքինութի̃ք քովք յընկերս քո պատճառեսցես զբարի համարումն զքէն, և զարդէն եղեալն անկո-

բուռն պահեսցես և յաւելուցուս ։ Սակայն այս փառաւորութի̄ և պատուաւորութի̄ ոչ զի լինիցի առաքինական և բարի, պէտք ունել զերկս յատկութի̄ս, նախ՝ զի մի խնդրեսցես զայն իբր զվերջին վախճան (յովհ. Ե. 44 ։ ԺԲ. 43. ևն). երկ̄դ՝ զի մի անիրաւ միջոցիւք զանձեսցես քեզ (կաշառօք, սըտութ̄, կեղծաւորութ̄, ևն), այլ միայն ճշմարիտ արժանաւորութ̄ք, այն են՝ բարեգործութ̄ք և գիտութ̄ք. երր̄դ՝ զի զայն 'ի բարի նպատակ ուղղեսցես, դ̄ զի առաւել ևս բարիս գործեսցես և օգուտ տացես եղբարցդ ։ Բանքն սր̄ գրոց (մտթ. Իզ. 5—12 ։ ղկս. ԻԲ. 23—28 ։ յովհ. Ե. 40—46 ։ Ա կորնթ. Դ. 3. և այլք) յուղիղ միտս իմացեալ՝ ոչ հակառակին այսմ պատուիրանի արդար փառասիրութե̄ ։

§. 280. Շարժառիթք՝ որ պարտաւորեն զմեզ լնուլ զայս հրաման, են 1՝ խրատք ա̄յ, որ 'ի սր̄ գիրս բանիւք և օրինակօք պատուիրէ մեզ հոգ տանել արդար փառաց և պատուոյ (կարդա՛, յեսուայ, է. 27 ։ Ա թագ̄ց. Բ. 30 ։ սղմս. Կզ. 11 ։ առակ̄ց. Գ. 35 ։ ԻԲ. 1 ։ ԻԵ. 25 ։ ԻԷ. 2 ։ ժողով. Է. 2 ։ մարկ. ԺԵ. 43 ։ ղկս. ԺԴ. 10 ։ գործոց. Գ. 3 ։ ԺԳ. 2 ։ հռովմ. ԺԲ. 17 ։ Ա կորնթ. Թ. 15 ։ փիլիպ. Դ. 8 ։ Ա տիմոթ. Գ. 7. այլուր բազում). 2՝ օրինակն քր̄ի, որ ընդդէմ սուտ բամբասանաց փարիսեցւոց յոլովակի պաշտպանեաց զպատիւ իւր (մատթ. Թ. 1—8 ։ ղկս. ԺԱ. 14—28 ։ յովհ. Ե ։ Ը. 48. ևն). զնոյնն արար և առաքեալն պաւղոս (Ա կորնթ. Թ. 15 ։ Բ կորնթ. ԺԱ. ԺԲ. ևն). 3՝ 'ի սոյն պարտաւորէ զմեզ բնութիւր խթանն ծածկելոյ զմեզս և անմեղ ցուցանելոյ զմեզ առ արտաքըս (Բ կորնթ. ԺԱ. 13—16. ևն). 4՝ հարկն երջանիկ առնելոյ զմեզ, որ ոչ 'ի գլուխ ելանէ առանց

օգնականութե եղբարց՝ մեծ համարողաց զմեզ. 5՝ օրէնքն առաքինագործութե, զի բազումք հրաժարին 'ի մեղաց և գործեն զբարիս առ չկորուսանելոյ զվարս. 6՝ մեծապատիւ անձն զօրէ առաւել ևս օգտել ընկերաց ըստ հոգւոյ և ը մարմնոյ նց, ևն:

§. 281. Առ պահպանութի պատուոյ և փառաց պահանջի նախ՝ զի մի ոք խուռվքն յանցանօք կորուսցէ զայն (ա թեսաղ. ե. 22. ևն). երկ՝ որով հետև պատահէ յաճախ, զի ճշմարտիւ պատուելի անձն 'ի չարանախանձ ընկերաց յանիրաւի զրպարտեալ և վատահամբաւեալ լինի, յայսմիկ դէպս անմեղն պարտական է՝ սիրով և ճշմարտութբ պաշտպան կալ պատուոյ իւրոյ, ցուցանել զանմեղութի իւր, և զսուտ զրպարտութին քերել յանձնէ իւրմէ. որոյ հարկաւոր և օրինաւոր լինելն հաստատի թէ օրինակօքն քսի, և թէ առաքելոյն նր պաւղոսի, որք 'ի վերոյ ցուցաք: Ուր և զայն ծանիր, զի թէ հարկն և պարագայք պահանջեսցեն՝ անմեղն կարէ զճշմարիտ մոլութիւն զրպարտողացն յերևան հանել, որպ արար փրկիչն մեր քս (մատթ. իգ. 1=37. այլուր ևս), և սբն պաւղոս (փիլիպ. գ. 2. և յայլ տեղիս). Սակայն անմեղն եթէ նախատես լիցի՝ թէ ջատագովութիք իւր չունին ինչ պտղաբերել, և թշնամիքն չունին լսել կամ ուղղել զինքեանս, յայնժամ կամ մեծահոգի համբերութբ լուռ լիցի (մատթ. ե. 11. 12: իզ. 62. 63: ա պետրոս. դ. 12. 13. ևն), և զելս իրացն ըստ օրինակին շուշանայ (դանիէլ. ժգ. 42. 43) յուսալից հաւատով յած յանձնեսցէ (ա պետրոս, բ. 23: դ. 16: ա կորնթ. դ. 1=6. ևն), կամ ըստ նմանութեան պաւղոսի (գործոց. իե. 9=12) առ օրինաւոր դատաւորս բողոքեսցէ:

§. 282. Մեղք այսր պատուիրանի հակառակք են 1՝ Փառամոլութի, կամ չափազանց և անիրաւ իղձ փառաց և պատուոյ, որում իբրու վերջին վախճանի զոհեն բազումք զինչս՝ զառողջութի և զկեանըս իսկ. է մեղք մահուչափ՝ արգելեալ և պատժեալ յայ (տես, դատաւ. թ. 1=57: բ թգ՟ց. ժե. 1=13. և ժը. 14. 15: առակ. ը. 13: ժզ. 18: իթ. 23: եզեկ. իը. 2=10: մատթ. իգ. 12: ղկս. ա՟. 51: ժ. 15: ժդ. 7—12: ժզ. 15: յովհ. դ. 44: ժբ. 43: գործոց. ժբ. 23: գղտ. ե. 26: եբրայ. ե. 4: յակոբ. դ. 6. ևն), հակառակ ուղիղ դատողութե մտաց, վնասակար առաքինութեց, ծնող բազում մեղաց և անկարգութեց, ատելի այ և մարդկան. 2 Մեծաբանութի, պարծողութի, մնապարծութի, հաչակել զսուտ գերազանցութիս իւր առ որսալ զփառս. մեղք կշտամբեալ և պատժեալ յայ (դ թգ՟ց. ի. 1—22: սաղմ. ժա. 4: առակց. իէ. 2: եսայ. ժ. 13—17: դանիէլ. դ. 15: ա՟ մակաբ. գ. 14=23: ժ. 71: բ մակաբ. թ. 4: մատթ. զ. 1: մարկ. ժզ. 29: բ կորնթ. ժբ. 11=18: գաղատ. ե. 26: փիլիպ. բ. 3. և այլուր). 3՝ Ցուցամոլութի, այն է՝ դործով՝ շարժուածովք՝ զգեստուք և այլ նշանօք ցուցանել զինքն պատուելի ոմն և փառաւորելի (գղտ. ե. 26: փիլիպ. բ. 3. ևն). 4՝ Անպատկառութի կամ Անզգայութի. երբ յանարգ ստախճան և յանպատուութի խջուցանէ ոք զինքն և ոչ զգայ այնուհետև փառաց կամ անփառութե, նախատինք մարդկան լեալ և արհամարհանք ժողովրդոյ, ևն:
Յայս ամ մոլութեց և նմանեաց պարտիմք հեռանալ զօրութեամբ վերոգրեալ շարժառթից և ածային պատգամաց:

## §. 283. Հ. Զի՞նչ է ջանք հարըստութեան.

Պ. Այն է փոյթ և ճիգն՝ արդար և անմեղ միջոցիւք գանձելոյ՝ պահելոյ՝ և յաւելլոյ զճոխութիւն՝ զինչս՝ և զստացուածս. առ որ պարտաւորէ զմեզ 1՝ ած, որ 'ի սբ. պատգամս իւր ցուցանէ՝ թէ ինքն է տուող հարստութե., և կամի զի փայելեսցուք և վարեսցուք նոքօք (ընթերցիր, ծննդ. ժգ. 14—18. գ թագր. գ. 13. բ մնացրդ. ժէ. 1—6. ժը. 1. սղմս. ճժա. 3. առկց. գ. 9—16. ը. 18. ժ. 22. ժդ. 24. իբ. 2. ժողով. բ. 24. գ. 13. ե. 17. 18. է. 12. 13. ժ. 19. յովբ. ա. 10. իբ. 12. մատթ. զ. 11. 33. ղկ. 14—40. ղկս. ժդ. 13. 14. ժզ. 1—9. բ կորնթ. ժբ. 14. եփես, դ. 28. ա թիմոթ. ե. 8. զ. 19. յակոբ. ա. 10. եւն). 2՝ հրամանն սիրելոյ և երջանկացուցանելոյ զանձինս մեր, որ առանց հարստութե. անկատար մնայ. 3՝ հարկն եղբայրսիրութե. առ որ պահանջի. արտաքին ճոխութի., զի օգնեսցուք կարօտելոց. 4՝ անիրաւ է՝ իւրոյ և ընտանեաց խնամ ոչ տանել (ա թիմոթ. ե. 8. եւն), ապա հարկ է ունել ինչս առ 'ի խնամել զիւրսն. 5՝ աղքատութին արգելք և խափանարար է բազում բարեգործութեց. 6՝ նոյն իսկ սիրելիք և աշակերտք քրի ունէին մեծութիս և ինչս (տես, մատթ. իէ. 57. ղկս. ը. 2. 3. եւն). նա թէ՝ նոքին իսկ առաքեալք՝ որք ասացին թողեալ զամ ինչ և հետեւեալ քրի, տակաւին ունէին ինչս կամ տունս սեփականս (մտթ. ը. 14. յովհ. ժթ. 27. եւն). 7՝ բանք սբ.

գրոց (մատթ. Ի. 24. ԺԹ. 21: ղկ. ԺԴ. 33: գործոց. Դ. 32, և այլ նմանք յոլովք) ոչ հակառակին այսմ պատուիրանի. զի 'ի նոսին և 'ի նոյնպիսին՝ կամ յուսալն 'ի մեծութիւն (մարկ. Ժ. 24: ա տիմոթ. Զ. 18, ևն) կամ չարաչար վարիլն նոքօք (ղկ. ԺԶ. 20. ևն) արգելեալ լինի:

§. 284. Առ անմեղ և արդար ստացութիւն հարստութե պահանջի, զի նախ՝ բարի վախճանաւ հաւաքեսցուք զայնս, որ առ 'ի գործել զբարիս մեզ՝ մերայնոց և կարօտեալ ընկերաց. երկ՝ զի բարի միջոցիւք զայնս գանձեսցուք; որք են 1՝ օրինաւոր ժառանգութի 'ի հայրենեաց. 2՝ անխարդախ տուր և առ կամ վաճառականութի. 3՝ ձեռահմուտ արուեստագործութի. 4՝ գիւտ անտէր իրաց. 5՝ պարգևընկալութի. 6՝ օրինաւոր նախադրութի. 7՝ վարձընկալ ծառայութի. 8՝ առաւել քան զամ՝ մտաւոր կամ մարմնաւոր Աշխատանք և Վաստակ՝ յոյ բանիւք և օրինակօք 'ի սբ գիրս հրամայեալ (ծննդ. Բ. 15: Գ. 17: ելից. Ի. 9: սաղմ. ՃԻԷ. 2: առակց. Զ. 6: Ժ. 4: ժողով. Ե. 11: մատթ. Ի. 1—16: գործոց. ԺԲ. 3: Ի. 34. 35: ա կորնթ. Դ. 11. 12: եփես. Դ. 28: ա թեսաղ. Բ. 9: Դ. 11: Ե. 12: բ թեսաղ. Գ. 6—14. և այլուր). 9՝ Հսկողութի՝ զի ինչք մի փճասեսցին՝ յումպէտս ծախեսցին՝ գողասցին՝ այրեսցին՝ կամ կորիցեն (յովհ. Զ. 12). 10՝ Խնայութի, որ է խոհեմ չափաւորութի և ճշգրտութի ծախուց և ելից, միայն զհարկաւորսն ունել, զաւելորդս հատանել, և յամի պահել զպարկեշտութի (յովհ. Զ. 12: սիրաք. ԺԹ. 1. ևն). 11՝ Բաւականութի սրտի՝ յորժամ յետ անմեղ ջանից ոչ յաջողէ մեզ յոյ հարստանալ, կամ զուցէ և զեղեալն դիւրի-

ցի առանց մերս յանցանաց կորուսանել (յովբ. ա. 21. 22. բ. 10։ ա տիմոթ. զ. 6—10։ եբրայ. Ժ. 34. ևն)։

Անիրաւ միջոցք հարստանալոյ են, գողութի, յափշտակութի, պէսպէս խարդախութիք և խաբէութիք 'ի տուրևառս, մուրացողութի՝ երբ կարէ ոք աշխատել, չհատուցանել զպարտս, զրկել զվճարս, անիրաւ վաշխ և տոկոսիք, առնուլ կաշառս, և այլ սոյնպիսիք։

§. 285. Ընդդէմ այսր պատուիրանի առաջին մեղքն է՝ Ագահութի կամ Արծաթսիրութի, այն է՝ չափազանց ցանկութի ունելոյ և գանձելոյ զհարըստութիս. նշանք այսր մեղաց են, անձին և ընտանեացն խնայել զհարկաւորսն, դժուարութբ հատուցանել զպարտս և զվարձս, չտալ ողորմութի կարօտելոց, անիրաւ միջոցիւք ինչս հաւաքել, 'ի գնելն և 'ի վաճառելն խարդախել, ցաւիլ ընդ հարկաւոր ծախս, չասել երբէք շատ, առ սէր ընչից զանց առնել զպաշտամունս այ և կրօնի, ըղ յոյս իւր դնել յինչս և 'ի ճոխութիս, այ վն վարձու ծառայել, ընդ յաջողուածս այլոց նախանձիլ, չառնել ինչ գործ յօգուտ եկեղեցւոյ՝ ազգին՝ հայրենեաց՝ աղքատաց, և նմանք։

Շարժառիթք փախչելոյ յագահութէ՝ են 1՝ զի ած խստիւ արգելու մեզ զայն և պատժէ (տես, առակաց. Ժա. 28։ ԺԸ. 16. 27։ ԻԲ. 22։ Լ. 15։ Ժողով. Դ. 8։ Ե. 9։ եսայ. Ե. 8։ ԾԴ. 11։ ԾԷ. 17։ երեմ. Զ. 13։ Ը. 10։ եզեկ. ԻԲ. 12։ մատթ. Զ. 19—24։ Ժբ. 5։ Իզ. 15։ մարկ. Է. 21։ Ը. 36։ ղկս. Ժբ. 15։ գործոց. Ե. 1—10։ Ը. 20։ ա կորնթ. Զ. 10։ կողոս. Գ. 5։ ա տիմոթ. Զ. 9։ տիտոս. Ա. 7—12։ եբրայ. Ժգ. 5. ևն)։

2՝ զի մայր և ծնող է բազում այլ մեղաց, գողութեան, խաբէութեան, մատնութեան, ստերդմնութեան, անիրաւութեան, նախանձու, մարդասպանութեան, անձնասպանութեան, և այլոց բազմաց (Ա տիմոթ. Զ. 6—10. ևն). 3՝ յիմարութիւն է ծառայել և ոչ տիրել արծաթոյ, հաւաքել և ոչ վայելել. 4՝ տանջէ և չարչարէ զսիրտ անհամար հոգովք, միշտ երկնչի, ոչ ունէք հաւատայ, ևն. 5՝ դառնացուցանէ զժամ մահուանն. 6՝ կորուսանէ զյաւիտենական երջանկութիւն (մարկ. Ժ. 24. ևն)։

§. 286. Ընդդ. մոլութիւն է Շռայլութիւն, անառակութիւն, ցեղխութիւն, վայրավատնութիւն, չափազանց և անհամար կաւոր ծախք վնասուք արդար ընչից և զրկողութ. օրինաւոր պիտոյից. որոյ պատկերն՝ պատիժն վնասն և չար հետևութիւնքն նշանակին 'ի ղկս. ԺԵ. 11—32. Ժզ. 1—31. Բ օրինց. ԻԱ. 20. 21։ իմաստ. Բ. 6—23. յակոբ. Ե. 5. Ա պետր. Դ. 3. 4։ Բ պետր. Բ. 13. և յայլ տեղիս։

Պատրաստեա՛ զքեզ առ սուրբ հաղ.

## §. 287. Հ. Զի՞նչ է պատրաստութիւն առ մահն.

Պ. Ի՛ անդուլ կատարումն պարտաւորութեց կրօնի, և վարումն միջոցաց՝ որք զօրբութիւն կենաց ձգեալ յօդաւորեն ընդ անցից 'ի հանդերձեալ կեանս. առ որ պահանջի՝ զի 1՝ զյիշատակ մահուան յընթացս աւուրն ստէպ 'ի միտ ածցուք (սաղմոս. ԼԸ. 5. 6։ ՃԼԸ. 9. 10. ևն). 2՝ զանստուգութի և զանգիտութի ժամու և րոպէի մահու յուշի կալցուք (ղկս. ԺԲ. 20։ մատթ. ԻԴ. 41—45։ Իե. 6. ևն). 3՝ ստէպ քննեսցուք զանձինս՝ թէ

ունիցի՞մք զուղղափառ հաւատս և զայլ առաքինունս (Բ կորնթ. ԺԳ. 5: Ա տիմոթ. Ա. 19: գործոց. ԻԴ. 16. ևն). 4՝ մի ինչ գործեսցուք՝ ընդ որ 'ի կիտի մահուան զղջասցուք (Ա կորնթ. ԺԱ. 31. ևն). 5՝ սիրով տեսութեան Այ և երկնային փառաց զմեզ բորբոքեսցուք (փիլիպ. Ա. 23: Բ տիմոթ. Դ. 6—8: սաղմ. ԽԱ. 3: ԻԶ. 8. 9. ևն). 6՝ զընտանիս՝ զինչս՝ և զկեանս մեր կանուխ բարեկարգեսցուք (եսայ. ԼԸ. 1—8: ծննդ. ԽԵ. 5. 6: Գ թգւրց. Բ. 1—10. ևն). 7՝ 'ի մերձենալ ժամու մահուան հիւանդութե՝ ծերութե կամ այլով դիպուածով, հաւատով և յուսով զինաւորեալ ուրախասիրտ ընդ առաջ ելցուք (ղկս. Բ. 29: գործոց. Է. 58: Բ տիմոթ. Դ. 6—8. ևն). 8՝ գիտասցուք թէ մահն արդարոց՝ քաղցր և հեշտալի ինչ է իբրև զքուն և ննջումն մարդոյ (Բ օրինաց. ԼԱ. 16: Բ թգւրց. Է. 12: իմաստ. Գ. 3: մատթ. Թ. 24: յովհ. ԺԱ. 11: գործց. Է. 59: ԺԳ. 36: Ա թեսաղ. Դ. 12. ևն), և պատուական է առաջի Այ (սղմս. ՃԺԵ. 15: իմաստ. Գ. 1. Դ. 7: Բ կորնթ. Ե. 1: յայտն. ԺԴ. 13. ևն):

## Լե՛ր խոհեմ 'ի գործս քո.

### §. 288. Հ. Զի՞նչ է խոհեմութիւն.

Պ. Խոհեմութի կամ խոհականութի քրիստոնէական՝ որ 'ի սբ գիրս մեր կոչի, խորհուրդ, խորագիտութի, իմաստութի, հանճար, ևն, է ունակութի ուղիղ բարեկարգելոյ զառօրեայ գործս (զմիջոցս) առ անվրէպ լրումն հրամայեալ պաշտամանց (վախճանաց). իբր զի բովանդակ կեանք և արարք մեր յաշխարհիս՝ կարգեալ են իբր միջոցք, որոց ու-

զնոյն վարչութ̄ պարտիմք հասանել վերջին վախճանի մերում՝ երջանկարար տեսութեան ա̄յ. ընդորով՝ հրամայեալ պաշտամունք մեր դնին իբր երկրորդական վախճանք նոյնոյ երանացուցիչք. և ըստ այսմ՝ ա̄մ քրիստոնէի հարկ 'ի վերայ դնի, անսայթաք իմաստութ̄ այնոյ բարեկարգել զգործողութ̄ս և զկիրս իւր, զի նոքօք զա̄մ պաշտամունս իւր (առ ա̄ծ, առ ինքն և առ ընկերս) անվրէպ կատարեսցէ, որովք և զինքն և զվիճակ իւր ներքուստ և արտաքուստ՝ երջանիկ և երանելի արասցէ յայսմ և յապագայ կեանս՝ ազատեալ 'ի ներհական թշուառութ̄ց : Անհատական ներգործութ̄ք սոյնօրինակ խոհեմութ̄ս՝ են, զերջանկացուցիչ բարին մեր՝ զփրկութ̄ հոգւոյ մերոյ՝ յառաջ քան զա̄մ իբր զմի միայն վերջին վախճան և զնպատակ՝ հանապազ յանդիման աչաց մտաց ունել, զանպակաս լրումն պարտաւորեալ պաշտամանց մերոց՝ իբր զերկրորդական վախճանս ընդ առաջնովդ դասակարգել, զա̄մ խորհուրդս զբանս և զգործս մեր՝ իբր զմիջոցս և զգործիս՝ առ ստացումն վախճանացդ միայն և միշտ վերածել, զկապակցութ̄ և զյարմարութ̄ կամ զներհակութ̄ միջոցացն ընդ վախճանացդ քաջ 'ի միտ առնուլ, զմիջոցս՝ թէ բազում իցեն՝ ուղիղ ընտրողութ̄ և խորհրդածութ̄ ընդ իրեարս համեմատել, և զառաւել օգտակարսն՝ այլոց նախադասել, զվախճանն և զմիջոցս՝ գլխովին փակել և վարել բացորոշ ինչ օրինօք՝ ըստ պահանջելոյ համեմատութ̄ն 'ի միջի նոցին, զընթացս գործոյն և միջոցացն՝ առ լաւագոյնն ուղղել, 'ի բազում ճանապարհաց՝ զառաջնորդականն առ այն ընտրել, և ընդ նոյն ուղի՝ թէ և

դիւրադայթ և դժուարադնաց իցէ՝ աննահան-
ջելի ընթանալ, զդիպեալս առ ճանապարհաւ
զխոչ և զխութ՝ կամ 'ի սպառ վանել՝ կամ 'ի նո-
ցունց խուսել՝ կամ յիւր օգուտ շրջել, որմնել
զպատճառս արգելմանց և զելս նոցուն գտանել,
զդիմամարտս 'ի հաւանունի վախճանին յանկուցա
նել, զպխտեւանս ևս և 'ի հեռաստանէ բարձեալ
բերել, զպատուականս զգուշութ խնամել, զա-
նարգսն՝ թէ օգտակար իցեն՝ ոչ անտես առնել,
զվտանգեալս ամրացուցանել; 'ի միջէ բազում
ինչ օգուտ քաղել, ո՛չ ինչ աւելորդ անդէպ և
տարաժամու գործել, ոչ միայն կարևորաց իրին
այլ և գեղեցկութ պիտանութ և տևողութ նորին մը
տադիր լինել, չլինել հետամուտ անպիտանեաց
և անկարևորաց, 'ի դուզնաքեայս սկզբնաւորեալ,
'ի մեծամեծս վերանալ. 'ի միջէ՝ յոլով ինչ
մակաբերել, իմա՝ յանցելոց՝ զներկայս, 'ի ներ-
կայէ՝ զապառնիս, 'ի յայտնեաց՝ զծածուկս, 'ի
փոքունց՝ զմեծամեծս, 'ի մերձակայէն՝ զհեռա-
ւորս, 'ի մասանց՝ զբոլորն, 'ի բանից և 'ի գոր-
ծոց՝ զներքին դիտումն և զկամս գործողին, ևն,
զամ ինչ՝ ո՛չ ըստ կարծեաց խուժանին՝ այլ ըստ
ճշմարտութ և ըստ բնութ նոցին դատել և կշռել,
զերկբայականս իբրև զճշմարիտս ոչ ըմբռնել
կամ հաստատել, բազում խորհրդով և սուր ընտ
րողութ՝ և ոչ անխորհուրդ մտօք զգործս սկսա-
նել, զուղղութ սկսեալս՝ անկատար չթողուլ, 'ի
յաջողութ և յանյաջողութ՝ անվրդով անշփոթ
կալ, 'ի թշնամեաց զգուշանալ, ոչ ամ՟ն ընծա
յել հաւատս, ճշմարիտ սիրելեաց խորհրդակ-
ցիլ, և որ սոյին նմանք իցեն. Զբանս և զօրի-
նակս ս՟բ գրոց՝ որ զայդ ոսկի մեզ նկարագրեն, զնա

և կարգա՛ ՚ի Ծննդ. Լ. 31—43. ԼԱ. 1—24: Թուոց. ԺԳ. 17—29: Յեսուայ. Թ. 3—15: Դատաւ. ԺԲ. 5. 6: Ա Թգւոց. ԻԱ. 12. 13: ԻԵ. 18—32: Բ Թգւոց. ԺԴ. 1—25: Գ Թգւոց. Գ. 23—28: Դ. 29—34: Ա Մնացորդ. ԻԲ. 12: Սղմս. ԺԳ. 1. 2: ԽԲ. 4: Առակց. Բ. 2. 3: Գ. 5—13: ԺԷ. 27: ԻԴ. 3. 4: Իմաստ. Ե. 3. 4: Յովբ. ԺԲ. 12. 13: Եսայ. Ե. 21: Լ. 1: Մտթ. Զ. 33: Ժ. 16: ԺԶ. 26: ԻԵ. 1—12: Ղկս. Ա. 17: Բ. 47: ԺԶ. 8: Հռովմ. Ը. 6: ԺԲ. 16: Ա Կորնթ. Ա. 19. 25: Բ. 14. 15: Եփես. Ա. 8: Գ. 4: Տիտոս. Բ. 2—5. և այլուր):

# ՅՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

## Ընկերպաշտութիւն.

### §. 289. Հ. Զանի՞ են պաշտամունք առ ընկերս.

Պ. Յոլով են ազգք պաշտամանց՝ յընկերս եղելոց, այլ հեշտեաւ յերկուս խումբս վերածին, ՚ի բացարձակս և ՚ի թէականս: Բացարձակ պաշտօն են՝ որոց ամ մարդիկ անխտիր պարտաւորին. այսպիսի են, Ճանաչել զընկերս և զյատկանիշ նց, սիրել զամ մարդիկ, զհայրենիս և զ-թշնամիս, ուսուցանել տգիտաց զճշմարտութի, ուղղել զմեղաւորս, տալ բարի օրինակ, հոգ տանել կենաց՝ առողջութե՝ պատուոյ՝ համբաւոյ՝ և հարստութե եղբարց, կենակցել կամ կենցաղավարել ընդ այլս:

իսկ Թէական կամ առնչական պաշտօն են՝ որոց պարտաւորին մարդիկ՝ եթէ գտցին յայս ինչ կմ յայն վիճակի. այսպիսի համարին պաշտամունք կամ պարտաւորութիւնք եկեղեցական հովուաց կամ եպսաց, քարոզչաց, ժողովրդոց, կրօնաւորաց խոստովանահարց, վարժապետաց, աշակերտաց, իշխանաց, իշխեցելոց, արանց, կանանց, ծնողաց, զաւակաց, ազգականաց, տեարց, ծառայից, բարերարաց, երախտագիտաց, դատաւորաց, բժշկաց, վաճառականաց, արհեստագործաց, զինուորաց, հարստաց, աղքատաց, տանուտեարց, առողջաց, հիւանդաց, յաջողելոց, փորձելոց, կենդանեաց՝ առ ննջեցեալս, մարդոյ՝ առ անբան անասունս, և այլ նմանք: Ճառեսցուք զկարևորս դոցին հակիրճ բանիւք:

## Բացարձակ պաշտամունք.

Ծանի՛ր զընկերն և զյատկանիշ նորա.

### §. 290. Հ. Զի՞նչ է ճանաչումն ընկերաց.

Պ. Զոր ինչ կանխաւ ասացաք զճանաչմանէ անձին և յատկանշի իւրոյ (§. 250=254), զնոյնն պէտի իմանալ և առնել ը̄ եղբարս և յատկանիշ նց̃, այն է՝ մանր խուզողութ̃ քննել և իմանալ զո̃մ հանգամանս և զորպիսութիւնս բարուց և բնութե̃ ընկերաց մերոց, փորձել՝ ընտրողութի̃ առնել՝ և ճանաչել զյարգ և զգին գէթ նոցա ամ̃ն՝ ընդ որս ունիցիմք ծանօթանալ կամ ընկերակցիլ յինչ և իցէ, քաջ կշռել զվարս և զյատկանիշ իւրաքանչիւր ուրուք, ընտրել ընդ մարդ և

ընդ մարդ, ճանաչել զանարգն և զյարգականն, զմանս առ պատուականս ունել (փիլիպ. բ. 29), և զայլս կրկին պատուոյ արժանիս համարել (ա տիմոթ. ե. 17. եւն), յայտ է՝ 'ի սակս պէսպիսութ բարոյական յարգի նոցա, ոչ միայն ըստ աստիճանի բնական՝ գերբնական՝ և ստացական գերազանցութեան, այլ և ըստ տարբերութ հասակի՝ սննդեան՝ դաստիարակութ՝ կլիմայի՝ մարմնական խառնուածոյ՝ ուսման՝ պաշտաման՝ վիճակի՝ և կրօնի իւրաքանչիւր մարդոյ, ըստ որոց զանազանին 'ի միմեանց բարք ծերոց՝ չափահասից՝ երիտասարդաց՝ արանց՝ կանանց՝ հարստաց՝ աղքատաց՝ գիտնոց՝ տգիտաց՝ և այլոց բազմաց. զորոց զյատկանիշս պարտիմք ուսանել 'ի գրոց նախնի և արդի ճարտասանից և հոգեբանից: (տես համառօտ 'ի ճարտասանութ տպեալ 'ի վենետիկ, յամին 1775. յեր. 497=510):

§. 291. Շարժառիթ և հարկաւորութի պաշտօնիս հաստատի 1՝ զի ած 'ի սբ գիրս հրամայէ ճանաչել զընկերս մեր (ընթերցիր, ղուկ. ի. 23: երեմ. գ. 27: թ. 4=9: ժբ. 6: միքիէ. է. 5. 6: ա թեսաղ. ե. 21: գ. 5: ա յովհ. դ. 1: յովհ. է. 17: ա կորնթ. ժդ. 18: բ կորնթ. ա. 13. 14: բ 9: ը. 22: փիլիպ. բ. 19=23: գ. 17: սղմս. ճդ. 20: ծդ. 22: ծէ. 2: ծննդ. խբ. 10—30. եղից. ի. 20: այլուր բազում). 2՝ զի քս տէրն մեր փորձեաց և ընտրեաց զաշակերտս իւր, ապա նախ գիտաց զհանգամանս նոցա. զի առ ընտրողութի հարկաւ պահանջի նախագիտութի կամ յառաջընթաց ճանաչութ (յովհ. ժգ. 18. հռովմ. ը. 21. եւն). 3՝ զի ած հրամայէ մեզ սիրել զընկերս, ապա

դովին իսկ հրամայէ նախ ճանաչել զն̃ա . զի սէր 'ի կամաց ոչ բղխէ առ անծանօթն 'ի մտաց . 4՝ զի պատուէր ունիմք յոյժ խորշելոյ յոմանց 'ի մարդկանէ (տես . մատթ . Է . 15=20 ։ Ժ . 17 ։ Ժզ . 6 ։ Իդ . 4 ։ մարկ . Ը . 15 ։ հռովմ . Ժզ . 17 ։ գաղատ . Ա̃ . 8 . 9 ։ փիլիպ . Գ . 2 . ևն), ուրեմն նախ պարտիմք իմանալ զյատկանիշ և զորպիսութի̃ նց . 5՝ զի ոմ̃ 'ի մօտոյ տեսլոյ եմք՝ հրամայէ մեզ ա̃ծ ուսուցանել զոգէսս, յանդիմանել զմեղաւորս, պատուել զարժանաւորս, ևն. արդ՝ այդ ա̃մ ենթադրեն կանխաւ ճանաչել զհանգամանս նց, և ըստ ճանաչման մեր վարիլ ընդ ն̃ս առ 'ի չսխալիլ։ Բայց չեն պէտք յերկար ապացուցուե̃ 'ի բանիս . շատ է մտածել թէ ոչ միայն ա̃մ պաշտամունք յընկերս եղերեալք ենթադրեն զկանուխ ճանաչումն հանգամանաց նց, այլ և ուղիղ անձնասիրութի̃ն և բնական երանասիրութի̃ն մեր զդոյն ինքնին մեզ թելադրէ . զի որովհետև առ երջանիկ առնելոյ և կատարելագործելոյ զմեզ ամենեին կարօտ զոմք օգնութի̃ գտանել յընկերաց և ազատ մնալ 'ի վնասակարութէ̃ նց, այսու իսկ պարտական լինիմք յառաջագոյն քաջ ճանաչել զբարութի̃ և զչարութի̃ նոցին. զի 'ի բարեաց՝ բարիս ընկալցուք, և 'ի չարեաց անձնապահ լիցուք առ չկորուսանելոյ զերջանկութի̃ մեր ։ 'Ի սբ̃ և յարտաքին գիրս և 'ի փորձս կենաց անթիւ են օրինակք մարդկան, որք կամ օգուտ կամ վնաս գտին յընկերաց՝ 'ի պտ̃ճառս ուղիղ կ̃մ սխալ ճանաչման իւրեանց զն̃ս ։

Սիրեա՛ զընկերս քո իբրև զանձն քո .

### §. 292. Հ. Զի՞նչ է եղբայրսիրութիւն կամ մարդասիրութիւն .

Պ . Սիրել զընկերս՝ նշանակէ՝ անկեղծ կա-

մնալ՝ ցանկալ՝ և հաստուցանել նմ զտմ բարիս՝ զհոգևորս և զմարմնաւորս. իսկ ընկեր անուանին՝ տմ մարդիկ առանց ուրուք բացառութ (ղևտաց. ժթ. 18: մատթ. ե. 33. 34: ղկս. ժ. 29—38: գործոց. ժէ. 26. ևն): Հարժառիթք պատուիրանիս են, 1՝ զի սէրն եղբօր է մեծն և առաջին պատուիրանն տյ առ մեզ (մատթ. իբ. 37—40: մարկ. ժբ. 31: յակոբ. բ. 12: հռոմ. ժգ. 8—11: ա կորնթ. ժգ. 1—10. ևն). 2՝ օրինակն մարդասիրին տյ և քի հարկեն զմեզ 'ի նոյն (մատթ. ե. 45: յովհ. ժգ. 34: ժե. 12—15: ա յովհ. դ. 8. ևն). 3՝ եղբայրսիրութն է սոյգ նշան Ճշմարիտ տծսիրութ (ա յովհ. դ. 12—21. ևն). 4՝ գերազանց է քան զտմ առաքինուիս և զշնորհս տյ (ա կորնթ. ժգ. 1—13), ևս և քան զպատարագս և զզոհս (մարկ. ժբ. 33: մատթ. ե. 23. 24). 5՝ է թէուլի էական՝ առանց որոյ անհնար է փրկել զհոգիս (մոթ. իե. 34—41: ա յովհ. գ. 15: դ. 17. ևն). 6՝ է ցուցակ Ճշմարիտ աշակերտին քի և կրօնի նորա (յովհ. ժգ. 35: յակոբ. ա. 27: եփես. դ. 1—8. ևն). 7՝ ամենեքին եմք արարածք միոյ տյ, որդիք միոյ հօր, և սահմանեալք առ մի վախճան (գրծց, ժէ. 24—29. ևն). 8՝ ամենեքին կամիմք սիրել յայլոց, ապա և մեք պարտիմք զամենեսեան սիրել (մատթ, է. 12). 9՝ եղբայրսիրութն է կապ մարդկային ընկերակցութ, հիմն երջանկութ, պատճառ 'ի մեզ զանթիւ օգուտս ազատէ 'ի յոլով վնասուց, ևն:

§. 293. Յատկութք Ճշմարիտ մարդասիրութ են, զի լինիցի 1՝ ընդհանուր և տարածեալ ա-

ռանց բացառութեան առ ամ մարդիկ և առ ամ բարիս նց. 2՝ մաքուր՝ որ ողջախոհ՝ առանց շահասիրութե (ա յովհ. գ. գ). 3՝ անկեղծ և գործունեայ, ոչ լեզուաւ միայն, այլ սրտիւ և գործով (հռովմ. ժբ. 9: ա պետրոս. ա. 22. ա յովհ. գ. 18: յակոբ. բ. 14=18. ևն). 4՝ հաստատուն՝ անփոփոխ և անլուծանելի, ևն: Զ միջոցս ստանալոյ զեղբայրսիրութի՝ կարես քաղել յաստցեալ շարժառիթիցդ և 'ի յատկութեց:

Սիրեա՛ զոմանս առաւել քան զայլս,
կամ
Ցընկերաց քոց զոմանս արա՛ քեզ բարեկամս.

## §. 294. Հ. Զի՞նչ է բարեկամութիւն.

Պ. Որովհետև եղբայրսիրութին կարէ և պարտի տանել զպէսպէս աստիճանս կամ զաստկութի և զթուլութի, երբ 'ի սակս զօլանի նմանակցութե և բանաւոր պատճառաց՝ զմի կամ զոմանս յընկերաց մերոց սիրեմք առաւել քան զայլս՝ վառեալ բոցով և փափուկ ընտանութբ, այս աստիճան սիրոյ անուանի Բարեկամութի, կամ, Սիրելութիւն. որոյ համեստութի և պիտանութի հաւատարմանայ 1՝ օրինակաւ այ, որ զոմանս 'ի մարդկանէ առաւել քան զայլս սիրեաց և անուանեաց ինքեան Բարեկամս և Սիրելիս (գիտ, սաղմ. ճլը. 17: իմաստ. է. 14. 27: ը. 18: յակոբ. բ. 23: ելից. լգ. 11: բ օրինաց. լդ. 10. ևն). 2՝ օրինակաւ քսի, որ ոչ միայն 'ի բազմութէ աշակերտացն ընտրեաց զերկոտասանս, և բարեկամս կամ սիրելիս զնս կոչեաց (ղկս. ժբ. 4: յովհ. ժա. 11: ժե. 14. 15.

եւն)․ այլ եւ յերկոտասանից անտի զմին զյովհան-
նէս առաւել քան զայլս սիրեաց (յովհ․ ԺԹ․ 26։
ԻԱ․ 7․ 20․ եւն)․ 3՝ օրինակաւ մեծամեծ սրբց
ա̃յ, որոց կային բարեկամք եւ սիրելիք (յովբ․ Բ․
11։ սաղմ․ ԼԵ․ 12։ ՃԷ․ 19։ գործոց․ ԻԷ․ 3։
ա̃ թգ̃րց․ ԺԲ․ 1։ Ի․ 17․ այլուր յաճախ)․ 4՝
վկայութ̃ ածաշունչ գրոց, որ հրամայէ ունել բա
րեկամս եւ աւանդէ զկանոնս կենակցելոյ ը̃ նոսին
(կարդա՛, ղկս․ ԺԳ․ 9։ առակց․ Գ․ 29։ ԺԷ․ 17։
ԻԵ․ 8․ 9։ ԻԶ․ 18․ 19։ ԻԷ․ 10։ ժողով․ Դ․ 9․
եւ յաճախ 'ի գիրս առակաց եւ սիրաքայ)․ 5՝ գոր-
ծակցութ̃ բարեկամաց յաւելուն հոգւոր եւ մարմ-
նաւոր երջանկութի եւ բարիք մեր եւ հայրենեաց մե-
րոց, ապա օրէն է ունել զայնս․ 6՝ 'ի մբ̃ գիրս ո՛չ
ուրեք արգելեալ լինի բարեկամութի։

§․ 295․ Որովհետեւ քրիստոնեայք՝ ըստ հրա-
մանին քո̃ի (մատթ․ Ե․ 16) պարտին պահել զխա
ղաղութի 'ի կենակցիլն ընդ մարդկան, հարկ է
նց̃ ուսանել զկանոնս ընտրելոյ եւ կելոյ ընդ բա-
րեկամս․ որոց գլխաւորքն են, 1՝ դու քոյովդ մա
սամբ ամյն լեր բարեկամ, բայց զգո՛յշ լեր՝ մի̃
հաւատասցես՝ թէ եւ ամքին նոքա որք ցուցանեն
զինքեանս քեզ բարեկամս, լինեն ճշմարտիւ այն-
պիսի, վ̃ք մի̃ լիցիս ամյն ընտանի (երեմ։ Թ․ 4։
ԺԲ․ 6։ միքիէ․ 7․ 5։ դատաւ․ ԺԳ․ 15։ Բ̃ մնա-
ցորդ․ ԺԹ․ 2։ ղկս․ ԻԴ․ 12․ եւն)․ 2՝ ընտրեա՛
քեզ 'ի բարեկամ՝ ոչ զնա, յոր շարժէ զքեզ բը
նական համակրութիդ, խառնուած մարմնոյդ, ըն-
կերակցութիդ, մնոտի շահասիրութիդ, եւ որ չար եւս
է՝ գարշ ցանկութի, գեղեցկութի, եւն․ այլ զնա՝ որ
ճշմարտիւ ածավախ իցէ՝ առաքինագործ՝ համես-
տակեաց՝ ուղղադատ՝ հայրենասէր՝ ուսումնասէր եւ

կատարեալ իմաստուն . 3՝ ընտրեա զայր այնպիսի, որ վկայեալ՝ կենցաղով՝ համգամանօք՝ և պարագայիւք քեզ հաւասար կամ նման իցէ . զի յաննըմանս չի՛ք սէր, ապա և ոչ բարեկամութի̃ . 4՝ մի վաղվաղեր և մի շտապեր յընտրելն, այլ փորձեա յերկար 'ի զանազան դէպս, և ապա կապեսջիր ընդ նմա հոգւով . 5՝ յետ գտանելոյդ զա̃ծատուր բարեկամ՝ կա՛լ զնա գերագանց քան զա̃մ գանձս աշխարհի, մի փոխանակեսցես զնա երբէք, զկապ սիրոյդ որ քան զօր առաւել պնդեսցես ընդ նմա, տկարութե̃ց նորա համբե՛ր և անբասի՛ր արա, զպակասութի̃ս և զանկատարութի̃ս քո 'ի նմանէ թագո՛, արա ընտանութի̃՝ բայց խորագիտութ̃բ, կա՛ց արթուն զի բարեկամութի̃ ձեր մի փոխեսցի 'ի թշնամութի̃, զծածուկս սրտիդ բա՛ց նմա՝ բայց ո՛չ զայնս, որոց յայտնութիւն կարէ վնասել քեզ, վարեսջի՛ր ան կեղծութ̃բ՝ բայց և խոհեմութ̃բ, հաղորդեա նմա ըզ քաղցրն քո և զդառնն, լե՛ր գործակից օգնական հոգւոր և մարմնական երջանկութե̃ց նր̃, միշտ մընասցես հաւատարիմ առ նա, մի իւիք վշտացուցես զնա, զկարելի կամս նր̃ կատարեա, սակայն հայեա՛ց 'ի քեզ՝ զի առ սէր նորա մի մեղիցես ընդդէմ ա̃յ . սուրբն են փոխադարձ պարտաւորութի̃ք բարեկամաց առ իրեարս ։ 6՝ կա՛լ 'ի մտիդ՝ թէ որոնել զբարեկամ՝ պարտք է մեզ, բայց գտանել և ունել զբարեկամ՝ ոչ է 'ի ձեռս մեր, այլ շնորհք է ա̃յ . վ̃նկ թէ յետ անկեղծութ̃բ որոնելոյդ՝ ոչ գտանես զխնդրեալդ, մի գանգատեսցիս կամ տրտնջեսցես զումեքէ, այլ յԱ̃ստուած յարեսջի՛ր առաւել քան զոր յառաջն ։

Սիրեա՛ զհայրենիս և զազգ քո՝ առաւել քան զայլս.

## §. 296. Հ. Զի՞նչ է հայրենասիրութիւն և ազգասիրութիւն.

Պ. Հայրենի կոչին ամ բարիք 'ի հարանց մերոց մեզ աւանդեալք. ոպի են, կրօն, հաւատք, եկեղեցի, լեզու, գիտութիք, արուեստք, երկիր, մարդիկ, տուն, ազգ, ժողովուրդ, եւն, զորս առաւել քան զայլս պարտիմք սիրել, այս է՝ բարիս առնել և ծառայել նց, ջան դնել պայծառութե՝ լուսաւորութե և կատարելութե նոցին, որչափ զօրեմք՝ գործակից լինել երջանկութե նց, լնուլ զթերութիս՝ զպակասութիս և զանկատարութիս նոցունց, և սրբել զայն ամ որ արատաւոր կամ անպատեհ իցէ 'ի նոսա։

Շարժառիթք պատուիրանիս են, 1՝ ածային հրամանն պատուելոյ զհայր և զմայր, զի ընդ անուամբ հօր պարունակին ամ վերաբերեալք առ հարս մեր կամ 'ի հարանց մեզ աւանդեալք. վսկ ոպ զհարս՝ նոյնպ զհայրենիս և զհայրատունս միօրինակ պարտապան եմք սիրել՝ յարգել՝ և կատարելագործել. 2՝ փրկիչն մեր յիսուս քրիստոս եկն, նա՝ թէ մեռանել կամեցաւ 'ի վր իւրոյ ազգին (յովհ. ա. 11։ ժա. 51), որ և պարծանօք գովէ զազգ և զսեռ իւր (յայտն. իբ. 16), ապա և մեզ հարկ է մեռանել իսկ 'ի վր ազգի և հայրենեաց մերոց. 3՝ յս 'ի նշան հայրենասիրութե՝ զսկիզբն նշանաց և հրաշից իւրոց արար 'ի հայրենի գաւառն իւր 'ի գալիլիա (յովհ. բ. 11։ մարկ. ա. 9։ ղկս. ա. 26). 4՝ հոգին սբ հրամայէ մեզ ունել զեղբայրսիրութի, որ է ցուցակ և ձիւղ ճշմարիտ ազգասիրութե և հայրենասիրութե (ա պետրոս. բ. 17։

դ․ 8 ։ բ պետրոս․ ա․ 7 ։ եբրայ․ ժգ․ 1 ։ հռոմ, ժբ․ 10․ եւն)․ 5՝ ած ՚ի սբ գիրս հրամայէ մեզ զայս առաքինութի՝ օրինակօք մեծամեծ սրց իւրոց՝ ազգասիրութ եւ հայրենասիրութ փայլելոց, որպ է-ին աբրահամ (ծննդ․ իդ․ 4), իսահակ (անդ․ իը․ 2), մովսէս (ելից․ լբ․ 11—14 ։ 31․ 32․ եւն), դաւիթ, եղիա, եղիսէ, տուբիթ, եսթեր, յուդիթ, եօթն եղբարք մակաբայեցիք ընդ մօրն (բ մակաբ․ է), հռազիս (անդ․ ժդ), երեմիա մարգարէ (անդ․ ժե․ 14) եւ այլ անթիւք․ յորս ոմն պաւղոս ընդ բազում պարծանաց հայրենասիրութ իւրոյ (գործոց․ իբ․ 3 ։ իդ․ 17 ։ գաղատ․ ա․ 14․ եւն) եւ զայն յաւելու, թէ յօժար է նզով լինել ՚ի քէ վս ազգին եւ ազգականաց իւրոց (հռոմ․ թ․ 3․ 4)․ երանի թէ եւ մեք վառեալք դոյնօրինակ ազգասիրութ․ 6՝ պատուիրէ ած ոչ փոփոխել, այլ պահել եւ յարգել զսահմանս յաւիտենականս եդեալս ՚ի նախահարց (առակաց․ իբ․ 28), հարցանել զհարս եւ զաւագս զառաջինս (բ օրին․ դ․ 32․ լբ․ 7 ։ յոբ․ ը․ 8), նմանել ազգային յաւիտենից եւ դնել զյաւիտենական շաւիղս (եսայ․ ծա․ 9 ։ երեմ․ զ․ 16․ եւն), պատիւ եւ հնազանդութի տալ ծերոց (ղեւտաց․ ժթ․ 32 ։ առակց․ իզ․ 22 ։ ա պետրոս․ ե․ 5 ։ ա տիմոթ․ ե․ 1), ուսանել զիմաստութի յերկիցագունից (յոբ․ ժբ․ 12․ 20 ։ լբ․ 7․ եւն), հրամայէ որդւոց լսել խրատու հարց եւ ծնողաց իւրեանց (առակաց․ ա․ 8 ։ դ․ 1 ։ զ․ 20 ։ ժգ․ 1 ։ ժթ․ 26․ եւն)․ այդ ամ բանք յայտնի ՚ի ներքս բերեն զսէր եւ զխնամ առ հայրենիս եւ առ նախնիս․ 7՝ յս ակն էառ հարիւրապետին վս ազգասիրութ նր (ղկս․ է․ 4—6․)․ 8՝ քահանայապետք եւ փարիսեցիք թէպէտ եւ չարք, բայց բարի

նախանձ յուզլին վասն ազգի և հայրենեաց իւրեանց (յովհ. ժա. 48. 49. գործոց. իա. 20. իբ. 3. եզն). 9՝ վարձատրէ ած զհայրենասէրս բազմապ-գի օրինակաւ (ծննդ. լթ. 26. 27: խը. 21: թո-ւոց. իե. 12. 13: ա մակաբ. բ. 19—70: գ. 21. ժգ. 3. 4: ժդ. 29: երեմ. լե. 14—18: ղկս. է. 4—12. և այլուր բազում). 10՝ Մի գիրք՝ բնուի և բանականուի ուղիղ ուսուցանեն, թէ որ և իցէ անդամ բանիւ ստեղծման իւրոյ՝ պարտական է ծառայել և օգնել բոլոր մարմնոյն և անդամակ-ցաց իւրոց, թէ՝ նոյնք զմիմեանց օգուտն հոգալոց են անդամք, թէ 'ի վշտանալ կամ 'ի փառաւո-րիլ միոյ յանդամոց՝ հարկ է ամ անդամոց մաս-նակից լինել վշտաց կամ փառաց նորին, թէ ոչ կարեն աչք ցձեռս կամ գլուխ յոտս ասել՝ թէ չէք ինձ պիտոյ, թէ ոտք զի չէ ձեռն, կամ ունկն զի ակն՝ չկարեն ասել թէ չեմք 'ի մարմնոյ աստի (ա կորնթ. ժբ). թէ իւրաքանչիւր անդամ յօ-դեալ և պատշաճեալ ընդ իրեարս խաղալեօք՝ պարտի աճել և աճումն գործել 'ի շինուած կատարելուե իւր և բոլոր մարմնոյն (եփես. դ. 16). թէ հարկ և օրէն է՝ զի մէն մի անդամ կո-րուսցէ զինքն առ 'ի պահել զկեանս բոլոր մարմ-նոյն (մատթ. ե. 29. 30). թէ ոտք ոչ այ-լուստ ունին զդյուի և զպարարտուի՝ բայց եթէ յարմատոյ անտի (հռովմ. ժա), որով և 'ի չո-րանալ արմատոյն՝ հարկաւ ցամաքին և ոտք. թէ բոյս կամ ուռ՝ որ չիցէ միացեալ յորթ և յարմատ իւր, ոչ կարէ պտուղ բերել, այլ չո-րանայ և 'ի հուր արկանի (մատթ. ժգ. մարկ. դ. յովհ, ժե). թէ 'ի վնասիլ բոլորին՝ ան-տարակոյս վնասին և մասունքն, և 'ի թշուա-

ումնալ ընդհանրոյն՝ վատթարման և եղականքեն : Քանի՞ երանելի լինէր ազգն մեր, եթէ այս Ճշմարտութիք խորարմատ սովորէին և պտղաբերէին 'ի սրտի ամենեցուն մեր 'ի մասնաւորի, մանաւանդ՝ 'ի սրտի եկեղեցականաց և իշխանաց ազգիս մերոյ :

Այժմ հակադրի մեղքն Անձնախնդրութե, այս է, միայն զանձին իւրոյ օգուտն և զշահն խնդրել, չունել ինչ փոյթ լուսաւորութե և պայծառութե ազգին և եկեղեցւոյ իւրոյ, մեղք կշտամբեալ և ստգտեալ 'ի սբ գրոց (ա կորնթ. Ժ. 24—33: Ծգ. 5: բ կորնթ. Ժբ. 14: փիլիպ. բ, 21). բայց եթէ անփոյթ լինելն դատապարտեալ է, ապա քանի՞ սոսկալի պատիժս ունին կրել յայն անձինք, որք վնասեն ազգի իւրեանց՝ բանիւ գործով և զանցառութբ, գիրօն կամ զեկեղեցի իւրեանց բամբասելով, զլուսաւորութի ազգին խափանելով, զուսումն նական մշակն առ ոտն հարկանելով, զաղէտ հովիւս բազմացուցանելով, կամ նման բիւրազի եղանակօք՝ զխաւարն տգիտութեն՝ մոլութեն և մոլորութեանց տարածելով 'ի վերայ ազգին :

Սիրեա՛ զթշնամիս քո :

## §. 297. Հ. Զի՞նչ է թշնամասիրութիւն.

Պ. Թշնամի կամ ոսոխ և ատելի (որ ատէ զմեզ) կոչին այն մարդիկ, որք հոգևոր կամ մարմնաւոր բարեաց և երջանկութեն մերոց վնասեն՝ կամելով առնել զմեզ թշուառս. զայսպիսիս պատուիրէ մեզ սիրել իբրև զայլ ընկերս մեր. այն է՝ կամիլ և առնել նոցա զամ զբարիս,

ոչ հատուցանել նոցա փոխարէն զչար, չատել վրէժ 'ի նոցանէ, պատրաստ լինել առ 'ի հաշտիլ ընդ նոսա, ոչ տալ արհամարհել՝ կամ չարիս մաղթել նոցա, ոչ խնդալ ի վնաս նց· միով բանիւ՝ չլինել թշնամի՝ թշնամւոյն։ Առ այսպիսի սէր պարտաւորեն զմեզ 1՝ նորին վերոյիշեալ շարժառիթք հանրական մարդասիրութե կամ ընկերսիրութե (§. 292). 2՝ տն առանձին պատուիրանաւ և օրինակօք հրամայէ սիրել զթշնամիս մեր և ո իշխեսցէ ոչ հնազանդել (ի օրինաց. լը. 35։ ծննդ. իզ. 27։ խե. 5—15։ ելից. իգ. 4։ ղևտաց, ժթ. 18։ ա թգւրց. իդ. 4։ դ թգւրց. զ. 21. 22։ յոբ. լա. 29. 30։ առակց. ժզ. 7։ ժէ. 13։ ի. 22։ իդ. 17։ իե. 21։ մատթ. ե. 38—48։ զ. 14. 15։ ժը. 21—35. իզ. 50։ մարկ. ժա. 25։ ղկս. զ. 32—35։ իգ. 24։ գործ. է. 29։ հռովմ. ժբ. 17—23։ ա թեսաղ. ե. 25։ ա պետր. գ. 9. և ն). 3՝ օրինակն տն և յոլ քոլ, որ սիրեն զթշնամիս՝ զնոյն մեզ հրամայեն (մատթ. ե. 45։ ղկս. իգ. 34։ ա պետր. բ. 19—23. և ն). 4՝ առանց թշնամասիրութե չէ մարթ հասանել թողութե մեղաց (մատթ. զ. 14. 15։ ժը. 21. 22, 35. և ն). 5՝ կամիմք զի վնասեալքն 'ի մէնջ սիրեսցեն զմեզ, ապա և մեք սիրեսցուք զվնասարարս մեր. 6՝ տն սիրէ տակաւին զնոյն զոսոխս մեր, ապա և մեք սիրեսցուք զնոսա. 7՝ գերազանց բարիք խոստացեալ են սիրողաց զթշնամիս (ղկս. զ. 37. մատթ. է. 1. 2. և ն). 8՝ սիրել զթշնամիս՝ հաճոյական և գովելի է ամ մարդոյ, շահի զնոյն թշնամին, ազատէ 'ի բազում այլ մեղաց և 'ի վնասուց, խաղաղէ զսիրտ մեր, օգնէ առողջութե՝ համբաւոյ՝ հարստութե, և ն. 9՝ ապրելն

զոսոխս՝ մայր և ծնող է բազում մեղաց, վրէժ
խնդրութե, բամբասանաց, կռուոյ, սպանութե, ևն։

§. 298. Միջոցք սիրելոյ զԹշնամիս՝ են 1՝ տալ
րացն ՚ի սրտից զյիշեալ շարժառիթսդ. 2՝ զըն-
կալեալ անիրաւութիւնդ անբասիր առա՝ Թեթևացն.
3՝ ծանիր զխտիրն ընդ մարդ և ընդ Թշնամի, ըղ
Թշնամին ըստ որում Թշնամի այն չէ մարթ սի-
րել, զմարդն ըստ որում մարդ՝ կարես և պար-
տիս սիրել. 4՝ յուշ ած զմեղս քո առ ած և զսէր
նորա առ քեզ. 5՝ ստոյդ՝ մեղօք անձին վնասելով
յաւէտ կարեկցութդ է արժանի, քան ատելութդ.
6՝ խից զաղբիւրս ատելութդ, որ զհպարտութդ,
զնախանձդ, ևն. 7՝ փախիր յընկերաց ՚ի ցասումն
և ՚ի վրէժխնդրութի զքեզ շարժողաց. 8՝ յասելդ
զաղօԹն՝ որոշմ զբանն „ Թող մեզ
„ զպարտիս մեր, Որպէս և մեք Թողումք մերոց
պարտապանաց ||. 9՝ երկիր զի մի լուիցես զայն,
„ եւ Ո՛չ Հայրն ձեր Թողցէ ձեզ զյանցանս ձեր||.
10՝ յանձն առ զխոնարհութի, զհեզութի, աղօԹեա
վս Թշնամեացդ, հայեաց յօրինակս քոյ, քրիս-
տոսի, սրբոց, ևն։

§. 299. Ընդ սովին անկանի և պատուիրանն
Իրաւախոհութե, որ մեզ հրամայէ, || Մի ումեք ա-
„ րասցես դու Թշնամութի կամ վնաս, և Թէ արա
„ րեալ իցես՝ դու երԹ հաշտեաց ընդ նմա ||. որոյ
արդարութին և պիտանութին ցուցանի ՚ի բանսն քսի
(մատթ. Ե. 23—28), յորոց իմանամք՝ Թէ պա-
տարագելն իսկ քոյ՝ ընդունելի չէ նմա առանց հաշ-
տութե ընդ եղբօր, և Թէ՝ պատժէ նա զոչ հաշտե-
ցողն ընդ ոսոխին՝ զյետոյն իսկ նաքարակիտն պա-
հանջելով։ Կարդա ևս զայսմանէ մարկ. Ժա. 25։
ղկս. Ժբ. 58։ ա կորնթ. Է. 11։ բ կորնթ. Ե.

18=21 . սաղմ՟ս . ՃԺԹ . 6 : և՟ն : Տե՟ս ստորև ընդ խաղաղասիրութիւնն :

§. 300. Գլխաւորք 'ի մոլութ՟ց՝ եղբայրսիրութ՟ե և թշնամասիրութ՟ե հակառակելոց, են՝ նախ Ատելութի, որ է խորշումն յընկերէն չկարելով տանել կատարելութեց ն՟ր . Նախանձ՝ այն է տրտմիլ և ցաւիլ վ՟ն ունելոյ եղբօրն զհոգևոր կամ զմարմնաւոր բարիս . Թշնամութի, որ է բուռն ջանք վնասելոյ ընկերին . յայդցանէ պարտիմք պահել զանձինս 1՝ զի ա՟ծ յոլով ուրեք հրամայէ մեզ խորշիլ յայդց մեղաց (ընթերցիր, ծննդց . դ . 5 . 6 : իէ . 41 : Լ . 1 : լէ . 4 : թուոց . լե . 20 : ղևտաց . Ժթ . 17 . 18 : առակաց . Ժ . 12 . 18 : Ժդ . 30 : իդ . 17 . 18 : իը . 22 : իմաստ . բ . 24 . 25 : բ թգ՟ց . Ժգ . 15 : մատթ . Ե . 43 . 44 : Ի . 14 . 15 : իէ . 18 : ղկս . Ժե . 28 : յակոբ . գ . 14—16 : ա պետրոս . բ . 1 . 2 : ա յովհ . բ . 9 . 11 : գ . 15 : դ . 20 : հռովմ . ա . 29 : Ժբ . 15 : Ժգ . 13 : գաղատ . Ե . 15—26 . այլուր բազում) . 2՝ զի մեղքդ ոչ կարեն կալ ընդ եղբայրսիրութ՟ե, որ ոչ նախանձի (ա կորնթ . Ժգ . 4=7) . 3՝ զի ջնջեն զսէր մեր առ ա՟ծ . 4՝ զի աղբիւր են յոլով այլ մեղաց, բամբասանաց, հալածանաց, մարդասպանութ՟ե, և՟ն . 5՝ թշուառացուցանեն զմեզ ստ ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ . 6՝ զրկեն զմեզ յարքայութէն ա՟յ, և՟ն :

Ե՟կդ՝ Անկարեկցութի կամ Խստասրտութի, այն է՝ ոչ ցաւիլ ընդ վիշտս և ընդ ձախորդութիս ընկերին . որ է մեղք հակառակ բնութ՟ե (ա կորնթ . Ժբ . 26) և եղբայրսիրութ՟ե, արդելեալ և պատժեալ յա՟յ (ծննդց . դ . 6: եղից . է . 13=22 : բ օրինաց . Ժ . 16 : ա թգ՟ց . իե . 3 : յակոբ . բ . 13 . և՟ն) :

Ե՟րդ՝ Վրէժխնդրութի, չար և վնաս հատուցա-

նել այնմ՝ որ մեզն փասեաց, մեզ.ք արգելեալ մեզ յայ (կարդա, ղեւտ. Ժթ. 18: թուոց. լա. 2: բ օրինաց. լբ. 35, 43: սղմս, է. 7: թ. 13: դդ. 1: ՃԺէ. 10—12: առակաց. ԺԶ. 32. ի. 22: իդ. 29: եզեկ. իե. 12—19: նաւում. ա. 2: մատթ. ե. 39: զ. 14. 15: Ժը. 35: մարկ. ժա. 26: ղկս. թ. 54. 55: Ժը. 6—8: հռովմ. ժբ. 17: 19: ա թեսաղ. ե. 15: ա պտրս. գ. 9. յայտն, զ. 10. և այլուր):

2րդ՝ Ոտնհարութի կամ չարախնդութի, զուարճանալ ընդ ձախորդութիս և ընդ վիշտս ընկերաց, դիւական մեղ.ք՝ հակառակ մարդասիրութե՝ բանականութե՝ և տէրային գրոց (սղմս. խ. 12: առակաց, բ. 14: Ժէ. 5: իդ. 17: յոբ. լա. 29. 30: միքիէ. է. 8: ղկս. ին. 5: ա կորնթ. Ժգ. 6. և յայլ տեղիս):

Ութն պգիրաց ղծշհարաութիւն.

## §. 301. Ա. Զինչ է դաստիարակութիւն.

Պ. Դաստիարակել և ուսուցանել է պաշտօն՝ որում պարտաւորին՝ բաց յեկեղեցականաց՝ անխտիր ամ մարդիկ, աշխարհականք և ժողովրդականք, հարուստք և աղքատք, արք և կանայք, և ամ վիճակ մարդոյ առանց բացառութե, որք գն զգիտութիւն զիմաստութիւն և զճշմարտութիւն զայ և զկրօնէ՝ զորս ընկալեալ ունին (ա կորնթ. ա. 5: ը. 1: ժբ. 8: բ կորնթ. ը. 7: եփես. ա. 8. 17: փիլիպ. ա. 9: կողոս. ա. 10, ևն), աննախանձ սրտիւ հաղորդեսցեն ամենայն ընկերց իւրեանց կարօտելոց և տգիտաց. հարկաւորութի

օրինաց հաստատի, 1՝ բանիւն ա̃յ՝ որ 'ի ս̃բ. գիրս հրամայէ ա̃մ աշխարհականաց, զի ուսուսցեն որդւոց և ընտանեաց և ա̃մ ընկերաց զճշմարտութիւն (ընթերցէք. Բ օրինց. Դ. 9. 10: Զ. 20—25: ԺԱ. 19: յեսու. Դ. 22: սղմս. Ծ. 15: ԿԷ. 12: առակաց. Դ. 13: Թ. 9: ԺԹ. 25: յովբ. Զ. 24: զաքար. Ը. 10. 16: մատթ. ԺԳ. 52: ԻԵ. 14—30: ղկս. Թ. 60: ԺԹ. 13. 15. 23: գրծց. ԺԸ. 24—28: յակոբ. Ե. 19. 20: Ա պտրս. Դ. 10. 11: հռովմ. Բ. 19—22: ԺԲ. 7. 8: ԺԵ. 14: Ա կորնթ. ԺԲ. 7: ԺԴ. 26: գաղատ. Զ. 1. 10: եփես. Դ. 24—29: Զ. 4: կողոս. Գ. 16: Դ. 5: փիլիպ. Դ. 3: Ա թեսաղ. Ե. 11. 14: եբրայ. Ե. 12: ԺԲ. 8—12: Ա տիմոթ. Ե. 8: Բ տիմոթ. Բ. 2: տիտոս. Բ. 3. 4. և այլուր). 2՝ հրամանաւ եղբայսիրութե, ըստ որում չիք գերագանց նշան սիրոյ, քան ուսուցանել զճշմարտութիւն. 3՝ օրինակօք ա̃յ, ք̃ի և ա̃մ ս̃րբ̃ց, մանաւանդ մարգարէից առաքելոց և վարդապետաց. 4՝ բնութենական վարձուք՝ զոր ուսուցիչք ունին ընդունել թէ յա̃յ և թէ յուսանողաց անտի՝ յայսմ և յապագայ կեանս (դանի. ԺԲ. 3: մատթ. Ե. 19: գաղատ. Զ. 6. ևն): Պատուիրանս թէպէտ միօրինակ կայ զա̃մ աշխարհական անձինս, բայց առաւելապէս զհարս, զմարս, զտանուտեարս, զորբախնամս, և զամէն զն̃ա՝ որք ը̃ ձեռամբ ունին զանկիրթս, զորս թէ չեն բաւական ինքնին ուսուցանել, պարտին ձեռամբ քահանայից կամ վարժապետաց և ուսուցչաց վարժել 'ի կարևոր ուսմունս (տես, եփես. Զ. 4. 10: կողոս. Գ. 21: եբրայ. ԺԲ. 7: Ա տիմոթ. Ե. 8: տիտոս. Բ. 3. 4. ևն):

§. 302. Այամ օրինաց ներհակին զանազան մեղք. 1՝ Անփութութիւն, Անխնամակալութիւն, որ չտանի փոյթ ընտանեաց և ընկերաց յուսմունս ճշմարտութեան (մաղաք. բ. 10: հռովմ. ժբ. 8. 11: բ կորնթ. ը. 7. 8: ա կորնթ. ժբ. 25: փիլիպ. բ. 20: գաղատ. զ. 10: ա տիմոթ ե. 8. ևն). 2՝ Քանքարածրարութիւն, ոչ յարգել զտաղանդ շնորհայն Աստուծոյ, չարկանել զարծաթ բանին՝ 'ի սեղանաւորս յոգիս մարդկան, թագուցանել չար նախանձու զփականս գիտութեան, փակել զարքայութիւն Այ առաջի մտից մարդկան. մեղք արդէն վայեալ և անիծեալ յԱյ (մատթ. իգ. 13: իե. 14—30: ղուկ. ժա. 52: ժզ. 7: ժթ. 13—24). 3՝ Զառածանութիւն, մոլորեցուցանել զընկերն, հրապուրել՝ խաբել՝ սխալ և թիւր վարդապետութի ուսուցանել եղբարց. զարհուրելի մեղք ընդդէմ հոգւոյն Սրբոյ, զորոյ զծանրութիւն և զպատիժսըն տես, բ օրինաց. ե. 4: ժգ. 5: սաղմ. ղդ. 10: իմաստ. բ. 21: ե. 6: ժդ. 22: եսայ. թ. 16: իթ. 24: խէ. 15: ծդ. 6: երեմ. իգ. 32: իթ. 8: ծ. 6: միքիէ. գ. 5: մատթ. իբ. 29: իդ. 4. 5. 11: մարկ. ժբ. 24. 27: ժգ. 5. 22: ղուկ. իա. 8: յովհ. է. 47: գործոց. ը. 9: յակոբ. ա. 16: ե. 19: ա յովհ. ա. 8: բ. 6: գ. 7: բ յովհ. 7: հռովմ. ժզ. 18: ա կորնթ. գ. 18: ժե. 33: բ կորնթ. ժա. 3: եփես. դ. 14. 22: ե. 6: կողոս. բ. 18: բ թեսաղ. բ. 3. 10: բ տիմոթ. գ. 13: տիտոս. գ. 3. այլուր ևս բազում:

Յանդիմանեա՛ զմեղաւորն եղբայրն.

§. 303. Հ. Զի՞նչ է յանդիմանութիւն մեղաւորի.

Պ. Այն է խրատել՝ ազդել և զգուշացուցա

նել զմեղաւոր եղբայրն , զի ուղղեսցէ զվարս իւր , թողցէ զմեղս և յանձին կալցէ զառաքինի կեանս . առ այս պարտաւորին ամ մարդիկ 1՝ յայտնի հրամանաւ այ 'ի սբ գիրս (տես , ղևտաց . Ժթ . 17 : սաղմ . Ճխ . 5 : մատթ . Ժը . 15=18 : ղկս ԺԷ . 3 : գաղատ . Զ . 1 : Ա թեսաղ . Ե . 14 : Բ թեսաղ . Գ . 14 . 15 : Ա տիմոթ . Ե . 1 . 2 . 20 : Բ տիմոթ . Բ . 24 . 25 : Դ . 2 : յակոբ . Ե . 19 . 20 : կարդա ևս առակաց , Զ . 23 : Ժ . 17 : Ժբ . 1 : ԺԵ . 32 : ԺԷ . 10 : Իդ . 25 : Իե . 12 : ԻԷ . 5 : ԻԸ . 23 : Իթ . 1 . 15 : Թ . 8 : այլուր բազում) . 2՝ օրինակօք սոյ յածաշունչ գիրս (կարդա , ծննդ . Ժթ . 7 : ԼԷ . 21 : Ժը . 14=19 : յեսու . Իբ . 16 : Ա թգւց . Ժթ . 4—6 : ղկս . Իգ . 40 : Ա կորնթ . Դ . 14 : գաղատ . Բ . 11—16 . ևն) . 3՝ պատուիրանաւ եղբայրսիրութե . զի զոր սիրէ ոք՝ խրատէ , և զի չիք գերազանց նշան սիրոյ քան փրկել զեղբայրն յահաւոր թշուառութենէ մեղաց և դժոխոց .

§. 304 . Եղանակ և յատկութիւնք յանդիմանութեան են 1՝ զի խրատողն ազատ լիցի յայնմ մեղաց , կամ լոկ առաքելոյն՝ հոգևոր լիցի (գաղատ . Զ . 1) . ապա թէ ոչ՝ լսել ունի , բժիշկ՝ բժշկեա զանձն քո , հան նախ զգերանդ յականէ քումմէ . 2՝ զի կայցէ յոյս ուղղութե և դարձի մեղաւորին , որ թէ ոչ գուցէ՝ հարկ է լռել և աղօթել վն նորա . զի 'ի դադարել վախճանին՝ դադարին և միջոցք , և զի չէ արժան արկանել զմարգարիտ առաջի խոզից . 3՝ զի արասցի հեզութբ և սիրով , զի մեղուցեալն՝ եղբայր է . 4՝ մեղքն իցէ ճշմարիտ՝ ծանր՝ և փաստաբեր . 5՝ արասցի բազում խոհեմութբ՝ նկատմամբ պարագայից տեղւոյ՝ ժամանակի՝ եղանակի՝ անձանց՝ հասակաց՝ պաշտա-

ման, և այլոց։ Հովիւք, եպք, առաջնորդք, խոստովանահայրք, քարոզիչք, ծնողք զաւակաց, որբախնամք, բարեկամք, և ամ̃ն որ ընդ ձեռամբ ունին զհպատակս՝ խստիւ պարտապան են այսմ հրամանի առաւել քան զայլ ոևիցէ մարդիկ (տես. ա թգրց. գ. 12։ առկց. ծգ. 24։ ժե. 5։ ծթ. 18։ իգ. 13։ իթ. 15։ եփես. զ. 4։ եբրայ. ժբ. 7. և̃ն)։ Սմա հակառակին նոյն մեղք 'ի վերոյ § 302 յիշատակեալք։

Բարի գործոցս տո՛ւր եղբարցդ զօրինակ բարի.

## §. 305. Հ. Զի՞նչ է օրինակն.

Պ. Բարի օրինակ կոչին ամ̃ գործք՝ որ համաձայն են ա̃ծային օրինաց և զընկերս շարժեն առ 'ի նմանիլ կամ յանձին բերել զայնս. առ 'ի տալ եղբարց զօրինակ բարի պարտաւորեմք 1՝ ակներև պատուիրանք ա̃յ 'ի ս̃բ գիրս (կարդա. մատթ. ե. 13—16։ ղկս. ժա. 33։ ժբ. 35։ յովհ. գ. 21։ յակոբ. գ. 13։ ա պտրս. բ. 11—21։ հռովմ. ժբ. 17։ ծդ. ժե։ բ կորնթ. ը. 21։ փիլիպ. բ. 12—16։ դ. 5։ ա թեսղ. դ. 11։ ե. 22։ եբրայ. ծ. 24։ ա տիմոթ. դ. 12—15։ տիտոս. բ. 7. 8. և̃ն). 2՝ օրինակքն ք̃ի և այլոց սրբոց ա̃յ (մատթ. ժէ. 26։ յակոբ. ե. 10։ ա կորնթ. ը. 12. 13։ ժա. 1։ բ կորնթ. բ. 15. 16։ զ, դ։ թ. 2։ բ մակաբ. զ. 28. և̃ն). 3՝ Ճշմարիտ եղբայրսիրութին, որ հոգայ զհոգևոր բարիս եղբօրն. 4՝ բարի օրինակաւ յամբաւս յառաջանան երջանկութիւնք մարդկային ազգի. 5՝ մեզ ևս օգուտ բազում լինի տալով այլոց զօրինակ բարեաց. 6՝ ա̃ծ ինքն կացոյց բազում ինչ յօրինակ ուղղութե և գալձի

մեղաւորաց (բ պտ՟ս. բ. 6։ յուդայ. 7. ևն)։

§. 306. Բարի օրինակին դիմադրին նախ Գայթագղութի, որ է՝ մեղանչական գործով կամ զանցառութբ բարեգործութե (ա թգրց. գ. 13) տալ այլոց գէշ օրինակ և գգրգիռ մեղանչելոյ. պարտիմք հեռանալ 'ի գայթագղեցուցանելոյ զընկերս, 1՝ զի ած հրամայէ մեզ (տուակոց. իը՝ 10։ մատթ. ե. 29։ ժգ. 23։ ժէ. 26։ ժը. 6—12։ մարկ. ը. 33։ թ. 41—46։ ղկս. ժէ. 1. 2։ հռովմ. բ. 17—24։ ժդ. 13—23։ ա կորնթ. ը. ժ. 32։ բ կորնթ. զ. 3. ևն). 2՝ զի ամենեքիմբ հակառակի պատուիրանին եղբայրսիրութե. 3՝ պատճառէ զանթիւ չարիս և վնաս հոգւոյ և մարմնոյ՝ թէ տուողին գէշ օրինակ և և թէ ընդունողին զայն. 4՝ ած մեղք գայթագղեալ անձին՝ համարեալ լինին այնմ՝ որ ետն գէշ օրինակ. ևն։

§. 307. Կայ և այլ տեսակ գայթագղութե, կոչեցեալ առողական, որ ծագէ 'ի բարի կամ յան տարբեր խօսից և 'ի գործոց, զորս տեսողք առնեն ինքեանց .քար գայթագղութե և առիթ մեղանչելոյ՝ կամ իւրեանց տկարութբ և տգիտութբ, որ կոչի գայթագղութի Փոքրոգեկան (տես զօրինակսն, մատթ. ժգ. 57։ իզ. 31. 33։ մարկ. բ. 6. 7։ յովհ. զ. 42։ ժզ. 1։ գրծց. ժա. 2։ ա կորնթ. ը. 7—13. ժ. 28. ևն), և կամ չարամտութբ իւրեանց և դժնդակութբ. սա կոչի գայթագղութի Փարիսեցական (ոմն են, մատթ. թ. 10. 11։ ժա. 6։ ժե. 12։ ղկս. բ. 34։ յովհ. զ. 62։ ա կորնթ. ա. 23. և այլուր). յառաջնոյն՝ թէ հնար իցէ՝ պարտիմք խորշիլ, այլ յետկդէս չէ մարթ խորշել. զի արք չարասիրտք և 'ի գոր-

ծոյ քրիստոսի առին ինքեանց գայթագղութիւն ։

§․ 308․ Եկդ՝ Փառախնդրութի, կամ առնել զառաքինի գործս միայն առ ցուցանելոյ զինքն և յօժարել փառս ՚ի մարդկանէ՝ առանց դիտելոյ զհոգևոր շինութի նց ․ մեղք հակառակ սբ գրոյ և բանականութե (տես, մատթ ․ զ ․ 1—7 ․ 18 ։ իդ ․ 5 ։ ղկս ․ Ժա ․ 43 ։ Ժզ ․ 15 ։ յովհ ․ Ե ․ 44 ։ Է ․ 18 ։ Ը ․ 50 ․ 54 ։ ա թեսաղ ․ Բ ․ 6 ․ ևն) ։

Եըդ՝ Մարդահաճութի, Բարեմարդութի (այժմեան սուտ ֆօլիթիքեայն), որ է ընդ ձեռն լոկ արտաքնայարդար բարի գործոյ՝ հաճել զմարդիկ ՚ի նպաստ իւր, շնորհուկս առնել, բարի մարդ ձևանալ արտաքուստ միայն՝ առանց ներքնոյն՝ յօժարել զշնորհս մարդկան ․ մեղք ընդդէմ ուղիղ բանականութե և բամբասեալ յածային տառից (հռովմ ․ Ժե ․ 1 ․ 2 ։ գաղատ ․ ա ․ 10 ։ զ ․ 10 ։ եփես ․ զ ․ 6 ։ կողոս ․ գ ․ 22 ։ ա թեսաղ ․ Բ ․ 4 ․ և այլուր) ։

§․ 309․ Եըրեակ վերջիշեալ առաքինութիք, ուսուցանել, յանդիմանել և տալ օրինակ, ՚ի միասին առեալք՝ ըստ ոճոյ խօսից սուրբ գրոյ՝ միով բառիւ կոչին՝ Շինութի կամ շինուած եկեղեցւոյ և եղբարց ․ և վս պաշտօնէին՝ որ ուսուցանէ յանդիմանէ և լինի օրինակ, ասի ՚ի նոյն գիրս, թէ այնպիսին երրակի առաքինութբք Շինէ զեկեղեցին (տես ․ մատթ ․ Ժզ ․ 18 ։ գործ ․ Թ ․ 31 ։ Ի ․ 32 ։ հռովմ ․ ԺԵ ․ 20 ։ ա կորնթ ․ Ժդ ․ 4 ․ 5 ․ 12 ։ եփես ․ Բ ․ 20 ․ 21 ։ դ ․ 12 ․ 16 ․ ևն)․ Շինէ զեղբարս կամ զընկերս (կարդա, հռովմ ․ Ժդ ․ 19 ։ ԺԵ ․ 2 ։ ա կորնթ ․ Ը ․ 10 ։ Ժ ․ 23 ։ Ժդ ․ 3 ․ 18 ․ 26 ։ Բ կորնթ ․ Ժ ․ 8 ։ ԺԲ ․ 19 ։ Ժդ ․ 10 ։ եփես ․ դ ․ 29 ։ ա թեսաղ ․ Ե ․ 11 ․ ևն), Շինէ զինքն հոգևոր տաճար այ (տես, ա

պտրս․ Բ․ 5։ յուդայ․ 20․ Ա կորնթ․ Գ․ 9—16։ կողոս․ Բ․ 7․ ևն)․ յորոց և ինքն պաշտօնեայն անուանի Շինող կմ Ճարտարապետ (մատթ, իա․ 42։ ղկս․ Ի․ 17։ գործոց․ Դ․ 11։ Ա պտրս․ Բ․ 7։ Ա կորնթ․ Գ․ 10․ և այլուր)։

Զո՛ր պարտ կենդանութեան և առողջութեան ընկերացդ․

§․ 310․ Զ․ Ցի՞նչ հայի հոգալն ըզ կեանս այլոց․

Պ․ Զգածումն կենաց եղբարց պահանջէ, զի մի՛ սպանցուք կամ զրկեսցուք զնս ՚ի կենաց և յառողջութէ, զի յորոգայթից մահու կամ հիւանդութե զնս ազատեսցուք, զի մի՛ ցանկասցուք մահու նոցա, մի՛ վնասեսցուք առողջութեան նոցա անդամատուք՝ տանջանօք՝ դեղելով՝ գանելով, ևն, այլ զամ փոյթ յանձին կալցուք և գործովք նպաստեսցուք բարեկենդանութե և քաջողջութե նց յմի․ առ այս պարտաւորին ամ մարդիկ 1՝ տիրական հրամանաւն այ, որ ասացն, մի՛ սպանաներ (ծննդ․ Թ․ 5․ 6։ ելք․ Ի․ 13։ մատթ․ Ե․ 21։ Ը․ 5—10։ իե․ 41—45։ Իզ․ 52։ Ա տիմոթ․ Ա․ 9․ այլուր յաճախ)․ 2՝ զի զկնովին հակառակ է այդ մեղք եղբայրսիրութե․ 3՝ է յափըշտակել զիրաւունս այ (հռովմ․ ԺԴ․ 8)․ 4՝ ծանր վնաս և տոյժ լինի մեռելոյն՝ ընտանեացն՝ և այլոց բազմաց, նա՝ թէ բոլոր մարդկային ընկերութե, 5՝ հակառակ է բնական և քաղաքական օրինաց՝ ուղիղ դատողութե՝ ածսիրութե, ևն․ 6՝ զրկէ զմեզ յանթիւ բարեաց հոգւոյ և մարմնոյ, զհետ իւր ածէ զպէսպէս պատիժս աստ և ՚ի հանդերձեալն․ ևն։

§․ 311․ Բայց զոն երեք դիպուածք օրինաւոր

մարդասպանութ. յորոց առաջինն է, երբ գող՝ աւազակ կամ եղուզակ 'ի վ(երայ) յարձակի 'ի սպանանել զքեզ. յորում թէ չկարես զերծանիլ փախըստեամբ՝ վիրաւորելով զնա կամ այլազգ, յայնժամ մարթիս սպանանել զնա. զի պարտիս զկեանս քո նախադասել քան զայլոցն (Ելից. իբ. 2). Երկդ՝ յօրինաւոր յարդար պատերազմի՝ զինուորք կարեն սպանանել զթշնամիս առանց մեղաց. Երրդ. դատաւորն զօրէ անխիղճ սպանանել զըստ օրինաց դատապարտեալ մահապարտն (Հռոմ. Ժգ. 4. ևն):

§. 312. Հակառակ պատուիրանիս մեղանչեն 1՝ անիրաւ Մարդասպանութիւն, որոյ ծանրութիւն չարութեան յայտնի է 'ի վերագրելոցդ և 'ի սուրբ գրոց. 2՝ Անդամատութիւն, խեղութիւն, Վիրաւորութիւն մարմնոյ ընկերայն (Ղևտ. իդ. 19. 20. Ելից. իա. 18—28. ևն). 3՝ Վիժումն ողջորեալ զաւակի յարգանդէ յղի մօրն (Ելից. իա. 22. ևն). 4՝ Կուսապղծութիւն որ բռնի զկուսութ օրիորդին բառնայ (Ելից. իբ. 16. 17: Բ օրինաց. ի. 28, 29. ևն). 5՝ Բժիշկք որք չարութ կամ տգիտութ վնասեն, կամ ոչ նպաստեն կենաց և առողջութ ընկերացն. 6՝ Նոքա՝ որք 'ի ժամանակս սովու՝ աղքատութ՝ հրկիզութ և այլ վտանգս կենաց մարդկան՝ կարող գոլով ոչ տանին հոգ փրկութ և առողջութ նոցա (առակաց. իգ. 11. 12: Ծննդ. Ժդ. 14—17: Եսթեր. Ը. 3: Եսայ. Ծը. 7: Մատթ. Իե. 35. և այլ տեղիս):

Խնամ' վասն պատուոյ և համբաւոյ ընկերացն.

§. 313. Հ. Զի՞նչ լինի խնամել զպատիւ եղբարց.

Պ. Առ այդ պահանջի, զի իւրաքանչիւր աւ-

մեք զիւր արժանաւոր պատիւն բանիւ՝ գործով և նշանակօք հաւատասցուք, զգերազանցութիւն՝ զբարութիս նր̃ ծանիցուք և քարոզեսցուք, համբաւոյ և փառաց նր̃ մեք մի վնասեսցուք, և եթէ այլք վնասեն՝ ջատագովեսցուք կամ պաշտպանեսցուք, մի ումեք մեղս կամ մոլութիս ստուք̃ ընծայեսցուք, բանից քուղ̃ զընկերս բամբասողաց՝ մի դիւրաւ հաւատասցուք, զպակասութիս և զթերութիս եղբարց մի հրապարակեսցուք, այլ մանաւանդ՝ ըստ կարի ծածկեսցուք և անմեղադիր արասցուք: Արժաւոլթք պատուիրանիս են, 1՝ զի ած̃ ինքն հրամայէ մեզ զայդ (ելից, ի̃. 16: սաղմ. խ̃թ. 19. 20: մատթ. Է. 1—5: ղկ. Ժզ. 7—11: յովհ. Գ. 26—32: Է. 51: յակոբ. Դ. 11: ա̃ պետրոս. Դ. 8: հռովմ. ԺԲ. 10: Ժդ. 7: Ժդ. 1—14: եփես. Դ. 31: փիլիպ. Դ. 8: ա̃ տիմոթ. Զ. 4. և̃ն). 2՝ զի զայդ պահանջէ արդարութիւն՝ ճշմարիտ եղբայրսիրութիւն և անձնասիրութիւն. 3՝ առանց այդր ոչ կարէ յոտին կալ մարդկային ընկերութիւն և երջանկութիւն. 4՝ ՚ի դոյն յորդորեն զմեզ օրինակք ք̃նի, առաքելոց և ա̃մ սր̃ց. 5՝ մեզ խկ օգուտ բազում ծագի յայդմանէ ևս և ըստ աշխարհի կենցաղականութե. 6՝ ընկերն այդուիկ շարժի ՚ի հանապազորդել ՚ի բարին և ՚ի կասել ՚ի մեղաց. 7՝ ծանր անիրաւութի և անարդարութի է ոչ հաւատացանել իւրաքանչիւր ումեք՝ զնորայն:

§. 314. Բազում են մեզ ընդդէմ այդմ օրինաց զինուորեալք. Նախ՝ Չարակարծութի, չարախոհութի, կարծիք չարեաց ունել զընկերէն՝ ի̃մ առանց ա̃մ հիման՝ կամ անբաւական և թեթև պատճառանօք, կասկածել և երկբայել ՚ի միտս ընդ բարութի այլոց (ա̃ կորնթ. Ժդ. 5: ա̃ տիմոթ.

դ. 4: Զ օրինակս տես, ծննդ. ի. 11: ել. 7: թւ. 15: ա թգրց. ա. 13—16: իբ. 15: բ թգրց. ժ. 3: բ մակաբ. դ. 32: ե. 11: սաղմ. ճժը. 39: յովբ. ժե. 20: ղկս. է. 39: գործոց. բ. 13. թ. 26: իե. 18: իը. 4—6. եւն).

Եկդ՝ Զարադատուե, յանդուգն դատել, Դատապարտուե, համարիլ զընկերն լինել չար և մեղաւոր, յանդգնուե առանց բաւակն փաստից և իշխանուե վճռել և հաստատել ՚ի միտս՝ թէ այն որ իցէ մեղաւոր. մոլուե յաճախեալ ամ ուրեք և առ ամ մարդիկ, և ազգի ազգի օրինակաւ գործեալ, որք են, 1՝ առանց նախընթաց քննուե՝ գահավէժ շտապաւ՝ ուստ կարծեօք՝ չար կասկածանօք՝ ըստ տեսուե աչաց՝ և մոլորընթաց համբաւոյ հաւատալով դատել զայլս (ծննդց. լը. 24: լթ. 19: յովհ. է. 24: թ. 2: գործոց. իը. 4: եւն). 2՝ ատելուե և չար սրտիւ զգածեալ առ ընկերն՝ զմժղուկն նր ուղտ, կամ զբարի գործն՝ չար դատել (մատթ. թ. 3: ժա. 19: ժե. 2: հռովմ. ժգ. 3. եւն). 3՝ հպարտուե՝ աչառուե՝ կաշառանօք՝ և այլովք չար կրիւք պաշարեալ՝ այլ ընդ այլոյ դատել (ելից. իգ. 1—9: ղեւտաց. ժթ. 15: իգ. 22: բ օրինաց. ա. 16—19: իզ. 17: սաղմ. ժգ. 5: առակաց. ժը. 5: իդ. 23: իը. 11: եսայ. ա. 23: ամբակ. ա. 3. 4. եւն). 4՝ զիւր գերանն թողեալ՝ զայլոյ շիւղն տեսանել, կմ զընկերն՝ ինքեն համեմատելով՝ զինքն ոբ և զնա մեղաւոր համարել (մատթ. է. 3: ղկս. ժը. 11. եւն). 5՝ յայն ինչ դատել զեղբայրն՝ յոր ինքն եւս մեղանչէ, գուցէ ծանրագոյն քան զնա (հռովմ. բ. 1—3). 6՝ զայն ինչ կամիլ դատել՝ զոր ոչ ճանաչէ կամ ոչ կարէ իմանալ (ա կորնթ. դ. 3—6. եւն):

Յայտ ած և ՚ի նման եղանակաց չարաչար դատելոց զընկերն՝ պարտիմք ամենևին հրաժարիլ, 1՝ զի արգելեալ է այ ՚ի ս. գիրս (տես, մատթ. է. 1—8: ժբ. 7: ղկս. զ. 37: է. 33: յովհ. է. 24: թ. 16: գործոց, իզ. 3: յակոբ. բ. 2—4: դ. 11—13: հռովմ. բ. 1—6: ժդ. 4—23: ա կորնթ. դ. 3—5: ժզ. 5—8: ա տիմոթ. ե. 21. այլուր բազում). 2՝ զի հակառակ է ճշմարտութե՝ արդարութե և եղբայրսիրութե. 3՝ զի կէ զմեզ ՚ի հոգևոր և մարմնաւոր բարեց, և վնասէ մեզ բազմօրինակ:

§. 315. Որովհետև վերագոյն ուսուցաք թէ հարկ է մեզ ճանաչել զընկերս և դատկանիշ նոցա, և ըստ որում առ ճանաչելն միշտ պահանջի նախընթաց քննութի և դատողութի, յայտայանէ ինքնին իմանի՝ թէ էութի այսր մեղաց չարադատութե ոչ հիմնի յայն զի դատեմք զընկերն, այլ յայս՝ զի չարաչար և սխալակի դատեմք. զի ուղիղ դատողութին հրամայեալ է, խոկ մոլարն՝ արգելեալ. վնկ առ չմոլորիլ ՚ի դատողութե ընկերաց՝ հարկ է պահել զյետագայ կանոնս. 1՝ զգոյշ լեր՝ մի դատեսցես վերցիշեալ վեց եղանակօքդ. 2՝ տես՝ մի պաշարել անկարգ անձնասիրութ՝ նախանձու՝ ատելութ՝ դիւրահաւանութ կմ կանխապաշար կարծեօք՝ սկսանիցես ՚ի դատել. 3՝ մի շտապեր ՚ի դատելն, յապաղկոտ լեր, յուշիկ դնա. 4՝ ըստ միոյ կամ սակաւ և թեթև գործոլութեց՝ մի վճռեր զբոլոր բարոյական վիճակ մարդոյն. 5՝ մի ձեռներէց լիցիս դատել զներքինն կամ զգաղտնիս սրտի ուրուք. այդ այ միայնոյ անկ է (հռովմ. բ. 16. են). 6՝ մի ինչ վճռեսցես ըստ լրոյ՝ համբաւոյ՝ պատմութե՝ արտաքին կերպարանաց կամ տեսութե, այլ խնդրեա փաստս և ապացուցութիս, առանց որոց

ամ դատաստան սխալէ․ 7՝ 'ի պակասել փաստից՝ անվճիռ թող զդատ․ 8՝ թէ կայցեն բաւական փաստք՝ վճռեա, բայց և թաղեա 'ի սրտիդ․ մի ումեք յայտնեսցես զվճիռ քո՝ բայց եթէ օգուտ մեղուցելոյն կամ այլոց գուցէ յայտնել տեղեսցէ․ 9՝ երբ այլք չարաչար դատեն զոք առ քև՝ արդարացո, անբասիր արա՝ թէ ոչ զգործն՝ գէթ զմիտումն նր․ 10՝ հուսկ ապա՝ որպէս կամիս դատել յընկերացդ, այնպէս և դու լինիս դատեա։

§․ 316․ Նրդ՝ Բամբասանք, Զարախօսուն, Վատահամբաւուն, ծանր մահացու մեղք՝ ազգի ազգի կերպարանօք գործեալ 'ի մէնջ․ ոմն են, 1՝ Զըրպարտուն, սուտ յանցանս 'ի վերայ ընծայելով՝ պարտաւոր մեղաց ցուցանել զանմեղն․ 2՝ Դիպաբանուն, զճշմարիտ թերթև յանցանս ուրուք ծանրացուցանել, զմժղուկն առնել ուղտ և զշիւղն՝ գերան․ 3՝ Նշաւակուն զաղտնի մեղաց, հրապարակել զծածուկ յանցանս այլոց․ 4՝ զբարի կամ զանտարբեր գործս այլոց՝ 'ի չար միտս թարգմանել․ 5՝ զբարի գործ ընկերին՝ առ նախանձու ուրանալ՝ նուազել կամ ծածկել․ 6՝ Քըլթմջուն, Քսուն, որ է՝ ծածուկ շշնջմամբ խածատել զընկերն․ 7՝ սուտ Ամբաստանուն, զանմեղն զրպարտութ պարտաւորել յատեանի օրինաւոր դատաւորի (ծննդ․ Լթ․ 17։ ղևտ․ Իզ․ 2․ 10։ գործ․ Իդ․ 2․ ևն)։ Յամ տեսակաց մեղաց հարկ է մեզ յետս կալ, 1՝ զի ամենեքին արգելեալ են յայս 'ի սբ գիրս (ելից․ Իը․ 28։ ղևտց․ ԺԹ․ 16։ սաղմս․ Ժդ․ 3․ Ճե․ 14։ իմաստ․ ա․ 10․ 11։ յակոբ․ ա․ 26։ Դ․ 11։ ա պետրս․ Բ․ 1։ հռովմ․ ա․ 30․ 32։ բ կորնթ․ ԺԲ․ 20։ կողոս․ Գ․ 8․ այլուր բազում յոյժ)։

2՝ ծանր մեղք են ընդդէմ սիրոյ եղբօրն. 3՝ զրկեն զմեզ յարքայութենէ այ (ա կորնթ. զ. 10. եւն). 4՝ բազում փասեն մեզ, եղբարց մերոց, և մարդկային ընկերակցութե և երջանկութե. 5՝ ծանունս պատժէ ած զբամբասողս (թուոց. ժբ. 8—15. այլուր). 6՝ հակառակ են Ճշմարտութե և արդարութե, աւելի առնեն զմեզ ատ մարդկան. 7՝ պարտաւորեն զմեզ վճարել զտմ փասս 'ի բամբասանաց մերոյ՝ ընկերաց հասուցեալս, եւն։ Ծանիր և զայն. զի ոչ միայն բամբասողք՝ այլ և յօժարութբ և հաճութբ լսողք, եւս և հաստատողք և գրգռողք նոցին մեղանչեն չարաչար։ Գլխաւորք՝ յորս արժան լինի յայտնել կամ պատմել զմեղս այլոց, են այնք՝ յորս 'ի հրապարակութէ մեղացն օգուտ բազում ծնանի կամ նոյն իսկ մեղուցելոյն՝ զի ուղղեսցի, կամ այլոց ընկերաց և բազմութե՝ զի մի փասեսցին, կամ մեզ ինքեան (մատթ. իգ։ գործ. իգ. բ կորնթ. ժա. եւն)։

§. 317. Զրդ՝ Տրտունջ, տրտնջողութի, Գանգատանք, բամբասել զընկերն իբրև թէ փասեալ իցէ մեզ կամ անիրաւեալ առ մեզ. զծանրութի մեղացս, զպատիժսն և զաւիթսն հրաժարելոյ՝ տես, (ծննդ. դ. 13։ ելից. ե. 15. 21։ ժդ. 11։ ժե. 24։ ժզ. 2—8։ ժէ. 2։ թուոց. ժգ. 34։ ժդ. 2. 27. 36։ բ օրինց. ա. 27։ մատթ. թ. 11։ ի. 11։ ղկս. ե. 30։ ժե. 2։ ժթ. 7։ մարկ. ժդ. 4։ յովհ. զ. 41։ գործ. զ. 1։ ա պետրս. դ. 9։ յուդայ. 16։ ա կորնթ. ժ. 10։ փիլիպ. բ. 14. և յայլ տեղիս։

§. 318. Հինգերորդ՝ Թշնամանք, այն է՝ յանիրաւի նախատել և չարախօսել ընկերին յերեսս

նորա (որով տարբերի 'ի բամբասանայ՝ որ գաղտ յընկերէն փասէ)· մեղք՝ որոյ պատկեր և պատիժ նկարին 'ի բանսն մի գրոց (եսթեր· Ծգ· 12 ։ առակաց· Գ· 30 ։ Ժա· 2 ։ Լբ· 10 ։ Իմաստ· Բ· 19 ։ Դ· 19 ։ Ժէ· 7 ։ մատթ· Լբ· 6 ։ ղկս· Ժա· 45 ։ գրծց· Ծդ· 5 ։ հռովմ· Ա· 30 ։ Ա կորնթ· Ժբ· 10 ։ Ա թեսաղ, Բ· 2 ։ Ա տիմոթ· Ա· 13· այլուր ևս)։

§· 319· Նօթնեի՞դ՝ Կատակա՞նք, Ախպանու՞ն, Հեգնու՞ն, Նրգիծանք, Անգոսնումն, որ է ծաղր բանու՞ի և կծողական խօսիւք գովել կամ պարսաւել զընկերն առ ամօթալից առնել զնա, և վնասել համբաւոյ կամ պատուոյ նորա· ծանր և վնասակար մեղք՝ նկարեալ 'ի սաղմս· Խգ· 14 ։ Իմաստ· Ե, 1—4 ։ յովբ· Ժբ· 4 ։ Դ թգւց· Բ· 23 ։ եսայ· Լէ· 1 ։ երեմ· Ի· 7· 8 ։ Իը· 26· 27· 39 ։ եզեկ· Իգ· 32 ։ ղկս· Ը· 53 ։ Ծզ· 14 ։ Իգ· 35 ։ գործոց· Ժէ· 32· և յայլ բանս ։

§· 320· Ուլթեի՞դ՝ սուտ Վկայու՞ն, կամ հաստատել զսուտ ինչ յանցանք իբրև զճշմարիտ՝ 'ի վս՞ ընկերին, թէ յատենի դատաւորայ՝ թէ արտաքոյ 'ի կենակցուե· սաստիկ մեղք ընդդէմ ա՞ծսիրուե և եղբայրսիրուե, բազմօք արգելեալ և պատժեալ յա՞յ (տես, ելից· Ի· 16 ։ Իգ· 1 — 7 ։ Բ օրինաց· Ե· 20 ։ Ժթ· 16—19 ։ սաղմ· Իզ· 12 ։ Լե· 11 ։ առակաց· Զ· 19 ։ Ժթ· 5· Իա· 28 ։ Իե· 18 ։ դանիէլ· Ծգ ։ մատթ· Ծե· 20 ։ Ժթ· 18· Իզ· 59 ։ Լէ· 13 ։ Իը· 15 ։ գրծց· Զ· 11 ։ Իդ· 5 ։ հռովմ· Ծգ· 9· և՞ն)։

փո՛յթ ընդ չէր հարստութեան եղբարց·

§· 321· Հ· Ի՞՞նչ ցուցանի փոյթ մեր զհարստութենէ այլոց·

Պ· Այսուիկ՝ զի ընչից ընկերաց մի՞ վնասե-

ցուք , մի՛ ցանկասցուք, մի՛ բռնութ՝ գողութ խաբէ-
ութ կամ այլովք ինչ միջոցիւք զայնս մեզ գրաւես-
ցուք , այլ մանաւանդ խորհրդով և գործով նը
պաստեսցուք նմ ՚ի պահել և ՚ի դիզել զճոխութիս,
Թէ ինչ առեալ եմք յայլոց ՚ի փոխ կամ ՚ի գրաւ՝
անխարդախ հատուսցուք , և թէ նոքա կարօտին
փոխոյ կամ ընչից մերոց՝ մի՛ զլասցուք • պարտա
ւորութիս այս հաստատի 1՝ հրամանաւն այ ՚ի հին
և ՚ի նոր օրէնս (գիրս • ելից , Ի • 15 • 17 ։ ղևտաց•
Զ • 2=5 ։ ԺԹ • 11 • 35 • 36 ։ Բ օրինաց• ԺԵ • 7=
11 ։ սաղմ• ԼԶ• 21 ։ ՃԺա • 5 ։ առակաց • Ի • 10 •
23 ։ եսայ • Ա • 17։ ամովս• Ը • 4=7։ մատթ• ԺԹ•
18 ։ ղկս• Զ• 34 • 35։ ԺԹ• 8։ Ա կորնթ • Զ • 10 ։ ե-
փես • Դ • 28 ։ յայտն • Թ • 21 • ևն) • 2՝ զայն թե-
լադրեն անկեղծ եղբայրսիրութին և ածսիրութին • 3՝
՚ի նոյն պարտաւորիմք ՚ի բնատուր օրինացն (մտթ
Է • 12) • 4՝ առանց այնր ոչ զօրէ յոտին կալ ոչ
ընկերութի՝ ոչ խաղաղութի և ոչ երջանկութի մարդ-
կային կենաց ։

§• 322• Ընդդէմ այսմ պատուիրանի մեղան-
չէ Անիրաւութին կամ Անարդարութին , որոյ ազգք
են 1՝ Գողութի , այն է՝ զինչս ընկերին ինքեան
գրաւել կամ սեփականել առանց գիտութե և հաւա
նութե տն • 2՝ Ասպատակութի , Աւազակութի, Հինա
հարութի , բռնութի և հրապարակաւ յափշտակել
զինչս այլոց • 3՝ Սեղանակապտութի , Տաճարակապ
տութի , յ գողութի սրբազան իրաց կամ ՚ի սրբ տեղ-
եաց • 4՝ Կապալ կամ Մենավաճառութի , որ միայ-
նակ գնէ և վաճառէ անիրաւ գնով • 5՝ Խարդա-
խութի և խաբէութի ՚ի տուրևառս , ՚ի չափս , ՚ի կը-
շիռս և յօրինակութս վաճառաց • 6՝ Դաւաճանութի,
նենգութ ՚ի հաւանութի ածել զընկերն՝ զի զինչս

